Եզա · Արկի , արկեր , էարկ՝ արկ ·
Յոգ · արկաք , արկէք՝ արկիք · արկին ·

Յարակատար ։

Եզա · Արկեալ եմ , ես , է · Յոգ · արկեալ եմք , էք , են ։

Գերակատար ։

Եզա · Արկեալ էի , էիր , էր · Յոգ · արկեալ էաք , էիք , էին ։

Ապառնի ։

Եզա · Արկից · արկցես , արկցէ ·
Յոգ · արկցուք , արկջիք՝ արկանիջիք , արկցեն ·

Հրամայական ստորոգութիւն Ներկայ ·

Եզա · Արկ , մի՛ արկաներ ·
Յոգ · արկէք , մի՛ արկանէք ։

Ապառնի ։

Եզա · Արկջի՛ր՝ արկանիջի՛ր՝ արկցե՛ս , արկցէ՛ ·
Յոգ · արկցո՛ւք , արկջի՛ք՝ արկանիջի՛ք , արկցե՛ն ·

Ստո

Ստորադասական որակութիւն Անցեալ։

Եզակ․ Արկեալ իցեմ, արկեալ իցես, արկեալ իցէ․
Յոգն․ արկեալ իցեմք, արկեալ իցէք, արկեալ իցեն։

Ապառնի․

Եզակ․ Արկանիցեմ, արկանիցես, արկանիցէ․
Յոգն․ արկանիցեմք, արկանիցէք, արկանիցեն։

Աներեւոյթ որակութիւն․ Արկանել, արկանելոյ, եւն․
Ընդունելութիւն․ Ներկայ․ Արկող, արկանող․
Անցեալ․ Արկեալ․ Ապառնի․ Արկանելոց․

282․ Օրինակ Կրաւորականին։

Սահմանական որակութիւն Ներկայ․

Եզակ․ Արկանիմ, արկանիս, արկանի․
Յոգն․ արկանիմք, արկանիք, արկանին։

Անկատար․

Եզակ․ Արկանէի, արկանէիր, արկանէր՝ արկանիւր․
Յոգն․ արկանէաք, արկանէիք, արկանէին։

Կատարեալ․

Եզակ․ Արկայ, արկար, արկաւ․
Յոգն․ արկաք, արկայք՝ արկարուք, արկան։

Յարակատար եւ Գերակատար․

Արկեալ եմ, ես, է, եւն։ Արկեալ էի, էիր, էր, եւն։

Ապառնի։

Եզակ․ Արկայց, արկցիս, արկցի․
Յոգն․ արկցուք, արկջիք՝ արկանիջիք, արկցին։

Հրամայական որակութիւն Ներկայ․

Եզակ․ Արկիր՝ մի՛ արկանիր․
Յոգն․ արկարո՛ւք՝ մի՛ արկանիք․

Ապառնի․

Եզակ․ Արկջի՛ր՝ արկցի՛ս, արկցի՛․
Յոգն․ արկցո՛ւք, արկջի՛ք՝ արկանիջի՛ք, արկցի՛ն։

Ստորադասական որակութիւն Անցեալ։

Արկեալ իցեմ, իցես, իցէ, արկեալ իցեմք, իցէք, իցեն։

Ապառ

Ապառնի :

Եզակ. Արկանիցիմ, արկանիցիս, արկանիցի ·
Յոգն. արկանիցիմք, արկանիցիք, արկանիցին :
Աներեւոյթ ներգործութիւն · Արկանել, արկանելոյ · եւն :
Ընդունելութիւն · Ներկայ եւ Անցեալ · Արկեալ, արկեցեալ :
Ապառնի · Արկանելի · արկանելոց :

Խոնարհմունք երկրորդ լծորդութեան՝ Ամ ·

283 · Օրինակ Ներգործականին :

Սահմանական ներգործութիւն Ներկայ ·

Եզակ. Լուանամ, լուանաս, լուանայ ·
Յոգն. լուանամք, լուանայք, լուանան :

Անկատար :

Եզակ. Լուանայի, լուանայիր, լուանայր ·
Յոգն. լուանայաք, լուանայիք, լուանային :

Կատարեալ :

Եզակ. Լուացի, լուացեր, լուաց ·
Յոգն. լուացաք, լուացէք՝ լուացիք, լուացին :

Յարակատար եւ Գերակատար :

Լուացեալ եմ, ես, է · եւն : Լուացեալ էի, էիր, էր · եւն :

Ապառնի ·

Եզակ. Լուացից, լուասցես, լուասցէ ·
Յոգն. լուասցուք, լուասջիք, լուասցեն :

Հրամայական ներգործութիւն Ներկայ ·

Եզակ. Լուա՛ մի՛ լուանար ·
Յոգն. լուացէք՝ մի՛ լուանայք :

Ապառնի ·

Եզակ. Լուասջի՛ր՝ լուասցե՛ս, լուասցէ՛ ·
Յոգն. լուասցո՛ւք, լուասջի՛ք, լուասցե՛ն ·

Ստորադասական ներգործութիւն Անցեալ :

Լուացեալ իցեմ, իցես, իցէ · իցեմք, իցէք, իցեն :

Ապառնի :

Եզակ. Լուանայցեմ, լուանայցես, լուանայցէ ·

Լուա

Յոգ · լուանայցեմք · լուանայցէք · լուանայցեն ·
Աներեւոյթն որակութեան · Լուանալ · լուանալոյ · եւն ։
Ընդունելութիւն · Ներկայ · Լուացող ։
Անցեալ · Լուացեալ ։ Ապառնի · Լուանալոց ։

284 · Օրինակ Կրաւորականին ։

Սահմանական որակութեան Ներկայ ։

Եզա · Լուանիմ · լուանիս · լուանի ·
Յոգ · լուանիմք · լուանիք · լուանին ։

Անկատար ։

Եզա · Լուանայի · լուանայիր · լուանայր՝ լուանիւր ·
Յոգ · լուանայաք · լուանայիք · լուանային ·

Անցեալ ։

Եզա · Լուացայ · լուացար · լուացաւ ·
Յոգ · լուացաք · լուացարուք՝ լուացայք · լուացան ։

Յարակատար եւ Գերակատար ։

Լուացեալ եմ · ես · է · եւն ։ Լուացեալ էի · էիր · էր · եւն ։

Ապառնի ։

Եզա · Լուացայց · լուասցիս · լուասցի ·
Յոգ · լուասցուք · լուասջիք · լուասցին ·

Հրամայական որակութեան Ներկայ ·

Եզա · Լուացիր ·
Յոգ · լուացարուք ·

Ապառնի ։

Եզա · Լուասջի՛ր՝ լուասցիս · լուասցի՛ ·
Յոգ · լուասցո՛ւք · լուասջի՛ք · լուասցին ·

Ստորադասական որակութեան Անցեալ ։

Լուացեալ իցեմ · իցես · իցէ · իցեմք · իցէք · իցեն ·

Ապառնի ։

Եզա · Լուանայցիմ · լուանայցիս · լուանայցի ·
Յոգ · լուանայցիմք · լուանայցիք · լուանայցին ·
Աներեւոյթն որակութեան · Լուանիլ · լուանալոյ · եւն ·
Ընդունելութիւն · Ներկայ եւ Անցեալ · Լուացեալ ·
Ապառնի · Լուանալի · Լուանալոց ։

Խոնարհմանց բայից՝ երրորդ ընդարձակելն Ուլ .

285 . Օրինակ Ներգործականին .

Սահմանական որակութեան Ներկայ .

Եզա . Թողում , թողուս , թողու .
Յոգ . թողումք , թողուք , թողուն :

Անկատար .

Եզա . Թողուի , թողուիր , թողուր .
Յոգ . թողուաք , թողուիք , թողուին :

Կատարեալ .

Եզա . Թողի , թողեր , եթող՝ թող .
Յոգ . թողաք , թողէք՝ թողիք , թողին .

Յարակատար և Գերակատար :

Թողեալ եմ , ես , է . և այլն . Թողեալ էի , էիր , էր . և այլն :

Ապառնի .

Եզա . Թողից , թողցես , թողցէ .
Յոգ . թողցուք , թողջիք , թողցեն :

Հրամայական որակութեան Ներկայ .

Եզա . Թո՛ղ՝ մի՛ թողուր .
Յոգ . Թողէ՛ք՝ մի՛ թողուք .

Ապառնի :

Եզա . Թողջի՛ր՝ թողցե՛ս , թողցէ՛ .
Յոգ . թողցո՛ւք , թողջի՛ք . թողցեն :

Ստորադասական որակութեան Անցեալ .

Եզա . Թողեալ իցեմ , թողեալ իցես , թողեալ իցէ .
Յոգ . թողեալ իցեմք , թողեալ իցէք , թողեալ իցեն :

Ապառնի .

Եզա . Թողուցում , թողուցուս , թողուցու .
Յոգ . թողուցումք , թողուցուք , թողուցուն :

Աներևոյթ որակութեան . Թողուլ , թողլոյ , թողլով . և այլն :
Ընդունելութեան . Ներկայ . Թողօղ . Անցեալ . Թողեալ .
Ապառնի . Թողլոյ :

Օրի

286. Օրինակ Կրաւորականին.

Սահմանականին եղանակութ̄ Ներկայ.

Եզա. Թողանիմ, Թողանիս, Թողանի.
Յոգ. Թողանիմք, Թողանիք, Թողանին.
(կամ ներգործականին պէս՝ Թողում, Թողուս, եւն.)

Անցեալ.

Եզա. Թողայ, Թողար, Թողաւ.
Յոգ. Թողաք, Թողարուք՝ Թողայք. Թողան.

Ապառնի.

Եզա. Թողայց, Թողցիս, Թողցի.
Յոգ. Թողցուք, Թողջիք, Թողցին.

Հրամայականին եղանակութ̄ Ներկայ.

Եզա. Թողի՛ր.
Յոգ. Թողարո՛ւք.

Ապառնի.

Եզա. Թողջի՛ր՝ Թողցիս. Թողցի.
Յոգ. Թողցուք, Թողջի՛ք, Թողցին.
Աներեւոյթ. Թողանիլ, Թողանելոյ. կ. Թողուլ, Թողլոյ.
Ընդունելութ̄. Ներկայ եւ Անցեալ. Թողեալ, Թողեցեալ.
Ապառնի. Թողլի, Թողլոց.
Մնացեալքն բոլոր՝ ներգործականին պէս են (285).

287. Խոնարհմունք չորրորդ լծորդութեան՝ Իմ, են սոցին կրաւորականի օրինակքն (280, 282). Եւ այս օրինակացս վերայ խոնարհելի բայքն՝ թէ ինչպէս ճանաչելի է, տես ներքի գլխոյն մէջը.

ԳԼՈՒԽ. Է.

Ճանաչելու Խոնարհմանց համար.

Ասացաք յառաջ (169), թէ ամ̃ բայք՝ ներգործականք, կրաւորականք, անորոշք եւ չեզոքք խոնարհին չորեքին լծորդութեամբս. զորս պարտ է ճանաչել այսպէս.

288 · Ներգործական բայք ունին զայս երեք ժողովումն՝ եմ, ամ, ում · այսպէս ըստ իւրեանց ժողովութեանն խոնարհին կրաւորականօքն ։ Նման՝ երկրորդ և երրորդ ժողովումն կրաւորականին չէ՛ պարտ խոնարհել յամ ժամանակս · զերէ սահմանականի կատարեալն և ապառնին, և հրամայականն որակութիւն ունին ամենեքեան · սահմանականի ներկայ ունողն քիչ է · և մնացեալքն ներգործական կերպիւ կը դըրվին կրաւորականի տեղ (286) · և թէ կրաւորական կերպն հարկաւոր լինի ամ ժամանակաւ, էական բայիւ խոնարհի այսպէս ։

289 · Սահմանական որակութիւն Ներկայ ։

Որսացեալ լինիմ, որսացեալ լինիս, որսացեալ լինի ·
որսացեալ լինիմք, որսացեալ լինիք, որսացեալ լինին ։

Անկատար ։

Որսացեալ լինէի, որսացեալ լինէիր, որսացեալ լինէր ·
որսացեալ լինէաք, որսացեալ լինէիք, որսացել լինէին ։

Կատարեալ ։

Որսացեալ եղէ, որսացեալ եղեր, որսացեալ եղև ·
որսացեալ եղաք, որսացեալ եղէք, որսացեալ եղեն ։

Յարակատար և Գերակատար ։

Որսացեալ եմ, ես, է · ևն ։ Որսացեալ էի, էիր, էր · ևն ։

Ապառնի ։

Որսացեալ եղէց, որսացեալ եղիցիս, որսացեալ եղիցի ·
որսացեալ եղիցուք, որսացեալ եղիջիք, որսացել եղիցին

Հրամայական որակութիւն Ներկայ ։

Որսացեալ լե՛ր՝ մի՛ որսացեալ լինիր ·
որսացեալ լերո՛ւք՝ մի՛ որսացեալ լինիք ։

Ապառնի ։

Որսացեալ լիջի՛ր՝ որսացեալ լիցիս, որսացեալ լիցի ·
որսացեալ լիցո՛ւք, որսացեալ լիջի՛ք, որսացեալ լիցին ։

Ստորադասական որակութիւն Անցեալ ։

Որսացեալ իցեմ, իցես, իցէ · իցեմք, իցէք, իցեն ։

Ապառնի ։

Որսացեալ լինիցիմ, որսացեալ լինիցիս, լինիցի ·

Որ

Որսացեալ լինիցիմք, որսացեալ լինիցիք, լինիցին:
Աներեւոյթն որոշակի · Որսացեալ լինել, լինելոյ, եւն:
Ընդունելութի՟ւն · Ներկայ և Անցեալ · Որսացեալ ·
Ապառնի · Որսալի, որսալոյ:

290 · Անորոշ բայն ունի միայն լծորդութիւն՝ իմ · ապա խոնարհի կրաւորական օրինակօք (280 · 282):

291 · Չեզոք բայն՝ չորս լծորդութիւնս ևս ունի · անոր համար չորս լծորդութ՟ կարէ խոնարհիլ · զոր լաւ ճանաչելոյն համար՝ դիտեցիր յառաջ և զայս:

292 · Չեզոք բայն երեք կերպ է · ներգործակերպ, կրաւորակերպ, երկատեսակ:

293 · Ներգործակերպ չեզոք բայքն են, որոց լծորդութիւն է եմ, ամ, և միայն ներգործական օրինակին վերայ խոնարհին շիտակ · ինչպէս՝ Աղօթեմ, անցանեմ, անսամ · եւն (301 · 304 · 308): Ահա այս բայքս ասին ներգործակերպ չեզոքական · որ ասել է թէ, կերպը ներգործական է, ամմա ինքն չեզոք է:

294 · Կրաւորակերպ չեզոքն է, որոյ լծորդութիւն է իմ · և կրաւորական օրինակին վերայ խոնարհի · ինչպէս՝ Աշխատիմ, զբօսանիմ, երկնչիմ · եւն: (314 · 316): Ահա սոցա կերպն կրաւորական է · ամմա ինքեանք չեզոք են:

295 · Երկատեսակն՝ երկու տեսակ ասել է · որ մէկ բայն՝ երկու տեսակի վերայ՝ ներգործականի և կրաւորականի վերայ խոնարհելով կատարէ չորս որակութիւնը: Երկատեսակ լինի չեզոքն և ներգործականն:

296 · Երկատեսակ չեզոք բայքն են, որոց լծորդութիւն է եմ, ամ, ում · ինչպէս՝ Իջանեմ, արդարանամ, այտնում · եւն (305 · 309 · 312): Ահա այսոքիկ ներգործական օրինակին վերայ շիտակ չեն խոնարհիր · այլ՝ սահմանական որակութ՟ ներկայն և անկատարն խոնարհի ներգործականի վերայ, և անցեալքն խոնարհին կրաւորականի վերայ:

297 . Երկատեսակ ներգործականքն են՝ Ընդհատանում, զգենում, (307 . 311) . որ ադքա եւս խոնարհին քիչ մի ներգործականի վերայ, եւ մնացեալն կրաւորականի վերայ . Ասոր համար այսպիսի բայքս ասեն երկատեսակ .

298 . Են եւ երեք կերպ բայք՝ խոտորնակ, պակասաւոր, եւ անդէմ . որոց խոնարհմունքն ոչ վճարին վերոյ գրեալ կանոնօք . Այլ զայս ամենայն իւր կարգի ցուցանեմք յառաջիկ ուրիշ ուրիշ յօդուածով . զորս խոնարհելով միայնքդ ան Ած շնորհօքն .

Յօդուած . Ա .

Բայք առաջին լծորդութեան՝ եմ . որք խոնարհին առաջին օրինակաւն Գրեմ (275) .

299 . Ներգործականք .

Ազատեմ ,	ատեցի ,	ատեա՛ .	խուրթարեմ .
Բաժանեմ ,	նեցի ,	նեա՛ .	զատեմ . փայընեմ .
Գործեմ ,	ծեցի ,	ծեա՛ .	բան բանիմ .
Դրոշմեմ ,	մեցի ,	մեա՛ .	նշան զարնեմ .
Եղծեմ ,	ծեցի ,	ծեա՛ .	աւրեմ .
Զանազանեմ ,	նեցի ,	նեա՛ .	անջատեմ .
Պահպանեմ ,	նեցի ,	նեա՛ .	սաքլըյեմ . պահեմ .
Ջախջախեմ ,	խեցի ,	խեա՛ .	կոտրտեմ . փշրեմ .
Սերմանեմ ,	նեցի ,	նեա՛ .	թօխում ցանեմ .
Տածեմ ,	ծեցի ,	ծեա՛ .	թիմար ընեմ .
Քարոզեմ ,	զեցի ,	զեա՛ .	քարոզ տամ .
Օրհնեմ ,	նեցի ,	նեա՛ .	օրհնեմ . ալղըշլըյեմ .
Ասեմ ,	սացի ,	սա՛ .	ըսեմ .
Բացասեմ ,	սացի ,	սա՛ .	չէ՛ ըսեմ .
Ստորասեմ ,	սացի ,	սա՛ .	հա՛ ըսեմ .
Գիտեմ ,	տացի ,	տեա՛ .	գիտենիմ .
Նախագիտեմ ,	տացի ,	տեա՛ .	առաջուց գիտեմ .

Սոցին նոյնին կրաւորականին՝ հրամայականի ներկայ չունի .

Ծան

300. Ածանցեալք.

Ապրեցուցանեմ, ցուցի, ցեր, ցոյց. եցո՛.	ապրեցընեմ.
դիեցուցանեմ, եցուցի, ցեր, ցոյց. եցո՛.	ծծցընեմ.
կեցուցանեմ, եցուցի, ցեր, ցոյց. եցո՛.	ապրեցընեմ.
Արդարացուցանեմ, ցուցի, ցեր, ցոյց. ցո՛.	արդար ընեմ.
զօրացուցանեմ, ացուցի, ցեր, ցոյց. ացո՛.	ուժովցնեմ.
փութացուցանեմ, ցուցի, ցեր, ցոյց. ացո՛.	արտորցընեմ.

Այսպէս ապառնիքն լինին՝ ապրեցուցից, ցուցես, ցուցէ. ցուցուք, ցուսջիք՝ ցուցանիջիք, ցուցեն. ապրեցուսջի՛ր՝ ցուցանիջի՛ր՝ ցուցե՛ս, եւն.

Եւ սոցին կրաւորականի տեղը՝ կը դրուի եւրեանց նախատիպ չէզոքն այսպէս.

Ապրեցուցանիմ ըսելու տեղը՝ կըսուի Ապրիմ.
Արդարացուցանիմ ըսելու տեղը՝ կըսուի Արդարանամ.
զօրացուցանիմ ըսելու տեղը՝ կըսուի զօրանամ. եւն.

301. Աներգործակերպ Չէզոք.

Աղօթեմ,	թեցի,	թեա՛.	աղօթք ընեմ.
գոչեմ,	չեցի,	չեա՛.	կանչեմ. պոռամ.
դիմեմ,	մեցի,	մեա՛.	վրայ վազեմ.
համբերեմ,	րեցի,	րեա՛.	սաբր ընեմ.
մարդասիրեմ,	րեցի,	րեա՛.	սէր ցուցընեմ.
Նիրհեմ,	հեցի,	հեա՛.	մրափեմ.
սուլեմ,	լեցի,	լեա՛.	ըսլըխ չալեմ.
տեւեմ,	ւեցի,	ւեա՛.	դիմանամ.
կարեմ,	կարացի, ցեր, րաց.	կարօղ լեր.	կրնամ.

Բայց՝ որ խոնարհին երկրորդ օրինակաւն՝ Արկանեմ, (281)

302. Ներգործականք.

Անկանեմ, անկի, կեր, էանկ՝ անկ. ա՛նկ.	հասնեմ.
արծարծեմ, ծի, ծեր, արծարծ. արծա՛րծ.	հրահրեմ.
բեկանեմ, կի, կեր, եբեկ. բե՛կ.	կոտրեմ.
գտանեմ, տի, տեր, եգիտ. գի՛տ.	գտնեմ. [illegible] ընեմ.
դիզանեմ, զի, զեր, եդէզ. դէ՛զ.	[illegible] ընեմ.
եղծանեմ, ծի, ծեր, եղծ. ե՛ղծ.	աւրեմ.

զանգանեմ, դի, դեր, զանգ · զա՛նգ · շաղփեմ · ճփեմ ։
լուծանեմ, ծի, ծեր, ելոյծ · լո՛յծ · արձակեմ ։
լքանեմ, լքի, լքեր, ելիք՝ լիք · լի՛ք · երեսէ ձգեմ ։
խցանեմ, խցի, խցեր, եխից · խի՛ց · խծկեմ ։
կլանեմ, կլի, կլեր, եկուլ · կո՛ւլ · կլլեմ ։
հատանեմ, տի, տեր, եհատ՝ հատ · հա՛տ · կտրեմ ։
հարցանեմ, ցի, ցեր, եհարց · հա՛րց · հարցնեմ ։
հեղձանեմ, ձի, ձեր, եհեղձ՝ հեղձ · հե՛ղձ · խեղդեմ ։
պագանեմ, գի, գեր, եպագ · պա՛գ · պագնեմ ։
սպանանեմ, նի, ներ, սպան · սպա՛ն · սպաննեմ ։
տեսանեմ, սի, սեր, ետես · տե՛ս · տեսնեմ ։
ցուցանեմ, ցի, ցեր, եցոյց · ցո՛յց · ցուցնեմ ։
քերծանեմ, ծի, ծեր, եքերծ · քե՛րծ · փոքր կեղվեմ ։
օծանեմ, օծի, ծեր, եօծ՝ օծ · օ՛ծ · եղ դնեմ ։
Ածեմ, ածի, ծեր, եած՝ ած · ա՛ծ · բերեմ · դնեմ
բերեմ, բերի, րեր, եբեր՝ բեր · բե՛ր · վրայ ունենամ ։
հանեմ, հանի, ներ, եհան՝ հան · հա՛ն · հանեմ · չըքարայեմ ։

Վերոյգրեալ բայքն, թէ կրաւորականսն զմանանկա՛ն, այսպէս · Արծարծեմ, դիզեմ, եղծեմ, եւն · խոնարհին ըստ օրինակաւն (275) ։

303 · Ածանցեալք ·

Արբուցանեմ, ցի · ցեր, բոյց · բո՛ · խմցնեմ ·
դարձուցանեմ, ցի · ցեր, ձոյց · ձո՛ · դարձնեմ ·
զարթուցանեմ, ցի, ցեր, թոյց · թո՛ · արթնցնեմ ։
թագուցանեմ, ցի · ցեր · գոյց · գո՛ · պահեմ ։
իջուցանեմ, ցի · ցեր · ջոյց · ջո՛ · իջեցնեմ ։
մատուցանեմ · ցի, ցեր, տոյց · տո՛ · մօտեցնեմ ·
ուսուցանեմ, ցի · ցեր, սոյց · սո՛ · սորվեցնեմ ·
ջեռուցանեմ, ցի, ցեր, ռոյց · ռո՛ · տաքցնեմ ·
փախուցանեմ · ցի, ցեր, խոյց · խո՛ · փախցնեմ ·
Նաւ՝ Ընկլուզանեմ, զի, զեր, լոյզ · լո՛ · ջրին մէջ ընեմ ·
կորուսանեմ, սի, սեր, րոյս · րո՛ · կորսնցնեմ ·
սուզանեմ, զի, զեր, եսոյզ՝ սոյզ · զո՛ · ջրին մէջ ընեմ ·
փլուզանեմ · զի, զեր, փլոյզ · լո՛ · զեա՛ · փլցնեմ ·

Այսցին կրաւորականք՝ հրամայականի ներկայ չունին ։

Սեր

304. Ներգործակերպ Չեզոք.

Անցանեմ, անցի, ցեր, կ'անց՝ անց. ա՛նց. անցնիլ.
ելանեմ, ելի, ելեր, ել. ե՛լ. ելլել.
իջանեմ, իջի, իջեր, էջ. է՛ջ. իջնալ.
մտանեմ, մտի, մտեր, եմուտ՝ մուտ. մո՛ւտ. մտնել.
համբերեմ, բերի, րեր, համբեր. համբե՛ր. դիմանալ.
հասանեմ, հասի, սեր, եհաս. հա՛ս. հասնիլ.

305. Երկատեսակ Չեզոք.

Զիջանեմ, զիջի, ջեր, ջաւ. զիջի՛ր. ցածնալ. հոժար ըլլալ.
Հեծանեմ, հեծայ, ծար. ծաւ. հեծի՛ր. հեծնալ.
յանցանեմ, ցեայ, ցուցեալ. յանցի՛ր. [illegible] ընել.

Յօդուած. Է՟.

Բայք երկրորդ լծորդութեան՝ ամ, որք խոնարհին օրինակաւն Լուանամ (283).

306. Ներգործականք.

Աղամ, աղացի, աղա՛. աղօրիքներով մանրել.
զգամ, զգացի, զգա՛. [illegible].
խոկամ, կացի, կա՛. մտմտալ.
կարդամ, դացի, դա՛. կարդալ.
հաստատամ, տացի, տա՛. հաստատել.
ողբամ, բացի, բա՛. ձայնիւ վերայ լալ.
Բանամ, բացի, ցեր, եբաց՝ բաց. բա՛ց. բացել.
Թանամ, թացի, ցեր, եթաց՝ թաց. թա՛ց. թրջել.
լամ, լացի, ցեր, ելաց՝ լաց. լա՛ց. ողբալ.
բառնամ, բարձի, ձեր, եբարձ՝ բարձ. բա՛րձ. վերցընել.

Սոցին կրաւորականն մի՛ խոնարհեր յամ ժմնկս (288).

307. Երկատեսակ Ներգործականք.

Ընդդիմանամ, տացայ, ցի՛ր. ընդդիմանալ.
խոստանամ, տացայ, ցի՛ր. խոստում ընել. խօսք տալ.
Իմանամ, մացայ, իմա՛, ցի՛ր. [illegible].
մոռանամ, ռացայ, ռա՛, ցի՛ր. մոռնալ.

Հո

Հեգամ, գացայ, ցի. գա՛. [illegible] ընել. խօսք՝ [illegible] ընել.
Սգամ, սգացայ՝ ցի, գա՛, ցէ՛ր. սուգ նստիլ.

308. Ներգործակերպ Չէզոք.

Անսամ, սացի, անսա՛. մտիկ ընել.
Գնամ, գնացի, գնա՛. երթալ.
Ծփամ, ծփացի, փա՛. տալղալանմիշ ըլլալ.
Կռնչամ, չացի, չա՛. կուկու ձայն հանել.
Հաղամ, ղացի. ղա՛. հողալ.
Մնամ, մնացի, նա՛. կենալ. դիմանալ.
Փռնգամ, գացի, գա՛. փռնգտալ.
Կամ, կացի, ցեր, եկաց. կա՛ց, մի՛ կար. կենալ.
Կեամ, կեցի, ցեր, եկեաց. կեա՛ց, մի՛ կեցցես. ապրիլ.

309. Կրաւորակերպ Չէզոք.

Արդարանամ, րացայ, ացի՛ր. արդար ըլլալ.
Գոհանամ, հացայ, ացի՛ր. շնորհք [illegible].
Իմաստնանամ, նացայ, ացի՛ր. խելօք ըլլալ.
Արբենամ, բեցայ, եցի՛ր. գինովնալ.
Ողջամ, ջացայ, ջացի՛ր՝ ջա՛. [illegible] ըլլալ.
Ընթանամ, թացայ, թացի՛ր՝ թա՛. վազել.
Մարգարէանամ, ցայ, րէա՛ց՝ ցի՛ր՝ րէա՛. ըլլալ [illegible] գիտնալ.
Փութամ, թացայ, թացի՛ր՝ թա՛. [illegible].
Բաղձամ, ձացայ՝ ցի, ձա՛. [illegible] ընել.
Լողամ, ղացայ՝ ցի, ղա՛. [illegible] ըլլալ.
Փղձկամ, կացայ՝ ցի, կա՛. լացով լեցուիլ.
Աղամ, ղացայ՝ ցի, ղացի՛ր՝ ղա՛. [illegible].
Ջանամ, նացայ՝ ցի, նացի՛ր՝ նա՛. ջանք ընել.
Անձկամ, կացայ, կա՛. [illegible].
Յուսամ, սացայ, սա՛. ումուտ ընել.
Դառնամ, դարձայ, դա՛րձ՝ ձի՛ր. դառնալ.
Համբառնամ, բարձայ, բա՛րձ՝ ձի՛ր. վեր ելլել. բարձրանալ.

Այս չէզոքականքս՝ երբ փոխեն լծորդութիւն, կը փոխեն և խոնարհմունքն այսպէս. Կռնչեմ, փռնչեմ, եւն. և լծորդին (275): Ծփիմ, լողիմ, փղձկիմ, եւն, և խոնարհին (314).

Յօդուած · Գ ·

Բայք երրորդ լծորդութեան՝ ում · որք խոնարհին օրինակաւ Թողում (284) ·

310 · Ներգործականք ·

Առնում, առի, առեր, եառ՝ առ · ա՛ռ · ալըրըմ · ալըյօրըմ ·
արգելում, գելի, լեր, արգել · արգե՛լ · հըլըգօյարըմ ·
գերծում, ծի, ծեր, եգերծ՝ գերծ · գե՛րծ · Թրաշ ըտէրըմ ·
զեղում, զեղի, ղեր, եզեղ՝ զեղ · զե՛ղ · շառ ըշըրընըմ ·
զենում, զենի, ներ, եզեն՝ զեն · զե՛ն · մօքթէրըմ ·
թքնում, թքի, թքեր, եթուք · թո՛ւք թիւքիւրըմ ·
լիզում, զի, զեր, ելիզ · լե՛զ՝ լի՛զ · եալարըմ ·
կիզում, կիզի, զեր, եկէզ · կէ՛զ · եագարըմ · եագըյօրըմ ·
հեղում, հեղի, ղեր, եհեղ · հե՛ղ · տօքէրըմ ·
հերձում, հերձի, ձեր, եհերձ · հե՛րձ · եարարըմ · պարալարըմ ·
յաւելում, ւելի, լեր, յաւել · յաւե՛լ · արթըրըրըմ ·
ստեղծում, ստեղծի, ծեր, ստեղծ · ստե՛ղծ · խալգ ըտէրըմ ·
քերծում, քերծի, ծեր, եքերծ · քե՛րծ · գազըր կէշըրըմ ·
լնում, լցի, ցեր, ելից՝ լից · լի՛ց · տօլտըրըրըմ ·
խնում, խցի, ցեր, եխից · խի՛ց · թըգարըմ · տըխըլըրըմ ·

Ներգործականքս՝ կարեն փոխել լծորդութիւն և խոնարհմունքն այսպէս · Գերծեմ, հերձեմ, ստեղծեմ, եւն · և խոնարհին (299) · Գերծանեմ, թքանեմ, կիզանեմ · հերձանեմ, ստեղծանեմ, եւն · և լծորդին (302) ·

311 · Երկատեսակ Ներգործականք ·

Զգենում, զգեցայ, զգեցի՛ր · կէյինիրըմ ·
ընթեռնում, թերցայ, թերցի՛ր · օգուրըմ ·
կլնում, կլայ, կո՛ւլ · եութարըմ ·
հանում, հանայ, հա՛ն · չըգարըրըմ ·
սկսնում, սկսայ, սկսի՛ր · պաշլարըմ ·

312 · Երկատեսակ Չէզոք ·

Յառնում, յարեայ, յարուցեալ · յա՛ր · գալգարըմ ·

զարթ

զարթնում, թեայ, թուցեալ · թի՛ր · արթնընամ ։
թագնում, գեայ, գուցեալ · գի՛ր · [illegible] ։
խրտնում, տեայ, տուցեալ · տի՛ր · [illegible] ։
փախնում, խեայ, խուցեալ · խի՛ր · փախչիմ ։
զբօսնում, զբօսայ, զբօսէ՛ր · սէիր ըլնել ։
հեծնում · հեծայ, հեծէ՛ր · հեծանեմ ։
ջեռնում, ջեռայ, ռուցեալ · ջեռի՛ր · տաքնամ ։
Զբաղնում · ղեցայ · ղէ՛ր · պարապողութիւն առնեմ ։
պշնում, պշեայ՝ պշեցայ · պշէ՛ր · երեսն՝ ի վեր նայեմ ։
քաղցնում, ցեայ · ցէ՛ր՝ ցեա՛ց · անօթենամ ։
երդնում, երդուեայ, ուայց · ուիցես · ուէ՛ր · երդում ընել ։

Այս չէզոքականքս կարեն փոխել լծորդութիւն · ամենայն խոնարհմունքն չեն փոխեր · ինչպէս՝ Թագչիմ · խրտուիմ · փախչիմ · ջեռանիմ · զբաղիմ · եւն (316 · 314)

Յօդուած · Դ ։

Բայք չորրորդ լծորդութեան՝ իմ · որ խոնարհին օրինակաւ Գալիմ (280) ։

313 · Անորոշք ։

Ախորժիմ, ժեցայ, ժեա՛ց՝ ժեա՛ · հաւընել ։
խոստովանիմ, նեցայ, նեա՛ց՝ նեա՛ · իկրար ընել ։
Խորհիմ, հեցայ, հեա՛ց՝ հեա՛ · մըտմըտամ ։
Խօսիմ, սեցայ · սեա՛ց՝ սեա՛ · խօսիմ · զրուցեմ ։
Համարիմ, րեցայ, րեա՛ց՝ րեա՛ · համրեմ ։ սեպեմ ։
Հաւանիմ, նեցայ, նեա՛ց՝ նեա՛ · հաւնիմ ։
Շահիմ · հեցայ, հեա՛ց՝ հեա՛ · վաստըկիմ ։
Բարբառիմ · ռեցայ, ռեա՛ · խօսք խօսիմ ։
Դատիմ · տեցայ, տեա՛ · դատաստան ընել ։
Դաւանիմ, նեցայ, նեա՛ · հաւատքը իկրար ընել ։
Կամիմ · մեցայ, մեա՛ց · ուզեմ ։
Մրժակիմ, կեցայ, կեա՛ց · կռիւ առնել ։

Այսքան անորոշքս՝ կարեն լինել ներգործական այսպէս · Ախորժեմ · Համարեմ · Շահեմ · Դաւանեմ · Մրժակեմ · և խոնարհին (275) ։

314. Կրաւորակերպ Չեզոք.

Աշխատիմ, տեցայ, տեա՛յց՝ տեա՛. չալըշմիշ ըլլալ.
Բնակիմ, կեցայ, կեա՛յց՝ կեա՛. գօնմիշ ըլլալ.
Դադարիմ, րեցայ, րեա՛յց՝ րեա՛. հանգիստ առնել.
Հաշտիմ, տեցայ, տեա՛յց՝ տեա՛. բարըշիլ.
Հրաժարիմ, րեցայ, րեա՛յց՝ րեա՛. ետ կենալ.
Ապրիմ, րեցայ, րեա՛յց. ապրիլ.
Կարօտիմ, տեցայ, տեա՛յց. կարօտնալ.
Յիմարիմ, րեցայ, րեա՛յց. խենթ ըլլալ.
Սառիմ, ռեցայ, ռեա՛յց. պաղ կտրիլ.
Քրտնիմ, նեցայ, նեա՛յց. քրտնիլ.

Չեզոքականքս՝ կարեն փոխել լծորդութիւն և խոնարհմունքն այսպէս։ Բնակեմ, դադարեմ (301). Կարօտանամ, յիմարանամ (307). Սառնում, քրտնում (312) եւս.

Բայց որ խոնարհին օրինակաւն Արկանիմ (282), չէ լծումնին ու խոնարհումնին տալը հետ մին կերպ են.

315. Անորոշք.

Ագանիմ, ագայ, ագուցեալ, ագի՛ր՝ ագերո՛ւք՝ ագի՛ք. հագնիլ.
Ծնանիմ, ծնայ, ծնեալ. ծնի՛ր. ծնիլ.
Ուսանիմ, ուսայ, սեալ. սի՛ր. սորվիլ.
Սկսանիմ, սայ, սայց, ցիս, ցի. ցուք. ջի՛ք. սի՛ր՝ սեա՛յց. սկսիլ.
Սկսիմ, սկսայ, սայց, սեցիս, եցի. սի՛ր՝ սեա՛. պաշլամիշ.
Ափածանիմ, ափածայ, ծեալ. ծի՛ր. ղաչընմիշ ըլլալ.
Վարկանիմ, կայ, կուցեալ. կեա՛. սեպել.
Տանիմ, տարայ, րայց, ցիս, ցէ՝ ցի. տա՛ր. մի՛ տանի՛ր. տանել.

316. Կրաւորակերպ Չեզոք.

Զբօսանիմ, սայ, սի՛ր, սարո՛ւք. սէֆա ընել.
Մեռանիմ, ռայ, ռի՛ր, ռարո՛ւք. մեռնիլ.
Ջերանիմ, րայ, րի՛ր, րարո՛ւք. տաքնալ.
Ագանիմ, գայ, գի՛ր, գարո՛ւք՝ գերո՛ւք. գօնմիշ ըլլալ.
Անկանիմ, կայ, կի՛ր, կերո՛ւք. ընկնիլ.

բուսանիմ, սայ, սի՛ր, սարուք՝ սէք. բիթէրիմ.
զիջանիմ, ջայ, ջի՛ր, ջարուք՝ ջէք. ինէրիմ.
սնանիմ, սնայ. նի՛ր, նարուք՝ նէք. պէսլէնմիշ օլուրըմ.
վերադարձիմ. ձայ, ձի՛ր, ձարուք՝ ձէք. կէրիյէ տէօնէրիմ.
Նստիմ, ստայ, նի՛ստ, ստարուք՝ ստէք. օթուրըմ.
Հասանիմ, սայ, սի՛ր, սերուք՝ սէք. [illegible].
Երկնչիմ, կեայ, կուցեալ. կի՛ր, կերուք. քօրքարըմ.
Հանգչիմ, գեայ, գուցեալ. գի՛ր, գերուք. ռահաթլանըրըմ.
Մարտնչիմ, տեայ, տուցեալ. տի՛ր, տերուք. ճէնկ էտէրիմ.
Թռչիմ, ռեայ, ռուցեալ. ռի՛ր, ռերուք՝ ռիք. ուչարըմ.
Փախչիմ, խեայ, խուցեալ. խի՛ր, խերուք՝ խիք. քաչարըմ.

Այս չէզոքականքս կարեն փոխել լծորդութիւն և խոնարհմունքն այսպէս. Օ իջանեմ. հասանեմ. եւն (305. 304): Օ բօսնում. ջեռնում. եւն (312).

Յօդուած. Է.

Թէ ի՞նչ է Անօրինակ բայն, և ի՞նչպէս խոնարհի.

Անօրինակ բայքն են, որք ՚ի խոնարհմունս ՚ի ժամանակս ինչ այլևայլ ձայնիւ խօսորին ՚ի սահմանականի ներկայէն. զորս տե՛ս կարգաւ.

318. Անօրինակ բայս՝ Առնեմ, խոնարհի այսպէս.

Ներգործական.

Սահմանական որակութիւն Ներկայ.

Առնեմ, առնես, առնէ. առնեմք, առնէք, առնեն.

Անկատար.

Առնէի, առնէիր, առնէր. առնէաք, առնէիք, նէին.

Անցեալ.

Արարի, արարեր, արար. արարաք, արարէք՝ արարիք. արարին.

Յարակատար և Գերակատար.

Արարեալ եմ, ես, է. եւն. Արարեալ էի, էիր, էր. եւն.

Առն

Ապառնի.

Արարից, արասցես, արասցէ. արասցուք, արասջիք՝ առնիջիք, արասցեն:

Հրամայական դրութեան Ներկայ.

Արա՛, մի՛ առներ. արարէք, մի՛ առնէք.

Ապառնի.

Արասջի՛ր՝ առնիջի՛ր՝ արասցե՛ս, արասցէ՛. արասցո՛ւք եւն.

Ստորադասական դրութեան Անցեալ.

Արարեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն.

Ապառնի.

Առնիցեմ, ցես, ցէ. առնիցեմք, ցէք, ցեն.

Աներեւոյթ դրութ. Առնել, առնելոյ, առնելով. եւն.

Ընդունելութ. Առնող, արարող, արարիչ. Արարեալ. Առնելոց.

Կրաւորական.

Սահմանական դրութեան Ներկայ.

Առնիմ, առնիս, առնի. առնիմք, առնիք, առնին.

Անցեալ.

Արարայ, արարար, արարաւ. արարաք, արարայք, արարան:

Ապառնի.

Արասցայց, արասցիս, արասցի. արասցուք, արասջիք, ցին.

Հրամայ. Ներկայ. մի՛ Առնիր. մի՛ առնիք.

Ապառնի. Արասջի՛ր՝ առնիջի՛ր՝ արասցի՛ս, արասցի. եւն.

Ստոր. Ապառ. Առնիցիմ, ցիս, ցի. առնիցիմք, ցիք, ցին.

Աներեւոյթ. Առնել, առնելոյ, առնելով. եւն:

Ընդունելութ. Արարեալ. Առնելի, առնելոց:

Այլ մնացեալքն լինին ըստ ներգործականին.

319. Անօրինակ բայս՝ Գանեմ, խոնարհի այսպէս:

Ներգործական.

Սահմանական դրութեան Ներկայ.

Գանեմ, գանես, գանէ. գանեմք, գանէք, գանեն.

Անկատար.

Գանէի, գանէիր, գանէր. գանէաք, գանէիք, գանէին.

Կատարեալ .

Եդի , եդիր , եդ . եդաք , եդիք , եդին .

Յարակատար եւ Գերակատար .

Եդեալ եմ , ես , է . եւն ։ Եդեալ էի , էիր , էր . եւն .

Ապառնի .

Դիցից , դիցես , դիցէ . դիցուք , դիջիք , դիցեն .
Հրամ . Արգել . Դի՛ր , մի՛ դներ . դի՛ք , մի՛ դնէք .
Ապառ . Դիջի՛ր` դիցե՛ս , դիցէ՛ . դիցո՛ւք , դիջի՛ք , դիցե՛ն .
Ստոր . Անցեալ . Եդեալ իցեմ , իցես , իցէ . իցեմք , եւն ։
Ապառնի . Դնիցեմ` դիցեմ , ցես , ցէ . ցեմք , ցէք , ցեն .
Աներեւոյթ . Դնել , դնելոյ , դնելով . եւն .
Ընդունելութ . Դնող . Եդեալ . Դնելոց .

Կրաւորական .

Սահմանական որպիսութե Ներկայ .

Դնիմ , դնիս , դնի . դնիմք , դնիք , դնին .
Անկատար . Դնէի , դնէիր , դնէր` դնիւր . դնէաք , եւն .

Կատարեալ .

Եդայ , եդար , եդաւ . եդաք , եդայք , եդան .

Ապառնի .

Եդայց , դիցիս , դիցի . դիցուք , դիջիք` դնիջիք , դիցին
Հրամ . Արգել . Եդեա՛լ լեր , մի՛ դնիր . եդարո՛ւք , մի՛ դնիք
Ապառ . Դիջի՛ր` դիցի՛ս , դիցի՛ , դիցո՛ւք , դիջի՛ք , եւն ։
Ստոր . Ապառ . Դնիցիմ` դիցիմ , ցիս , ցի . ցիմք , ցիք , ցին
Աներեւոյթ . Դնիլ , դնելոյ , դնելով . եւն ։
Ընդունելութ . Եդեալ . Դնելի . դնելոց ։
Եւ մնացեալքն լինին ըստ Ներգործականին .

320 . Խոտորնակ բայս` Լսեմ , խոնարհի այսպէս .

Ներգործական .

Սահմ . Ներկ . Լսեմ , լսես , լսէ . լսեմք , լսէք , լսեն .
Անկատար . Լսէի` լսէիր , լսէր . լսէաք , լսէիք , լսէին ։

Կատարեալ .

Լուայ , լուար , լուաւ .
լուաք , լուարուք` լուայք , լուան .

Ապ

Յարակատար եւ Գերակատար.

Լուեալ եմ, ես, է. եւն: Լուեալ էի, էիր, էր. եւն.

Ապառնի.

Լուայց, լուիցես, լուիցէ. լուիցուք, լուիջիք, լուիցեն

Հրամ. Ներկ. Լուր, մի՛ լսեր. լուարո՛ւք, մի՛ լսէք:

Նոյն. Լուիջի՛ր՝ լուիցե՛ս, լուիցէ՛. լուիցո՛ւք, եւն.

Անոր. Ներկայ. Լուեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, եւն.

Ապառնի. Լսիցեմ՝ լուիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն.

Աներեւոյթ. Լսել, լսելոյ, լսելով. եւն:

Ընդունելութ. Լսօղ. Լուեալ. Լսելոց.

Կրաւորական.

Սահմ. Ներկ. Լսիմ, լսիս, լսի. լսիմք, լսիք, լսին.

Անկա. Լսէի, լսէիր, լսէր՝ լսիւր. լսէաք, լսէիք, լսէին

Կատարեալ. Լսելի եղէ, լսելի եղեր, լսելի եղեւ. եւն:

Ապառնի. Լուիցիմ, ցիս, ցի. լուիցիմք, ցիք, ցին.

Հրամայ. Ներկ. Լսելի՛ լեր. լսելի՛ լերուք.

Ապառնի. Լսելի՛ լինիջիր, ցիս, ցի. եւն.

Անոր. Ապառ. Լսիցիմ, ցիս, ցի. լսիցիմք, ցիք, ցին.

Աներեւոյթ. Լսիլ, լսելոյ, եւն: Ընդուն. Լուեալ. Լսելի

Այլ ժամանակքն լինին ըստ ներգործականին.

321. Խոտորնոյ չէզոքս՝ Մեղանչեմ, խոնարհի այսպէս.

Սահմանական եղանակաւ Ներկայ:

Մեղանչեմ, ես, է. մեղանչեմք, էք, են:

Անկ. Մեղանչէի, էիր, էր. մեղանչէաք, էիք, էին.

Կատարեալ.

Մեղայ, մեղար, մեղաւ.
մեղաք, մեղայք՝ մեղարուք, մեղան:

Յարակատար եւ Գերակատար.

Մեղուցեալ եմ, ես, է. եւն. Մեղուցեալ էի, էիր, էր.

Ապառնի.

Մեղայց, մեղիցես, մեղիցէ. մեղիցուք, մեղիջիք, ցեն:

Հրամայական եղանակաւ Ներկայ:

Մեղի՛ր, մի՛ մեղանչեր. մեղարո՛ւք, մի՛ մեղանչէք.

Նոյն. Մեղիջի՛ր՝ մեղիցե՛ս, մեղիցէ՛. մեղիցո՛ւք, եւն:

Անո

Ստոր. Անցեալ. Մեռուցեալ իցեմ, իցես, իցէ. եւն.
Ապառնի. Մեռանիցիցեմ՝ մեռիցեմ, ցես, ցէ. ցեմք, եւն.
Աներեւոյթ. Մեռանել, մեռանելոյ, մեռանելով, եւն.
Ընդուն. Մեռանող. Մեռուցեալ. Մեռանելի. մեռանելոց.

322. Այսօրինակ չէզոքս՝ Յառնեմ, խոնարհի այսպէս.

Սահմանական որոշուէ Ներկայ։
Յառնեմ, նես, նէ. յառնեմք, նէք, նեն.
Անց. Յառնէի, էիր, էր. յառնէաք, էիք, էին.
Աորիստ։
Յարեայ, յարեար, յարեաւ. յարեաք, րեայք, րեան.
Յորդորական եւ Պաղատական։
Յարուցեալ եմ, ես, է. եւն։ Յարուցել էի, էիր, էր. եւն
Ապառնի.
Յարեայց, յարիցես, յարիցէ. րիցուք, րիջիք, րիցեն.
Հրամ. Ներկ. Արի՛, մի՛ յառներ. արիք, մի՛ յառնէք.
Ապառնի. Յարիջի՛ր՝ յարիցե՛ս, յարիցէ՛. յարիցու՛ք, եւն։
Ստոր. Անց. Յարուցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, եւն.
Ապառնի. Յառնիցեմ՝ յարիցեմ, ցես, ցէ. ցեմք, եւն.
Աներեւոյթ. Յառնել, յառնելոյ. յառնելով, եւն.
Ընդուն. Յառնող. Յարուցեալ. Յառնելի. նելոց.

323. Այսօրինակ բայս՝ Տամ, խոնարհի այսպէս.

Ներգործական։

Սահմ. Ներկ. Տամ, տաս, տայ. տամք, տայք, տան.
Անկատար. Տայի, տայիր, տայր. տայաք, տայիք, տային.
Աորիստ։
Ետու, ետուր, ետ. տուաք, ետուք, ետուն.
Յորդորական եւ Պաղատական.
Տուեալ եմ, ես, է. եւն. Տուեալ էի, էիր, էր. եւն.
Ապառնի. Տաց, տացես, տացէ. տացուք, տաջիք, տացեն.
Հրամ. Ներկ. Տո՛ւր, մի՛ տար. տո՛ւք, մի՛ տայք.
Ապառնի. Տաջի՛ր՝ տացե՛ս, տացէ՛. տացո՛ւք, տաջի՛ք, ցե՛ն։

Ստոր

Ստոր․ Անցեալ․ Տուեալ իցեմ, իցես, իցէ․ իցեմք, եւն․
Ապառնի․ Տայցեմ, տայցես, ցէ․ տայցեմք, ցէք, ցեն․
Աներեւոյթ․ Տալ, տալոյ, տալով, եւն․
Ընդունելութիւն․ Տուօղ, տուիչ․ Տուեալ․ Տալոց․

Կրաւորական․

Սահ․ Ներկ․ Տուեալ լինիմ, տուեալ լինիս, եւն (289)․
Անկատար․ Տուեալ լինէի, տուեալ լինէիր, լինէր․ եւն․

Անցեալ։

Տուայ, տուար, տուաւ․ տուաք, տուայք, տուան․

Ապառնի։

Տուեալ եղէց, տացիս, տացի․
տուեալ եղիցուք, տաջիք, տացին․

Հրամայական Ներկայ (ապառնի)․

Ապառ․ Տաջի՛ր՝, տացի՛ս, տացի՛․ տացո՛ւք, տաջի՛ք, տացի՛ն․
Ստոր․ Ապառ․ Տուեալ լինիցիմ, տուեալ լինիցիս, եւն․
Աներեւոյթ․ Տուեալ լինիլ, տուեալ լինելոյ, եւն․
Ընդունելութ․ Տուեալ, տուեցեալ․ Տալի, տալոց․
Իսկ մնացեալքն լինին ըստ Ներգործականին․

324․ Խոտորնակ չորրորդ բայս՝ Գամ, խոնարհի այսպէս․

Սահ․ Ներկ․ Գամ, գաս, գայ․ գամք, գայք, գան․
Անկա․ Գայի, գայիր, գայր․ գայաք, գայիք, գային․

Անցեալ։

Եկի, եկիր, եկն․ եկաք, եկայք՝ եկիք, եկին․

Յարակատար եւ Գերակատար․

Եկեալ եմ, ես, է․ եւն։ Եկեալ էի, էիր, էր․ եւն․

Ապառնի։

Եկից, եկեսցես, եկեսցէ․
եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն․

Հրամայ․ Ներկ․ Ե՛կ, մի՛ գար․ եկա՛յք, մի՛ գայք․
Ապառնի․ Եկեսջի՛ր՝ եկեսցե՛ս, եկեսցէ՛․ եկեսցո՛ւք, եւն
Ստոր․ Անցեալ․ Եկեալ իցեմ, իցես, իցէ․ իցեմք, եւն․
Ապառնի․ Գայցեմ, ցես, ցէ․ գայցեմք, ցէք, ցեն․
Աներ․ Գալ, գալոյ, եւն։ Ընդուն․ Եկեալ․ Գալի, գալոց

Յօդուած. Դ.

Թէ ո՞յք են Պակասաւոր բայքն, և ո՞րպէս խոնարհին.

Պակասաւոր բայք ասին, որք ՚ի խոնարհելն՝ ՚ի ժամանակս ինչ և յորակութիւս և ՚ի դէմս այնքան այլայլին ձայնիւ, մինչև համարին պակասեալ, և իբր ՚ի միմեանց լցուցանեն զպակասութիւն իւրեանց. կամ իսկապէս պակասին իսպառ. զորս տե՛ս կարգաւ.

326. Պակասաւոր բայս՝ Ըմպեմ, խոնարհի այսպէս.

՚Ներգործական.

Սահմանական որակութիւն ՚Ներկայ.

Ըմպեմ, ըմպես, ըմպէ. ըմպեմք, ըմպէք, ըմպեն.

Անկատար.

Ըմպէի, ըմպէիր, ըմպէր. ըմպէաք, ըմպէիք, ըմպէին.

Անցեալ.

Արբի. արբեր. եարբ՝ արբ.
արբաք, արբէք՝ արբիք, արբին.

Յարակատար և Գերակատար.

Արբեալ եմ, ես, է. եւն. Արբեալ էի, էիր, էր. եւն.

Ապառնի.

Արբից, արբցես, արբցէ.
արբցուք, արբջիք՝ ըմպիջիք, արբցեն.

Հրամ. ՚Ներկայ. Արբ, մի՛ ըմպեր. արբէք, մի՛ ըմպէք.
Ապառնի. Արբջի՛ր՝ արբցե՛ս. արբցէ՛. արբցո՛ւք, եւն.
Ստոր. ՚Անցեալ. Արբեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, եւն.
Ապառնի. Ըմպիցեմ, ցես, ցէ. ըմպիցեմք, ցէք, ցեն.
Աներեւոյթ. Ըմպել, ըմպելոյ, ըմպելով, եւն.
Ընդունելութ. Ըմպօղ. Արբեալ. Ըմպելոց.

Կրաւորական.

Սահմանական որակութիւն Անցեալ.

Արբայ, արբար, արբաւ. արբաք, արբայք, արբան.
Ստոր. Ապառ. Ըմպիցիմ, ցիս, ցի. ըմպիցիմք, ցիք, ցին.

Աներեւոյթ. Ըմպել, ըմպելոյ, ըմպելով. եւն.
Ընդունելութիւն. Ըմբեալ. Ըմպելի. ըմպելոց.
Որոց սահմանականի եւ հրամայականի ներկայք եւ ապառնիքն ձեւանան ճակման բային (289).
Իսկ մնացեալքն լինին ըստ ներգործականին.

327. Պակասաւոր բայն Ճանաչեմ, խոնարհի այսպէս.

Ներգործական.

Սահմանական եղանակի Ներկայ.
Ճանաչեմ, ես, է. Ճանաչեմք, էք, են.
Անկատար.
Ճանաչէի, էիր, էր. Ճանաչէաք, էիք, էին.
Անցեալ.
Ծանեայ, ծանեար, ծանեաւ.
ծանեաք, ծանեայք՝ ծաներուք, ծանեան.
Յարակատար եւ Գերակատար.
Ծանուցեալ եմ, ես, է. եւն. Ծանուցեալ էի, էիր, էր. եւն.
Ըղձական.
Ծանեայց, ծանիցես, ցէ. ծանիցուք, նիջիք, նիցեն.
Հրամայական եղանակի Ներկայ.
Ծանի՛ր, մի՛ ճանաչեր. ծաներո՛ւք՝ ծանի՛ք, մի՛ ճանաչէք.
Ըղձական. Ծանիջի՛ր՝ ծանիցե՛ս, ցէ՛. ծանիցո՛ւք, եւն.
Ստոր. Անցեալ. Ծանուցեալ իցեմ, իցես, իցէ. եւն.
Ըղձական. Ծանիցեմ՝ ճանաչիցեմ, ցես, ցէ. եւն.
Աներեւոյթ. Ճանաչել, ճանաչելոյ, ճանաչելով. եւն.
Ընդունելութիւն. Ճանաչօղ. Ծանուցիչ. Ծանուցեալ.
Ճանաչելոց.

Կրաւորական.

Սահմ. Ներկ. Ճանաչիմ, չիս, չի. Ճանաչիմք, չիք, չին.
Անկտ. Ճանաչէի, էիր, չէր. Ճանաչէաք, էիք, էին.
Անցեալ.
Ծանուցայ, ցար, ցաւ. ծանուցաք, ցայք, ցան.
Ըղձ. Ծանուցայց, նիցիս, նիցի. ծանիցուք, ջիքն եւն.
Ստոր. Ըղձ. Ծանիցիմ՝ ճանաչիցիմ, ցիս, ցի. ցիմք, եւն.

Աներևոյթ . Ձանձրանիլ , Ձանձրանելոյ , Ձանձրանելով . ևն .
Ընդունելութիւն . Ձանձրացեալ : Այլ մնացեալքն լինին ըստ Ներգործականին .

328 . Պակասաւոր բայ՝ Ուտեմ , խոնարհի այսպէս .

Ներգործական :

Սահմանականին եղանակին Ներկայ .

Ուտեմ , ուտես , ուտէ . ուտեմք , ուտէք , ուտեն .
Անկատար . Ուտէի , էիր , էր . ուտէաք , էիք , էին .

Անցեալ .

Կերի , կերեր , եկեր՝ կեր . կերաք , կերիք՝ կերէք , կերին .

այսպէս և՝

Կերայ , կերար , կերաւ . կերաք , կերայք , կերան .

Յարակատար և Գերակատար :

Կերեալ եմ , ես , է . ևն . Կերեալ էի , էիր , էր . ևն .

Ապառնի .

Կերայց՝ կերից , կերիցես , կերիցէ .
կերիցուք , կերիջիք՝ ուտիջիք , կերիցեն .
Հրամ . Ներկայ . Կե՛ր , մի՛ ուտեր . կերա՛յք՝ կե՛ք , մի՛ ուտէք
Ապառնի . Կերիջի՛ր՝ ուտիջի՛ր՝ կերիցե՛ս , ցէ՛ . ևն .
Ստոր . Անցեալ . Կերեալ իցեմ , իցես , իցէ . ևն .
Ապառնի . Ուտիցեմ , ցես , ցէ . ուտիցեմք , ցէք , ցեն .
Աներևոյթ . Ուտել , ուտելոյ , ուտելով . ևն .
Ընդ . Կերող՝ կերիչ . Ուտող՝ ուտիչ . Կերեալ . Ուտելոց

Կրաւորական :

Սահմանականին եղանակին Ներկայ :

Ուտիմ , ուտիս , ուտի . ուտիմք , ուտիք , ուտին .

Ապառնի :

Կերայց , կերիցիս , կերիցի .
կերիցուք , կերիջիք՝ ուտիջիք . կերիցին :

Հրամայականին եղանակին Ներկայ (չունի) .

Ապառնի . Կերիջի՛ր՝ ուտիջի՛ր՝ կերիցիս , կերիցի . ևն .
Ստոր . Ապառնի . Ուտիցիմ , ցիս , ցի . ցիմք , ցիք , ցին .
Աներևոյթ . Ուտիլ , ուտելոյ , ուտելով . ևն .
Ընդունելութիւն . Կերեալ . Կերելի . Ուտելի . ուտելոց .
Այլ մնացեալքն լինին ըստ Ներգործականին .

Պակա

329․ Պակասաւոր չէզոք՝ Երթամ, խոնարհի այսպէս․

Սահմանական եղանակ՝ Ներկայ․

Երթամ, երթաս, երթայ․ երթամք, երթայք, երթան

Անկատար․

Երթայի, երթայիր, երթայր․ երթայաք, երթայիք, երթային․

Կատարեալ․

Չոգայ, չոգար, չոգաւ․ չոգաք, չոգայք, չոգան․

Յարակատար և Գերակատար․

Երթեալ եմ, ես, է․ ևն․ Երթեալ էի, էիր, էր․ ևն․

Ապառնի․

Երթայց, երթիցես, երթիցէ․ երթիցուք, ջիք, ցեն․

Հրամայական եղանակ՝ Ներկայ․

Ե՛րթ, մի՛ երթար․ երթա՛յք, մի՛ երթայք․

Ապառնի․

Երթիջի՛ր՝ երթիցե՛ս, երթիցէ՛․ երթիցո՛ւք, ևն․
Ստոր․ Անցեալ․ Երթեալ իցեմ, իցես, իցէ․ իցեմք, ևն․
Ապառնի․ Երթայցեմ՝ երթիցեմ, ցես, ցէ․ ցեմք․ ևն․
Աներևոյթ․ Երթալ, երթալոյ, երթալով․ ևն․
Ընդուն․ Երթօղ․ Երթեալ․ Երթալի․ երթալոց․

330․ Պակասաւոր Ներգործ՝ Ունիմ, խոնարհի այսպէս․

Սահմանական եղանակ՝ Ներկայ․

Ունիմ, ունիս, ունի․ ունիմք, ունիք, ունին․

Անկատար․

Ունէի, ունէիր, ունէր․ ունէաք, ունէիք, ունէին․

Կատարեալ․

Կալայ, կալար, կալաւ․ կալաք, կալարուք՝ կալայք, կալան․

Յարակատար և Գերակատար․

Կալեալ եմ, ես, է․ ևն․ Կալեալ էի, էիր, էր․ ևն․

Ապառնի․

Կալայց, կալցիս՝ կալցես, կալցի՝ կալցէ․ կալցուք, կալջիք՝ ունիջիք, կալցին՝ կալցեն․

Հրամայական եղանակ՝ Ներկայ․

Կա՛լ՝ կա՛, մի՛ ունիր․ կալէ՛ք՝ կալարո՛ւք, մի՛ ունիք․

Ապառ

Ըղձական ·

Կալջի՛ր՝ ունիջի՛ր՝ կալցի՛ս, կալցի՛ · կալցո՛ւք · ևն ։

Ստորադասական որպիսութեան Անցեալ ·

Կալեալ լիցեմ, լիցես, լիցի · կալեալ լիցեմք, լիցէք, լիցեն ·

Ըղձական ·

Ունիցիմ, ցիս, ցի · ունիցիմք, ցիք, ցին ·
Աներևոյթ · Ունիլ, ունելոյ, ունելով · ևն ·
Ընդունելութիւն · Ունող · Կալեալ · Ունելի, ունելոց ·

Նոյնպէս խոնարհին և սոքին ·
Ակնունիմ, ակնկալայ, ակնկա՛լ · [illegible] ունիմ ·
Ընդունիմ, ընկալայ, ընկա՛լ, մի՛ ընդունիր · հաւանիմ ·
Վերընդունիմ, վերընկալայ, վերընկա՛լ · խոստովան ընեմ ·

331 · Պակասաւոր չէզոք՝ Մարթիմ, խոնարհի այսպէս ·

Սահ · Ներկ · Մարթիմ, թիս, թի · մարթիմք, թիք, ևն ·
Ըղձակ · յոգ · Մարթասցուք, մարթիջիք, մարթիցին
Ստոր · Ըղձակ · Մարթիցիմ, ցիս, ցի · ցիմք, ցիք, ցին ։

Մնացեալ պակասականին տեղը խոնարհին բայքս՝
Մարթանամ, մարթեմ ։

332 · Պակասաւոր չէզոք՝ Պարտիմ, խոնարհի այսպէս ·

Սահ · Ներկ · Պարտիմ, տիս, տի · պարտիմք, տիք, տին ·
Անկ · Պարտէի, տէիր, տէր՝ տէւր · էաք, էիք, էին ·
Ստոր · Ըղձակ · Պարտիցիմ, ցիս, ցի · ցիմք, ցիք, ցին ·
Աներևոյթ · Պարտիլ ·

333 · Պակասաւոր եւս՝ Գո՛գ, խոնարհի այսպէս ·

Ներգործական ·

Հրաման · Ներ · Գո՛գ, (ասա՛) · գոգէ՛ք, (ասացէ՛ք) ·
Ըղձական · Գոգջի՛ր՝ գոգցե՛ս, գոգցէ՛ ·
գոգցո՛ւք, գոգջի՛ք, գոգցե՛ն ·

Նոյնպէս պակասաւոր համարին և (273 · 274) ·

Յօդուած. Է.

Թէ զի՛նչ է Անդէմ բայն, և քանի՞ բաժանի.

Անդէմ ասի այն բայն, որ երրորդ դիմի կերպիւ վարի յերկս դէմս. ի՛նչպէս՝ Արժա՛ն է. բարի՛ է. պէ՛տք են. Ամպէ. անձրևէ. երևի. թուի. ևն. Ահա՛ սոցա կերպն՝ երրորդ դէմ երևի. ամմա՝ ոչ դէմն հաստատ է, և ոչ թիւն հաստատ է. զերէ՝ շարադրութե մէջ այս կերպիւս կարեն ցուցանել զերեք դէմն՝ եզակի և յոգնակի. ի՛նչպէս՝ *Յիշեցուցանել ձեզ այսուհետև չա՛րժէ ինձ || յոհ. [illegible]. 5.

* Լաւ է քեզ ոչ ուխտել՝ քան ուխտել և ոչ հատուցանել || ժող. Ե. 4.

* Լաւ էր նմա՝ թէ . . . արկանէր ՚ի ծով, քան թէ գայթակղեցուցանիցէ զմի ոք ՚ի փոքրկանցս յայսցանէ || ղուկ. ժէ. 2. [illegible].

* Բազում նեղութեք պարտ է մեզ մտանել յարքայութիւն Այ || գործ. ժդ. 21.

* Պիտո՛յ է ձեզ համբերութիւն || եբր. Ժ. 36.

* Նոցա այսպէս թուեցաւ || յոհ. ժա. 13.

* Հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սբյ և մեզ՝ մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ || գործ. ժե. 28.

Այլ յիրաւի՝ լինակապէս անդէմ է աներևոյթն, որ բնաւին դէմ չունի. ամմա՝ այս վերոյգրեալ բայքն ևս ասին անդէմ, զի չունին յատուկ դէմ. որոց ի՛նչ դէմ և ի՛նչ թիւ լինելն՝ մօտ եղած դերանունն յայտնեցոյց.

335. Անդէմ բայքն բաժանին յերկու՝ բնական անդէմ, փայեշխական անդէմ.

336. Բնական անդէմն է, որ առաջին և երկրորդ դէմ չունի, միայն երրորդ դիմաւ վարի յերկս դէմս. ի՛նչպէս՝ Ա՛նկ է. արժա՛ն է. բարի՛ է. բարւո՛ք է. պէ՛տք են. օրէնք են. ևն (339. 340).

337. Փայեշխական անդէմն է, որ երեք դէմն ևս կարէ

կարէ առնուլ. և այս՝ կամ այն գործն մարդոյ վայելուչ չլինելոյն համար՝ դնի միայն երրորդ դիմաւ. որպէս են գործք տարերաց, անասնոց. Ամպէ. անձրևէ. խխնջէ. մլաւէ. ոռնայ, ևն. (341, 342) և կամ՝ քանզի վայելչութեան համար հասարակաւոր վարի երրորդ դիմաւ. որպէս են բայքս՝ Ասի. երևի, թուի, (343). յաճախէ, վայելէ. ևն.

338. Այսպէս անդէմ կարէ լինել և եզակի երրորդ դէմն յարակատարին և գերակատարին և ստորադասականի անցելոյն. ինչպէս՝ Գրեալ է, արկեալ էր, լուացեալ իցէ. ևն.

Խոնարհմունք բնական Անդէմ բայից.

339. Օրինակ առաջին.

Սահմ. Ներկայ.	Արժա՛ն է.
Անկատար.	Արժա՛ն էր.
Կատարեալ.	Արժա՛ն եղև.
Ապառնի.	Արժա՛ն եղիցի. կամ լիցի.
Ստոր. Ապառնի.	Արժա՛ն իցէ, կամ լինիցի.

Այսպէս խոնարհին և սոքին. Անկ է. բարի՛ է. բա՛ւ է. զի՛ղջ է. ըմբո՛ն է. լա՛ւ է. խի՛ստ է. կա՛մ է. համո՛յ է. հա՛րկ է. ձա՛նձ է. մա՛րթ է. յա՛յտ է. պատկա՛ն է. պա՛րտ է. պիտո՛յ է. սովո՛ր է. վայե՛լ է. օգո՛ւտ է. օրէ՛ն է. ևն.

340. Օրինակ երկրորդ.

Սահմ. Ներկայ.	Պէ՛տք են.
Անկատար.	Պէ՛տք էին.
Ապառնի.	Պէ՛տք եղիցին.
Ստոր. Ապառ.	Պէ՛տք իցեն.

Այսպէս խոնարհին և սոքին. Կա՛մք են. կարծի՛ք են. մե՛ղք են. պէ՛տք են. օրէ՛նք են. ևն.

Խոնարհմունք չէզոքական Անդէմ բայից.

341. Օրինակ առաջին.

Առաջ. Եզակի.	Անձրեւէ.
Ներկայ.	Անձրեւէր.
Անցաւոր.	Անձրեւեաց.
Յարակատար.	Անձրեւեալ է.
Գերակատար.	Անձրեւեալ էր.
Ապառնի.	Անձրեւեսցէ.
Հրամ. Ապառնի.	Անձրեւեսցէ՛, անձրեւեսցի՛.
Ստորադ. Ներկայ.	Անձրեւեալ իցէ.
Ապառնի.	Անձրեւիցէ, անձրեւիցի.

Նոյնպէս խոնարհին և այսք. Ձմեռէ. արժէ. Թխպէ. ծագէ. խոխոջէ. կայծակէ. կարկտէ. հատանէ, նի. Ձիւնէ. մրրկէ. յաջողէ. սխալէ. վայելէ. ցօղէ. փայլատակէ. եւն. Բառաչէ. զռնչէ. խանչէ. խրխնջէ. կաղկանձէ. հաչէ. մլաւէ. մնչէ. մռնչէ. եւն.

342. Օրինակ երկրորդ.

Առաջ. Եզակի.	Այգանայ.
Ներկայ.	Այգանայր.
Անցաւոր.	Այգացաւ.
Յարակատար.	Այգացեալ է.
Գերակատար.	Այգացեալ էր.
Ապառնի.	Այգասցի.
Հրամ. Ապառնի.	Այգասցի.
Ստորադ. Ներկայ.	Այգացեալ իցէ.
Ապառնի.	Այգանայցէ.

Նոյնպէս խոնարհին և այսքն. Առաւօտանայ. տաղքանայ. գիշերանայ. երեկոյանայ. լուսանայ. ձղփայ. մթանայ. շատանայ. որոտայ. եւն. Բզզայ. գրգայ. զռնչայ. ճռճռայ. ռռնայ. ղղղայ. եւն. Որանց կատարեալն լինի՝ որոտաց, ղղղաց. եւն. և ապառնին՝ գրգասցէ, եւն.

343 · Օրինակ երրորդ ։

Սահմ · Ներկայ ·	Երևի ·
Անկատար ·	Երևէր ·
Կատարեալ ·	Երևեցաւ ·
Յարակատար ·	Երևեալ է ·
Գերակատար ·	Երևեալ էր ·
Ապառնի ·	Երևեսցի ·
Հրամ · Ապառնի ·	Երևեսցի ·
Ստոր · Անցեալ ·	Երևեալ իցէ ·
Ապառնի ·	Երևիցի ·

Այսպէս խոնարհին և այլքն · Ասի · Թուի · լսի · կարծի · համարի · համբերի · պատահի · պլտի · ցաւ ևն ։ Ահա այսքան որ իմացար բայն , ապա ցուցանելոց և ընդունելութիւն · զոր տեսեր խոնարհմանց մէջն ·

ԳԼՈՒԽ · Ը ։

Թէ զի՛նչ է Ընդունելութիւն ։

Ընդունելութիւն է մասն բանի՝ ծնեալ ՚ի բայէ (279) · որ նշանակէ զբանն և զգործն՝ ժամանակաւ · ինչպէս՝ Քարոզող · քարոզիչ · քարոզեալ · քարոզելի · քարոզելոց · ևն ։ Ահա բառս քարոզող՝ ցուցանէ բանն և քարոզելոյ գործն՝ ներկայ ժամանակի մէջ · և բառս քարոզեալ՝ նշանակէ բանն կրաւորական քարոզելի գործոյ մէջ՝ յապառնին ։

345 · Ապա իմացիր՝ որ ընդունելութիւն խապուլ ընելատեղ է · զի յիւր վերայ ընդունէ զնշանակութիւն անուան և բայի · զէրէ բառս քարոզող՝ քարոզ տուող մարդն և նորին քարոզելոյ գործն՝ ՚ի միասին ցուցանէ · որ թէ քարոզող մարդը զինքն իմանաս , ահա անուն է · և թէ այն մարդուն քարոզ տալն իմանաս , ահա՛ բայ է · այսպէս իմացիր և այլս ։

346 · Բառն ընդունելութեան լինող այս հինգ մասնիկս է · ող · իչ · եալ · ելի · լոց : Տպած գրեանց մէջը ող շատ է · ամմա՝ ի հին ձեռագիրս՝ ող ևս գտանի · զէրէ մեր նախնիքն հասարակաբար վարեցին ող, կամ օղ · Ապա ինչ բառ եղակի ուղղականի վերջը՝ այս հինգ մասնկան մէկն որ ունի, այն բառն ընդունելութեան է :

Յօդուած · ա ·

Թէ քանի՞ է հետևմունք Ընդունելութեան :

Ընդունելութիւն զիւր հետևմունս առնու յանուանէ և բայէ · և է վեց · սեռ · ժամանակ · տեսակ · թիւ · հոլով և հոլովումն :

348 · Սեռք ընդունելութեան՝ բայից պէս չորս են · Ներգործական (237) · գրօղ · գրիչ · գրեալ · գրելոց · Կրաւորական (238) · գրեցեալ · գրեալ · գրելի · գրելոց · Անորոշ (240) · խորհեալ, խորհեցեալ · խորհելի · խորհելոց Չեզոք (241) · ամաչօղ · չեալ · չեցեալ · չելի · չելոց · ևն · Ահա երևեցաւ, որ ներգործականին՝ չէ չլինիր · Կրաւորականին և անորոշին՝ ող, իչ, չունի : Եալն և լոցն՝ չորս սեռն ևս ունի : Նաև չեզոքին իչն՝ այնքան քիչ է, որպէս թէ հիչ է :

349 · Ժամանակն է երեք (279) · Ներկայ՝ գրօղ · գրիչ · Անցեալ՝ գրեալ, գրեցեալ : Ապառնի՝ գրելոց, գրելի ·

350 · Տեսակն է երեք · Նախատիպ՝ գրելի, ևն · Ածանցեալ՝ անգրելի · լուսատուիչ · փութացուցեալ : Բաղադրեալ՝ անմահացուցեալ, ևն :

351 · Թիւն է երկու · Եզակի՝ պատուելի, ևն · Յոգնակի՝ մեծարեալք · ևն :

352 · Հոլովն է տասն · Ուղղական, սեռական, ևն (99)

353 · Հոլովումն՝ անուան պէս է (112) : Հապա՝ իչն հոլովի այսպէս · Փրկիչ, փրկչի · փրկչաւ, ևն (129) · Ելին՝ հոլովի այսպէս · Սիրելի, սիրելւոյ, սիրելեաւ, (133) ·

Նոյնն՝ հոլովի այսպէս․ Կոշկեալ, գոշկելոյ, գոշկելովն եւ (146)․ Նոյն չէ՛ հոլովիլ ։

Նաեւ ողն՝ հոլովի այսպէս ։

	Եզակի․	Յոգնակի․
Ուղղ․	Սիրող կամ սիրօղ․	Սիրողք, կամ սիրօղք․
Սեռ․	Սիրողի․	Սիրողաց․
Գործ․	Սիրողիւ․	Սիրողօք․
Պար․	զՍիրողիւ․	զՍիրողօք․
Հայց․	զՍիրող, կամ օղ․	զՍիրողս, կամ օղս․
Պատմ․	զՍիրողէ․	զՍիրողաց․
Անշէ․	'ի Սիրողէ․	'ի Սիրողաց․
Տեղ․	'ի Սիրող, սիրողի․	'ի Սիրողս, սիրողաց․
Ներգ․	'ի Սիրողի․	'ի Սիրողս, կամ օղս․
Կոչ․	ո՜վ Սիրող, կամ սիրօղ ։	ո՜վ Սիրողք, կամ սիրօղք ։

Կատարեցան գլխաւոր մասունքն բանի․ մնացեալքն 'ի վերայ սոցա մտածին հետեւմունքի պէս․ հապա այսու հետեւ հեշտ է ուսանիլն Ա՟յ շնորհօքն ։

ԳԼՈՒԽ․ Թ․

Թէ զի՛նչէ՞ Նախադրութ՟ին, եւ քանի՞ բաժանի․

Նախադրութ՟ին է մասն բանի՝ որ հոլովելի մասանց յառաջն դնի ։ Հոլովելի մասունքն են՝ անուն, դերանուն, դերբայ, ընդունելութ՟ի ։ Ապա նախադրութ՟ին այս չորս մասանց յառաջն դնի ․

355․ Նախադրութ՟ին բաժանի յերկու՝ հոլովակերտ, հոլովառու ․

356․ Հոլովակերտ նախդիրն է, որ հոլովելի մասանց յառաջն դնելով՝ կերտէ եւ շինէ զկերպ կերպ հոլովս․ եւ են սոքա զ․ 'ի․ յ․ 'ի յ․ առ․ առ 'ի․ ց․ ընդ ։ օրգոն՝ զատուածն, զիս, զգրելոյ․ 'ի փրկողէ, յազգս․ 'ի յարկանել․ առ փրկեալս․ առ 'ի նմանէ․ ցտէր․ ընդ դպրելոյն գրելն. եւն. Ըստ հոլովակերպս՝ զ, շինէ զպարառական, զհայցական և զպատմական հոլովն. Հոլովակերպք՝ ՚ի, յ, ՚ի յ, առ ՚ի, կերտեն զսկզբնական՝ զտրական և զներգոյականն. Հոլովակերպս՝ ց, կերտէ միայն զտրականն. Նաև առ, ընդ, զտրական և զներգոյականն:

357. Հոլովառու նախադրութիւնք են, որ զհոլովելի մասունս առնուն իւրեանց խնդիր. և այն խնդիր եղած բառին հեթրափոխն՝ բան մի նշանակեն. և սոքա՝ տասներեք տեսակ են. Տեղական. դասական. ժամանակական. պատճառական. նմանական. ներհակական. զատական. կցորդական. փոխարինական. ծածկական. գերադրական. բաղդատական. միջնորդական. Նաև այս տեսակաց մեկնութիւն և իւրեանց նախդիրքն տե՛ս յառաջի յօդուածդ. և սերտելով միայն ա՛ռ Այ շնորհօքն.

Յօդուած. ԺԵ.

Թէ զի՛նչ է Մեկնութիւն տեսակաց նախդրութեան, և ո՛րն է իւրաքանչիւր տեսակի Նախդիրն:

Տեղականքն են՝ որ տեղի իմացուցանեն. և են սոքա. Ի վերայ. ՚ի վերոյ. ՚ի ներքոյ. ստորոյ. ՚ի մէջ. ՚ի մէջէ. շառաջէառ. առաջի. առ ընթեր. մօտ. մերձ. հեռի. դէպ. հանդէպ. յանդիման. դէմ յանդիման. յետուստ. շուրջ. շուրջանակի. կոյս. ՚ի կողմէ. յայս կոյս. յետ կոյս. ՚ի վեր կոյս. ՚ի վայր կոյս. յաջմէ. ընդ աջմէ. յահեկէ. ՚ի ձախմէ. յերկրէ. մինչ. մինչև. ՚ի վեր քան. անդր քան. ստորոյ քան. առ. ընդ. եւն: օրինակ՝ *Ո՛չ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ աշտանակի. . . . այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան Մատթ. Ե. 15. 16.

359. Դասականքն են, որ կարգ իրաց ցուցանեն. և են սոքա. Նախ. յետոյ. առաջի. յառաջնոյ. ՚ի համարի. ՚ի կարգի. յետոյ քան. ՚ի վերջոյ քան. առաջի քան. նախ քան. եւն.

օրինակ իմն՝ *Որ գայ զկնի իմ, ընդ խաւար մի՛ գնասցէ ||յովհ · Ը · 12 ։

*Առաջի նոցա երթայ, և ոչխարքն զհետ նորա երթան ||յովհ · Ժ · 4 ։

360 · Ժամանակականքն են, որ զժամանակ նշանակեն · և սոքա են ։ Յետ · մերձ · մօտ · մինչ · մինչև · յառաջ քան · յետ քան · նախ քան · հետէ · առ · ևն ։ զո՛ր օրինակ՝ *Որդեակ՝ 'ի մանկութենէ քում ընկա՛լ զուսումն, և մինչև 'ի ծերութիւն գտցես զիմաստութիւն ||եկեղեց · Զ · 18 ։

361 · Պատճառականքն են, որ զպատճառ սեպհական ցուցանեն · և են սոքա ։ Վասն · աղագս · յաղագս · աղագաւ · պատճառաւ · 'ի դէպս · 'ի հանդերձ · առ · ևն ։ օրինակ իմն՝ *Վասն բազմանալոյ անօրէնութեան՝ ցամաքեսցի սէր բազմաց ||մատթ · ԻԴ · 12 ։

362 · Նմանականքն են, որ զնմանութիւն ուրոյնութիւն իմացուցանեն · և են սոքին ։ Օրէն · նման · հանգոյն · ատչէ · իբր · իբրև · իբրու · որպէս · զորանաչ · ըստ · ևն ։ զո՛ր օրինակ՝ *Ամ ոսկի՝ առ նովաւ (այս առաջի իմաստութե) իբրև սակաւ մի աւազ, և որպէս կաւ համարեսցի արծաթ՝ առաջի նր ||իմաս · Է · 9 · [illegible] ։

363 · Ներհակականքն են, որ զընթ կամ դէմ լինել նշանակեն · և սոքին են · Ներհակ · հակառակ · դէմ · ընդդէմ · ևն ։ օրինակ՝ *Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ՝ և հոգի հակառակ մարմնոյ ||գաղա · Ե · 17 ։

364 · Զատականքն են, որ զխնդիրն զատեալ ցուցանեն · և են սոքա ։ Զատ · հեռի · մեկուսի · առանձին · բաց · բայց · բացայտ · 'ի բացեայ · որէշ · որոշ · առ · ևն ։ զո՛ր օրինակ *Հաւատք առանց գործոց մեռեալ են ||յակոբ · Բ · 20 ։

365 · Կցորդականքն են, որ խնդրոյն հետ կից ցուցանեն · և սոքա են ։ Կից · հետ · զհետ · հանդերձ · ընդ · ևն ։ օրինակ իմն՝ *Խնդրեա՛ զխաղաղութի, և երթ զհետ նորա ||սաղմ · ԼԳ · 15 ։

366 · Փոխարինականքն են, որ այն խնդիր եղած բառին տեղն (մուխապելէ) նշանակեն · և սոքին են Փոխան · փոխանակ · փոխարէն · 'ի տեղի · ընդ · ևն ։ զո՛ր օրինակ

*ԱԷ

*Մի՛ չար փոխանակ չարի հատուցանէր, կամ բամբասանս ընդ բամբասանաց || Ա̄. պետ. Գ̄. 9։

367. Ծածկականքն են, որ յայն խնդիրսն գաղտուկ ցուցանեն. և են սոքին։ Ծածուկ· գաղտ· գաղտնի· ցանխոյս· լռելեայն· ևն̃։ օրինակ՝ *Յօնման որդի կորեալ սակս գողս ցգողութիւն ՚ի մասնեփայ || Երեմ. խ. 15։

368. Գերադրականքն են, որ զայլ ինչ աւելի քան զխնդիրսն նշանակեն. և են սոքա։ Գեր· գեր ՚ի վերոյ· ՚ի վեր քան· գեր քան· աւելի քան· յաւելեալ քան· առաւել քան· անդր քան· ևն̃։ զոր օրինակ՝ *Գինի և երաժշտականութիւն զուարթացուցանեն զսիրտս· ՚ի վեր քան զերկաքանչիւրսն՝ իմաստութիւն || Եկլեզ. խ. 20

369. Բաղդատականն է, որ զխնդիրն ուրիշ մօտ բերելով՝ աւելի կամ պակաս ցուցանէ. և է միայն այս՝ քան. օրինակ իմն՝ *Լաւ է անուն բարի՝ քան զմեծութիւն բազում. և քան զարծաթ և զոսկի՝ շնորհք բարիք || Առակ. իբ̄. 1։

370. Միջնորդականն՝ նշանակէ զխնդիրն միջնորդ միանձի. և է բառս՝ ՚ի մէջ։ օրինակ իմն՝ *Մահ և կեանք ՚ի մէջ լեզուի || Առակ. ժը̄. 21։ Նա՝ խնդիր առնուլն սոցա, տես ՚ի ներքոյ յօդուածս։

Յօդուած. Բ̄.

Թէ զո՞ր հոլով խնդրեն Նախդրութիւնք.

◆

Հոլովատու Նախադրութիւնքն առնուն զխնդիր վեց հոլովիւն՝ սեռական, գործիական, պարառական, հայցական, սկզբնական, տրական. զորս դասեմք յըստորև.

371. Սեռական առող Նախադրութիւնքն են սոքին. Ի վերոյ· ՚ի վերայ· ՚ի ներքոյ· արտաքոյ· ՚ի մէջ· ՚ի մէջի· առաջէտս· առաջի· յետ· յետի· առընթեր· հանդէպ· յանդիման· յետոյսոսն· ՚ի կողմէ· յորս կողմս· յայս կողմս· յայն կողմս· յետ կողմս· ՚ի վեր կողմս· ՚ի վայր կողմս· յաղագս· ըստ հետէ· ՚ի ձեռն· վասն· յանդիման

գիտան : Ա ձին · յառաջնոյ · յետոյ · ՚ի համարի · ՚ի նորագիւտ : Մ առն սակս · յաղագս · առաջնորդ · պատճառաւ · ՚ի պատճառս · ՚ի վերայ · ՚ի համարս : Ա օրէն · սակէ · գոյանալ · դէմ · ընդդէմ · հանդիմանակ · ներհակ : Աստանօր : Հեռա · չհեռա : Փոխանակ · փոխանակել · փոխարէն · ՚ի տեղի : Ի ձեռն · առ · ընդ · ևն · զոր օրինակ՝

*Որ ՚ի բարձունս զքար ձգէ, ՚ի վերայ գլխոյ նորա անկցի || Եկլեզ · ԻԷ · 28 ·

*Խելամուտ իցես լայնութեան որ ՚ի ներքոյ երկնից · || Յոբ · ԼԸ · 18 ·

*Աղաչեմ · · · դիտել զայնպիսիսն, որ հերձուածս և զայթակղութիւնս առնեն արտաքոյ վարդապետութեանն || Հռոմ · ԺԶ · 17 ·

*Մեղքն ձեր որոշեն ՚ի մէջ ձեր՝ և ՚ի մէջ Այ · || Եսայ · ԾԹ · 2 ·

*Որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Այ || Ղուկ · ԺԶ · 15 ·

*Կտակ յետ մահու հաստատուն է || Եբր · Թ · 17 ·

*Հանդէպ թագաւորի մի՛ կամիր տեսանիլ իմաստուն || Եկլեզ · Է · 5 ·

*Եւ մի՛ քամահեր զմարդ յանդիման իւրեան || Եկլեզ · ԺԱ · 2 ·

*Գնաց Յս յայնկոյս ծովուն || Յովհ · Զ · 1 ·

*Հանեն ընդ նմա ՚ի խաչ երկուս աւազակս, մի՛ յաջմէ նորա, և մի՛ յահեկէ || Մատթ · ԻԷ · 38 ·

*Ամ արծաթ սրբութեանց մտեալ ՚ի տուն Տն · · · ՚ի համարի ոգւոց՝ · · · առցեն յիւրեանս քահանայքն || Դ · Թագ · ԺԲ · 4, 5 ·

*Թէպէտ և մեծ ասացաւ Հայր, յաղագս պատճառութեան է մեծ՝ և ոչ վասն բնութեան || Ընդհանր · 116 յերեսն ·

*Միայն զի ազատութի ձեր ոչ լինիցի ՚ի պատճառս մարմնոյ || Գաղատ · Ե · 13 ·

*Ներգործէր զԱծայինսն Ածաբար՝ և զմարդկայինսն մարդկաբար, ՚ի պէտս մերոյ փրկութե || Ընդհ · 166 ·

*Որոց ոմանք են Հիմենոս և Աղեքսանդրոս || Ա տիմ · Ա · 20 ·

*Նայր Յս ընդդէմ գանձանակին || Մարկ · ԺԲ · 41 ·

Որ

*Որ ոչ ընդ իս է. հակառակ իմ է‖ Մատթ. ԺԲ. 30.
*Առանց իմ ոչինչ կարէք առնել‖ Յովհ. ԺԵ. 5.
*Խնդրեսցէ որդին իւր ձուկն, մի թէ փոխանակ ձկանն օձ տայցէ նմա‖ Ղուկ. ԺԱ. 11.
*Շնորհքն և ճշմարտութիւն ի ձեռն Յի Քի եղեն‖ Յովհ. Ա. 17.
*Առ ամօթոյ ձերոյ ասեմ‖ Ա. Կորնթ. Զ. 5.
*Խոստացեալ պատուիրանքն ԱՅ . . . առ ի զգուշացուցանելոյ‖ Թէկ. Կոնդ. 395.
*Ընդ յիմարի մի՛ բազում խօսեսցիս, և ընդ անմտին մի՛ գնասցես‖ Եկլես. ԻԲ. 14.

373. Գործիական առող նախադրութիւնքն՝ են սոքին. Հանդերձ. Վերջ. Մեկուսի. յառաջ. յետոյ. հետեւ. չափ. առ. ընդ. ևն. Հիմար՝

*Յիշատակ արդարոց՝ հանդերձ գովութբ‖ Առակ. Ժ. 7.
*Թէպէտ մարմնով մեկուսի եմ, սակայն հոգւով մերձ եմ‖ Ա. Կորնթ. Ե. 3. *Մարմնով հեռի եմ‖ Կողոս. Բ. 5.
*Արկ զայնչափ զկեանս իւր‖ Մարկ. ԺԲ. 44.
*Զիարդ եմուտ (դաւիթ) ի տունն ԱՅ առ աբիաթարաւ‖ Մարկ. Բ. 26.
*Ոչ էք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք‖ Հռոմ. Զ. 14.

374. Պարառական առողքն են՝ Շուրջ, շուրջանակի. Վեր. Հիգոն՝

*Յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս յերկնից‖ Գործ. Թ. 3.
*Յարձակեցաւ (յուդա) ի վերայ Հրեաստանի՝ շուրջանակի զսահմանօք նր‖ Ա. Մակաբ. Ե. 24.

375. Հայցական առողքն են սոքին. Առաջեւ. ներ. ներքեւ. ներքսոյ. վեր. քան. յառաջ քան. ի վերուստ քան. առաւել քան վեր քան. ի վեր քան. մինչ ևս, ևն. Հիգան՝

*Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին‖ Սաղմ. ՂԱ. 12.
*Լղեն իբր զփայտ չորացեալ‖ Յոբ. Ժ. 8.
*Սիրել զընկերն իբրև զանձն՝ առաւել է քան զողջակէզս և զզոհս‖ Մարկ. ԺԲ. 33.

*Որ տայ զբանս պատասխանի յառաջ քան զլսել լինել, անզգամութիւն է նմա և նախատինք ||Առակ. ԺԸ. 13.

*Ընկալարուք զխրատ՝ և մի՛ զարծաթ, և զգիտութիւն առաւել քան զոսկի ընտիր . . . լաւագոյն է իմաստութիւն քան զականս պատուականս ||Առակ. Ը. 10, 11.

*Հոգի իմ գերքան զմեղր քաղցր. և ժառանգութիւն իմ՝ ՚ի վերքան զմեղր և զխորիսխ ||Եկլեզ. ԻԴ. 27.

*(Վարդգոյ՝ որդւոյ վասակայ իշխանին) Ունէր նա զպայմանն՝ լնոյր զչափ հարց իւրոց ||Յովհ. Կաթ.

376. Սկզբնական մակբայքն՝ սոքա են. Առանց. Բաց. Զատ. Բացայա. ՚ի բացեայ. օտար: հեռի. մեկուսի. վաղուց. վաղուցն. զանխուլ. թաքստեան. ծածուկ. հեռագ. ըստ. առ. եւն. Հինկէն՝

*Ո՞վ է Ած բաց ՚ի Տէ մերմէ ||Սաղմ. ԺԷ. 32.

*Մի՛ ՚ի բացեայ առներ յինէն ||Սաղմ. ԻԱ. 11.

*Ո՛չ թէ այլ ներգործութիւն էր Ածութեն՝ որ էր ՚ի մարմնոյն, և այլ մարմնոյն՝ որ էր Ածութենն ||Բնդ. 166

*Գործք ամբարշտաց՝ հեռի են ՚ի գիտութենէ ||Առակ. ԺԳ. 19.

*Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն. ||Մատթ. ԺԵ. 8.

*Ո՛չ է զանխուլ ՚ի լսողաց բանիս ||Մեկ. Կաթ. 793.

*Մի՞թէ թաքուստ լինէ իցէ յաբրահամէ ծառայէ իմմէ ||Ծնն. ԺԸ. 17.

377. Վախճանին տեղական մակբայ նախադրութիւնքն են սոքին. Մինչ. Մինչև. Հանդ. Մերձ. Մօտ. Դէպ. Կողմն. Կոյս. Ըստ. Առ. Ընդ. եւն. Հիպակ՝

*Արքայ պտղոմէոս տիրեաց ՚ի վր քաղաքացն ծովեզերեայց մինչ ՚ի քաղաքն սելևկիացւոց ||Ա. Մակ. ԺԱ. 8

*Խաւար եղև ՚ի վերայ ամ երկրի՝ մինչև ցիններորդ ժամ ||Ղուկ. ԻԳ. 44.

*Բերանն յանդգնոցն՝ մերձ է ՚ի բեկումն ||Առակ. Ժ. 14.

*Մօտ էր ՚ի քաղաքն անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յս ||Յովհ. ԺԹ. 20.

*Դարձաւ ՚ի թիկունս կոյս ||Յովհ. Ի. 14.

*Մեք պատրաստ եմք ՚ի մեռանել՝ քան անցանել

463. Արգլծականքն են, որ մեղադրելով դժուարացնել, կամ սիրտն այրել ցուցանեն. և են սոքին. Աւաղ. վա՜շ վա՜շ. եւն: Գ.

*Դարձցին առժամայն ամաչեցեալք, որ ասէին ինձ՝ վա՜շ վա՜շ. Սաղմ. ԿԹ. 4:

464. Գտանին և քանի մի միջարկութիւնք, որք են սոքա. Աղէ. ահ. ախաա. ըէ. եհէ. է. եհ. ըհ. իհ. իհըէ. իշ. իշտ. էյի՜. հա. հայըէ. հէ. հայ հայ. հայ-հայտ. հօհ. մախիղ. մարգաւ. յայ. յէ. ուխ. ուհ. ըէ. վախ. վայ վաղայ. ու. ուխ. փիհ. փիշ. օի. օշ ըէ. եւն: Բայց այսոքիկ այժմ չեն ՚ի գործածութե՛:

465. Գտանելի է նախ՝ զի միջարկութիւնք առնուն զխնդիր մերձահոլով տրական. Գ.

*Երանի՝ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱծ տեսցեն. Մատթ. Ե. 8:

*Վա՛յ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ ամ̃ մարդիկ. Ղուկ. Զ. 26:

*Վա՛յ արհամարհողացդ, որք արհամարհէին. Եսայ. ԻԴ. 16:

466. Այլ երբեմն զօրութ̃ ունի զխնդիրն. որպէս՝

*Երանի՝ որ կերիցէ հաց յարքայութեան Այ. Ղուկ. ԺԴ. 15: Աստ միջարկութիս երանի՝ ունի զօրութ̃ խնդիր, մերձահոլովս նմա. որպ̃ թէ ասէր, Երանի նմա՝ որ կերիցէ հաց. եւն:

*Վա՛յ՝ որ ասէ ցհայր իւր, թէ զինչ ծնար զիս. Եւ Վա՛յ որդւոյ՝ որ ասէ. եւն. Եսայ. ԽԵ. 10:

Բայց այս խնդիրն համարեալ լինի և մտ̃ բայիւն. զոր ունի միջարկութիւն՝ ներգործութ̃ կամ զօրութ̃.

ոպ̄ տեսանի ՚ի վերայ դրեալ յօրինակսն ։

467 . Պիտելի է երկրորդ՝ զի կոչական անուանք և՝ ունին զզօրութի̃ն միջարկութեան . Գ̄ .

*Եղկե՛ր յԱ̄Ճ̄ որդեակ՝ և ՚ի թշուառէ . Տովբ . Ժ̄դ . 21 .

*Այլ դու որդեակ իմ՝ զօրացի՛ր շնորհօքն, որ ՚ի Ք̄Ս̄ Յ̄Ս̄ . Բ̄ . Տիմ . Բ̄ . 1 ։

*Ահա՛ փառք քեզ՝ անսահմա՛ն անուան . Նարեկ . ՂԲ̄ . 2 .

Սատարեալ վճարեցան ութերին մասունք բանին, ուստի և աւարտ առաջին հատորիս ։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Համաձայնութիւն մասանց բանի ։

ՊԱՂՏԱՍԱՐ ՀՈԳՒԵլոյս վարժապետն յայս տեղի բերէ զայս գեղեցիկ օրինակս ։ Ո՜վ նոր կարդալ սկսողք յառաջ ուսանելոյն զտառս, և զձայնս նոցին ՚ի միտս տպաւորելն ։ այնուհետև միմեանց հետ կցելով հեգելն, և ապա շիտակ կարդալն զբանն ։ Այսպէս և դու՝ յառաջ ուսար զմասունս բանին, և սերտելով ՚ի մէջ միտացդ տպաւորեցեր որպիսի լինելն ։ ապա այժմ՝ ունիս ուսանել զմասանց բանի միմեանց հետ կապակցութիւն, որ է այս համաձայնութիւնս ։ սովաւ կարես ուղիղ ճանաչել՝ ուղիղ կարդալ, շիտակ խօսիլ՝ և շիտակ գրել զբանն ։ Ապաքէն քերականութ՟ն պայծառութիւնն յայս հատորիս մէջ գտանես, և առաջի աշխատութեցդ պտուղն առ հանդիստ վայելես ։ Քանզի յայս պարտիզիս մէջ երբ տեսանես պէսպէս համաձայնութ՟ բառից ծաղկելն՝ մտաց յայտնիլն, սիրտդ ուրախանայ և բերկրի ։ Ուստի գոյն զգոյն ծաղկօք՝ լինելի օրինակօք զարդարեցի զայս պարտէզս, յոր թէ չհոգնելով շրջիս, և կարդալով հոտոտես, այս ծաղկանց անուշ հոտոյն՝ շարադրութեց միտքն խնդալով՝ հոգիդ զմայլի և զուարճանայ ։ Այս ցուցանենք թէ զի՞նչ է համաձայնութիւն, և քանի՞ ինչ տեսանելի է ։

468 Համաձայնութիւն մասանց բանի է կապակցութիւն նոցին ընդ միմեանս՝ առ ՚ի յօրինել զբան .

469 Որք՝ մասունք բանի բաժանին ՚ի յերկուս՝ հոլովական , անհոլով .

470 . Անհոլովքն են՝ նախադրութիւն , մակբայ , շաղկապ և միջարկութիւն . և սոցին համաձայնութիւն այն է , զոր ուսար յառաջին հատորին :

471 Հոլովականքն են՝ անուն , դերանուն , բայ , և ընդունելութիւն . և սոքա չորեքեան համաձայնին ընդ միմեանս . զորս ցուցցուք մի ըստ միոջէ յայսմ՝ յերկրորդ հատորիս :

472 Ի համաձայնութեան հոլովական մասանցս տեսանի վեց եղանակ . այսինքն Տէր բայի , բայ . խնդիր , խնդրառու . յայտնիչ , յայտնեալ . յատկացուցիչ , յատկացեալ . ածական , գոյական , յարաբերական , յարաբերեալ . զայսոսիկ ըստ կարգի ունիս ուսանիլ շնորհօքն Աստուծոյ . Ապաքէն՝ առ ՚ի բանալ քեզ դիւրին ճանապարհ յայսոսիկ , նախ դնեմք զհամաձայնութիւն բայի ընդ հոլովականս . յորում տեսանի տէր բայի և խնդիր բայի .

ԳԼՈՒԽ . Ա .

Համաձայնութիւն Բայի ընդ հոլովականս .

Համաձայնութիւն բայի ընդ հոլովականսն այս է . զի անուանն՝ դերանուանն՝ աներևոյթ բային և ընդունելութիւն համաձայնեալ կապակցին ընդ բայի՝ երկու կերպիւ . մի՝ որպէս տէր բայի , և միւս՝ որպէս խնդիր բայի . զորս ցուցցուք կարգաւ .

474 Տէր բային այն է , որ ցուցանէ զտէր գործոյն , այսինքն զգործողն կամ զկրողն . և վասն ճանաչելոյ զհամաձայնութիւն սորա ընդ բայի՝ դիցուք հինգ կանոնս .

Կանոն. Ա.

475 Ամենայն դիմաւոր բայ ունի զՏ՟ր բայի յուղղական հոլով՝ համաձայն թուով և դիմաւ. զ՟, *Հաստատեմ անարգս՝ ը՟ պատուականին. Նարեկ. ԼԱ. 1: Ահա դիմաւոր բայս հաստատեմ՝ առեալ է զիւր Տ՟ր բայի ուղղական անուանդ՝ անարգս. և որպէս բայս հաստատեմ՝ է եզակի և առաջին դէմ, այսպէս և անուանդ անարգս՝ է եզակի, և ունելով զդիմորոշականն՝ ս, որոշեալ է յառաջին դէմս: Այսպէս համաձայն են և՛ի ներքոյ եդեալ օրինակքս:

*Դու հաւատաս, զի մի է Ա՟ծ... և դևք հաւատան. Յակոբ. Բ. 19:

*Մահու պատճառք բնութեան՝ ոչ ինքնիշխանութեան եղև. Ընդդիմոն. 250:

*Մեռանողքս... կենդանի ասացաք. Շնորհ. 154:

*Ի բաց կացէք յինէն ամ՟ մշակք անիրաւութե՟. Ղուկ. ԺԳ. 27:

*Այն անսկիզբն ասէ զԱ՟ծ... Ծնեալն բնաւորից ասէ անճառ. Յս Ոսկէ:

476 Զայս դիմորոշական յօդս՝ շատ անգամ զօրութբ՟ ունի Տ՟ր բային, մանաւանդ յերրորդ դէմս՝ և՛ի յոգնականս. զ՟, *Իմաստութի՟ մարդոյ լուսաւոր առնէ զերեսս իւր. Ժողով. Ը. 1: Ահա գոյականս իմաստութի՟ զօրութբ՟ ունի զիւր դիմորոշականն՝ ն. որպ՟ թէ ասէր, *Իմաստութիւնն մարդոյ լուսաւոր առնէ: Այսպէս իմանալի են և հետևեալ օրինակքս:

*Աղքատութի՟ զայր խոնարհեցուցանէ, իսկ ձեռք ժրաց մեծացուցանեն. Առակ. Ժ. 4:

*Ամ՟ ուխք՝ի ծով գնան, և ծով ոչ լնու. Ժող. Ա. 7. [illegible]:

*Վառեալ հուր շիջուցանէ ջուր. և զմեղս բազումս քաւեն ողորմութիւնք. Սիրաք. Գ. 33. յետոյ:

*Ամ՟ հեթանոսք իբրև զկաթիլ մի՛ի դուլէ են. Եսայ. Խ. 15:

*Զիմաստութի՟ և զխրատ ամբարիշտք անգոսնեն. Առակ. Ա. 7:

Ամ

* Ամ խորագէտ գործէ իմաստութբ. Առակ. ԺԳ. 16.

477 Բայց աճականն բազմիցս ներգործութ ունի զայս դիմորոշականն. որպէս՝

* Ոսկի եղեալս անպիտանացայ... իմաստունս յիմարեցայ. Շնոր. 776.

* Ի հրեշտակաց զօրանայիր զօրացուցիչդ երկնաւորաց և երկրաւորաց. Շնոր. 191.

* Անզգամն անգոսնէ զխրատ հօր. Առակ. ԺԵ. 5.

* Գալոց է փրկիչն յաշխարհս՝ յարուցանել զմեռեալս. Շնոր. 755.

* Այսօր ցնծամք երկրաւորքս ընդ գալստեան երկնայնոյն. Շնոր. 450.

* Լուարուք լսել նեղչեալքդ. Եսայ. ԻԶ. 19.

* Բարձրագոյնքն և Ածայինքն... մարմնոյն ասեն ի գիրս՝ համագոյակցին մերոյ. Ընդհան. 96.

478 Աներեւոյթն՝ բազմիցս առանց յօդի լինի որ բայի էականն և անդէմ բայից. սակայն թէ և զոր յօդ ունիցի, միշտ երրորդ դէմ է. ընդ որում և դիմաւոր բայն ցուցանէ. որպէս՝

* Ածութեն տանել չարչարանս և մահ՝ ամբարշտութին է. Ընդհանր. 239.

* Ճանաչել զօրէնս մտաց բարեաց է. Առակ. ԺԳ. 15

* Լաւ է բարեգործացն չարչարել՝ քան չարագործացն հանգստեամբ վայելել. Մեկ. Կորնթ. 407.

* Ո՛չ այր աղքատ և իմաստուն անարգել չէ՛ պարտ. Սիրաք. Ժ. [illegible]. 26.

* [illegible] ճշմարտել վրիպողին՝ ոչ միայն զթերատեսն լինել նմանակէ ի գիրս՝ և զաստուածախօսել, այլ և զայլ բանից յանցաւորութիւն գուշակէ. Մեկ. Կորն. 139. Ճառ.

* Գնալս խաչափանեալ զխաչարիւնութիւն. Յոհ. Կորն.

* Անարժան է անխարժելի. Նոր. ՃԷ. 3.

* Ճանաչելն իսկ զքեզ՝ բովանդակ արդարութիւն է. Իմաստ. ԺԵ. 3.

Կանոն. Է.

479 Տէր բայիցն մինչ լինի բազում եզակի նոյն դիմաւոր բայն նոյնին դնի յոգնակի. որպէս՝

*Որ գինի և կին ոչ խառնեն, զնա և դժոխք ոչ պարականեն. Մեկն. Կողոսաց. 569: Համ որ բայք են երկու եզակի անուանցս՝ գինի և կին. վս որոյ և յոգնակի է եղեալ նոցին բայս՝ խառնեն: Ըստ այսմ են և հետևեալ օրինակքս:

*Սերմն և մահ, եղբր և չոր, մեծութի և ողջութեան առաջի Այ հաստատ են. Ոսկեբ. ԺԱ. 14. ճառք.

*Ոչ միայն քաջ լեզու և գրիչ՝ այլ թէ և համօրէն ժողովրդոց ատամանց բան և գիր ջանայցեն ՚ի յայտ բերել, զոր յետս պարապեալ կէտք, ոչ կէն բաւականն. Ընդդիմ. 186:

*Հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս և Անդրէաս. Մարկ. ԺԳ. 3:

480 Բազում անգամ ևս՝ բայն դնի եզակի, և զօրութեամբ յոգնակի իմացեալ լինի. Է *Ամենայն յանցաւորութի և անհնազանդութի ընկալաւ զպատիժ պատուհասի. Եբր. Բ. 2. Համ երկու անունս՝ յանցաւորութի և անհնազանդութի՝ եդեալ է ընդ եզակի բայիս՝ ընկալաւ. զոր միօք յոգնակի իմանալի է, ընկալան. Այսպէս են և ՚ի ներքոյ օրինակքս:

*Ամենայն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ . . . ոչ ունի ժառանգութի յարքայութեան Քի Այ. Եփես. Ե. 5

*Հանդերձք մորթեայ՝ և ծաղիկ երեսաց՝ և թոյլ ոտից պատուէ զմանուկ. Ոսկեբ. ՃԹ. 27. ճառք:

*Պղինձն և ոսկին և սարդիոնն պատուական զէս պատեալ պաշարեն ՚ի բանակս. Յովհ. Կոլոն:

*Ննջեցելոցն ՚ի գլխոյ խաչելոյն՝ և պատուելոյն և գնելոյն ՚ի գերեզմանի՝ զմահ ճշմարտէ. Ընդդիմ. 239:

*Առնելն զարդարութի խօսել զճշմարտութի հաճոյ է առաջի Այ՝ քան զարիւն զոհից. Առակ. ԻԱ. 3. ճառք:

481 Այլ և թէ նախադաս դնի եզակի բայն, յայնժամ զօրութ կրկնեալ համարի. Է *Յուսումնական ՚ի ստամոքս թէ ակն իմ, անձն իմ, և փոր իմ. Սաղ. Լ. 10. Համ աստ տէր բայի են անուանքս՝ ակն, անձն և փոր. բայց եզակի բայն սոցին խառնեցաւ՝ նախադաս

դաս ընկերացն, աղագաւ, մոռոք կրկնել պատճառէ այսպէս
*Խռովեցաւ ի սրտմտութէ ակն իմ, խռովեցաւ անձն իմ և խռովեցաւ փոր իմ · Այսպէս պատճառէ
իմանալ և զհետևեալ օրինակքս:

*Մաղձնորդ ընկի կարօտութեան՝ հոլովոտողէ և
հալածի · Յոբ · ԺԵ · 14:

*Ահա ցնաս եղխոնիւ և սովնաս և յոգնաս · Եսայ · ԼԳ · 11

*Խոնարհեցաւ ծնօղքս և գոհանոյքն և զօրութիւն · Օրէ · ԻԵ · 9

Կանոն · Գ:

482 Տէր բային եթէ լիցէ բաղում ի զանազան դէմս, բային նոցին դնի ի նախապատիւ դէմս · Գ, *Կեցցուք և մի՛ մեռցուք մեք և դու և ստացուածք մեր · Ծնն · ԽԳ · 8 : Ահա աստ երեք տէր բայի կան յերիս դէմս · Ա մեք և դու և ստացուածքն · և նոցին բայս միացեալ՝ եղեալ է ի յառաջին դէմս · քանզի առաջին դէմն՝ նախապատիւ է քան զերկրորդն և զերրորդն: Այսպէս է տեսանել և ի
հետևեալ օրինակսդ:

*Ես և դուք տացուք զպարծանս · Գ · Եզրա · Ե · 10:

*Տո՛ւք այր մի, և ես և նա մենամարտեսցուք · Ա ·
Թագաւորաց · ԺԷ · 10:

*Դու և որդիքն առնիցէք ինձ զհանդէս · Թուոց · Ա · 3

Ահա աստ ես բայն է յերկրորդ դէմս · զի երկրորդն
նախապատիւ է քան զերրորդ դէմս:

483 Իսկ յորժամ բայն ոչ դնի ի նախապատիւ դէմս, յայնժամ նախապատիւ դիմի բայն է զօրութբ · Գ, *Աշտամբեսցէ զքեզ քո բերան՝ և ոչ ես · Յոբ · ԺԵ · 6 · Ահա աստ կայ երկու տէր բայի՝ բերանն և ես · և նոցին բայս նշտամբեսցէն՝ ոչ է ի նախապատիւ դէմս առաջին, այլ եղեալ է յերրորդ դէմս · ապա զայն բայս կրկնեալ, և ըստ նմին օրակուէ ժամանակի պատճառ է յարմարել նախապատիւ դիմին՝ այսպէս · *Աշտամբեսցէ զքեզ քո բերան, և ոչ ես նշտամբեսցից: Ըստ այսմ են և հետևեալ
օրինակքս:

Ի Օրին

*Զի՞նչ դու իմանայցես, և ոչ ես. ‖ այլ և ոչ մեք իմանայցեմք. յոբ. ԺԵ. 9. ընտրել։
*Ի սեղանն մի՛ մերձեսցին, զի մի՛ մեռանիցին նոքա և դոքա. ‖ այլ և դուք մի՛ մեռանիցիք. ելից. ԺԸ. 3.

Կանոն. Է.

484 Տէր բային եթէ իցէ ըստ ձայնին եզակի՝ և ըստ նշանակութեան յոգնակի, որպիսի են Թուականն՝ Հաւաքականն՝ Հաւաքական և կրկնակ անուանք, բայն դնի յոգնակի. Ց *Եթէ երկու ՚ի ձէնջ միաբանիցեն յերկրի, . . . զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա. ‖ մատթ. ԺԸ. 19. Ահա տէր բային է եզակի Թուականաւ՝ երկու. վ՛ն և յոգնակի է բայն՝ միաբանիցեն. Այսպէս է տեսանել և՛ ՚ի ներքոյ յօրինակսդ.
*Երեքեանն իբրև ՚ի միոջէ բերանոյ օրհնէին և գովէին և փառաւոր առնէին զԱ՛ծ. ‖ դանի. Գ. 51.
*Հազարք ամ՛ յայսմ ծի՝ իբրև զմի օր ոչ են յաշխարհն արդարոց. ‖ սիրաք. ԺԸ. 8. ընտրել.
*Շնորհացն Ա՛յ և ողորմութեն նորա պարգևք են ամենայնք. ‖ մեկն. խոստով. 763.
*Ամենայն բազմութն ժողովրդեանն կային յաղօթս. ‖ ղուկ. Ա. 10.
*Եւ ժողովուրդն . . . . ասէին որոտումն լինել. ‖ յովհ. ԺԲ. 29.
*Տանէին մի մի ՚ի նոցանէ մարս երկուս. ‖ յովհ. Բ. 6
*Իւրաքանչիւր չար ընկերի իւրում մի՛ խորհեսջիք ՚ի սիրտս ձեր, և զերդումն սուտ մի՛ սիրեսջիք. ‖ զաքար. Ը. 17.

485 Ոէ և երբեմն բայն դնի եզակի. Ց *Ի քաղաքէ՝ յորմէ ելանէին հազարք, մնասցէ հարիւր. և յորմէ ելանէին հարիւր՝ մնասցէ տասն. ‖ ամով. Ե. 3.
*Ամենայն որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է. ‖ Ա. յովհ. Գ. 15.
*Այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահովք. ‖ մատթ. ԺԷ. 20.
*Բանակք հրեշտակաց տ՛ն՝ շուրջ է զերկիւղածովք իւրովք, և պահէ զնոսա. ‖ սաղմ. ԼԳ. 8.

*Յորդորիչ խորհուրդ զիւր բեռն բառնալոյ է. Գաղ. Զ. 5

486 Այսպէս և անեզականք լինին տէր բայի երբեմն յոգնական բայի, և երբեմն եզականի. Գ,
*Աղօթք հաւատովք փրկեսցեն զաշխատեալն.
Յակոբ. Ե. 15.
*Հաւատք ձեր՝ մի իցեն իմաստութ. մարդկան.
Ա. Կորնթ. Բ. 5.
*Ունկն զբանս քննեն, և քիմք զկերակուրս ճաշակեն. Յոբ. ԺԲ. 11.
*Սրբութիւն հեռացաւ է որպէս՝ [illegible] և [illegible].
Դէկ. Կոչնոսու. 170.
*Հաւատով քրիստոնեային՝ ի գործոցն ճանաչի.
Դէկն. Կոչնոսու. 119.
*Ո՛չ բերելոր իմաստս (Աբրայիս Աստուածոյ) խառնասէր [illegible]. Յովհ. Կոչնոսու.
*Ըստ Ա. Ժ. . . . եթէ զկամս մարդոյն հաղորդ իւր ոչ ունիցի, ոչ ինչ կարէ ներգործել յարժանաւորացն. Դէկ. Կոչնոսու. 406.
*Յայտնանանէ ծանուցաւ մեզ մերոյն անմիջեալ զբոսցաց հաւատոյ. Յովհ. Կոչնոսու.
*Սանտանութի ցրուեն ձմեռայնոյն ի բաց եղեալ.
Յովհ. Կոչնոսու.
*Պատահման շնչոյ արեանն Քն ջրհեղեղ եղև անմնեցուն մեղաց. Դէկն. Կոչնոսու. 640.

Ա յայսպիսի եզակի ունող անուանս՝ զգուշանալի է յոգնակի կերպին՝ առնել տէր բայի եզական բայի.

Կանոն. Ե.

487 Բայն յորժամ իցէ անդէմ, որ է աներևոյթն, և նոյն ընդունելութիւն, և յարակատար գերակատար ժամանակաց եզակի երրորդ դիմի (338) հասարակաբար առնուն զտէր բայի ՝ի սեռական հոլով. Գ *Համարիմք հաւատովք արդարանալ մարդդոյ՝ առանց գործոց օրինաց. Հռով. Գ. 28. Ահա սեռականս մարդոյ՝ եղեալ է տէր բայի աներևութիս՝ արդարանալ. որ թէ լինէր դիմաւոր, յայնժամ և տէր

բայ

բային լինէր ուղղականն այսպէս․ *Համարիմք թէ՞ հաւատովք արդարանայ մարդ ։ Այսպիսի են և ՚ի
ներքոյ օրինակքս ։

*Արժանաւոր՝ որք փոյթ ունին ճանաչել զճշմարտութին, նախքան զնա իմանալ նոցա զսուրբ թէ՞ գրոց ։ Յովհան․ 233 ։

*Ոչ դժուարաւ ասաց Աստուծոյ յարքայութին երկնից մտանել ոչ օրինակի ուղղութ․ ոչ ժակ աղան ։ Յովհան․ 65 ։

*Սպասելով Տեառն շնորհիւ զխոստումն տէրին և զբեւեռեացն ։ Յոր․ 340 ։

*Ի բազմանալ ամբարշտաց՝ յաճախեն մեղք ։
Առակ․ ԻԹ․ 16 ։

*Արարչութեն խօսոն՝ ՚ի նմին յաւէտ անբաժանելին ոչ նիւթական մարմնոյն վշտացեալ ։ Նոր․ 467

*Դակ եղբէ և խորոյոյն ազգիտաբար լոն լեր անծանօթ գրոց ծածայնոց՝ ոչ կարացեալ ՚ի մտո առնուլ ։ Յովհ․ Ոսկեբեր ։

*Դ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա ։ Յովհ․ ԺԵ․ 22 ։

*Զիյէ՞ ընթերցեալ իցէ՝ զոր արարին դաւիթ ։
Մատթ․ ԺԲ․ 3 ։

488 Առնէ և ս անուն ուղղական․ Գ *Սիրեաց Թագաւորն հայել զբազմականութեն ։ Հռոմ․ ԺԲ․ 11 ։
*Այսօր զմեզ հաւատոյ շարժեալ փութացոյն խաբէութեն ․ Յորդոն․ 292 ։
*Համարեալ է ՚ի վ(երայ) ձեր որպէս Ա․ Ծ․ Հռոմ․ Գ․ 28 ։
*Ընդէր ես քան զայլս լցեալ էր (Անդրեայն Տերտուղիանոսի) բարի մեղանաց հոնդէոս ։ Յովհ․ Ոսկեբեր ։

489 Աներևոյթն՝ մինչ լինի տէր անգետ բայի ։ յայնժամ և գիտր տէր բային անուն ՚ի վերջահոլով ուղղական ․ Գ *Պարտ է արդարոյն լինել մարդասէր ։ Իմաստ․ ԺԲ․ 19 ։ Այս վերջահոլովս որպէսոյն եղեալ է տէր բայի աներևութին ընկեր․ որ և այն աներևութ է, իսկ թէ տէր բայի անգետ բայիս՝ ոչ է ։
Ըստ այսմ է տեսանել և ՚ի հետևեալ օրինակս ։

Զէ

*Չէ՛ մարթ լուծանել գրոցն. Յովհ. Ժ. 35։

*Օրէ՛ն է ծննդական և մահկանացու բնութեան մեր խամնակել զմիմեանս. Ընդդէմն. 194։

*Պա՛րտ և արժա՛ն է Քահանայիցն որոշել որպէս ըստ ձեռոյն, նոյնպէս և կարգաւորութիւն յամենայն ժողովրդենէն. Մեկն. Կանոնաց. 479։

*Յիմարք հիւանդի՛ է զիւրն առողջութեան դեղ՝ զոր մատուցանէ նմա ախտացեալ ոմն բժիշկ, ՚ի բաց մերժել. Ընդդէմն. 14։

*Ո՛չ կամիմք թագաւորել դմա ՚ի վերայ մեր. Ղուկ. ԺԹ. 14։

*Մաշեցան ամենայն ոսկերք իմ առ աղաղակել իմոյ առ Տէր. Սաղմ. ԼԱ. 3։

490 Անդէմ բայս՝ դէ՛մք են, առնուն զտէր բային ՚ի վերջահոլով տրական. Օր. *Որոց պէ՛տք էին բժշկութեան, բժշկէր. Ղուկ. Թ. 11։ *Ահա վերջահոլովս՝ բժշկութեան, եղեալ է տէր բայիս՝ դէ՛մք են. որպէս թէ ասէր. *Որոց պիտոյ էր բժշկութիւն, բժշկէր. Այսպէս են և յետագայ օրինակքս.

*Քաղաքին չէ՛ին պէտք արեգական և լուսնի. Յայտ. ԻԱ. 23։

*Քաղում աղքատութեան և տրտմութեանց պէ՛տք են՝ անարատ պահել զանձն. Մեկն. Կանոնաց. 89։

491 Յայս հինգ կանոնացս յայտնի ճանաչի, զի տէր բային լինի միայն յերիս հոլովս. Ուղղական (475. 488). Սեռական (487). Վերջահոլով տրական (486. 490)։ Կոչականն ևս եղև տէր բայի երկրորդ դէմ բայի (477. 467)։

492 Հայցականին հոլովն ևս համարի ուրեք տէր բայի. Օր. *Տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք. Ղուկ. ԻԱ. 27. Ուր հայցականդ զորդի՝ որ է խնդիր սեռի ներգործականիս՝ տեսցեն, համարի ևս իւր տէր բայի չէզոք բայիս եկեալ։ Տե՛ս և ՚ի ներքոյ յօրինակս.

*Գտանէն կենդանացեալ շնորհեցելոյ շնորհողին. Նարեկ. 262։

*Տեառն Յիսուսի մերոյ առ ՚ի մէնջ առեալ մարմնոյն՝ չարչարանաց մահուան ճաշակեալ լինէր. Յովհ. Կանոնաց։

Ահա

*Աճապարեցի գնալ . . . յառաջին լուսաւորացուցան ինձ հիմն եղեալ չեղէն մարգարէ՝ և ուղեւորս գլուխն Առաքելոց. Յովհ. Կաթող.

*Հասանեն արծրունին . . . լուծաւ իշխանքն (Ասորոց) յայնմիկ փորձանքի գոլ. Յովհ. Կաթող. Ուր պատմականս իշխանքն՝ համարի իբր տէր բայի աներևութիւն գոլ : Բայց պարտ է զգուշանալ 'ի գործածութէ այսպիսեացս:

493 Ի վախճանի կանոնացս զայս ևս իմա. զի բայք միցս զօրութ͞բ դնի բայն, կամ տէր բայլին. դ͞ *Ա͞յ արարածք վ͞ն մարդոյս, և մարդ վ͞ն փառացն Ա͞յ. Մեկն. Կաթող. 367. Ահա 'ի բանի աստ զօրութ͞բ է բայս՝ ստեղծման. որպ͞ս թէ ասել *Ա͞յ արարածք վ͞ն մարդոյս ստեղծան, և մարդ ստեղծաւ վասն փառացն Ա͞յ : Այսպէս են և հետևեալ օրինակքս.

*Ի հանդերձից ելանէ ցեց, և 'ի կանանց (ծնանին) չարիք. Սիրաք. խ͞բ. 13. ձեռագ:

*Բազմութիւն իմաստնոց (է) փրկութիւն աշխարհի. Իմաստ. Զ͞. 26:

*Ածածին դաւանիմք զծնօղն Ա͞յ մարմնացելոյ. Ընդհանր. 171. Ահա աստ զօրութ͞բ է տէր բայի դերանունն՝ Մեք.

*Ոսկի ոչ ունիս ողորմել, սակայն ձեռք ունիս օգնել կարօտելոցն և զկարիսն բառնալ զվտանգելոցն: Արծաթ ոչ ունիս, այլ բան ունիս զպատուականագոյնն քան զոսկի արծաթ. Մեկն. Կաթող. 294. 295. ձեռագ: Ուր զօրութ͞բ է տ͞ր բայիս՝ դու.

*Զհողն Ա͞ծացոյց, և ը͞ աջմէ հօր նստոյց. Մեկն. Կաթող. 242. Ուր զօրութ͞բ իմացեալ լինի տէր բայիս՝ Բանն Ա͞ծ.

ԳԼՈՒԽ. Բ.

Թէ զի՞նչ է Խնդիր բային, և քանի՞:

Խնդիր բայի այն է, որով զանազանեալ որոշի բայն ըստ սեռին՝ և ըստ նշանակութեան: Եւ բաժանի յերկուս՝ խնդիր սեռի, և խնդիր բնութեան:

Ծանօթութի. Ա:

495 Ներգործական կրաւորական և անորոշ բայք
առնուն զերկու խնդիրսն ևս, այսինքն զսեռի խնդիրն
և զբնութեան խնդիրն: Իսկ չէզոք բայք առնուն
միայն զբնութեան խնդիրն:

Ծանօթութի. Բ:

496 Ոչ միայն բայք՝ այլ և բայանունք և ըն-
դունելութիւնք ևս առնուն զայսպիսի խնդիրս.
զորս ցուցցուք յիւրեանց տեղիս. սակայն աստանօր
զխնդրառութենէ բայից և եթ խօսեսցուք կարգաւ:

Յօդուած. Ա:

Խնդիր սեռի Ներգործականաց:

497 Սեռի խնդիրն այն է, որով որոշեալ ճա-
նաչի սեռն բային: Արդ՝
498 Ներգործական բայի խնդիր սեռին այն է,
որ ցուցանէ զկրողն կամ զընթակայն գործոյն. յո-
րոյ վերայ գործն կատարի: Ուստի
499 Ներգործական բայք առնուն զխնդիր սեռի
՚ի հայցական հոլով, զ. * Տէր ճանաչէ զխորհուրդս
մարդկան. Սաղմ. ղգ. 9. Ահա ներգործական բայս՝
ճանաչէ, առեալ է խնդիր սեռի հայցականաւ՝ զխոր-
հուրդս: Ըստ այսմ են և՚ի ներքոյ օրինակքս.
* [illegible] [illegible] և զիմաստունս. Առակ. ժդ. 35
* Խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի
իւր

իւրում. . . և մի՛ տրտմեցուցանէք զՀոգին սուրբ ԱՅ. Եփես. Դ. 25. 30.

*Դատելոց է զկենդանիս և զմեռեալս. Բ. Տիմ. Դ. 1.

*Մատուցի՞ս զբարեբարբառելդ ամենակալութի. Յովբ. Ե. 3.

*Զպարագայն ապա այցելութին ԱՅ հոգւոցն. Պրշհ. Խոսրով:

*Սիրելն զընկերն՝ սիրել զԱՅ է. Ժմկ. Խոսրով. 285.

*Զեկեղեցի իւր՝ զոր շինեաց, եօթն սեամբք քահանայութեան հաստատեաց. Նար. 437.

*Թագաւոր արդար՝ կանգնէ զաշխարհ. և այր անօրէն կործանէ. Առակ. ԻԹ. 4.

500 Դիտելի է նաև՝ զի այս խնդիր սեռի բազմիցս դնի անորոշ հայցականաւ. Ց *Բերան անդադար՝ առնէ խռովութիւնս. Առակ. ԻԶ. 28.

Ահա ներգործական բայս՝ առնէ. իսկ սեռի խնդիր առեալ է զանորոշ հայցականն՝ խռովութիւնս. որ զօրութի ունի զիւր հոլովականն նախդիրն զ. որպէս թէ ասէր՝ զխռովութիւնս. Այսպէս է տեսանել և ՚ի հետեւեալ օրինակս:

*Ամ ողորմած՝ ողորմութի գտցէ. Սիրաք. ԺԶ. 15. յին.

*Աղաչեմ, նախ քան զամ առնել աղօթս՝ խնդրուածս՝ պաղատանս՝ գոհութիւնս վասն ամ մարդկան. Ա. Տիմ. Բ. 1:

*Աւազ և աղ և շանթք երկաթոյ դիւր է կրել՝ քան զմարդ անմիտ. Սիրաք. ԻԲ. 18. յետագ:

*Զայն զուգակից սերն ծանիր. Յիսուս որդի.

501 Երկրորդ երբեմն զօրութի դնի խնդրին. կամ բային. Ց *Ողորմութի ՚ի մահուանէ փրկէ (զմարդ). և նա ինքն սրբէ (զմեղաւորսն) յամ մեղաց. Տոբիթ. ԺԲ. 9.

Ահա բայքս փրկէ և սրբէ՝ զօրութի ունին զսեռի խնդիր հայցականիս՝ զմարդ և զմեղաւորսն. Այսպէս է իմանալ և ՚ի ներքոյ օրինակս.

*Հայեցարո՛ք ՚ի թռչունս երկնից. զի ոչ վարեն (զերկիր) և ոչ հնձեն (զհասկս). և ոչ ժողովեն (զցորեան) ՚ի շտեմարանս. և Հայր ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. Մատթ. Զ. 26.

*Ի մանկութեան ոչ հաւաքեցեր (շտեմարս), զի՞արդ գտանիցես 'ի ծերութեան քում · ‖ սիրաք · ԻԵ · 5 · ժողովել ·

*Այսպէս ցոյց ինձ զաջ քո · և որ խոնարհ են սրտիւք, (ցոյց) զիմաստութիւն քոյ · ‖ սաղմ · ՁԹ · 11 ։

*Ետ զարեգակն 'ի լոյս տունջեան հաստատութբ · և (ետ) զլուսին և զաստեղս 'ի լոյս գիշերոյ · ‖ երեմ · ԼԱ 35

*Ո՞վ ոք (կործելոյ) զանկարելիսն է ու ե՞ն, և ոչ թախծեցաւ · ո՞վ ոք (յեղելոյ) զմեծամեծսն, և ոչ մաշեցաւ · ‖ նարեկ · ԻԹ · 2 ։

*Ուեք ԷԸ ամսեանց պահանջիմք (ոտս) զհամարն · ‖ գէնն · կոխուող · 695 ։

502 Արդ՝ ոմանք ներգործականք առնուն զխնդիր սեռի յայլ հոլովս · Գ *Աղօթից արդարոց լսէ (Ած) · ‖ առակ · ԺԵ · 29 · Ահա ներգործական բայս լսէ՝ առեալ է խնդիր սեռի զվերջահոլով անուան՝ աղօթից · ոչ թէ ասել *Աղօթս արդարոց լսէ ։ Ըստ այսմ է տեսանել և 'ի հետևեալ օրինակս ։

*Ապա խօսեցայց՝ եթէ ոչ այպանիցէք շնորհեալ եմոյ · ‖ տե զբանս իմ · յոբ · ԻԱ · 3 ։

*Յայտնի եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին · ‖ տե զիս , հռոմ · Ժ · 20 ։

*Եկայք կերայք 'ի հացէ իմմէ · ‖ տե զհաց իմ · առակ · Թ 5

*Ճաշակեաց 'ի մահուանէ մարմնովն · ‖ տե զմահ · ընդհանրք · 121 ։

*Ամ՝ որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնմանէ առաջի Հօր իմոյ · ‖ տե զիս , զնա · մատթ · Ժ · 32 ։

*Զքէն խորհեցայ 'ի չարութե Ած յաւիտենից · ‖ տե զչարութի · շար · 282 ·

*Անձինք ձեր խոկասցեն յերկիւղ տեառն · ‖ տե զերկիւղ տեառն · եսայ · ԼԳ · 18 ·

*Ինչ որով ես համբերութեցից, սակս զնա կալարուք · ‖ տե զոր · շարակ · 293 ·

*Ձեռք մեր շօշափեցին 'ի վերոյ բանին կենաց · ‖ տե զբանն կենաց · ա · յովհ · ա · 1 ։

Այսորիկ բազում ուրեք և առնուն զհայցական ·

ԻԼ որոց

որոց զօրինակն աւելորդ համարիմք կրկնել։

503 Բայց ներգործականքս՝ երկրպագանեմ, յաղթեմ, պաշտպանեմ, սանձանեմ, ստունգանեմ, գրեթէ միշտ առնուն զխնդիր սեռին ՚ի վերջահոլովին. Գ

*Յերեւելի խաչս երկրպագանեմք ամենեքեան. Ն. Շ. Ընդհանր. 261.

*Որ յԱ՟ծ ծնեալ է, յաղթէ աշխարհի. Ա. Յովհ. Ե 4

*Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում. Ղուկ. Ա 54

*Որ ստունգանէ պատուիրանաց Ա՟յ, տարագիր ելցէ ('ի դրախտէն). Ընդհանր. 256։

*Ի ստունգանել թագաւորացն աստուածայնոյն նոր օրինաց զպատուհաս բարկութեան մերոյ յառաջագոյն . . . ցուցեր սրբոյն Ներսէսի. Շար. 486.

*Ո՛չ կարէին սանձանել ամբոխին (ըմբերականու).

Յովհ. կոնդակ։

Յօդուած. Է.

Խնդիր սեռի Կրաւորականաց.

504 Կրաւորական բայի սեռի խնդիրն այն է, որ ցուցանէ զներգործողն։ Աստի

505 Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռին ՚ի հոլովն սկզբնական. Գ, *Իւրաքանչիւր ծառ ՚ի պտղոյ իւրմէ ճանաչի. Ղուկ. Զ. 44։ Ահա՛ կրաւորական բայս ճանաչի՝ առեալ է զիւր խնդիր սեռի սկզբնականաւ՝ ՚ի պտղոյ իւրմէ։ Նմանապէս են և հետեւեալքս.

*Մի՛ յաղթիր ՚ի չարէն. Հռոմ. ԺԲ. 21.

*Քարոզի ՚ի սքանչելեաց՝ Ա՟ծ մարմնով վասն իմ խաչեալ. Շար. 308.

*Որ երկիրպագի յերկնաւորաց և յերկրաւորաց ընդ Հօր և ընդ Հոգւոյն. Շար. 444.

*Ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամ՟ բան. Մատթ. ԺԸ. 16.

*Եղիցին ամենեքեան ուսուցեալք յԱ՟յ. Յովհ. Զ. 45.

506 Արժան է աստ ճանաչել, թէ այս խնդիրքս
որոշեալ յայտնեն զսեռս բայից այսպէս.
Առաջին ուսար, զի ներգործականի տէր բային
ցուցանէ զգործողն, և կրաւորականինն՝ զկրօղն:
Ներգործականի սեռի խնդիրն ցուցանէ զկրօղն,
և կրաւորականինն՝ զներգործողն.
Այլ և ս՝ ամ̃ ներգործականք կարեն լինել կրաւորա-
կան, և կրաւորականքն՝ ներգործական (239):
Ապա թէ զներգործականն փոխես ՚ի կրաւորական,
յայնժամ ներգործականի տէր բայն լինի խնդիր
սեռի կրաւորականին. և ներգործականի սեռի խըն-
դիրն լինի տէր կրաւորական բային: Այլ անդրա-
դարձեալ. որպէս՝

* Յովհաննէս մկրտեաց զՅիսուս.
* Յիսուս . . . մկրտեցաւ ՚ի Յովհաննէ. Մարկ. Ա. 6:

Ահա ուղղականս Յովհաննէս՝ որ է տէր ներգոր-
ծականիս մկրտեաց, եղեալ է սկզբնական խընդիր
սեռի կրաւորականի նոյն բային՝ մկրտեցաւ.
Այլ ներգործականի սեռի խնդիր հայցականս
զՅս՝ եղև ուղղական տէր կրաւորականին.
Այլ անդրադարձեալն այս է. որ թէ զկրաւորականն
փոխես ՚ի ներգործական, ահա կրաւորականի տէրն
է խնդիր սեռի ներգործականին. և կրաւորականի
սեռի խնդիրն լինի տէր բայի ներգործականին. և
այս երկու շարադրութեան միտքն մի և նոյն է.
Ապա ուրեմն այսպէս քննելով որոշի և ճանաչի
սեռն բային թէ ներգործական է, կամ թէ կրաւո-
րական. և թէ չկարէ այսպէս անդրադառնալ, այն
բայն չէզոք է.

507 Գիտելի է և՛ զի ոմանք կրաւորականք առ-
նուն զխնդիր սեռի յայլ հոլովս. Թ. * Այլ Յս̅. . .
վարէր հոգւովն յանապատ. Ղուկ. Դ. 1. Ահա կրա-
ւորական բայս վարէր՝ առեալ է զխնդիր սեռի
գործիական անուանս՝ հոգւովն. զոր պարտ է իմանալ
սկզբնական այսպէս. * Վարեցաւ Յս̅ յանապատ ՚ի
հոգւոյն. Մատթ. Դ. 1. Այսպէս իմանալի են և ՚ի
ներ

Ներքոյ օրինակքս.

*Զմատն Թովմայի շօշափեցար փրկիչ։ Տս̅ ի ձեռաց. գործոյ. 397.

*Իմաստութեան տեսակ կրկին է. է՝ որ երկրաւոր է և բանսաւոր. որ ծառայութեան խմանի. և է՝ որ հոգեւոր է, և գործով ճանաչի. Տս̅ ի ճարտասանութեն. ի գործոյն. գիրն. հանդէս. 147.

*Ուսաւոր և անխթառական է իմաստութիւն, և դիւրին... զհամնի խնդրողաց իւրոց. Տս̅ ի խնդրողաց իւրոց. իմաստ. Դ. 13.

*Ի հուր փորձի ոսկին, և մարդ ի բովս տառապանաց. Տս̅ ի հրոյ. ի բովսաց. սիրաք. Բ. 5. հատուած.

508 Խոտելի է և ս, զի երբեմն կրաւորականք ի ներգործականն նշանակութ փարեալ առնուն զխնդիր սեռի հայցական. Դ̅ *Օձ ձեռն ի ցփսին ... լինէր ամիրապետոն. Տս̅ արկանել. գործ. հանդէս.

*Որդեւ ձայնիւ և խաղաղեան լինել զոր Լ. Ճ. Տս̅. Տեղ. Ճ. Դ. 4.

509 Տամիւն ևս ներգործականք եղեալ ի կրաւորական նշանակութ. Դ̅. *Թագաւորն գլուխ է ազգին և կենդանութ. . . ի բառնալ թագաւոր ընկեցաւ ընդ նմին բառնոյ և կենդանական զօրութիւն նց. Տս̅ բարձեալ լինի. գիրն. հանդէս. 332.

Բայց պայման է զգուշանալ ի գործածութե այսպիսեաց.

ԳԼՈՒԽ. Գ.

Թէ զի՞նչ է Խնդիր բնութեան, և քանի՞ բաժանի։

Խնդիր բնութեան այն է, որով զանազանեալ որոշի նշանակութիւն բային։

511 Եւ բաժանի ՚ի չորս՝ բուն խնդիր, յարմարական խնդիր, երկրորդական խնդիր, պատահական խնդիր։

512 Բուն խնդիրն այն է, զոր բային պահանջէ ըստ բուն նշանակութեան իւրում. Օ. բայս տամ՝ պահանջէ զոմն, որում անուն տալ. և զայն ցուցանէ վերջահոլովմ տրականաւ. Օ. * Ա՛ծ . . . տացէ ձեզ զհոգին իմաստութեան. ‖ Եփես. Ա. 17. Ահա վերջահոլովս Ձեզ՝ եղեալ է բուն խնդիր բային՝ տացէ.

513 Յարմարական խնդիրն է, որ յարմարի հոլովի բուն խնդրոյն. կամ խնդիրն ցուցանէ թէ՝ բային յարմարեալ է նշանակութիւն այլում բայի. Օ. * Տայր ցաշակերտսն արկանել ժողովրդեանն. ‖ Ղուկ. Թ. 16. * Տացես շուրջ զնովաւ բանակս. ‖ Եզեկ. Դ. 2. Ահա նախդրեալ տրականս ցաշակերտսն՝ է յարմարական խնդիր բային՝ տայր. քանզի այնպիսին յարմարեալ եդեալ է ՚ի տեղի բուն խնդիր վերջահոլովին, մինչ և այլ ոչ ևս խնդրէ զայն, ոչ զօրութեամբ՝ և ոչ ներգործութեամբ. զի զնորին նշանակութիւն ունի. իբր ասել այսպէս. * Տայր աշակերտացն արկանել ժողովրդեանն։ Եւ նախադրութեամբս շուրջ զնովաւ՝ է յարմարական խնդիր բային՝ տացես. զի ցուցանէ թէ, տացես բային աստ յարմարեալ է նշանակութեան բային՝ շրջապատեսցես (533). որպէս թէ ասել՝ * Շրջապատեսցես զնովաւ բանակս.

514 Երկրորդականն է, որ զկնի առաջնոյ նկատմամբն պահանջէ. իբր զի բայս տամ՝ զկնի բուն խնդրոյն պահանջէ ցուցանել իբր զտեղի իմն, յոր մէջ լիցի տալն իմն. և զայն յայտնէ սկզբնական հո-

ըղձիւ. Օր. *Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից. Յովհ. Զ. 32. Ահա սկզբնականս յերկնից՝ է երկրորդական խնդիր բային տալ.

515 Պատահական խնդիրն է, զոր ըստ բնութեան ոչ պահանջէ բայն. այլ զկնի բուն և երկրորդական խնդրոյն՝ հետեւ պատշաճաւորութբ պատահի բային յայլևայլ հոլովս, կամ նախադրութբ. վոյ՝ առ նոսա նկատմամբ ասի պատահական. և այս պէս այս.

516 Այլ ըստ նշանակութեն տեղւոյ, և կոչի Տեղական պարագայական. Օր. *Տուաւ ինձ ամ իշխանութիւն յերկինս և յերկրի. Մատթ. ԻԸ. 18. Որ ներգոյականքս յերկինս և յերկրի՝ են տեղական պատահական խնդիր բային տուաւ.

517 Այլ ըստ նշանակութեն ժամանակի, և կոչի Ժամանակական պարագայական. Օր. *Տէր՝ յամ ժամ տուր մեզ զհացն զայն. Յովհ. Զ. 34. Որ ներգոյականս յամ ժամ՝ է ժամանակական պատահական խնդիր բային տուր.

Այս խնդիր դնի և ՚ի սեռական, գործիական, պարառական, հայցական, և ՚ի սկզբնական հոլովսն. զորս ունիս տեսանել յիւրաքանչիւրսն.

518 Այլ ըստ նշանակութեն պատճառի, և կոչի Պատճառական պարագայական. Օր. *Իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութի հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ. Ա. Կորնթ. ԺԲ. 7. Որ տրականս առ իւրաքանչիւր օգուտ՝ է պատճառական պատահական խնդիր բային տուեալ է.

519 Այլ նախադրութբ, և ըստ զանազան տեսակի նախադրութեց կոչին՝ տեղական պատահական, ժամանակական պատահական, պատճառական ևն. Օր.

*Տուր ինձ աստ այսր ՚ի վերայ սկտեղ. Մատթ. ԺԴ. 8.

*Տաց զնա առաջի քո նուէր՝ մինչև ցօր մահուան իւրոյ. Ա. Թագ. Ա. 11. [illegible].

*Հացն . . . մարմին իմ է, զոր ես տաց վն կենաց աշխի. Յովհ. Զ. 52.

*Տացէ քեզ տր ըստ սրտի քում. Սաղմ. ԺԹ. 5.

Ար

*Արդարն ողորմի և տայ առանց խնայելոյ · Առակ · ԻԱ 26
*Տուաւ նմա իշխանութիւն առնել պատերազմ ընդ սրբս՝ և յաղթել նոցա · Յայտն · ԺԳ · 7 · Ուր աներևոյթքս առնել և յաղթել՝ են պատճառական պատահական խնդիր բայիս՝ տալ, զորս Բ առնելով զհոլովակերպս նախդրիւս՝ առ 'ի · որպէս թէ ասել · *Տուաւ նմա իշխանութիւն առ 'ի առնել պատերազմ ընդ սրբս · և առ 'ի յաղթել նոցա ·

520 Ա՛ս ըստ զօրութե է որպիսեաց մակբայից · որպէս՝
*Տային նմա աւուր նկանակ մի հաց 'ի հացարարացն · Երեմ · ԼԷ · 20 ·
*Ո՛չ եթէ չափով տայ ԱԾ զՀոգին · Յոհ · Գ · 34 ·
*Ողորմեցէն են ուխտք իմ, զոր տայ քեզ օրհնութիւն ՏՐ֊ԱԾ իմ · Սաղմ · ԾԵ · 11 ·
*Մի՛ անփոյթ առներ զշնորհացդ · · · որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեան · Ա · Տիմ · Դ 14

Ահա 'ի վերոյ գրեալ օրինակսն բայս տալ առեալ է զխնդիր բնութեան տասն և եօթն կերպիւ · Հնար է մեզ բայից ևս այսպէս առնուլ · զորս նորավարժք եթէ ոչ կարասցեն իսկ և իսկ ըստ պատշաճին ճանաչել, նախ որոշեսցեն զանուն խնդրին · և ապա ծանուցելոցն առ համարակ ասասցեն խնդիր բնութ, մինչև քաջ տեղեկասցին այսմ ·

Ապաքէն՝ բովանդակ բայք թէ յինչ հոլով առնուն զբնութ խնդիրն՝ զյարմարականն՝ զերկրորդականն և զայլս, կարգեսցուք 'ի հետևեալս · զորոց առ բայիւքդ վերահասու առնելով՝ կարևոր համարիմ յառաջ դնել զծանօթութիւնս ·

Ծանօթութիւն · Ա ·

521 Բայք ոչ միշտ առնուն 'ի միասին զսեռի խնդիրն և զբնութ խնդիրսն համայն · այլ՝ մերթ առնուն զմինն, մերթ զերկուսն, և երբեմն զերիս և զչորս միանգամայն · որպէս տեսանի յօրինակս · միայն թէ՝ բնութ և յարմարական խնդիրք ոչ երբէք դնին 'ի միասին ·

Ծա

Ծանօթութիւն. Բ͞։

522 Որ ինչ խնդիր բնութե՛ անուանն նախասաւիղ կամ պարզ բայք, զնոյն անուանն նաև նոցին ածանցեալք և բարդեալքն. որոց նշանակութիւն չիցէ ը͞ն ամի փոփոխեալ։

Ծանօթութիւն. Գ͞։

523 Ուղղական հոլովն ոչ լինի խնդիր. Սեռական հոլովն ուր ուրեք լինի խնդիր պատահական ժամանակական՝ եւս, մանաւանդ էական բայի. իսկ միւս մնացեալ հոլովք լինին այլ և այլ խնդիր։ Որք՝ զայս ամենայն լիով առաջի առնեն քեզ առհասարակ օրինակքդ. Աստի մարթիցուք ցուցանել նախ զներգործական բայսն կրաւորականօք, ապա զչէզոքսն՝ զէականսն՝ զանդէմսն և զանձնաւորութեան յատուկ յատուկ ախորժական օրինակօք. յորս մատաղիկ նկատմամբ տեղեկացեալ՝ զօրացիր ՚ի Ք͞ս Յ͞ս իմաստութեան շնորհօք։

Յօդուած. ա͞։

Խնդիր բնութե՛ Ներգործական և Կրաւորական բայից։

524 Ներգործական բայք յինչ հոլով առնուն զխնդիր բնութե՛ն, ՚ի նոյն հոլով առնուն նաև նոցին կրաւորականք. զորս դասեմք ըստ իւրաքանչիւր հոլովին՝ զոր պահանջեն։

Ուղղական։

525 Բայքս՝ Անուանել, յորջորջել, առնել, ձեռնադրել, դաւանիլ, համարիլ, վարկանիլ, և այլ սոյնք՝ որք ցուցանեն զգործ անուանելոյ կամ առնելոյ զիր իմն այս ինչ, առնուն ըզբուն խնդիր բնութե՛ ՚ի հոլովն ուղղական. զ͞.

* Ծնաւ Յ͞ս, որ անուանեցաւ Ք͞ս. Մատթ. ա. 16.

* Շինեաց Մովսէս սեղան տեառն. և անուանեաց զա

զանուն նր՝ Տէր ապաւէն իմ․ Ելից․ ԺԷ․ 15․

*Զլեառնէն յիւր անուն մասիս յորջորջէ (Ամասիա)․
Խորհ․ կոտնուղ։

*(Իմաստութիւն) բարեկամս Այ և մարգարէս առնէ․
Իմաստ․ Է․ 27․

*Սերաձայնէր (Սերոփիմս) որք և Ած դասաներգէին
զմարդացեալդ․ Շար․ 347․

*Համարիմ զանձն իմ հող և մոխիր․ Յոբ․ ԽԲ․ 6․

526․ Յարմարական խնդիր․ Դ․ *Կոչեաց զանուն նր Յս․ Մատթ․ ա․ 25․ Ահա ուղղականդ Յս է յարմարական խնդիր բայիս՝ կոչեաց․ քանզի բայս կոչեմ՝ որ ըստ բուն նշանակութեան իւրում պահանջէր զնախադրելի տրականն (544)․ այժմ՚ի բանիս աստ յարմարեալ է նշանակութեան բայիս՝ անուանեմ․ որպէս թէ ասել՝ *Անուանեաց զանուն նր Յս․ Ըստ այսմ են և հետեւեալ օրինակքս․

*Կարդաց (Աբրահամ) անդ զանուն տեառն Ած յաւիտենականի․ Աստ յորջորջեաց․ Ծնն․ ԻԱ․ 33․

*Զհրաշալի անուանդ քո մարգարէն վերագոչեաց հոգւի երգեաց մերոյ որ էր Բնն․ Աստ անուանէց․ Շար․ 428

*Իմաստութիւն․․․ զլեզուս տղայոց եդ պարզախօսս․
Աստ արար․ Իմաստ․ Ժ․ 21․

*Եթէ Ե-ամենին իսկ դատիցէ զայն (զեկեղեցի) որ գրեսցէ, ոչ անօրինեսցի․ Աստ համարեսցի․ Նոր․ ՃԵ․ 14

*Ահա գամ․․․ հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց․ Աստ իւրաքանչիւրոց․ Յայտն․ ԻԲ․ 12․

527 Երկրորդական կամ պատահական խնդիր․ Դ․

*Յորովայնի մօր նկարեցայ մարմին․ Իմաստ․ Է․ 1․ Ահա ուղղականդ մարմին՝ է երկրորդական խնդիր բնութե բայիս՝ նկարեցայ․ որոյ և բուն խնդիրն է ներգործականս՝ յորովայնի․ Ըստ այսմ են և այլքս․

*Զայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուղթ գրեմ․
Բ․ Պետ․ Գ․ 1․

*Օծի զքեզ թագաւոր ՚ի վր Իէլի․ Դ․ Թագ․ Թ․ 3․

*Ես վկայ զԱծ կոչեմ անձին իմոյ․ Բ․ Կորնթ․ Ա․ 23․

*Ետ զանձն փրկանս ըն ամենեցուն՝ վկայութի ժամանակաց կայց եւրոց. Յա. գլխ. ժը. 6.

Սեռական.

528 Սեռական հոլովն դատանի ուրեք իբր խնդիր պատահական և երկրորդական. Ք, *Բազում ժամանակաց արգելեալ պաշարեալ էին. Յա. Մակաբ. Զ. 49. Աստ սեռականս բազում ժամանակոյն՝ եղեալ է ժամանակական պատահական խնդիր բայիցս՝ արգելելոյ պաշարելոյ էին.

*Տուք զնա նմա կնութեն. Ծննդ. լդ. 8. Աստ սեռականս կնութեն՝ է պատճառական պատահական խնդիր բայիս՝ տուք.

*Ստացաւ աբրահամ (զայրն) գնոց արծաթոյ յորդւոցն եմովրայ ՚ի սիւքեմ. Գործ. է. 16. Աստ սեռականս գնոց արծաթոյ՝ է երկրորդական խնդիր բայիս՝ ստացաւ. Ըստ այսմ են և այլքն.

*Վաճառեսցես զնա արծաթոյ. Բ օրէն. իա. 14.

*Գնեցեր զմեզ Այ արեամբ քով յամ ազգաց. Յայտն. Ե. 9.

Գործիական.

529 Բայքս՝ Գործեմ, դարմանեմ, ճանաչեմ, կերակրեմ, ըմբոշխնեմ. կոչեմ, հնձեմ. կըշռեմ, չափեմ, շօշափեմ, տեսանեմ, իմանամ: Լուանամ, մկրտեմ, ողողանեմ, ներկեմ, վարակեմ, վառեմ, արծարծինեմ, այրեմ, կիզում, խորովեմ, փորձեմ. օծանեմ. Ահաբեկեմ, խռովեմ. կոծեմ. գանեմ. հարկանեմ, ձաղկեմ, նեղեմ, պատժեմ. պղտորեմ. աղաւաղեմ, ապականեմ, թունաւորեմ, համեմեմ, յաղեմ. Ջարդեմ, քանդեմ, բեկեմ, կոտորեմ, փլանգեմ, վատթարեմ, վարանեմ. խեթեկեմ, խոցեմ. վիրաւորեմ, սատակեմ, սպանանեմ, գրթցեմ: Լուսաւորեմ, զարդարեմ, պաճուճեմ, պատրուակեմ, ծածկեմ, խնում, լնում, հանում: [illegible], բամբասեմ, դատեմ, դաւաճանեմ. անգոսնեմ, անարգեմ.

նախատեմ, ստգտանեմ. գովեմ, մեծարեմ, պաշտեմ, պատուեմ, ողջունեմ, սիրեմ, փառաւորեմ, քաջալերեմ, մխիթարեմ, սփոփեմ, ողոքեմ, թախանձեմ. յաղթեմ, յաղթահարեմ, պարտեմ, ծանրաբեռնեմ. խռովեմ. կապտեմ, ըմբերանեմ. պատրեմ, խաբեմ, և այլ բազումք՝ որք նշանակեն զգործել ինչ իւիք իբր գործեօք, առնուն զբուն բնութիւն խնդրոյն՝ ի հոլովմն գործիականի. որպէս՝

* Խորհրդով գործեն զամ. Մատթ. ԻԳ. 3.
* Նա մկրտեսցէ զձեզ հոգւով սրբով և հրով. Ղուկ. Գ. 16.
* Օծանէին իւղով զբազում հիւանդս. Մարկ. Զ. 13.
* Եթէ հոգւովն (զգործս) դատապարտանէք, ո՛չ մեռանիք. Հռոմ. Ը. 13.
* Կանայք ի զարդ խոնարհութեան ամօթխածութեամբ և պարկեշտութեամբ զարդարել զանձինս. Ա. Տիմ. Բ. 9.
* Նոքօքն գուռ զորդին զպատիւ նորա քեզ դնելով ի դատել զերկրաւորս. [illegible]. 180.
* Մխիթարեցէք զամ երկայնմտութեամբ և վարդապետութեամբ. Բ. Տիմ. Դ. 2.

§530. Յարմարական խնդիր. Գ. * Արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա. Ղուկ. Է. 38. Ահա բայս բանիս՝ առեալ է յարմարական խնդիր գործիականին՝ արտասուօքն, որ յարմարեալ եղեալ է ի տեղի ներգոյականին (550). ուր թէ առեալ՝ *Արտասուաւն սկսաւ թանալ զոտս նր. Այսպէս իմանալ պարտ է և զհետևեալ օրինակքս.

* Եթէ . . . ծեփեսցես զձեռն քո կաւով, անարգեսցես. Ճռ. ի կուսին. [illegible]. Լ. 32.
* Որոխեցի զբանակս ձեր հրով բարկութեան իմոյ. Ճռ. այրեցի. Ամով. Դ. 10.
* Որ . . . սահմանէ շրթամբք իւրովք զամ չարիս, այնպիսին է հնոց չարեաց. Ճռ. արծարծէ. Առակ. ԺԶ. 30.
* Յագեցոյց զիս դառնութեամբ. Ճռ. լցոյց. Ողբ. Գ. 15.

§531. Երկրորդական կամ պատահական խնդիր. Դ.

* Զուարթութեամբ և հաւատով սրբէին միտս. [illegible]. ԺԵ. 27.

Ահա գործիականքս զուարթութեամբ և հաւատով՝ են երկրորդ

դա

դական խնդիր բայից՝ որքին. Նման այսմ են և այլքն.
*Հաւատովքն միայն՝ առանց գործոց ոչ ոք կարէ զանձն իւր շինել տաճար Տն. Ոսկեփորիկ. 120.
*Յոյսն մեր Քս, որ զօրութ. հանողէ. և ոչ անաչեամբք դատոյ. Սարգ. Կաթողիկ:
*Մի՛ տէր գրելոցն իմաստութ. . . . և մի՛ զուղիղ գտեալսն հետևորդ միմեանց ութ. Ոսկեփորիկ. 240.
*Լաւ է շնորհօք հաստատել զսիրտս, և ոչ կերակրովք. Եբր. ԺԳ. 9.
*Բաղդատեմ անձս կինուցն զիմաստութ. Յոբ. ԻԸ. 7.
*Այս . . (որք) արհամարհանօք ողջունորհնեցին զօրէնս. Եսայ. Իէ. 16.
*Այժմ օրհնելով օրհնեսցէ զքեզ, և բազմացուցանելով բազմացուսցէ զքեզ. Եբր. Զ. 14.

532 Նաև զի ամ գործ կատարի իւիք իւր գործեաց, վն զի գրեթէ ամ բայք առնուն զգործիականն իւր խնդիր պատահական կամ երկրորդական.

Պարառական.

533 Բայք՝ Պատեմ, պարապատեմ, շրջապատեմ, շուրջ փակեմ, յածեմ, փարեմ, զանցուցանեմ, եւն, որք ցուցանեն զներգործութ. շուրջ զիւիք, պահանջեն զբուն խնդիր ՚ի հոլովս պարառականն. Օ.
*Պատեա՛ զնովաւ զամ մարտիկս. Յեսու. Զ. 3.
*Շուրջ փակեա՛ զնովաւ, և բարձրացուսցէ զքեզ (իմաստութիւն). Առակ. Դ. 8.
*Ոչ փոքեցոյց զպարսափելի պարանոցաւն զանմատոյց լուսոյն. Շնորհ. 116.

534 Յարմարականն խնդիր. Օ. *Զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ. Սաղմ. ՀԲ 9. Որք պարառականս ընկալեալ՝ եղեալ է յարմարականն խնդիր բայիս՝ ածէին, որ աստ յարմարեալ է նշանակութ. բայիս՝ յածէին. քանզի ածել բայն՝ զբուն խնդիր իւր պահանջէ ՚ի նախդրիւ տրականն. Նոյնպէս են և այլքն.
*Արկին զնոքօք ձորձս իւրեանց. Այլ պատեցին. Մատթ. Իա. 7.

Զ հան

* Զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհաւն. Այլ ՚ի վր ճանապարհին. Ղուկ. ԺԹ. 36.

* Յարուցեալ առաջի ամենեցուն՝ առ (զմահիճն) զիւրեւ. Այլ յինքեան. Ղուկ. Ե. 25.

* Ցանեաց (մուրթքէ) մոխիր զգլխով իւրով. Այլ ՚ի վր գլխոյ իւրոյ. Եսթեր. Դ. 1.

§ 535 Ժամանակական պատահական խնդիր. որպէս՝

* Զայսու ժամանակաւ մեծ Հայրապետն Կոմիտաս՝ զվկայարանն սրբոց Հռիփսիմեանցն . . պայծառ շինուածով յօրինէր. Յովհ. Կաթող.

* Ա՛հ քննեցից զհայր իմ զերեկս ժամուն. Ա. Թագ. Ի. 12

* Զմիջաւուրբն ՚ի ճանապարհի տեսի. Գործ. ԻԶ. 13

Հայցական.

§ 536 Հայցական հոլովն ոչ լինի բուն խնդիր. այլ ոմանք ներգործականք առնուն իբր յարմարական. Գ. * Զձեռագործս նախնեաց զոմն յօրինօրինեցին. Իմաստ. ԺԳ. 10. Եւ հայցականս զաստուածս եղեալ է յարմարական խնդիր բայիս յօրինօրինեցին. զի յարմարի ուղղական հոլով բուն խնդրոյ նորին. իբր ասել՝ * աստուած յօրինօրինեցին. Այսպէս են և օրինակքս.

* Զոր ՚ի քաղաք իմ և ՚ի ծառայս ներգործեցին զիս. Այլ որով . . ներգործեցին զիս. Ընդհանր. 216.

* Տրդատայ հանեալ (կոստանդիանոս զՏրն Գրիգոր) յոսկեպատ կառս՝ մեծաւ շքեղութեամբ յուղարկէ զճանապարհայն. Այլ ՚ի ճանապարհն. Յովհ. Կաթ.

* Եթէ ուսանել ինչ կամիցին (կանայք), ՚ի տան զայրս իւրեանց հարցանիցեն. Այլ ցայրս իւրեանց. Ա. Կորնթ. ԺԴ. 35.

* Թագաւորն Կիւրիկէ . . . մերձեցուցեալ զնն զծործորս լերանցն կողմանն. Այլ ՚ի ծործորս. Յովհ. Կաթ.

Բայց պարտ է զգուշանալ յայսպիսի ոճոյ.

§ 537 Պատահական խնդիր. Գ. * Զոր պատուէր ետ նա՝ զբարեաց հակառակ գրոյն՝ որ ՚ի վերս մեր և ՚ի բարձ ՚ի բաց հանել ՚ի միջոյ. Ընդհանր. 20 Իսկ հայ

ցա

ցանկանայ զոր՝ եղեալ է պատահական խնդիր բայց ո՛ հոգւոյ. և ունի զզօրութիւն գործականին. իբր ասել՝

*Վերով պարունակի, ստ:

*Եթէ զմտաւորս կենաց քոց ոգի մի միայն տը- բերգացուցեր ի մահուանէ, չէր ոք՝ որ երանեսցի էր քան զքեզ. Բեռն. նամակ. 367.

*Զամէն ողջոյն ծաղկեալ յեկեղեցին՝ և տօնատօնեալ:
Ագոստ. ժա. 26.

*Պաշտեն զնա զտիւ և զգիշեր ի տաճարի նորա.
Յայտ. է. 15.

*Քառասուն և վեց ամ շինեցաւ տաճարս.
Յովհ. բ. 20:

*Իսրլ փրկեցաւ զփրկութիւն յաւիտենից. Եսայ. խե. 17.

Պատմական.

§538 Բայց՝ Պատմեմ, վիպեմ, խօսիմ, ճառեմ, ազդեմ, ծանուցանեմ, գուշակեմ, աւետարարեմ, մատենագրեմ, ամբաստանեմ, բողոքեմ, մրմնջեմ, համբաւեմ, հռչակեմ, վկայեմ, առասպելեմ, բարբառեմ, շաղփաղփեմ: Մտածեմ, զմտաւ ածեմ, խոկամ, խորհիմ, խորհրդածեմ, իմաստասիրեմ, կարծեմ, և այլք սոյնք՝ որք զպատմել կամ զխորհել նշանակեն, պահանջեն զբուն բնութ. խնդիր ի հոլովս պատմական որպէս՝

*Պատմեմք ձեզ՝ զյաւիտենականին կենացն. Ա. յով. ա. 2

*Ո՛չ ոք է ի մարդկանէ՝ որ փոքր գիտութ. մտաց խօսի զԱծ և զպատգամաց նորա, և ոչ սխալէ. Բեռն. նամ. 137

*Տես՝ քանի՞ ամբաստանեն զքէն. Մարկ. ժե. 4.

*Վկայեցաք զԱծ՝ թէ յարոյց զՔս. Ա. Կոր. ժե. 15

*Խորհեցարուք զտեառնէ բարութ. Իմաստ. ա. 1.

*Կարծեն զմեզ՝ եթէ ըստ մարմնոյ գնայցեմք.
Բ. Կոր. ժ. 2.

§539 Յարմարական խնդիր. որպէս՝ *Դնիցես նշանակ զթել կարմիր, և կապեսցես զպատուհանէդ. Կամ ի պատուհանէդ. Յեսու. բ. 18.

*Ահաւասիկ ես հարկից զքեն հուր. Կամ ի քեզ. Եզեկ. ի. 47

Պաւ

*Գուցէ որդիքըն իմ խոկացան 'ի միտս իւրեանց չարութի̄ զԱ̄ծ․ Եբ̄ր խորհեցան․ յոբ․ ա̄․ 5․

*Օ Զապրանք հրոյ բանս բամբասանաց չարեաց կոտորեալք կաճքն խոխոտեալ յօդեսն․ Եբ̄ր բաղբաղեսցին․ յոբ․ լ̄․ կոտոր։

*Օ Հրեշտակաց խոտորագոյնս ինչ իմացաւ․ Եբ̄ր կշտեաց յոբ․ դ̄․ 18․

540 Երկրորդական կամ պատահական խնդիր․ Գ̄,

*Լուայ զքէն թէ հոգի Ա̄ծ է 'ի քեզ․ Դան․ ե̄․ 14

*Երանի՛ է ձեզ յորժամ . . . ասիցեն զա̄մ բան չար զձէնջ սուտ վ̄ս իմ․ Մատթ․ ե̄․ 11։

*Զա̄մ գիրս գրեալ է զնմանէ․ Ղուկ․ ի̄դ․ 27․

Սկզբնական․

541 Բայց՝ Սկսանիմ, ծնանիմ, բղխեմ, ստեղծանեմ, արարչագործեմ․ շինեմ, տաշեմ, ձուլեմ, կերպաւորեմ, կեցուցանեմ․ բժշկեմ, նորոգեմ, սրբեմ, մաքրեմ, պարզեմ, քաւեմ․ ուտեմ։ Առնում, բառնամ․ խլեմ, կորզեմ, կողոպտեմ, յափշտակեմ․ ստանամ, որսամ, գողանամ, քաղեմ, քանդեմ, քերեմ․ կեղեւեմ, մորթեմ, քերծում․ խուզեմ, կթեմ, գնեմ․ ստածեմ․ հանեմ․ լուծանեմ, արձակեմ, ազատեմ․ փրկեմ․ մերկեմ։ Անջատեմ, բաժանեմ, ընտրեմ, տրոհեմ․ որոշեմ․ անջրպետեմ, մերժեմ, շորթեմ․ հատանեմ․ հալածեմ․ փարատեմ․ արգելում, նահանջեմ, ընկըրկեմ․ խափանեմ․ արտաքսեմ, տարագրեմ, վտարեմ, փարատեմ, վրդովեմ․ սպառեմ, ջնջեմ, քակեմ․ զըրկեմ․ ղրկեմ․ ունայնացուցանեմ, դատարկեմ․ Սնանիմ․ հայցեմ, խնդրեմ, պահանջեմ․ շահիմ, լսեմ․ ստուգեմ, թարգմանեմ, օրինակեմ․ մուրանամ, զլանամ, և այլ բազում բայք՝ որք ցուցանեն զգործըն սկսեալ կամ առեալ յայլմէ, առնուն զբուն բնութեան խնդիրն 'ի հոլովն սկզբնական։ Որպէս՝

*Սկսան յարանցն ծերոց․ Եզեկ․ թ̄․ 6։

*Հոգւոյն ս̄ր է՝ որ ծնանի զմեզ 'ի գերեզմանաց ծնունդ նորոգ և սքանչելի․ Եզնկ․ կաթող․ 326․

*Ստեղծ տէր Ա̄ծ զմարդն հող յերկրէ․ Ծնն․ բ̄․ 7․

Արեւն

*Արիւնն Յի․ ․ սրբէ զմեզ յամ մեղաց․ ‖ Յհ․ թղթ․ ա․ է

*Ոչ որ սիրեն զԱ՛Ծ, շնորհս ինչ առնիցեն նմ․․․ այլ զի ընկալցին շնորհս տանգստան ՚ի նմանէ և փառաւորեսցին․ ‖ Ոսկ․ կոխ․ 783․

*Այս մերժեցաւ յերեսաց նորա ՚ի նմանէ կայանէն․ ‖ Ոսկ․ կոխ․

*Զոր ինչ խնդրեսջիք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ․ տացէ ձեզ․ ‖ Յոհ․ ԺԵ․ 16․

542․ Յարմարական խնդիր․ որպէս՝ *Թաթաւեսցէ քահանայն զմատն իւր յարենէ զուարակին․ ‖՞ յարեան․ ղեւտաց․ Դ․ 17․

*Սերովբէից զինուո ՚ի պարսպարութէ Հօրենոյ․ ‖՞ պարսպարութբ․ ամղ․ Ճ․ 17․

*Ճշմարիտ սրտիւք լրումն հաւատոց ցանեալ ըզսիրտս ՚ի խղճէ չարեաց․ ‖՞ սրբեալ․ Եբր․ Ժ․ 22․

*Ի բամբասանաց խնայեցէ՛ք զլեզու․ ‖՞ զգուշացէ՛ք․ Իմաստ․ Ա․ 11․

*Արասցես սեղան յանփուտ փայտից․ ‖՞ շինեսցես․ Ելից․ Իէ․ 1․

*Պահեսցեն զնա ՚ի Թշնամեաց․ ‖՞ փրկեսցեն․ Իմս․ Ժ․ 12

543 Երկրորդական կամ պատահական խնդիր․ Գ․

*Ածեն զՅս ՚ի վանացն կայիափայ յապարանս դատաւորին․ ‖ Յոհ․ ԺԸ․ 28․

*Յերկնից յերկիր հրեշտակացն (աստ)․ ‖ Ոսկ․ կոխ․ 167

*Ժողովեսցէ զընտրեալս իւր ՚ի չորից հողմոց․ ‖ Մրկ․ ԺԳ․ 27․

*Ի սկզբանէ արար Ա՛Ծ զերկինս և զերկիր․ ‖ Ծնն․ Ա․ 1

՚Նախդրին Տրական․

544 Բայք՝ Առաքեմ, յղեմ, յուղարկեմ, վարեմ, մղեմ, մատուցանեմ, ածեմ, բերեմ, տանիմ, ձգեմ, ձկտեմ, արկանեմ, ընկենում․ հեղում, զեղում, հոսեմ, Թափեմ, Թօթափեմ, ամեմ, սրսկեմ, ցօղեմ․ ծագեմ․ ծաւալեմ․ Ջարկեմ, ստիպեմ, տագնապեմ, նուաճեմ, բռնադատեմ, պարտաւորեմ․ դրդեմ, գրգռեմ,

յոր

յորդորեմ, համոզեմ, հրաւիրեմ, հրապուրեմ. մարզեմ, կրթեմ, ուղղեմ, կարկառեմ, համբառնամ, համառօտեմ, կատարեմ, սահմանեմ, վերագրեմ, ամոքեմ. Սպասեմ, կարգեմ, պնդեմ, յարեմ, յեղյեղեմ, վարսեմ, մխեմ, ագուցանեմ, ներգործեմ. յանկուցանեմ, ընդունիմ. գրաւեմ, միձակեմ, շրջեմ, շարժեմ, թեքեմ. կործանեմ. Սոչեմ, հնչեմ, փչեմ, բուրեմ. հարցանեմ, բարբառիմ. թքանեմ. ծախեմ, ցրուեմ, վատնեմ. հեղձուցեմ, պատառեմ. յորդեմ, յաճախեմ. յաւելում, կրկնեմ. երկրորդեմ. փոխեմ, փոփոխեմ, փոխարկեմ. փոխակերպեմ, և այլ բազումք. որք ցուցանեն զգործ ը՟ նշանակութ՟ սոցին, ա՟յ առաքելոյ կամ բերելոյ զինչ առ այլ, պահանջեն զբուն խնդրին բնութ՟ն ՚ի նախդրիւ տրականն. որպէս՝

*Առաքեաց Ա՟Ծ զհոգի որդւոյն իւրոյ ՚ի սիրտս մեր. Գաղատ. Դ. 6.

*Զամ՟ արարածս ածցէ Ա՟Ծ ՚ի դատաստան. Ժող. ԺԲ. 14.

*Ցանկութ՟ իմաստութ՟ տանի յարքայութ՟ն. Իմաս. Զ. 21.

*Ընկեա՛ ՚ի տէր զհոգս քո. Սաղմոս. ԾԴ. 22.

*Որ զձեզ ՚ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն. Ա. Պետ. Բ. 9:

545 Յարմարական խնդիր. որպէս՝ *Համարեցաւ Աբրահամու հաւատքն յարդարութ՟ն. Այ՟ արդարութիւն. Հռով. Դ. 9.

*Նա մկրտեսցէ զձեզ ՚ի հոգին ս՟բ և ՚ի հուր. Այ՟ հոգւով ս՟բվ և հրով (529). Մատթ. Գ. 11.

*Բաշխեաց ՚ի ձեզ զհոգին, և գործեաց ՚ի ձեզ զզօրութիւնս. Այ՟ ձեզ. Գաղատ. Գ. 5:

*Մի՛ ըստ աչս դատիք. Այ՟ աչառանօք. Յովհ. Է. 24.

*Որ մնաց ՚ի կեանս յաւիտենից՝ սակս Ծ՟ին իւրոյ փրկութ՟. Այ՟ Ը կեանս. Յովհ. հոմիլ:

*Առաքեսցես զսիրտ քո ՚ի հանճարս. Այ՟ կրթեսցես. Առակ. Բ. 2.

*Զուարճասցեն զոսկերս իւրեանց ՚ի խոտս. Այ՟ փոխարկեսցեն. Եսայ. Ը. 4:

546 Երկրորդական կամ պատահական խնդիր. Գ̅.

* Որ միանգամ մկրտեցաք ՚ի Քս̅ Յս̅, ՚ի մահ անոջք նորա մկրտեցաք. Հռոմ. Զ̅. 3.
* Հալածիցէք ՚ի քաղաքէ ՚ի քաղաք. Մատթ. Իգ̅. 34.
* Յափշտակեցաւ (Պօղոս) ՚ի դրախտն. Բ̅. Կորնթ. ԺԲ̅. 3.
* Ինձ ստեղծի զքեզ ՚ի ծառայութիւն. Եսայ. ԽԴ̅. 21.
* Ունեցար հովիւս բզ̃մս ՚ի գայթակղութիւն քեզ. Երեմ. Գ̅. 3.

Վերջահոլով Տրական.

547 Բայք՝ Շնորհեմ, պարգևեմ, ընծայեմ, նուիրեմ, պատարագեմ, զոհեմ. մատակարարեմ, մատռուակեմ, սեղանաւորեմ, արբուցանեմ, ջամբեմ, բաշխեմ, բրդեմ, առատաձեռնեմ. մասնաւորեմ, հատուցանեմ. տնտեսեմ, աւանդեմ. թելադրեմ, օրինադրեմ. յանձնեմ. վաճառեմ. պարտիմ. մատնեմ. մատուցանեմ. Լսեմ, պատասխանեմ, երգեմ, նուագեմ. խոստովանիմ. պայմանեմ, ուխտեմ, խոստանամ. պատուիրեմ, հրամայեմ. վարդապետեմ, քարոզեմ. ուսուցանեմ, ծանուցանեմ, յուշ առնեմ. աւետեմ: Անսամ. լայնեմ, հորդեմ, հանդերձեմ. յարդարեմ, պատրաստեմ, տնօրինեմ, սատարեմ. Աշակերտեմ, ցուցանեմ, յայտնեմ, նօթձեմ, դիւրեմ, հաւասարեմ, յաջողեմ, կամիմ. յարմարեմ. սեփականեմ. նշանակեմ, և այլ բազումք՝ որ ը̅ նշանակութե̅ սոցին ցուցանեն զգործն լինել տալ կամ առնել ումեք, առնուն զբուն բնութ̅ խնդիրն ՚ի վերջահոլով տրական: որպէս՝

* Որպ̅ Քս̅ շնորհեաց ձեզ. Կողոս. Գ̅. 13.
* Եթէ ջամբեցից զամ̃ ինչս իմ աղքատաց... և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ. Ա̅. Կորնթ. ԺԳ̅. 3.
* Հատուցանէ իւրաքանչիւր ումեք ըստ գործոց իւրոց. Սաղմ. ԿԱ̅. 12.
* Ես ուխտեմ ձեզ, որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ արքայութիւն. Ղուկ. ԻԲ̅. 29.
* Պատրաստեցէ՛ք զանձինս ձեր Այ̅. Հռոմ. Զ̅. 13.

* Մարթ է զմարդն ծոյլ՝ այլ նմանեցուցանել · Յոբ · ՀԱ ·

548 Համեմատականն խնդրէ · որպէս՝ * Մատուցեր բարձրելոյն զուխտս քո · Ի Յն հատո՛ · սաղմ · ԽԹ · 14 ·

* Ստորադասեալ մոլեկեա գերեաց մեզ · Ի Յն պատուոփե-րեալ · զրոյց · Ժ · 28 ·

* Սկսեմ անձամբ անձին յոյժ պարտաւորեան զոր-սոյա · Ի Յն զանձնէ · նոր · ԺԹ · 2 ·

* Ամաչեսցեն՝ որք խորհէին ինձ չար · Ի Յն զինեն · սաղմ · ԿԹ · 3 ·

* Դառնիցէ ուղղոց զփրկութի · Ի Յն յուղիղս · առակ · Բ · 7 ·

549 Ներգործականն կամ պատահական խնդրէ · Դ ·

* Դատիցի՝ ձեզ զանձս յերկինս · Մատթ · Զ · 20 ·

* Ի զգետնս, զի՞նչ վաղվաղէին ծնանիցիքեզ · Առակ · Զ · 28

* Անդրեն՝ անձին քում՝ ի նոցանէ · Յա · Թագ · ԺԱ · 10

* Ապրող է Տ՜ր ի քարանցս յայսցանէ յորդոցանէ որդւոյ աբրահամու · Մատթ · Գ · 9 ·

Ներդրական ·

550 Որպէս՝ Դնեմ, զետեղեմ, թաղեմ, գաղեմ, ծածկեմ, ամփոփեմ, պահեմ · պարուրեմ · պարունակեմ, բովանդակեմ, հաստատեմ, հիմնեմ, կանգնեմ · կառուցանեմ, կացուցանեմ · բնակեցուցանեմ, նստուցանեմ, տնկեմ, պատուաստեմ, սերմանեմ · բեւեռեմ · յենում, ընդելուզանեմ · Արկեմ ունիմ, տապնջականեմ · գանձեմ, ժողովեմ, հաւաքեմ, ամբարեմ, շտեմարանեմ · ծրարեմ, յղանամ, տաբրեմ, համակեմ, թանամ, տոգորեմ, թաւալեմ · հոլովեմ, ընկղմեմ, սուզեմ · թաթաւեմ, շաղախեմ · Արածեմ, մակաղեմ, գտանեմ, յուզեմ, եփեմ · աղամ, լեսում, կասում · թողում · կնքեմ, դրոշմեմ, տպաւորեմ, քանդակեմ, գրեմ, նկարեմ, եւ այլք բազումք ըստ սոյին նշանակութեան, որք ցուցանեն դնել զինչ իրս ի մէջ իմիք, պահանջեն զբուն խնդիր ի հոլովս ներդրական · որպէս՝

* Դիր՝ ի սիրտս ձեր՝ մի՛ յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի · Ղուկ · ԻԱ · 14 ·

* Չէ բնակեցուցանել զմիակրօնս ՚ի տան. Լաւոդ. կէ. 8.
* Որ զհաշմանդամութիւն խօսի, զՉէ ՚ի ընդունիլ ՚ի կարգ կէ. Կթկն. կանոն. 108.
* Չնայեսցէ ոք զհօր ՚ի գող. և զհանդերձն որ այրեաց. Լաւոդ. Է. 27.
* Մասնեցէ քահանայն զմատն իւր յարքայանն. Լաւոդ. Է. 6
* Օրինակ մահուն ՚Քի յինքեան ներգործէ մկրտութիւն առաքելոյն. Երեքս ընկղմել ՚ի ջուրն՝ զեռեքօրեայ թաղումն ՚Քի նշանակէ. Կթկն. կանոն. 246.
§ 551 Շարմարականն խնդիր. որպէս՝ * Մ՚է ընկողմ զխա ՚ի պատերազմի. Լծ ոչ կանգնեցեր. Լաւոդ. ձր. 40
* Մեռանի ՚ի քեզ զմեղսն՝ զոր լուար (զեղծեալսն). Լծ թաղեա. Կթկն. կանոն. 178.
* Մեղան զթշնամութիւն յանձին իւրում. Լծ անձամբ իւրով. Լեփես. Ճ. 16.
* Վասն եղբօր յաղթութեան որք յերկաթս. Լծ յաղթութիւ. Լաւոդ. Ճզ. 10.
* Երբ ոչ եթէ նորոգ ինչ արժանէ ՚ի գաւառէն.
Լծ ՚ի գաւառէն. Լաւոդ. կանոն.
§ 552 Երկրորդական կամ պատահական խնդիր. Չ.
* Ցոյց (Մ՚ասպնելոյ). . . տեղեկանալ նախ յանտերք զա-
շակերտսն ՚Քրիստոնեայս. Կթկն. Ժ Է. 26.
* Առ համարեալ (Սմբատ) մեռանիլ Է ՚Քի, քան առժամանակ մի վերջացն ՚ի մեղս. Լաւոդ. կանոն.
* Նստոցեալ ամ յաւուրն վեցերորդ զզօրութեան իւր. Կեսար Ճ.
* Մ՚է մնասցէ զոսա իմոց մտաւանդս՝ ՚ի շօշափելն զգայնոյ. կենաց. Կեսարի. Է. 2.

Սպանութ Է.

§ 553 Որպէսք՝ Սպանեմ, բարկանեմ, կռուեմ, ցասնեմ, ոխանեմ, տարածանեմ, յարձակեմ, ատեմ, ատելութեամբ, խայթեմ, կրծեմ, արեմ, բարբառեմ, համբերութեամբ, անիրաւացուցանեմ, Ածեմ, կցեմ, կցորդեմ, զուգեմ, ըմբռնեմ, միաւորեմ, միաբանեմ, խառնեմ, խառնակեմ, խառնախաղեմ, կապեմ, շաղեմ, զանգեմ, զանգուածեմ, հիւսեմ, շղթայեմ, գրաւեմ.

ւականեմ, շփոթեմ. փոխնակեմ, փոխարինեմ. թուեմ, հաշուեմ. հեգեմ, շաղկապեմ, բաբախեմ. և այլք՝ որք են նշանակու և սոցին ցուցանեն զգործ շուրջ զինչ, ամենուն զբուն խնդիր բնութեն նախադրութեամբքս՝ 'ի վերայ, ընդ. որպէս՝

* Ընդ առն լեզուանւոյ մի' կռուիր, զի 'ի վերայ հրոյ փայտ դիցես. || Սիրաք. Ը. 4. Յեսուայ.

* Յորժամ առնիցես (թշնամւոյդ զբարիս), կայծակունս հրոյ կուտեսցես 'ի վր գլխոյ նր. || Առակ. ԻԵ. 22

* Բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին 'ի վր ճանապարհին. || Մարկ. ԺԱ. 8.

* Հովանացուցանէ զամպս 'ի վերայ անբաւ մարդկան. || Յոբ. ԼԶ. 28.

* Ա'ռ զոտեւորսն Ը նմա ոսկի և արծաթի. || Յոբ. ԽԲ. 17.

* Ո՛չ գիտական երգքն խառնեսցին ընդ ածային երգոցն. || Ընդհանր. 59.

* Հեռացո՛ մեզ զմեղուցելոյս դատն հեծութ ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց. || Նարեկ. Ձ. 1.

* Փոխանակեցին զճշմարտութին Այ ընդ սուտ. || Հռոմ. Ա. 25

554. Յարմարական խնդիր. Գ. * Համարեցաւ ինձ ոչ աւխւծ. || Յն աւխւծ. Առակ. ԺԶ. 11.

* Յարձակեցան 'ի վր մեղց քոց. || Յն զմեղց քոց. Սաղմ. ԾԲ. 4

* Յորոյ (Յն յուդայի) ազգէ վասն քահանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց. || Յն զքահանայից. Եբր. Է. 14

* Զարեգակն իւր ծագէ 'ի վր չարաց և բարեաց. և ածէ անձրև 'ի վր արդարոց և մեղաւորաց. || Յն 'ի չարս և 'ի բարիս, յարդարս, ևն. Մատթ. Ե. 45.

* Իսկ նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ, շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին 'ի բերան նորա. || Յն 'ի մշտկի. Յովհ. ԺԹ. 29.

555. Ներգործական կամ պատահական խնդիր. Գ.

* Կոտորելոց են սոքա առաջի մեր իբրև զառաջինն. || Դատաւորաց. Ի. 32.

* Դու առէ խոնարհիս իբրու զմարդ մի մեղաց քոց և անկարգութեանս. և նա բարձրացուցանէ

զքեզ

զքեզ ոչ զիմ, մն ողորմութն Տեառն եւ մարդասիրութեան. Մեծն. Խոստով. 173.

*Շինեցէք զեկեղեցի մեծ՝ ի վերայ վիմին բանիս. Շարակ. 670.

*Տեսին զդառնութիւն պետրոսի եւ որպէս զլեալ. Ընդհան. 11.

*Ոչ հոգւոյն Քրի առնել՝ ոչ ի նմանէ առնէ բնել ի պատճառս. Մեծն. Խոստով. 257.

*Վաճառեսցի ըստ գնոց իւրոց. Յակոբեայ. ԻԵ. 27.

*Որդին Մրդ հեղցէ առ սեղանոյն. Թուոց. ԺԸ. 17.

556. Դ[?] բայք կարեն առնուլ նախադրութ իբր խնդիր երկրորդական կամ պատահականն. որոց մն չէ հարկ բերել զօրինակս.

557. Այս և վայելչութ համարիմ գիտել, զի ոմանք բայք՝ արտաքոյ կերպի հոլովից առեալ են յարմարականն խնդիր հոլովակերպութն՝ զ, որ համարի՝ ի. օրինակ՝ *Ոչ տայր ականատ հատանել զտուն իւրոյ. այսինքն՝ ի տան իւրում. (որպ դնի Ղուկ. ԺԲ, 39). Մատթ. ԻԴ. 43.

*Յեսս յեսս յոգանն՝ և զորքն չքնաղք. այսինքն՝ ի գետինն. Յոբ. ԺԲ. 6.

*Զմուտ զեկավար մտա ի նաւահանգիստն հասեալ՝ առաւել լինի զգուշանալ նաւն, զի մի՛ ընդ զետ հարկանիցի նաւն. այսինքն՝ ի քարն. Մեծն. Խոստով. 766.

*Ոչ է գէշ գոյր ընդէր ճանապարհի, . . . կատարեա՝ անցելեալ. այսինքն՝ յայնմ ճանապարհի. Գործոց. Թ. 2 (536)

558. Ի. խոտելի է և այս, զի բազում անգամ առանց խնդրոյ դնին բայք. Գ. *Մի դատիք՝ և ոչ դատեսջիք. մի՛ պատժէք՝ և ոչ պատժիցիք. արձակեցէք՝ և արձակիցիք. Ղուկ. Զ. 37.

*Գիրն սպանանէ, այլ Հոգին կեցուցանէ. Բ. Կորնթ. Գ. 6.

*Որդեակ՝ յիշեա՛, զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանս քում. Ղուկ. ԺԶ. 25.

*Վաճառեցէ՛ք զինչս ձեր, և տուք ողորմութիւն. Ղուկ. ԺԲ. 33.

ԳԼՈՒԽ. Դ.

Խնդրառութիւն Չեզոքական բայից.

Չեզոք բայք առնուն միայն զխնդիրս բնութեան ըստ ներգործականացն (511) բուն, յարմարական, երկրորդական, և պատահական.

§60 Բուն խնդիրն (512). Գ բայս եղանեմ՝ ըստ առաջին նշանակութեան իւրում պահանջէ զայն, յորժամ եղանելն սկսանի. և զայն ցուցանէ սկզբնական հոլովիւ. Գ, *Առաքեցից ձեզ... զհոգին ճշմարտութեան, որ ՛ի հօրէ ելանէ. Յովհ. ժե. 26. Ահա բայս եղանէ՝ առաւել է բուն խնդիր բնութեան զսկզբնականս՝ ՛ի հօրէ. որում յայտնի լինի, թէ հայր է սկիզբն՝ որ աղբիւր ելման հոգւոյն սրբոյ.

§61 Յարմարականն (513). Գ. *Որ թէ յենուցու ոք, խորտակի՝ և ընդ ձեռս եղանէ. Եսայ. լզ. 6. *Որ ինչ եղանէ ընդ շրթունս իմ, առաջի երեսաց քոց է. Երեմ. ժէ. 16. Ահա բայս եղանէ՝ առաւել է յարմարական խնդիր տրականս՝ ընդ ձեռս. քանզի այս խնդիրս ցուցանէ, թէ եղանէ բայն՝ յայսմ բանի յարմարեալ է նշանակութեան բայիս՝ մխի. իբրու ասել՝ *Ի ցուպն եղեգնեայ... թէ յենուցու ոք, խորտակի՝ և ՛ի ձեռս մխի. Այլ ևս բայս եղանէ՝ առաւել է յարմարական խնդիր նախդրիւ տրականս՝ ընդ շրթամբ. վասն զի յարմարեալ է նշանակութեան բուն խնդիր սկզբնականին. որպէս թէ ասել՝ *Որ ինչ ելանէ ՛ի շրթանց իմոց, առաջի երեսաց քոց է.

§62 Երկրորդական խնդիրն (514). Գ բայս եղանեմ՝ յորժամ եղանելն յայտնելոյն յետոյ՝ երկրորդաբար պահանջէ ցուցանել և զայն, առ որ դիմէ եղումն. և զայն նշանակէ նախդրիւ տրականաւ, և կամ այլ հոլովիւ. Գ, *Փեստոս ... ել յԵրուսաղէմ ՛ի Կեսարիայ. Գործ. իե. 1. Ահա բայս ել՝ առաւել է երկրորդական խնդիր զնախդրիւ տրականն՝ յԵրուսաղէմ.

զի

զի յայտնեցաւ՝ թէ * Փեստոս . . . ել ՚ի Կեսարէոյ՝ յԵրուսաղէմ. (572. 586)

563 Պատահական (515). որպէս՝ * Ելեալ առ Նաթեան մուրթքէ յողողոմա քաղաքէն. Յուդիթ. Է. 6.
* Պետրոս եւ Յովհաննէս ելանէին ՚ի տաճար անդր՝ յիններորդ ժամու աղօթիցն. Գործ. Գ. 1.
* Ելեր ՚ի փրկութն ժողովրդեան քո. Ամբակում. Գ. 13.
* Աղօթք քո եւ ողորմութիւնք քո ելին յիշատակ առաջի Այ. Գործ. Ժ. 4.
* Այս ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ՝ պահօք եւ աղօթիւք. Մարկ. Թ. 28.
* Յաւուրն շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին՝ առ գետափն. Գործ. ԺԶ. 13. Իսկ որ արտաքոյ քաղաքին՝ ըստ տեսակին նախադրութե եղեալ է տեղական պատահական խնդիր բայիս՝ ելոյ. (519)

Այսպէս տեսանի եւ յօրինակսդ որ զկնի.
* Ելանէր . . . բոցն ՚ի վերոյ քան զհնոցն. Դանի. Գ. 47
* Այլ եւս եօթն երինջք ելանէին զհետ նոցա ՚ի գետոյ անտի. Ծնն. ԽԱ. 19.
* Ելանիցէք մերկք ծծոտոց դէմ ընդ դէմ. Ամովս. Դ. 3.
* Մնացորդք ժողովրդեանն ելին ընդ առաջնորդաց. Ա. Եզրաս. ԺԳ. 15.
* Ելեալ էին յեգիպտոսէ ՚ի ձեռն մովսիսի. Եբր. Գ. 16
* Արք երկու ելին ՚ի տաճարն կալ յաղօթս. Ղուկ. ԺԸ. 10
* Ելանէր այրն յաւուրց յաւուրս ՚ի քաղաքէն իւրմէ. Ա. Թագաւ. Ա. 3. (520)
* Ել (այսն) ՚ի նմին ժամու. Գործ. ԺԶ. 18.

Ահա եւ բայս ելանել էառ զխնդիր քան կերպիւն. այսպէս մարթ է առնուլ եւ այլոց իւրաքանչիւր չէզոքական բայից.

Իսկ առ հասարակ չէզոքական բայք՝ թէ յինչ ինչ հոլով պահանջեն զխնդիրս, աւասիկ ջոկ ջոկ կարգեալ տեսանիցին ըստ իւրաքանչիւր հոլովին. զորոց առ բարւոք խելամուտ լինել՝ հարկ է ՚ի միտ ունել եւ զնախադրեալ ծանօթութիւնս (521. 522. 523).

Ուղղական .

564 Չեզոքականք՝ ոչ պահանջեն զբուն խնդիր ուղղական . այլ յոյժ սակաւք առնուն իբր յարմարական . որպէս՝ *Ով որ գտաւ ինքեան վնասակար , և ոչ օգտաւէտ . Նարեկ . ԻԹ . 2 . Ահա բայս գտաւ՝ առեալ է յարմարական խնդիր զուղղականս՝ վնասակար . որ յայտնէ , թէ սոյն գործ բայս յայսմ բանի չեզոք վարեալ՝ յարմարեալ է նշանակութեամբ բայիս եղև . իբրու ասել՝ *Ով որ եղև ինքեան վնասակար . եւն . Այսպէս է իմանալ և զհետևեալ օրինակսդ .

*Նմանեալ որդւոյ Այ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր . Ոսկ . ՚ի մշտնջենաւոր քահանայութե . Եբր . Է . 3

*Անդրէն հրապարակեցին մարմինն՝ ողջ . Ոսկ . յառողջութ . ղկս . ԺԳ . 16 .

*Որ կանգնելոց է իշխան հեթանոսաց . Ոսկ . լինելոց է . եսայ . ԺԱ . 10 .

565 Երկրորդական կամ պատահական . որպէս՝

*Ամենայն այր՝ երևի անձին իւրում՝ արդար . Յառակ . ԻԱ . 2 . Ահա ուղղականս՝ արդար . է երկրորդական խնդիր բայիս երևի . որոյ և բուն խնդիր է վերջահոլով անունս՝ անձին իւրում .

*Ամենեքին՝ որք ելանիցեն ՚ի նոցանէն , անկցին կէզ : Եզեկ . Ե . 6 .

*Ահա թագաւոր քո գայ քեզ հեզ . Մատթ . ԻԱ . 5 .

Սեռական .

565 Սեռական հոլովն՝ ուրեք լինի խնդիր պատահական . Ձ . *Ծերացաւ . . . վախճանեցաւ ամաց հարիւր և երեսնից . Բ . Մնաց . ԻԴ . 15 .

*Մեռաւ (տօբիա) ամաց հարիւր և քսան և եօթնից . Տոբ . ԺԴ . 16 .

Գործիական .

567 Չեզոք բայքս՝ Ազնուանամ , գեղեցկանամ , զուարթանամ , պայծառանամ , փայլիմ .

պերճանամ, պճնիմ. ճոխանամ, փարթամանամ. պարարտանամ, ստուարանամ. սնանիմ. կենդանանամ. առատապնդիմ. շատանամ. բաւականանամ, ծովանամ լիանամ. արքենամ. ազնիանամ. զօրանամ. երանանամ զմայլիմ. յագիմ, պարկիմ, ծաղկիմ, հաստատուորիմ ։ Ն՚Հախատիմ, ձգնիմ, տաժանիմ, աղճատիմ, աղտեղանամ ախտանամ. փառոթարանամ. փարակիմ. փշրանամ. ջեռնում. շլանամ. տոչայրիմ, շոչայրիմ. պապականձիմ, զզածիմ. մատղիմ. ցնորիմ. քստմնիմ. անօսրիմ, կակղիմ. շառագունիմ, թմրիմ. թարշամիմ, նիհարանամ. հիւանդանամ; մեռանիմ, անդորրանամ. Խաղամ, կայթեմ. կաքաւեմ, կռնչեմ. քայլեմ. և այլ բազումք ըստ նշանակութեան սոցա վարեալ, ցուցանեն զգործն ինքք ինչ լինելի, առնուն զբուն խնդիր բնութ. ՚ի հոլովն գործիականն. որպէս՝

*Երկեղքումնէք (աչօք) դողձառատանողացն. ‖ Ընդդ. Հռով. 12.

*Սնանիցիս բանիւք հաւատոյ՝ և բարեաւք վարդապետութեան. ‖ Ա. Տիմ. Դ. 6.

*Խորագէտք զօրանան իմաստութբ. ‖ Առակ. Ժդ. 18.

*Որ սիրէ զարծաթ, ոչ յագեսցի արծաթով. ‖ Ժող. Ե. 9.

*Երիցունք կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութբ. ‖ Ա. Տիմ. Ե. 17.

*Որպէս ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և ՚ի Քնիւ ամենեքեան կենդանասցին. ‖ Ա. Կորն. ԺԵ. 22.

*Ծափեցեր դու ձեռամբք քով, և դոփեցեր ոտամբք քով. ‖ Եզեկ. ԻԵ. 6.

§63 Ժամանակական խնդիր. որպէս՝ *Մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. ‖ Թղ ՚ի կերպարանս. Հռով. ԺԲ. 2.

*Պարծիմք յուսով փառացն Ա.Ծ. ‖ Թղ ՚ի յոյս. Հռով. Ե. 2.

*Պարծիցէք իմ ինև երգովքն. ‖ Թղ յիս. սաղմ. ՃԺ. 8.

*Ողջոյցես դու նովաւ իբրև Է հաւու. ‖ Թղ Է Նմայոք. Խ. 24.

§69 Երկրորդական կամ պատահական խնդիր. Գ.

*Որովք ծաղկինչէ զընտրեալս և տանջի. ‖ Խոս. Ժա. 17

*Երկիւղիւ տն խոտորի ամ որ ՚ի չարէ. Առակ. ԺԵ. 27

*Սրով ոչ հատեր մտացդ քննութ, հատցես վաղվաղակի հաւատոցդ քաջութ. Ընդդհմն. 240.

*Դառնալով դարձցի անդրէն ՚ի նոյն. Երեմ. Գ. 1.

Ն. Բ. Չեզոք բայք եւս կարեն առնուլ զգործիականն իբր խնդիր երկրորդական կամ պատահական (532).

Պարառական.

570 Չեզոքականքս՝ Պարեմ. պատիմ. պատատիմ. փարիմ, շրջապարիմ. շրջապատիմ. յածիմ. պարագայիմ, պարսպածիմ, պարաբերիմ, գերազանցեմ, զանցանեմ. եւ որք նշանակեն զգործն շուրջ զինչ իք, առնուն զբուն խնդիր ընդ՝ ՚ի հոլովս պարառական. որպէս՝

*Ելանէ (արեգակն) ընդ հարաւ, եւ պատի զհիւսիսիւ. Ժողով. Ա. 6.

*Զմիմեանց պարանոցօք անկեալք փարէին պատէին համբուրելեօքն. Գ. Մակաբ. Զ. 27.

*Նշանակէր շուրջանակի զամենայն քումբք (Աշոտ). Այլ. կոռ.

571. Զարմանալական խնդիր. որպէս՝ *Փառքն Տն զքեւ փողփողեսցին. Այլ պատեսցեն. Եսայ. ԾԸ. 8.

*Հոգւոյն զքեւ հովանացելոյ միայն սրբուհի. Այլ ՚ի մերայս քո. շարական. 810.

*Զարդարն . . . փախուցեալ յիջանելոյ հրոյն զհնգիւք քաղաքաւն. Այլ ՚ի հինգ քաղաքսն. Իմաստ. Ժ. 6.

*Ոչ անցցէ ինչ . . . զքեւ ՚ի մեղաց իմոց. Այլ ՚ի քեզ. Յոբ. ԺԴ. 16.

*Երանեցան զենովքաւ միով ստեղծմբ. Այլ ՚ի նա. մաշտ. 1

*Ծովուն արեւ զգլխովն յօսանու. Այլ ՚ի գլուխ. յոն. Բ. 8

*Յաւ եւ նս զատ զամմամբեաւ. Այլ ՚ի սամիրիա. Բ. թագ. Ի 1

*Ընդ ցիւն արգելեն զձանձրեցուցանէն. Այլ զանձիցն. օրէն. Ժ. 12

572 Երկրորդական կամ պատահական խնդիր. Ձ.

*Յու հոգին զաստանեամբք աշխարհին զք. Առակ. ԻԲ. 8

*Ի չորրորդ պահու գիշերոյն գայ առ նս. Մրկ. Զ. 48

*Ննջեաց (Սամփսոն) ընդ մէջ գիշերաւն. Դատաւ. ԺԶ. 3.

Հայցական։

573 Չեզոք բայք ևս ոչ պահանջեն զբուն խնդիր հայցական. այլ՝ ունին առնուլ իւր յարաբերական. որպէս՝ *Գնայր զճանապարհ իւր. Ոչ՝ ի ճանապարհ իւր. Գործ. Ը. 39։

*Ես երթամ զճանապարհ ամ. երկրի. Ոչ՝ ի ճանապարհ. Գ. Թագ. Բ. 2։

*Դիմեաց զմեր կողմանս գալ. Ոչ՝ ի կողմանս մեր. Գրծ. Ժ. Թ. 27

*Զճշմարիտ իմաստութիւն խոստովանեսցուք ի կեանս մեր. որ յերկնուստն Ս. Հ. ծնանի. Ոչ ճշմարիտ իմաստութեան. Թղթ. Շնորհ. 341։

*Անխռով անձամբ կալ ահիւ և դողութեամբ զաւուրս կենցաղս. Ոչ յաւուրս կենցաղի. Թղթ. Շնորհ. 605։

574 Արկածական կամ պատահական խնդիր. Դ.

*Ասելցուք զնեղութիւն ուստի հանդիպման բղխէ. Թղթ. Շնորհ. 840։

*Մեղաւ ժողովուրդն այն մեղս անհնարինս. Ելից. ԼԲ. 31։

*Ցորքան պատերազմին միտքն զմեղաց պատերազմն . . . անհնարին է ճաշակել նոցա յերկնաւոր բարեացն. Թղթ. Շնորհ. 502։

*Ննջեցին զքունս իւրեանց. և ինչ ոչ գտին. Սաղմոս. ՀԵ. 5։

*Զտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ. Բ. Կորնթ. ԺԱ. 25։

*Եղիա . . . յաղօթս եկաց, և ոչ տեղաց յերկիր զերիս ամս և զվեց ամիս. Յակոբ. Ե. 17։

*Մի ևս ձեզ զնոյն օրինակ գնալ. Եփեսա. Դ. 17։

Պատմական։

575 Չեզոքականքս՝ Պարծանամ. հոգամ. գանգատեմ, դատախազեմ. տրտնջեմ. քրթմնջեմ, և որք ըստ նշանակութեան սոցա վարին. առնուն զբուն խնդիր ի հոլովս պատմական. որպէս՝

Պա

*Գոհանամ զԱծ իմոյ յամ ժամ վս ձեր ի վերայ շնորհացն Ածյ · Ա · կորնթ · ա · 4 ·
*Այլ զմիմեանց հոգասցեն անդամքն · Ա · կորն · Ժբ · 25
*Ո խորհրդակցն զինուորութեց դատաւորութեցեց · Հռոմ · Ժբ · 3
*Տրտնջէին զմիմեանս հրեայքն · Յովհ · Զ · 41 ·
*Ունեն շշնջէին ամ թշնամիք իմ · Սաղմ · Խ · 8 ·
*Որով չարախօսութեան զձենջ յամօթ լիցին · Ա · պետր · Գ · 16 ·

576 Յարմարականն · որպէս՝ *Լսիցէ քեզ՝ և չհաւատասցէ զքեզն · Այլ 'ի քէն · Ելից · ԺԹ · 9 ·
*Այլք այլ իմն աղաղակէին զմիմեանս յամբոխին · Այլ դատախազքն · Գործ · Իա · 34 ·

577 Երկրորդականն կամ պատահականն · որպէս՝
*Բաղձեսցէ զքեզն առ Տր · Յոբին · Ժե · 9 ·
*Եւ ել համբաւ զնմանէ · Ղուկ · Դ · 14 ·

Սկզբնական ·

578 Չեզոք բայքս՝ Թուանիմ, ծագիմ · սպրդնիմ · ծորիմ · սողիմ · սարսռնում, ոստնում · յառնեմ · հեղանամ · հրաժարիմ · խուսեմ · փախչիմ · մեկնիմ · օտարանամ · խորշիմ, խոտորիմ · վրիպիմ · սխալիմ · ստերեւրիմ · մոլորիմ · զարտուղիմ, ապստամբիմ · վտարանջիմ · տարաձայնիմ · անսաստեմ · ապրիմ · զերծանիմ · Ճողոպրիմ · Ամաչեմ · պատկառիմ · ակնկորեմ · զգուշանամ, երկնչիմ · զարհուրիմ · սասանիմ · դողդողիմ · խեթամ · խիթամ · յուսահատիմ : Գարշիմ · զզուիմ · տաղտկանամ · թուլանամ · մեղմանամ , պարզիմ · վատիմ · վհատիմ · նուաղիմ , պակասիմ , նքթիմ · նուաղիմ · ցամաքիմ · տապիմ · տառապիմ · տագնապիմ · պապակիմ · վտանգիմ : Դատարկանամ · թերանամ , թեթեւանամ , ունայնանամ · աղքատանամ · անզաւակիմ · անշքանամ · աղօտանամ · չքանիմ · զանխլանամ · լռեմ · դադարեմ · կասիմ · յետնիմ · անհետանամ · մերկանամ : Դալկանամ · գդյանամ · եռանամ · արդարանամ · մարմնանամ · մարդանամ · ամբողջանամ · առողջանամ · զգաստանամ · լրջանամ · զարթնում

նուլ. սթափիմ. խորթնանամ. և այլք բազումք ը նշանակութե սոցա վարեալ՝ ցուցանեն զգործն ծագեալ յայլմէ, առնուն զբուն խնդիր բնութեն 'ի հոլովս սկզբնական: որպէս՝

* Ի պտղոյ արդարութե բուսանի ծառ կենաց ‖ Առակ. ժա. 30

* Յազգէս յուդայ ծագեցոյց տր մեր. ‖ Եբր. է. 14.

* Սբ Հոգին իմաստութե փախիցէ 'ի նենգութէ, և հեռասցի 'ի խորհրդոց անմտից. ‖ Իմաստ. ա. 5.

* Փոխանակ յողորմութէն, հեռացուցեալ 'ի քէն ողորմածն ‖ Մեկն. հարանց. 110.

* Մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին. ‖ Ղուկ. Ժբ. 4.

* Ո գաղտագոյն յանօրէնութէ իմմէ. ‖ Առակ. Ժե. 25.

* Ի՛ Հրեշտակահաւատութէ բաժանեցաք մեք յայլոց ազգաց. ‖ Ընդհանր. 129.

579. Յարմարական խնդիր. որպէս՝ * Մեռան (ամօրհացիք) 'ի քարանց կարկտին. ‖ Իբր. քարամբք. յեսուայ. Ժ. 11.

* Մաշեցան և չորացան 'ի շաւղաց իւրեանց. ‖ Իբր. շաւղօք. սաղմոս. ԺԷ. 46.

* Յիւրոց ճանապարհաց յագեսցի խստասիրտն. ‖ Իբր. ճանապարհօք. առակ. ԺԴ. 14.

* Մթացան 'ի բարկութէ աչք իմ. ‖ Իբր. բարկութբ. յոբ. ԺԷ. 7.

* Լռեա՛ 'ի բարկութէ, և հանգիր 'ի սրտմտութէ. ‖ Իբր. դադարեա՛ց. սաղմոս. ԼԶ. 7.

580. Երկրորդական կամ պատահական խնդիր. Զ.

* Ուրեք ինչ օգտեցայ՞ 'ի ձէնջ. ‖ Բ. կորնթ. ԺԲ. 17.

* Դիմեաց երամակն 'ի վահէ անտի 'ի ծովակն. ‖ Ղուկաս. Ը. 33.

* Ած յերկնից նայեցաւ յամ որդիս մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն. ‖ սաղմոս. ԾԲ. 3.

* Եկեսցեն յարեւելից և յարեւմտից, (նա). ‖ Ղուկ. ԺԳ. 29

* Հանգեաւ (Ած) յաւուրն եօթներորդի՝ յամ գործոց իւրոց. ‖ Ծննդոց. Բ. 2.

Նախդրիւ Հրական.

581 Չեզոքականքս՝ Գամ, եկաւորիմ. գնամ, երթամ. ընթանամ. դիմեմ. յարձակիմ. հասանեմ. առաւօտեմ. կանխեմ. զարգանամ. դառնամ. ձգտիմ. անցանեմ, նաւեմ. սլանամ. թռչիմ. մատչիմ. խոյանամ. վերանամ. մերձենամ. յարիմ. յենում. սուրամ. մտանեմ. միտեմ. խոնարհիմ. իջանեմ. անկանիմ. կաթիմ. տեղամ. Աղաղակեմ. բողոքեմ. աղօթեմ. կարդամ. պաղատիմ. միջնորդեմ. խրախուսեմ. ապաւինիմ. հաւատամ. յուսամ. համարձակիմ. յանդգնիմ. երդնում. հայիմ. նայիմ. նկատեմ. Սովորիմ. պարապիմ, պատաղիմ. հեղգամ. անկարանամ. զօրեմ, նահատակիմ. հանդիսանամ. հեծանեմ. աշտանակեմ. ջանամ. փութամ. ձեպեմ. ժամանեմ. խունիմ. յաւելում. յոլովեմ. եկեղեցանամ. որոտամ. ցոլանամ. հոտոտիմ. վճարիմ. խնայեմ, անխնայեմ. Ապշիմ. զարմանամ. սքանչանամ. հաճիմ. յօժարիմ. բերկրիմ. ուրախանամ ցնծամ. հրճուիմ. գթամ. պարծիմ. հպարտանամ բարկանամ, դժուարիմ. խոժոռիմ. տրտմիմ. Թախծիմ. փղձկիմ. նախանձիմ. զղջիմ. ագահեմ. անիրաւիմ. ստահակիմ. զառածանիմ. երկբայիմ. տարակուսիմ. միամտիմ. կեղծաւորիմ. կերպարանիմ. ձեւանամ. և այլ բազումք ըստ նշանակութեն սոցին ցուցանեն բերել առ իմն, առնուլ զբուն խնդիր ընդ 'ի նախդրիւ հրական. որպէս՝

* Ոչ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ. Յովհ. Ժդ. 18

* Դարձցի հողն յերկիր՝ ուր և էրն. և հոգին դարձցի առ Ած. որ ետ զնա. Ժողով. Ժբ. 7.

* Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ Իմաստ. Բ. 24.

* Որ ժողովէ զգանձս ստութբ լեզուի . . . անցանէ յորոգայթս մահու. Առակ. Իա. 6.

* Ոչ 'ի տուրս հայցէ Ած, այլ 'ի յօժարութե կամացն. Մեկն. Յոհնու. 795.

*Որ պահէ զկեանս՝ խնայէ 'ի բերանն իւր · Առակ · ժգ · 12

*Նաւ ինքն սանյ կերպարանի 'ի հրեշտակ լուսոյ · Բ̄ · Կորնթ · ժա · 14։

582 Յարմարական խնդիր · որպէս՝ *Փոխանակ անձին իմ առ քեզ Ա՛ծ · Ես քեզ · առաջ · խա · 1 ·

*Եթէ մարդ՝ մարդոյ մեղանչէ, զԱ՛ծ աղաչեն վս նր · իսկ եթէ Ա՛ծ մեղանչէ · զո՞ աղաչեն · Ա̄ Թգ Բ · Գծն · կոչեցեալ 574 ·

*Մեռաւ բորբոքեցաւ 'ի սրտմտութե բարկութե իւրոյ · Բ̄ սրտմտութեամբ · Ը̄ · Յակոբ · Դ̄ · 38 ։

*Մեռան (խոզք) 'ի ջուրսն · Ա̄ ջրովք · Մատթ · Ը̄ · 32 ։

683 Երկրորդական կամ պատահական խնդիր · Ց ·

*Արեգակն ծագեաց յերկիր · Ծնն · ԺԹ · 23 ։

*Մի խոտորեսցիս յաջ՝ եւ մի յահեակ · Առակ · Դ̄ · 27 ·

*Փախեան նոքա 'ի լերինս հայոց · Տոբ · Ա̄ · 24 ·

*Ահ կամեցայ գնալ 'ի գայթակղութե մտաց տկարաց · Յովհ · կոչեցեալ ·

*Կոչեցէք առ Ա՛ծ 'ի ձայն ցնծութե · Սաղմ · Խզ · 1

Սերձահողով Տրակեան ։

583 Զերբ բայք՝ Աշակերտիմ · արբանեկեմ · ծառայեմ · սպասաւորեմ · հետեւիմ · հաւանիմ · անսամ · հնազանդիմ · հպատակիմ · սպասեմ · ականունիմ · պաշտեմ · ընկերանամ · բարեկամանամ · ընտելանամ · ծանօթանամ · որդեգրանամ · հարսնանամ · փեսայանամ · առաջնորդանամ · քահանայանամ · Արժանանամ · պետոյանամ · հաշտոյանամ · հաւատարիմ · պատշաճիմ · նմանիմ · դիմացիմ · պատահիմ · յաջողիմ · մերձակիմ · հաղորդիմ · բաւեմ · օգնեմ · օգնեմ · օժանդակեմ · երաշխաւորեմ · խնամակալեմ · նորեմ · ողորմիմ · Ողջամ · ցանկամ · կարօտիմ · փափագիմ · ծարաւիմ · քաղցնում · համբերեմ · համոզուրծեմ · երկայնամտեմ · աղերսեմ · խնդամտեմ · հմտանամ · տեղեկանամ · ազդիմանամ · Ուսանողեմ · նախազգահեմ · երեւիմ · զննուորիմ · զօրացեմ · յաջորդեմ · իշխեմ · տիրեմ · երեւորեմ · յաղթորեմ ։ Ննմանաչարձիմ · ընդդիմանամ ·

նամ · հրկաւակիմ · ընկճիմ · ծաղանչեմ · հեստեմ · ատեմ · ապաւանամ · խորշխատամ · դժրեմ · ժխտեմ · ատեմ · թշնամանամ · երախտեմ · համաղանամ · քաղցրանամ և այլ բազումք՝ որք ը̅ս նշանակութե̅ սոցին ցուցանեն զհեռաւութի̅ կամ զնմանութի̅ իրի̅ իմիք · առանուն զբուն խնդիր ՚ի վերջահոլով տրականն · Գ̅ ·

*Աշակերտեցաւ իսկ Յ̅ի · Մատթ · Ի̅Է · 57 ·
*Ո՛չ ոք կարէ երկուց տերանց ծառայել · Մատթ · Զ̅ 24
*Սատարութիւն տամ առաքինութեանց՝ նմանեցն Ա̅Յ Ե · Դենն · կաթուղ · 294 ·
*Որպէս հաղորդեալ Ք̅ի չարչարանացն՝ ուրախ լինիջիք · Ա̅ պետ · Դ̅ · 13 ·
*Եթէ ցանկայք աթոռոց և գաւազանաց իշխանութե̅ . . . պատուեցէ՛ք զիմաստութի̅ · Իմաստ · Զ̅ · 22 ·
*Նորոգեալ պատուէր աննկարօտ Յ̅ի՝ իմաւմ փրկութե̅ · Նոցեյ · Լ̅Դ · 9 ·
*Մի՛ երեւեսցիս մարդկան իբրև զպահօղ · Մատթ · Զ̅ 18
*Քաղցրացաւ առն հաց սուտութե̅ · Առակ · Ի · 17 ·
585 Յարմարական · որպէս՝ *Որ զգուշանայ ճանապարհաց իւրոց, պահէ զանձն իւր · Ս̅ր ծանօթանայ · առակ · Ժ̅Զ · 17 ·
*Որք մեռաք մեղացն, զիա՞րդ . տակաւին ՚ի նմին կեցցեմք · Ս̅ր հրաժարեցաք ՚ի մեղացն · Հռօմ · Զ̅ · 2 ·
*Ո՛չ ինչ ունէին ծերոյն · Ս̅ր ՚ի ծերոյն · Բարուք · Դ̅ · 16 ·
*Աղօթիւք . . . եկն ինձ հոգի իմաստութե̅ · Ս̅ր առ իս · Իմաստ · Է̅ · 7 ·
*Հաւատաց Աբրահամ Ա̅յ · Ս̅ր Ա̅Յ (ո՛չ և ՚ի Հռօմ · Դ̅ 3) Ծնն · ԺԵ · 6 ·
*Ներեղայոս Քրիստոսորեաց հրեշտականի · Ս̅ր ՚ի վե̅ր հրեշտականի · Մատթ · Ի̅ · 22 ·
586 Երկրորդական կամ պատահական · որպէս՝
*Բազմացո՛ զզօրս քո՝ և ե՛կ ինձ · Դատ · Թ̅ · 29 ·
*Ո՛ այս տամ աղաբերբ՝ և ըմբեցի լեզու · Յովէլ · Խիթ · 28
*Այոյ և ծնոյ ինձ արդարութե̅ պատասխանի · Ծ̅ն · ոխն · Դ̅ · 8 ·
*Որ մեռաւն՝ մեղացն մեռաւ միանգամ · Հռօմ · Զ̅ 10

Ներգոյական ։

587 Չեզոքականքս՝ Բնակեմ, բնակիմ. բազմիմ, նստիմ. ագանիմ, իջևանիմ, հանգչիմ. Թագչիմ. կամ, մնամ, տևեմ. յամեմ. հանապազորդեմ, մշտնջենաւորեմ. արմատանամ. տարրանամ. արձանանամ. ամրանամ, յորջանամ, հաստատիմ. հանդարտիմ. ննջեմ. ապահովիմ ։ Դեգերիմ. շրջիմ, զգնամ. Ճարակիմ. խարխափեմ. զբօսնում. տատանիմ. համակիմ. Թաւալիմ. պտուտկիմ. խլրտիմ. զեռամ. սողիմ. լողիմ. ծփիմ ։ Զբաղիմ. զեղխիմ. հեղձնում. խղճեմ. Թշուառանամ. յղփարիմ. յամառիմ. կամակորիմ, խստանամ. Թանձրանամ. Նուաստանամ. կնճռիմ, և այլք բազումք՝ որք յետ իմիք լինել ցուցանեն, առնուն զբուն խնդիր բնութեն՝ ի հոլովին Ներգոյական ։ որպէս՝

*Ա՟ծ սէր է. և որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱ՟ծ, և Ա՟ծ ի նմա բնակէ. ‖Ա. յովհ. Դ. 16 ։

*Անտուն շրջի անբովանդակելին, եթէ ոչ ի ամէն տան պանդխտեսցի. ‖Նարեկ. ՀԵ. 13 ։

*Եթէ նստայց ի խաւարի, տէր է իմ լոյս. ‖Միք. Է. 8

*Գանձ ցանկալի հանգիցէ ի սիրտ իմաստնոց. ‖Առակաց. ԻԱ. 20,

*Որչափ յամեմ ի մարմնի աստ օտարանամք ի տեառնէ. ‖Բ. Կորն. Ե. 6 ։

*Միտք մարդոյ հաստատեալ են ի խնամս չարի ի մանկութէ իւրմէ. ‖Ծնն. Ը. 21.

588 Յարմարականն. որպէս՝ *Որ հերձանէ զփայտ, վտանգեսցի ի նոսին. ‖յդ նոքօք. Ժողով. Ժ. 9 ։

*Ո՜վ անմիտք և հեղգամիտք ի հաւատալ յամենի, զոր խօսեցան մարգարէքն. ‖յդ ամի. Ղուկ. ԻԴ. 25 ։

*Ա՟ծ փշրեսցէ զգլուխս թշնամեաց մերոց. . . որք գնան յանօրէնութե. ‖յդ յանօրէնութե. Սաղմ. ԿԵ. 22 ։

589 Ներգործական կամ պատահական խնդիր. Ձ,

*Եթէ խոստովանեսցես բերանով քով զՏ՟ր Յ՟ս, հաւատասցես ՚ի սրտի քում, . . . կեցցես · ‖ Հռօմ · Ժ 6

*Առաջնորդեաց ինձ ՚ի ճանապարհի սատ ճշմարտութե · ‖ Ծննդոց · ԻԴ · 48 :

*Օգնեաց անմանկին յաղթութե · ‖ Սաղմ · ՃԶ · 40 ·

*Անկան ՚ի ժամանակին յայնմիկ յեփրեմէ՝ քառասուն և երկու հազարք · ‖ Դատաւ · ԺԲ · 6 :

*Դայեկը արկանուն հարուստ երկաթի, և ընդ երեկս ունայն դեգերիմ · ‖ Նարեկ · ՀԱ · 2 :

Նախադրութի :

590 Չեզոք բայքս՝ Ապաշաւեմ, ապաշխարեմ, զղջամ · ողբամ, կոծիմ, մորմոքիմ, հեծեծեմ, աղեկիզիմ · խանդաղատիմ : Պերճամ · դրոհեմ · յոխորտամ, գոռոզանամ · բռնանամ, Թագաւորեմ, իշխանանամ, միապետեմ · հովանանամ · հսկեմ · շշեմ · շողամ · ծածանիմ, եւն : Մարտնչիմ, գօտեմարտիմ, մրցիմ, պատերազմիմ, կագիմ · կռուիմ, ոգորիմ, մաքառիմ · վիճիմ · գժտիմ, հակաճառեմ · ընդհարկանիմ : Մախամ, ոխամ · խաղամ · Թարթափիմ · հծծեմ · հաշտիմ, համաձայնիմ, միաբանիմ, միաւորիմ, յօդիմ, շարակարգիմ, ոգեխառնիմ · նոյնանամ · ամուսնանամ · դաշնաւորիմ · մասնակցիմ · անդրադարձիմ · և այլ բազումք՝ ըստ նշանակութե որցէն ցուցանեն զգործ շուրջ զինքն ինչ, պահանջեն զբուն խնդիր նախադրութիքս՝ ՚ի վերայ, ընդ · որպէս՝

*Ապաշաւեաց Տր ՚ի վերայ այդորիկ · ‖ Ամովս · Է · 6 :

*Մեծատունք՝ լացէք · ողբացէք ՚ի վերայ Թշուառութեցն, որ գալոց են ՚ի վր ձեր · ‖ Յակոբ · Ե · 1 ·

*Արշակ քաջ · · · թագաւորեաց ՚ի վերայ պարսից և մարաց և բաբելացւոց · ‖ Յովհ · Կաթող :

*Մարտիր ընդ այնոսիկ՝ որք մարտնչին ընդ իս · ‖ Սաղմոս · ԼԴ · 1 :

*Ընդ անձին յօժարամիտ կամօք ոգորիմ · ‖ Նարեկ · Թ 3 :

*Յարեան ոմանք · · · վիճել ըն ստեփաննոսի · ‖ Գործ · Զ 9

*Աղաչեմք վասն Քի հաշտեցարուք ըն Այ · ‖ Բ ·

Կորնթ

Կորնթացւոց. Է. 20:

*Հայր յամենայն վկայեալ եղական բանին, մեռեալ ընդ կուսածին մարմնոյն. Շարական. 524:

591 Յարմարական խնդիր. որպէս՝ *Աստեղագէտքն . . . պատմեսցեն քեզ զինչ գալոց է ի վերայ քո. Տ՛ս առ քեզ. եսայ. ԽԷ. 13:

*Ի վերայ զօրաւորաց զօրաւոր քննութին հասանէ. Տ՛ս առ զօրաւորս. իմաստ. Զ. 9:

*Ամենայն հնարաւորութեամբ՝ ընդ փրկութե խնդրել հոգւոյս. Տ՛ս զփրկութե խնդրել. Սիրաքի. ԶԲ. 2:

*Ոչ զոք սիրէ Ած. բայց զայն՝ որ ընդ իմաստութե կեցցէ. Տ՛ս յիմաստութե. իմաստ. Է. 28:

*Մտանէ ի աղքատութին, եւ ընդ յարկաւ ուրուք ոչ մտանէ. Տ՛ս ի յարկս. Գրք. կոչնոց. 405:

*Մնացեալ է մի քանակութին, եւ վերջնոց ըստ բժշկութին. Տ՛ս ի բժշկութե. Սիրաքի. Է. 4:

592 Երկրորդական կամ պատահական. որպէս՝

*Այր լեզուանւոյ մի՛ յաջողեսցի ի վերայ երկրի. Սաղմոս. ՃԼԹ. 12:

*Այլակերպեցաւ առաջի նց. եւ լուսաւորեցան երեսք նր իբրեւ զարեգակն. Մատթ. ԺԷ. 2:

*Որպէս ամպք երեւուն եւ հիմք ի մէջ Քրիստոնէից հաւատոյն ստացեալք, եւ զկնի անհաստատաց յուսախաբանս անօրէն թագաւորէր. Յաջհ. կոչնոց:

*Անկար ի ձեռս չարաց վասն բարեկամին քոյ. Առակաց. Զ. 3:

*Ո՛ իմար պատմիցի իմաստութիւն ընդ անմտին. Ժողովողի. Ը. 16:

*Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ լացողս. Հռոմայեցւոց. ԺԲ. 15: (556)

593 Փոխելի է, զի բաղդիցս չէ զգերականք եւ ոչ տանջանուն զխնդիր. Թ. *Ազգ երթայ՝ եւ ազգ գայ, եւ երկիր յաւիտեան կայ. Ժողով. Ա. 4:

*Որ հնանայն եւ ծերանայ, մերձ է յապականութին. Եբրայեցւոց. Ը. 13:

ԳԼՈՒԽ . Է :

Խնդիր բնութ̄ Էական և Անդէմ բայից :

Էական բայքն առնուն զբուն խնդիր ՚ի հոլովն ուղղական . Գ̄ . * Իմաստութի̄ աշխարհիս՝ յիմարութի̄ է առաջի Ա̄Յ . ‖ Ա . Կորնթ . Գ . 19 : Ահա ուղղականս յիմարութիւն՝ եղեալ է բուն խնդիր էականին՝ է :

Այսպէս են և օրինակքս :

* Որ փափկանայ ՚ի մանկութեան՝ ծառայ լինի . ‖ Առակաց . ԻԹ . 21 :

* Բանիւք բազումք են խոնարհք , իսկ արդեամբք և ճշմարտութ̄ ամենևին նուազք . ‖ Սենեկ . նամակ . 384

* Անզեղջ են շնորհք և կոչումն Ա̄Յ . ‖ Հռովմ . ԺԱ . 29

* Անցք ստուերի են կեանք մեր . ‖ Իմաստ . Բ . 5 :

* Ահեղ յանցանք է և մեծ աղետանք՝ սուտ և ուխտին պղծութիւն . ‖ Ընդհանր . 187 :

* Ցեց ոսկերաց՝ սիրտ հզգած . ‖ Առակ . ԺԴ . 30 :

595 Յարմարական խնդիր առնու բազմիցս զնախդիրն տրականն : որպէս՝ * Եղիցին երկոքեան ՚ի մարմին մի . ‖ Յ̄ն մարմին մի . Մատթ . ԺԹ . 5 :

* Եղև մարդն առաջին ադամ՝ ՚ի շունչ կենդանի . երկրորդ ադամ՝ ՚ի հոգի կենդանարար . ‖ Յ̄ն շունչ կենդանի . հոգի կենդանարար . Ա . Կորնթ . ԺԵ . 45 :

* Եղիջիք ինձ ՚ի թագաւորութի̄ , և ՚ի քահանայութի̄ , և յազգ սուրբ . ‖ Ելից . ԺԹ . 6 : (ոպ̄ դնի ՚ի Ա . Պետ . Բ . 9)

* Օ հարիւրամենիւք ուրեմն էր (աբրահամ) . ‖ Յ̄ն հարիւրամեայ իմն էր . Հռովմ . Դ . 19 :

596 Իսկ երկրորդական և պատահական կարէ առնուլ յամենայն հոլովս : որպէս՝

* Ահարոն էր հարիւր և քսան և երից ամաց , յորժամ մեռաւ ՚ի հոր լերին . ‖ Թուոց ԼԳ . 39 :

* Գանձիւք եղիցի փրկութիւն մեր . ‖ Եսայ . ԼԳ . 6 :

* Եղիջիք անդ ամօք բազմօք . ‖ Եզրաս . Է . 2 :

* Անձաշակ լինելով զբազմաժամանակեայ աւուրբք՝

յօ

յօժարութ՛բ բարձեր զկարիս մարմնոյ ։ ‖ Շարակ․ 90 ։
*Զամ գիշերս աշխատ եղեաք ։ ‖ Ղուկ․ Ե․ 5 ։
*Եկաց անդ աւուրս երկուս ։ ‖ Յովհ․ Դ․ 40 ։
*Ո՛չ ինչ էին խորհուրդք նց ՚ի չարութե ։ ‖ Սաղմ․ ԾԵ․ 5 ։
*Յահեղ փառաց Այ որդւոյն խաւար եղեւ ՚ի տեղերս ։ ‖ Շարակ․ 797 ։
*Որ չար է անձին իւրում, ո՞ւմ լինի բարի ‖ Սիր․ ԺԴ․ 5
*Որ ինչ առ ոտս կայցէ, աշխատութ՛բ գտանեմք ։ իսկ որ ինչ յերկինս է՝ ո՞վ քննեսցէ ։ ‖ Իմաստ․ Թ․ 16
*Ամ փառք մարդոյ (են) իբրեւ զծաղիկ խոտոյ ։ ‖ Ա․ Պետ․ Ա․ 25 ։
*Փոքր է ամ չարութի առ չարութեամբ կնոջ ։ ‖ Սիրաք․ ԻԵ․ 27․ Ձեռագ ։

597 Նոյնպէս բայք առնուն զխնդիրն ՚ի վերջահոլով տրականի ։ Դ, *Հոգի է Տր ։ եւ երկրպագուաց նր հոգւով եւ ճշմարտութ՛բ պարտ է երկրպագանել ։ ‖ Յովհ․ Դ․ 24 ։ Հմ վերջահոլովս երկրպագուացն եղեալ է խնդիր անդրադարձ՝ պարզ է ։ որ եւ միանգամայն է տէր բայի աներեւութիս՝ երկրպագանել ։ (489)

Այսպէս են եւ հետեւեալ օրինակքդ ։

*Հարկ է գալ գայթակղութեց ։ ‖ Մատթ․ ԺԸ․ 7 ։
*Դժուարին տան ոչ է պարտ կարծել ։ ‖ Ընդդէմ․ 231
*Ո՜ բնաւն այսքանեացս ձրից՝ որ ՚ի բարձրելոյն լինել տնօրինեցաւ, տկարիս՝ թշնամւոյս եւ ապախտաւոր ծառայիս տնօրինեալ է ասել ։ ‖ Նար․ ԼԵ․ 1 ։
*Ո՛չ վայելէ անզգամի փափկութի ։ ‖ Առակ․ ԺԹ․ 10 ։
*Անխրատից պատահէ մահ ։ ‖ Առակ․ ԻԴ․ 9 ։
*Իմաստուն թուի անձին իւրում այր մեծատուն ։ ‖ Առակաց․ ԻԸ․ 11 ։
*Առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել (Այ) ‖ Եբրայ․ ԺԱ․ 6 ։
*Բարի՛ է առնել ողորմութի, քան դնել զգանձս ոսկւոյ ։ ‖ Տոբ․ ԺԲ․ 8 ։

Բայց վայելչական անուանք կարեն առնուլ զպէս պէս խնդիր յայլ եւ այլ հոլովս ։ որպէս տեսանի յօրինակն է ։

ԳԼՈՒԽ · Զ ·

Յաղագս Աներևոյթն Բայից :

Աներևոյթն կամ Դերբայն ունէր զզօրութիւն բայի, և հոլովէր իբր անուն: Արդ՝ ըս՟ զօրութ՟ բայից էառ զմակբայ (414), զդեր բայի (487), և զխնդիրս (499 · 525) եւն · Բայց մասնաւորապէս արժա՛ն է գիտել ·

599 Նախ՝ զի աներևոյթն բազմիցս լինէր պատճառական պատահական խնդիր բայի ՚ի հոլովս տրական, զօրութ՟բ ունելով զհոլովակերպս՝ ՚ի, առ՝ ՚ի, որպէս՝ *Ա՟Ծ հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ՝ ճանաչել զկամս ն՟ր · Գործ · ԻԲ · 14 : Ահա՛ աներևոյթս ճանաչելն՝ ուղղական կերպիւ է ՚ի հոլովս տրական՝ պատճառական պատահական խնդիր բայիս՝ ընտրեաց · որոյ հոլովակերպն իմացեալ լինի զօրութ՟բ · իբրու ասել՝ *Ա՟Ծ · · · ընտրեաց զքեզ առ՝ ՚ի ճանաչել զկամս ն՟ր : Այսպէս իմանալի են և այլք : *Ահա՛ կացուցի զքեզ այսօր ՚ի վ՟ր ազգաց և Թագաւորութեանց՝ խլել և քակել, կործանել և ցրուել և շինել և տնկել · Երեմ · Ա · 10 : (տե՛ս աստ ՚ի 604 · Երեմ · ԼԱ · 28) *Շուրջ եկի ես՝ և սիրտ իմ · ճանաչել և խորհել և խնդրել զիմաստութիւն և զհանճար · Այ՟ առ ՚ի ճանաչել և ՚ի խորհել և ՚ի խնդրել զիմաստութիւն, եւն · Ժող · Է 26 *Աղօթս արարէք · զի արժանի լինիցիք զերծանել յայսմ յամ՟նէ · Այ՟ առ ՚ի զերծանել · Ղուկ · ԻԱ · 36 : *Ընտրեաց զմեզ (Ա՟Ծ) · · · լինել մեզ սուրբս · Այ՟ առ ՚ի լինել · Եփես · Ա · 4 : Առ այսմ տեսանի և ՚ի (519 · 563 · եւն) :

600 Երկրորդ՝ զի ներգործական դերբայք առնուն երբեմն զխնդիր սեռի ՚ի սեռական հոլով՝ փոխան հայցականի · ց՟, *Իբր ծանօթս նոցա՝ ՚ի բեկանել հացին · Ղուկ · ԻԴ · 35 : Ահա՛ սեռականս հացին՝ ՚ի տեղի հայցականի եղեալ է խնդիր սեռի ներգոր-

ծա

ծական անհասութեան՝ ՚ի քննելն. իբրու ասել՝ * Ո

ընկալեալ զհայցն։ Այսպս են և սորին։

* Ծննդեանն և մկրտութեանն ՚ի միասին տօնելոյ բազում ունիմք վկայութի. Որ ՚ի միասին տօնելոյ զծնունդ և զմկրտութին. ընդհնր. 88։

* Նմա ոչ փոքր է հնարաւ՝ վս այսր խնդրոյ տանել ձեզ. Որ վս ունելոյ ձեր զայս խնդիր. ընդհն. 212։

* Վասն որդւոյն յողջակէզ խնդրելոյ. Որ վս խնդրելոյ զորդին յողջակէզ. ընդհնր. 218։

Այս ոճ՝ մթին առնէ զբանն. վասն որոյ չէ՛ արժան վարել համարձակ։

601 Նաև հոլովական անորոշութեն լինի խնդիր նախադրութ (361), որ բայի (478), խնդիր բայի (499, 531) և՛ յայտնիչ և յայտնեալ (610), յատկացուցիչ (623), խնդիր անուան (638, 660, 667), և յարաբերեալ։

Պարապումն։

◆

Սատարակաւոր արժան է աստանօր դիտել ինչ ինչ զբայից և զխնդրոց։

602 Վասն զի բայք երբեմն յարեալ ՚ի բառս ինչ, իբրև մի բայ վարին ընդ նոսին. և ՚ի միասին առնուն զխնդիր հայցականի. զ. * Յանձն առնեմ զձեզ ա՟յ՝ և բանի շնորհաց ն՟ր. Գործ. ի. 32։ Նման անուանս՝ յանձն, և բայս առնեմ, ՚ի միասին եղեալ են իբրև մի բայ, բառնշանակութ բայիս՝ յանձնեմ. վ՟յ և վերջահոլովքս ա՟յ և բանի շնորհացն՝ են սոցին խնդիր հայցականի, որ ոչ միայն անուանն՝ և ոչ միայն բային. այլ եղեալ են խնդիր միանգամայն երկուցս՝ յանձն առնեմ ին։

* Այլ Ա՟յ շնորհք՝ որ յամժ հաշակ հարկանէ զմեզ ՚ի Ք՟ս Յ՟ս, և զհոտ գիտութեն իւրոյ յայտնէ մեօք յամենայն տեղիս. Որ հաշակէ. յայտնէ. բ. կորն. բ. 14։ Որ բայս՝ հաշակ հարկանէ. առեալ է զհայցականն խնդիրս՝ բունն զմեզ, երկրորդականն՝ ՚ի Ք՟ս Յ՟ս, և պատահականն՝ յամժ։ Այսպէս իմանալի են և նմանեալ օրինակքն։

Տրն

*Տնանկն . . . մի՛ երբէք հարկանիցէ զքէն առ տէր. ||Յն մի՛ բողոքեսցէ զքէն. Օրին. ԻԴ. 15:

*Հաղորդ արասցէ աշակերտեալն վարդապետին՝ յամ բարութիւնս. || Յն հաղորդեսցի. Գաղատ. Զ. 6:

*Օտար եղեն մեղաւորքն ՚ի մօրէ. ||Յն օտարացան. Սաղմ. ԾԷ. 4

*Զբան զուր և սուտ՝ հեռի՛ արա յինէն. || Յն հեռացո. Առակ. Լ. 8:

603 Երկրորդ՝ մինչ բազում բայք դնին ՚ի միասին, բազմիցս մերձաւորն առնու զխնդիրն. Ց.

*Ուժաւ, լքաւ, տրտմեցաւ և աղաչեաց զԵբրայեցիսն. ||Բ. Մակաբ. ԺԳ. 23: Ահա միայն բայս աղաչելոյ՝ առեալ է խնդիր սեռի զհայցականն՝ չէր բայեցեալ. Իսկ միւս բայքն՝ ուժաւ, լքաւ, տրտմեցաւն չունին խնդիր: Ըստ այսմ են և օրինակքս:

*Մի՛ . . . աղքատացայց և գողացայց և երդուայց յանուն Տն Այ իմոյ. ||Առակ. Լ. 9:

*Եւ ամ բան անհասանէ անձամբ զօրաւոր, քաջ եւ փրկել, կենագործել, լուսաւորել, վերստին հաստատել, ՚ի ժամանակս կերպարաց գալարմանց և կամ յաստատմանց վիշտաց ՚ի կեանս նորոգել. ||Նարեկ. ԺԲ. 7

604 Երրորդ՝ մինչ մի և նոյն բայն ունիցի զբազում խնդիրս, նախդիրն դնի ՚ի վր ամ խնդրոց, կամ միոյն. Ց. *Մի՛ թողուր զիմաստութիւն և զխրատ և զհանճար. ||Առակ. ԻԳ. 23:

*Եւ եղիցի՝ զոր օրինակ զարթուցեալ էի ՚ի վր նց՝ ՚ի խլել և ՚ի կործանել, ՚ի քակել և ՚ի կորուսանել և ՚ի չարչարել. Նոյնպէս զարթեայց ՚ի վր նոցա ՚ի շինել և ՚ի տնկել ասէ Տր. ||Երեմ. ԼԱ. 28:

*Եւ թատերս տեսարանաց՝ և առ կոյս խառնիճաղանճ բազմութեց՝ և կամ առ կոյս կայթից . . . ոչ ես մտուցեալ. ||Նար. Լա. 2:

*Յած և ցիր ափուեալ ընդ գլուխս կոհակացն՝ և ընդ հովիտս՝ և ընդ խորաձորս՝ և ընդ անտառախիտ մայրիս. ||Յովհ. կթղ. Ահա ՚ի վերոյ գրեալ օրինակս՝ նախդիրն եդեալ է ՚ի վր ամ խնդրոց:

*Մի՛ դադարիր բարեխօսել առ Հայր և Որդի և

սուրբ հոգին. Շարակ. 728: Ուր նախդիրս առ՝ եդեալ է միայն ՚ի վ̅ր̅ առաջին խնդրոյն:

605 Իսկ թէ խնդիրն ևս ունիցի յատուկ ինքեան խնդիր՝ կամ յոլովս, նախդիրն դնի ՚ի վ̅ր̅ ն̅ց̅ ևս: Օ̅.

* Զփառս զառ ՚ի միոյն Ա̅յ̅ ոչ խնդրէք. Յովհ. Ե. 44

Ահա՛ նախդիրս՝ զ, որ է եւս նախդիր հայցականին զփառս, եդեալ է և ՚ի վերայ խնդրոյ նորին, որ է սկզբնականին՝ առ ՚ի միոյն: Ըստ այսմ են և օրինակքս:

* Մատուցեալ զապականելին զպատարագն զառ ՚ի Ք̅ն̅. Յովհան. Կոզեռ:

* Ծանեայ զառ ՚ի յինէն խնդրողացն զանդուլ նոցայն հոգւոյն զարժմունս իմացուածոյ. Յովհ. Կոզեռ.

* Զօրհնեալ քո զշրթանցդ, զաշխարհաստեղծ բերանոյդ, զԱ̅ծ̅եղէն անձրևացդ զկեցուցանողդ կաթուած մանու՛ լանջեացս դրանց բացարան. Նարեկ. ԼԵ. 3.

* Որ զխոնարհութիւն տէրունական ունի, զկերպարանս Ք̅ի̅ զգեցեալ ունի, զճշմարիտ խոնարհին՝ հեզոյն՝ և մարդասիրին. Եղիշ. Կոզեռ. 383.

* Ծնցի որդի զընդ մեզ յայտնեալն Ա̅ծ̅. Շարակ. 27

606 Չորրորդ՝ զի ՚ի լեզուի մերում՝ որպէս և յարաբացիս և յայլս, ներկայ կամ կատարեալ ժամանակըն երբեմն դնի փոխան ապառնի ժամանակի. և ապառնին՝ փոխան ներկայի. Օ̅, Գայ զօրութ̅ց̅ թագաւորն ՚ի նորոգել զպարապածս. Շարակ. 755.

Ուր ներկայ բայդ՝ գայ, եդեալ է փոխան ապառնոյս՝ գալոց է: Ըստ այսմ են և ՚ի ներքոյ օրինակքս:

* Թագաւոր փառաց Ք̅ս̅՝ որ ժամանեալ գաս ՚ի յերկնից. Կ̅ն̅ գալստեան. Շարակ. 795.

* Ընդ աջմէ քումէ հոգի Ա̅ծ̅ իմաստութեան սուրբ կոչամանն. Կ̅ն̅ կացուցման. Շարակ. 739.

* Ահաւասիկ եկն Տ̅ր̅ բիւրովք սրբովք հրեշտակօք. Կ̅ն̅ ննջեցելոց. Յուդ. Ա̅. 15:

* Որք Ը̅ ծով և Ը̅ ցամաք գնասցեն. Ժամագիրք. Որ ապառնի բայս գնասցեն՝ եդեալ է միանգամայն և ՚ի տեղի ներկայի՝ իբր ասել գնան:

ԳԼՈՒԽ · Լ ։

Համաձայնութի Անուան ընդ անուան ։

Անուն համաձայնեալ ընդ անուան լինի չորս իւիք․ յայտնիչ և յայտնեալ․ յատկացուցիչ և յատկացեալ․ խնդիր և խնդրառու․ ածական և գոյական։

Որոց վասն

Ծանօթութի · Ա ։

608 Այս չորեքեան համաձայնութիւնքս չունին ընդա 'ի մէջի զբաղհիւսական շաղկապ․

Ծանօթութի · Բ ։

609 Ամենայն հոլովականք լինին յայս չորեքին կերպս․ բայց մեք աստ ընդ անուան և զաներևոյթն միայն ունիմք ցուցանել․ իսկ զդերանունն և զընդունելութին թողումք յիւրեանց տեղիս տեսանել։ Զայսոսիկ ծանուցեալ՝ մատչիմք ցուցանել զիւրաքանչիւրսն։

Յօդուած · Ա ։

Համաձայնութի Յայտնչի ընդ Յայտնելոյ․

610 Յայտնիչն է անուն ինչ, որ թուով և հոլովիւ համաձայնեալ ը այլում անուան՝ յայտնէ զնշանակութի նորին․ ուստի յայտ առնօղն կոչի յայտնիչ և որ յայտնի, կոչի յայտնեալ․ Գ , * Նուաճեցեր զերկփառս քո՝ Տր զմարդատեսն․ ‖ Ղուկ · 8 1 2 ։ Հայ յայսոսիկ՝ զմարդերկեան է յայտնիչ, և զերկինքեան է յայտնեալ․ քանզի յայտնի եղև, թէ՝ անուանեալ զերկիւղուն՝ ասացեն նշանակեն՝ զմարգարէքեան․ ուր երկոքին են համաձայնք՝ յոգնակի հայցական խնդիր սեռի բայիս՝ տարածեցեր։ Նայեա՝ Տէն և օրինակքս՝ որ զկնի։

Զ. գեց

*Զգեցցի զզրահս` արդարութեան. եւ դիցէ զսաղաւարտ` դատաստանին անաչառ. առցէ զվահան` սրբութեան անյաղթելի. ‖Իմաստ. Ե. 19. 20:

*Ել ծուխ խնկոյն` աղօթիւք սրբոցն ի ձեռաց հրեշտակացն առաջի Այ. ‖Յայտ. Ը. 4:

*Զինչ է առնել եւ զօրէն այսոցիկ չարեաց` ցուցանողքս հերձուածողացն ճշմարտութեան եւ սրբոյ աթոռոյ լուսաւորչին. ‖Ընդդ. հեր. 44:

*Զութներորդն Նոյ` զարդարութեան քարոզ` պահեաց ի ջրհեղեղէ աշխարհի. ‖Բ. պետ. Բ. 5:

*Նա ասէ որք եւ այլ. մի՛ լիցի. զի մի են խառնելովն Այ մարդեղութեանն եւ մարդոյն Աստուածանալովն. ‖Ընդդ. հ. 148:

*Յետին թշնամին խափանի մահ. ‖Ա. կորն. ԺԵ. 26:

*Քս յայտնեսցի կեանքն ձեր. ‖Կողոսա. Գ. 4:

611 Զորս ինչ արժան է ճանաչել զայսօք. Նախ որոշեալ յայտնիչն է երբ մեկնումն յայտնելոյն. ապա հարկէ մտանել ի մէջ նոցին մեկնական շաղկապ իմն. սմին իրի` եւ բազմիցս նոյնպէս դնի: Գ.

*Նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ եւ կենդանի ի ձեռն վարագուրին, այսինքն է` մարմնոյ իւրոյ ‖Եբր. Ժ. 20. Նա անուանեալ նորոյն իւրոյ` մեկնականն շաղկապս այսինքն է, եղեալ է յայտնիչ անուանական վերադրութիւն. Օրինակս են եւ [illegible]:

*Ամաղարթօք վարուց` [illegible] [illegible] բարեհռչակ կերպից . . . բազմականացն [illegible] [illegible]. ‖Յոբ. Թ. 2

*Արքայն [illegible] . . . անուանական [illegible] [illegible] [illegible]. ‖[illegible]

*Յերկուցն զխ ի բնոյ յայտնեալ` ի [illegible] [illegible] հաստատեալ եւ ի [illegible]. ‖[illegible]:

*Եղեւ Այ համբարձ [illegible] մի յերկուց ընդդիմակացաց, յորոց է ինքն` Յս [illegible] ի [illegible]. ‖Ընդդ. հեր. 165:

612 Մերթ` երբեմն յայտնիչն լինի բազում, եւ յայտնեալն` մի. Գ. եւ մերթ յայտնեալն բազում, եւ յայտնիչն մի. Գ. *Ի սրտէ ելանեն խորհուրդք չարք` սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ

վկայ

վկայութիւնք, հայհոյութիւնք. այս ամենայն է՝ որ պղծէ զմարդն. Մատթ. ԺԵ. 19: Ահա յայտնի են վեց բառուք՝ սպանութիւնք, շնութիւնք, եւ այլն. իսկ յայտնեալն է միայն անունն՝ խորհուրդք չարք: Այսպէս է տեսանել եւ ՚ի հետեւեալ օրինակդ:

* Հաւատոյ զինուն վառեցարուք, (այսինքն) Աստուածպաշտութեամբ՝ եւ արդարութեամբ՝ եւ սրբութեամբ, պահօք՝ եւ աղօթիւք՝ եւ ողորմութեամբ. Ընդհանր. 72.

* Այլիս խորհուրդս սոսկալիս ՚ի քեզ տեսանի Աստուածածին. (այսինքն) յղութիւն անսերմնական, ծնունդ անարատ, կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական. Նարեկ. 81:

* Որոյ ցոյցք խառնուեն ՚ի քորեբ լերինն նշանակեցաւ յերիս օրինակս. (այսինքն) ՚ի շարժումն մեծ, ՚ի հողմն ուժգին, եւ ՚ի հուրն կիզանողական. Նոր. ԼԸ. 9:

* Այսօր գտանինքն օրինականք՝ (այսինքն) յոլովակի եւ անինա. Շարակն. 9:

* Ցօղ քաղցրածաւալ՝ ցանկալի զուարթնոցն, նիւթեղէն սրովբէ՝ գեղ մարգարտափայլ, հիմն եկեղեցւոյ, մաքուր աղաւնի, ամպ հովանաւոր՝ սուրբ կոյս Մարիամ. Շարակն. 767: Ահա յայտնիչն է միայն անունն՝ սուրբ կոյս Մարիամ. իսկ յայտնեալքն են այլաբանական անուանքս՝ ցօղ քաղցրածաւալ՝ ցանկալի զուարթնոցն, եւ այլն բոլոր:

* Աշխարհականին բանին բազկաց եղեալ հիմունք սրբոյն սիօնի՝ լերինք անշարժք՝ հովիտք ծաղկածինք՝ հաստատունք վէմք հաւատոյ՝ (այսինքն) Պետրոս եւ Անդրէաս. Շարակ. 122: տես զբոլոր կանոնս:

* Անօթն ընտրութեան, եւ խորհրդածուն խորոցն Աստուծոյ եւ առաքելական աւանդելոյն քարոզ՝ (այսինքն) Մեծն Պօղոսն. Յովհաննէս. Կաթողիկոս:

613 Երբեմն ամբողջ կատարեալ բանն՝ որպէս անուն մի՝ լինի յայտնիչ անուան միոյ. Գ. * Ընկեցէք զմարգարէականն՝ . . . զոչ ոք է արդարն եւ ոչ մի. Նոքէկ. ՀԷ. 1: Ուր ամբողջ բանս՝ չի՛ք ոք է արդարն եւ ո՛չ մին՝ սոյն անուն մի հոլովեալ եղեալ է

յայտ

յայտնիչ անուանս՝ զստորոգութիւնն: Այսպէս է տեսանել և յօրինակաց:

*Ո՜ վճիռ մահու՝ ի վերայ եկեալ, (ցզ) հողեղէն անդրէն և ի հող դարձելոյ: Շարական. 776:

*Երկուս ինչս խնդրեմ ի քէն տէր... (ցզ) զբանս զուր և սուտ հեռի արա յինէն, զմեծութիւն և զաղքատութիւն մի՛ տար ինձ: Առակ. Լ. 7. 8:

*Մի՛ և նոյն է ի մեծամեծ պատուիրանացն Այ (ցզ) գիտել որոշումն առնել ի մէջ լաւին և վատթարին: Եկն. Կոչման. 296:

614 Եւ երբեմն երկու կատարեալ բանք՝ լինին միմեանց յայտնիչ և յայտնեալ: Ցզ, *Որ զմի յաջողցն բաց ունիցի, և միւսոյն կախուցեալ իցէ: Ցզ որ կամ գիտութիւն առանց գործոց առաքինութեան՝ և կամ առաքինութիւն առանց գիտութեան ունիցի, թերի է ի բարեաց: Ընդհանր. 31: Ահա ամբողջ բանս՝ որ կամ գիտութիւն և այլն, եղեալ է յայտնիչ նախակարգեալ բանիցն՝ որ զմի յաջողցն, և այլն: Այսպէս են և այլքն:

*Մեծի դատապարտութեան արժանաւորք յայտնիք եմք, զի մեռեալք չարեօք զայլս դատապարտեմք: Ցզ զի մեք զնմանն մեղուցեալ՝ չզրեմք ինչ, և զայլս նոյնին մեղօք ստգտանեմք: Եկն. Կոչման. 180

*Եւ դու տես զանմտութիւն մարդկան: (այս է՝) իւրաքանչիւրոք սակս անձին իւրոյ ի գլուխ ելանելոյ՝ աղաչէ զԱծ: Եկն. Կոչման. 184:

*Երանի թէ՝ զազատութիւն, զոր ետ Ածբնութեանս, բարուօք ի կիր արկանէին: Ցզ ի յախտից լինել ազատս: Ընդհանր. 26:

*Արժան է դատողականին ի կարգի պահել զերկաքանչիւրսն: (ցզ) յառաջագոյն զհոգին կերակրել հոգևորական կերակրօք ի ձեռն մարմնոյն սպասաւորութեան, և ապա զմարմնականացն հոգալ հոգւոյն իմաստութեամբ և տնօրէնութեամբ: Ընդհանր. 33:

*Այս են յաւիտենական կեանքն: (ցզ) զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅս Քս: Յովհաննու. Ժէ. 3:

Եր

615 Երրորդ՝ գտանի և ՚ի սակաւս, զի յայտնիչն զմինի անհամաձայնութիւն. և այս՝ կամ յուղղականն հոլովմ իւր ածականն. Գ. *Բնակեցաւ Եսաւ ՚ի լերինն Սէիր. ‖Ծննդոց. ԼԶ. 8. Ահա ուղղական յատուկս Սէիրն՝ եղեալ է ածականապէս յայտնիչ ներգոյականին՝ ՚ի լերինն: Այսպէս են և օրինակքս.

*Բանակեցաւ զօրօքն իւրովք յայնկոյս յորդանան գետոյ. ‖Ա. Մակաբայեց. Թ. 34.

*Յանես զայր մի . . . նազիրէոս տեսանէ. ‖Ամոսի. Թ. 9.

*Մեղսասիրացն անձինք՝ ոչ ՚ի պատուական և ՚ի հաստատուն նիւթոցս յայսցանէ սակս շինեն զշինուածս իւրեանց ՚ի մերոյ հաւատոյն հիմանն, այլ յանարգաց և ՚ի դիւրափոփոխելեաց՝ այսինքն փայտ, խոտ, եղէգն. ‖Ընդհանր. 11.

*Այս երկուց բարդաւած շնորհաց նորոգչաց առմիմեանս եղեալ՝ (այսինքն) կորեկն ընդ կոթեր, բարձեալ եղիւի և յուսահատութեան վհատութի ազգաց մեղաւորաց. ‖Նարեկ. ԾԶ. 3.

616 Եւ կամ ՚ի սեռականն՝ իւր յատկացուցչէ. Գ.

*Բնակեալ էին զգետովն Եփրատայ. ‖Յուդիթ. Ա. 6. Ահա սեռական յատուկս Եփրատայ՝ իւր յատկացուցչէ եղեալ է յայտնիչ պարառականին՝ զգետովն: Ըստ այսմ են և օրինակքս.

*Իջանէր մովսէս ՚ի լեռնէն սինեայ. ‖Ելից. ԼԴ. 29.

*Լեառն սինեայ է յարաբիա. ‖Գաղատ. Դ. 25.

*Ոկղք հոտոտայ ընդ ծով ոչ խորհէին անցանել. ‖Շար. 238.

*Երեկոյս ձգոց եկին ինձ լալիք. իսկ յառաւօտուն կենաքէն Այս՝ եղև ինձ ուրախութիւն. ‖Ցնկնաւր. կոչնաւղ. 172.

617 Չորրորդ՝ որովհետև անուանք կամ գոյականք են կամ ածականք. ՚ի գալ սոցա առ միմեանս՝ տեսանի չորս կերպ զուգաւորութիւն. այսինքն կամ գոյականն գոյականի պատահի, կամ գոյականն՝ ածականի. և կամ ածականն պատահի ածականի, կամ ածականն՝ գոյականի: Այս չորս կերպքն ևս կարեն համաձայնիլ յայտնիչ և յայտնեալն այսպէս.

Գոյա

618 Գոյական գոյականի. Գ. * Ի հաւասարին Պ[illegible]
տառն Ք. Մ. Երեմ. ա. 36. Որ գոյականս Պ[illegible]
եղեալ է յունաց գոյականին փոխան Ք. Մ.

619 Գոյականն յունաց ածականի. Գ. * Որք կա-
մեցին ուղղակի ձեռնել զգիրս . . . մնացեալ
երկուցս այսոցիկ կարծ պէտք են մարդութ սրտի
և անախտութ հոգւոյ. Մեկն. հոլովոյ. 136: Որ
գոյականքս մաքրութ և անախտութ հոգւոյ են յունա-
նիցս. և ածականս երկուցս այսոցիկ է յունականաց:

620 Ածական ածականի. Գ. * Ի փորձոյ անտի յայտ
նի է ամենեցուն իմաստնոց և ուղղափառաց. Ընդդէմ. 65
Որ ածականքս իմաստնոց և ուղղափառացն եղեալ են
յունաց ածականին փոխանակ:

621 Ածականն յունաց գոյականի. Գ. * Ո երբ
տեսանէս ապաւեալ անձն իմ . . . զազգս Հայոց,
զմեծատուն սուտ, զմեր պատուելիս. Սեբ. ի ե 5. ձեռ.
Որ ածականքս ազգաց Հայոց, մեծատուն սուտ,
մեր պատուելին են յունաց. իսկ յունականացն է գոյա-
կան ձեւոյ ընթեռ:

622 Երբեմն արժան է ճանաչել, զի յունաց
և յունականացն ի միասին զմի զօրութի ունին
ի բանի. իսկ զի եթէ յունացն լցէ տեղ կամ
խնդիր բայի նա, յունականացն և նոյնպէս լինի այնմ
բայի. որպէս ասելոյ յամ օրինակաց: Ի սոյն
տառից շաղկապի մերձ միմեանց եղեալ համաձայն
անուանքն յամ տեղիս ոչ լինին յունաց և յունա-
նեաց. Գ. * Մինչեր ի հնոյն ի բարբառն. Յաղագս. 156:
Որ համաձայն անուանքս ի հնոյն ի բարբառն ոչ
են միմեանց յունաց և յունականաց. քանզի ի հնոյն
է բուն խնդիր. և ի բարբառն է տեղական պա-
տահական խնդիր: Ու այսմ են և այլքն:

* Ո մուծէ ի նահանգէ կոյտէ ի գեղջէ այլա-
բերից կացուցանեն ի հայրապետական յաթոռն.
Յաղագս հանգս. հանգիստ:

* Ի յի ծննդեանն Յի ի բնութէ հեմ հրեշտակի
յառաջ հերոսք այնմ. Մատթ. ա. 1:

Գի

ԳԼՈՒԽ Ը։

Համաձայնութիւն Յատկացուցչին ընդ Յատկացելոյ։

Յատկացուցիչն է սեռական հոլով անուան իմն, որ զնշանակութիւն այլում անուան քարոզէ առ ինքն՝ և ցուցանէ, թէ իւր է․ այս սեռական կոչի յատկացուցիչ՝ և միւս անունն կոչի յատկացեալ․ Գ, *Սիրեցէք զլոյս իմաստութեան ամենեքեան․ Իմաս․ Զ․ 23։ Որ սեռականս իմաստութեան՝ է յատկացուցիչ բառիս՝ զլոյս․ Քանզի՝ առ ինքն քարոզէ զնշանակութիւն լուսոյն․ և ցուցանէ, թէ այս լոյս ոչ է լոյս Ճրագի՝ աչաց՝ հրոյ, կամ ոչ է լոյս աստեղաց՝ արեւու՝ լուսնի, կամ գոհար ականց, ևն․ այլ յատկացուցանէ, թէ է լոյս իմաստութեան։ Այսպէս սովոր է ճանաչել և ՚ի հետեւեալ օրինակս․

*Լուան զձայն զգնալոյ Տն Այ ՚ի դրախտին․ Ծնն․ Գ․ 8

*Սրավարեցայ թիակօք ՚ի մակոյկ ՚ի ծովուն․ Յով․ կոլբ

*Տուր ինձ զքոյոց աթոռոց զաթոռակալ իմաստութիւն․ Իմաստ․ Թ․ 4։

*Բարւոք խոտէք զպատուիրանսն Այ, զի զձեր աւանդութիւնն հաստատեսցէք․ Մարկ․ Է․ 9։

*Առաքինութեան զնշանակ ոչ կարացաք ցուցանել․ Իմաս․ Ե 13։

*Մի՛ ՚ի վերին երեսս՝ ծործիկեալ բանս առաջի դնել ․ ․ ․ և այսպէս գործ զեղծանաց գործել․ Թղ․ կոթ 108

*Ուր կտակ է, հարկ է զմահ ՚ի մէջ բերել կտակողին․ Յն ՚ի մէջ բերել զմահ կտակադրին․ Եբր․ Թ 16

*Թէ Քի ես աշակերտ․ ․ ․ զհետեւութեան նորին ընկալ զօրինակ․ Յն ընկալ զօրինակ հետեւութեան նորին․ ընդ 4․

*Որ արդարապէս դատի, զարմանազան արժանաւոր վարկանի՝ ՚ի շաւիղս միայն տեսանելով զհետ իմաստութեան․ ․ ․ և ՚ի հաւատոց միայն լինել սահմանի ճշմարտութեան․ Յն տեսանելով զհետ ՚ի շաւիղս իմաստութեան և՛ի սահմանի Ճշմարտութեան հաւատոյ. Ընդդ. Հ. 105.

*Ծանիցես զբանիցն՝ որոց աշակերտեցար, զՃշմարտութիւն. Այսինքն ծանիցես զՃշմարտութի բանիցն, որոց աշակերտեցար. Ղուկ. Ա. 4.

Զայս վերջին չորս օրինակս՝ յորս տեսանի ՚ի մէջ յարակացուցչին և յարակցելոյն այլ մասն անկեալ, ՚ի գեղապանծ շարադրութեան արժա՛ն է սանել:

624 Երեք ինչ պարտ է տեսանել աստէն: Նախ՝ զի երբեմն յարակացուցիչն լինի բազում, և յարակցեալն մի. Գ, *Անիծեալ՝ որ խոտորեսցէ զիրաւունս եկին և որբոյ և այրւոյ. Օրին. իէ. 17. Զի երեք անուանքս՝ եկին, որբոյ, այրւոյն, եղեալ են յարակացուցիչ միոյ գոյականիս՝ զիրաւունսն: Այսպէս են և օրինակքս.

*Սրբէք զարտաքին զբաժակին և զսկաւառակին. Մատթ. իգ. 25.

*Ընկալարո՛ւք զակամայսդ որպէս կամաւոր. որում յայտնի լիցի խոստովանութե և գիտութե և հաստատութեց ջերմոց հանդէս. Յոհ. Ոսկեբ.

*Որով գերաշնորհ է զնորայն (այսինքն զՀռոմ արքայի) գործոյ՝ և զգնոցին՝ և խմարկին՝ և մրցանաց՝ և շինուած՝ և խաղաղութե հանդէս. Յովհան. Ոսկեբ.

*Որով ձեռամբն մերով խօսիմք ... ոչ զմեր ինչ բան. այլ զառաքելոցն և զմարգարէիցն և զվարդապետացն եկեղեցւոյ երկրորդելով զբանից նց զօրութի ՚ի լսելիս ձեր. Ընդդ. Հոռ. 7.

625 Եւ երբեմն յարակացուցիչն լինի մի, և յարակցեալն բազում. Գ, *Եհաս իմաստութի՝ և հանճար՝ և ածպաշտութի Տն. Եսայ. ԼԳ. 6. Աստ յարակացուցիչն է մի բառս՝ Տն. իսկ յարակցեալքն են երեք անուանքս՝ իմաստութի, հանճար, ածպաշտութի:

Բաւ այսմ է տեսանել և յօրինակսդ.

*Հիմն և արմատ ամ բարեգործութեց՝ խոնարհութիւն է. Մեկն. Ժողովող. 383.

*Ոչ հաստատէ զքղքս և զգեօղս և զաւանս և զագարակս, այլև զտունս բարեաց քանդէին. Յովհան.

726 Իսկ երբեմն բազում անուանք լինին միմեանց յառաջացուցիչ և յառաջացեալ · Ց , *Ը՛է դասաւորեն մուծանել զխառնումն յառաջադաս խաղաղութե երկնաւոր հարսնարանի փեսայացեալ բանին · Երգ · 45

Որ խորհրդոյն է յառաջացուցիչ յառաջադասելոյն · և երկնաւոր հարսնարանին է յառաջացուցիչ խորհրդոյ · և փեսայացեալ բանին է յառաջացուցիչ երկնաւոր հարսնարանին · Ուստի խորհրդոյն և երկնաւոր հարսնարանին են յառաջացուցիչ և յառաջացեալ : Ըստ այսմ են և այլք ·

*Զայն հառաչանաց հեծութե սրտի՝ ողբոց աղաղակի՝ քեզ վերընծայեմ · Նարեկ · Ա · 1 ·

*Ծ դատականք երկանց անիծից նախամօրն եղեւ · Շարական · 543 ·

*Ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց ընկլուզայ · Նարեկ · ԼԵ · 3 ·

627 Երկրորդ՝ յառաջացուցիչն դնի ներգործութե · և յառաջացեալն իմացեալ լինի զօրութեամբ · Ց ,
*Ինձ պարտ է գործել · · մինչ աւուր կայ · Յովհ · Թ · 4
Ըհմ յառաջացուցիչս՝ տուր զօրութե ունի զյառաջացեալն՝ տիւ · որպ թէ ասել՝ *մինչ տիւ աւուր կայ ·
Ըստ այսմ են և յետագայ օրինակքս ·

*Արբուցեց մեզ կուսածին որդին ՚ի յամենօրհնութիւնս · Հայցեր մաքրել յոգեպաշտութենէ · Շր · Զգոյշ յորդանանու · շարական · 467 ·

*Պահոց քառասնորդացն աւուրք՝ սգոյ և տրտմութե՛ են · Շր · են աւուրք սգոյ և տրտմութե · Երգհ · 59 ·

*Ծանրագին է այդ ախտ · և ոչ ՚ի Ճշմարիտ լուսոյն հոգւոյ · Շր · այդ ախտ է ծնունդ արուսեկին · Երգ · 188

*Զայր յամենայն զքո զորդին՝ խոր դաւանեաց · Շր · որդի խր · շարակ · 516 ·

628 Ըստ յայլխառնելոցս առաւել ՚ի յայտնութի երբեմն յառաջացելոյն հոլովականերուն դնի ՚ի վերայ յառաջացուցչին, և նոյնպէս նշանակէ զզօրութե յառաջացեալն · Ց
*Լ ցին երկոտասան սակառի զկոտորոցն · Յովհ · Զ · 13
Ըհմ հոլովականերուս՝ Ղ · ցուցանէ զզօրութե յառաջացեալն , որ է բառս՝ շինելոց · որպէս թէ ասել՝

զնշխարս կոտորոցն: (որպ՝ ընթ. 'ի նոյն. Ժդ. 20):

Այսպէս ճանաչելի են և 'ի ներքոյ օրինակքս:

*Առթայք՝ տուք զկայսերն կայսեր, և զԱ̅ծն Ա̅ծ. ‖Պ̅ զպատկերն կայսեր՝ տուք կայսեր, և զպատկերն Ա̅ծ՝ տուք Ա̅ծ. Ղուկ. Ի. 25:

*Ունիմ զա̅մ երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէր ա̅մ ծի. ‖Պ̅ ունիմ զմեզս ա̅մ երկրի. Նար. ԻԸ:

*Ամենեքին զանձանց խնդրեն, և ոչ զՅ̅ի Ք̅ի. ‖Պ̅ ամենեքին խնդրեն զհաճոյս անձանց, և ոչ զհաճոյս Յ̅ի Ք̅ի. Փիլիպ. Բ. 21:

*Բազումք 'ի փարիսեցւոց. . . մեկնեցին զջուրն 'ի մկրտութե՛ խորհուրդ, և զարիւնն 'ի ճաշակ մանն. ‖Պ̅ 'ի խորհուրդ ճաշակմանն. ընդդ. հան. 127:

*Այլք զմեզս ունելով յաւաջագոյն, և փոխեցին որպէս կամեցան՝ զոր այժմն ունին. ‖Պ̅ զաւանդութիւն մեր. ընդդհանր. 129:

629 Երրորդ՝ ըստ քառակի զուգադրութե՛ անուանց (617)՝ լինի յատկացուցիչ և յատկացեալն, այսէ՝ Գոյական գոյականի. Գ, *Սկիզբն իմաստութե՛ երկիւղ տեառն. Առակ. Ա. 7:

630 Ածական ածականի. Գ, *Բարեկամք մեծատանց բազումք. Առակ. Ժդ. 20:

631 Գոյականն յատկացուցիչ ածականի. Գ, *Զյիմարս աշխարհի ընտրեաց Ա̅ծ. Ա. կորնթ. Ա. 27

632 Ածականն յատկացուցիչ գոյականի. որպէս՝ *Իմաստնոյ աչք 'ի գլխոյ իւրում. Ժողով. Բ. 14:

633 Արժան է և զայս ծանուցանել 'ի վերջոյ, զի երբեմն յատկացուցիչն ոչ ըն̅տ 'ի հոլովս սեռական. Գ, *Ընդունէին կերակուր ուրախութե̅ և միամտութե̅ սրտի. ‖Պ̅ միամտութե̅ սրտի. Գործ. Բ. 46:

*Ճառագայթիւք անճառ լուսով մ̅բ խաչն երևի. ‖Պ̅ անճառ լուսոյն. Շարական. 754:

*Զծնեալն յամենասու̅բ յորովայնէ ցնծալով 'ի հոգւոց օրհնեցէք. ‖Պ̅ յորովայնէ ամենասրբոյ կուսին. Շար. 87

*Բարձրեալն ետ զձայն իւր 'ի կարկուտ և 'ի կայծակունս հուր. ‖Պ̅ 'ի կայծակունս հրոյ. Սաղմ. ԺԷ. 15

Խընդ

*Խոնարհեն առ՚ի նմանէ ձեռնարկ համանմանքն.
‖ Որ ձեռնարկ նմանքն հաւատոյ. թղթ. կորն. (724)
*Ընդ հրեշտակին դատակցելով պարս. ‖ Որ դատակցելով ընդ պարս հրեշտակաց. ‖ թղթ. կորնթաց.
*Աղշի ՚ի հող բարբառ կորուստ. ‖ յոհան. Թ. 11.
Բայց պարտ է զգուշանալ յայսպիսեաց.

ԳԼՈՒԽ Թ.

Խնդրառութիւն Ածականց.

Ածականք բայածանցեալք (95), կամ անուանք բայից՝ ըստ պահանջմանց իւրոյ բնութեան բայիցն առնուն զխնդիրս (496). Որոց վճիռ՝

Կանոնութիւն. Ա.

635 Բայանունականքս՝ եթէ իցեն ածանցեալք ՚ի կարմաց ներգործական բայից, կոչին ներգործողականահաղորդք. եթէ կրաւորական բայից, կոչին կրաւորողականահաղորդք. և թէ չէզոքականաց՝ չէզոքողականահաղորդք.
Որոց ներգործականահաղորդք և կրաւորականահաղորդք առնուն զկրկին խնդիրս՝ զխնդիր սեռի և զխնդիր բնութ. իսկ չէզոքականահաղորդք առնուն միայն զխնդիր բնութ.

Կանոնութիւն. Բ.

636 Բայանունականքս՝ ունին զզօրութիւն դերբայի, կամ ընդունելութեանց եղերելոց՝ ՚ի ող, իչ, լի, եալ.

Կանոնութիւն. Գ.

637 Որինչ ասացաւ ՚ի խնդրառութեան բայից (494. 521. 522. 523. ևն), զայն նոյն պարտ է և առ սոքին իմանալ. Այլ աւասիկ զխնդրառութիւն անուանց բովանդակեմք ՚ի հինգ յօդուածս.

Յօդ.

Յօդուած. ԺԶ.

Խնդիր սեռի Ներգործականահաղորդ անուանց.

638 Ներգործականահաղորդ անուանք առնուն զխնդիր սեռի 'ի հոլովս սեռականն (600). որպէս՝ *Կատարեցուցանէր զպարտատուս քերցն՝ յարութեանն եղբօրն. Ընդհանր. 121. Նման անուանս յորոց է, առեալ է խնդիր սեռի զսեռականն հոլովս՝, եղբօրն. զոր և 'ի դերբայութեն առնոյր 'ի հայցականն, յասելն՝ *յարուցանելով զեղբայրն. Այսպէս են և օրինակքս։

*Այլ ևս օծումն երախայրիցն ըստ օրհնութեան Քահանայից, և այլ հիւանդաց, և այլ վախճանելոցն. Այս՝ օծելոյ զերախայս. Գիլ. Կանոն. 208.

*Հարկաւոր պիտոյիցն կարօտ են ըստ մարմնոյ, թող թէ պայծառութեան եկեղեցւոյ 'ի խնդիր. Այս՝ 'ի խնդրել զպայծառութի եկեղեցւոյ. Ընդհանր. 49.

*Այլ ինչ բազում է, զոր (հրէայք) ընկալան ունել, մկրտութիս բաժակաց և ստամանաց և պղնձեաց և մահճաց. Այս՝ մկրտել զբաժակս և զստամանս և զպղնձիս և զմահճս. Մարկ. Է. 4.

*Բժիշկ ախտացելոյս . . . ազատութի՛ն մեղօք գրաւելոյս . . . կանգնումն մերասերին՝ կործանեցելոյս. Այս՝ բժշկող, ազատիչ, կանգնօղ. Նարեկ. ԻԹ. Ա.

*Զբանին անեղական շնորհն էից գոյացուեց՝ անձնաւորեալ ծնեալք. Այս՝ զէացուցիչն գոյացութեց էից. Ընդհանր. 154.

*Թշնամիք առն՝ ընտանիքն իւր. Այս՝ թշնամանօղք. Մատթ. Ժ. 36.

(Անպգամք) ոչ են գիտուն բարիս առնելոյ. Այս՝ ոչ են գիտօղք առնելոյ զբարիս. Ժողով. Դ. 18.

*Մարիամ Աստուածածինն ընդունարան եօթնարփեան շնորհաց. Այս՝ ընդունօղ զեօթնարփեան շնորհս. Ընդհանր. 19.

Նա

Ծանօթութիւն · Դ ·

639. Զայս սեռական խնդիր սեռի՝ այսպէս զանազանել պարտ է 'ի յատկացուցչէ ։

Սեռի խնդիր սեռականն ցուցանէ զայն՝ յորոյ վր̄ լինի գործն · և կարէ փոխիլ 'ի հայցական առանց փոխելոյ զնշանակութիւն բանին ։

Յատկացուցիչ սեռականն լինի տէր գործոյն · և 'ի հայցական փոխելով՝ այլայլի միտք բանին ։ Օ̄ · * Նախաստեղծիցն ճաշակմամբ պտղոյն՝ ճաշակեցին զդառնութիւն մեղաց և մահու · Շնորհալ̄ · 151 ։ Ահա սեռականս պտղոյն՝ է խնդիր սեռի ներգործականահաղորդ անուանս ճաշակմամբ · և սեռականս նախաստեղծիցն՝ է յատկացուցիչ նորին · Աստի միտք բանին իմացեալ լինի այսպէս · * Նախաստեղծքն ճաշակելով զպտուղն՝ ճաշակեցին զդառնութիւն մեղ̄ ։

640 Եւ 'ի սակաւ ուրեք ներգործականահաղորդք առնուն զխնդիր սեռին 'ի հայցական ։ Օ̄ · * Օրինակ անօրինակ ծննդեանն որդւոյ՝ ոչ այլ ինչ է · բայց որ 'ի մեզ մնացս ծնունդ զբան · Շնորհ · 9 Ահա անունս ծնունդ՝ առեալ է խնդիր սեռի զհայցականս՝ ըստ · իբրու ասել՝ * մնացս ծնանիլն զբան ։

Ըստ այսմ են և այլքն ։

* Աշտանայլին սակս սաստիկ սրոյն կոտորման զմ̄ն · Այ̄ կոտորելոյ զմ̄ն · յովհ · կաթողիկ ։

* Անդամալուծին · · · Հոգաբարձացն առաջարկութե̄ զցոյցս յուսոյն՝ գթացեալ ողորմեցար · Այ̄ առաջարկելով զցոյցս յուսոյն · Նարեկ · ԼԵ · 1 ։

* Յուղեցան մանկունք 'ի վերայ սրբոցն՝ կապանօք զնս̄ · Այ̄ կապելով զնոսա · յովհ · կաթողիկ ։

*Հօրդ էմմանուէլի . . . մինդ յերրորդութ̃դ պատարագի, եւ միւսդ ընդ օծնի . . . եւ ընդ որդւոյդ միածնի ։ Այլ Հօրն ։ մինն յերրորդութ̃ն, միւսն ։ որդւոյն ։ Նարեկ ։ ԼԳ ։ 4, 5 ։ ԼԴ ։ 2 ։

*Որ խօսիդ ընդ քեզ՝ նա է ։ Այլ խօսին ։ յովհ ։ Թ ։ 37 ։

*Ուր եսն իցեմ, եւ դուք անդ իցէք ։ Այլ ես ։ յովհ ։ ԺԴ ։ 3

*Զի՞ կոչէք զիս տէ՛ր տէր՝ եւ զոր ասեմն ո՛չ առնէք ։ Այլ զոր ասեմս ։ ղուկ ։ Զ ։ 46 ։

*Արժանաւոր քո սերմանն և հունձքդ է. ‖ Այ̄ սերմանդ. Վկն. կոչում. 110.

*Ես եմ յս̄՝ զոր դուն հալածես. ‖ Այ̄ դուդ. Գործ. Թ̄ ե

*Ես եմ, զոր խնդրէքն. ‖ Այ̄ խնդրէքդ, կամ դուք խնդրէք. Գործ. Ժ̄. 21.

Յայսպիսեացս պա՛րտէ զգուշանալ.

777 Զորորդ՝ դնելն առ երորդ էր զարդ. Զ̄, *Յասե̄լն ասէ որդւոյ առ հայր՝ եթէ ոչ իմ կամքս եղիցին, այլ քոյդ՝ որ է իմս. յայտ արար, թէ իւր և Հօրն մի են կամք. ‖ Ընդդէմն. 119.

*Ո՞վ է սա՝ որ երևեալս է իբրև զառաւօտ. ‖ Երգ. Զ̄ Թ

*Ա̄պ եսս վարկանիմ, եթէ ՚ի դուռն երուսաղէմի աթոռքն (դատաստանի) դնելն. ‖ Վկն. կոչ. 225.

*Մեք մտանեմք ՚ի հանգիստն, որ հաւատացաքս. ‖ Եբրայ. Դ̄. 3.

*Որում օգնական եղէ ՚ի ժառանգաց երկրի. ‖ Եսայ. Խ̄Թ

*Ո ամենայն հնարս հնարեցի՛ր, թերևս կարասցես զոմանս ապրեցուցանել . . . և եթէ ոչ զմի ոք, սակայն զքո անձն ապրեցուցանես ՚ի տանջանաց. ‖ Վկն. կոչում. 368.

*Որք ՚ի նոյն հաւատոյն, զնորայն պարտէին գնալ ճանապարհ. ‖ Վկն. կոչում. 385.

*Որպէս զնոսայն առի ձեռամբ իմով, նոյնպէս առից և զամենայն իշխանութիս. ‖ Եսայ. Ժ̄. 10.

*Իցեն ոմանք ՚ի սոցանէ՝ որ աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ. ‖ Մատթ. Ժ̄զ. 28. Ղուկ.

*Ասէ ցայնոսիկ՝ որ անդն կային. ‖ Մատթ. Ի̄զ. 71.

Ըստ այսմ են գրեթէ և ՚ի վերոյ յօդեալքն ՚ի դիմաւորսն, և յաներևոյթսն (478).

778 Զայսոսիկ արժան է գիտել զերկուս. մի՝ զի դիմորոշականքս ոչ յօդին ընդ յարաբերականի. նաև ոչ դնելն ՚ի վ̄ր նախադրութե̄, շաղկապի, և միջարկութե̄. յորս թէ եդեալ ևս իցեն (831), անդ որպէս անուն համարին. Միւս ևս՝ զի մինչ յարին ՚ի դերանուանս՝ որոց ՚ի վերջն ձայնաւոր իցէ. յօդին տառիւն՝ յ. տե՛ս և ՚ի (428. 433).

Գլ.

ԳԼՈՒԽ · ԺԳ ։

Համաձայնութիւն Ընդունելութեան ընդ ընդունելութեան, և ընդ միւս հոլովականաց։

Ընդունելութիւն ընդունի զզօրութիւն բայի և անուան. Ուստի ընդ. ինքեան, և ընդ միւս հոլովական մասունս՝ և ընդ անհոլովս համաձայնի որպէս բայ՝ և որպէս անուն։ զորոց առ հասարակ,

Կանոնութիւն · Ա ։

780 Ընդունելութիւնք եղերեալք 'ի լոց, գրեթէ միշտ բայ են։ Եղերեալք 'ի եալ՝ յուղղականն հոլովին բազմիցս իբր բայ վարին, և երբեմն իբր անուն. իսկ հոլովեալն՝ միշտ վարի անուն։ Եղերեալքն 'ի օղ, իչ, ուկ, միշտ բայածական անուն են։

781 Որք 'ի վարելն սոցա իբր անուն, միանգամայն և ըստ զօրութեան բայից առնուն զխնդիրս (496)· վասն նախ կարգեսցուք զխնդրառութիւն սոցին իբրև զբայ, ապա ցուցցուք զհամաձայնութիւն սոցա իբր անուն. յաւելեալ 'ի վերջոյ և զիւրաքանչիւր եղերաց ինչ ինչ։

Յօդուած · Ա ։

Համաձայնութիւն Ընդունելութեան իբր Բայի ։

782 Ընդունելութիւնք՝ 'ի բայից բղխեն, ուստի ըստ բայից համաձայնեալ առնուն զհոլովականս, մի՝ որպէս տէր բայի, և միւս՝ որպէս խնդիր, որոց վասն

Կանոնութիւն · Բ ։

783 Ընդունելութիւնք եղերեալք 'ի լոց և 'ի եալ, մինչ սակ բայ վարին, կոչին բայացեալ. և առնուն զտէր բայի (477, 485, 487, ևն) առնուն և զխնդիրս ըստ սեռի իւրեանց (499, 505 · 536 555 · 564, 570, 584, ևն)։

Ծանօթութիւն · Գ ։

784 Ընդունելութիւնք ՚ի լինելն բայածական անուան՝ ը̅ս ձևի մասին ներգործականքն եղերին ՚ի օղ, իչ՝ եալ. կրաւորականքն եղերին ՚ի ելի, եալ կամ եցեալ. չեզոքականքն եղերին ՚ի օղ, եալ, ելի · և իչն հազիւ գտանի չեզոք · զորոց զխնդրառութիւն աստէն բովանդակեմք ընդ հոլովք կանոնովք, եդեալ ՚ի վերջոյ օրինակաց և զթիւս տնաստմանց ըստ այէս այէս խնդրոցն ։

Ծանօթութիւն · Դ ։

785 Որինչ աւանդեցան ՚ի խնդրառութեան բայից, (494 · 495 · 496 , 510 · 511 · 521 · 522 · 523 · 524 · 558) զայն ամ̅ արժան է իմանալ և ՚ի յընթացս հոլից կանոնացս ։

Կանոն · ա̅ռ ։

786 Ներգործական ընդունելութիւնք առնուն զխնդիր սեռի ՚ի հոլովս սեռական (638) · գ̅ ,

*Ընկեցաք վիմով յարուցիչք մեռելոց · ‖ Ճոր · 343 ·

Ահա ներգործական ընդունելութիւն՝ յարուցիչք , առեալ է խնդիր սեռի զսեռական ընդունելութիւն՝ մեռելոց · իբր ասել՝ *յարուցանօղք զմեռեալս ։

Զսոյն է տեսանել և ՚ի յաջորդ օրինակսդ ։

*Ընդ յովակիմայ և աննայի ծնողաց սր̅յ ծնողին բանին բարձր աղաղակեք · ‖ Ճ̅ ծնողաց զն̅ ծնողին · շարակն · 10 ։

*Ճշմարտութեան նորոգող արժան է՝ ոչ սովորութեան ծառայել որպէս աղէտ · ‖ Ճ̅ սիրողացն զճշմարտութի · ընդհան · 123 ։

*Սան անճառաիմանալի միաւորութեան՝ բանին խոստովանի գոլ կինքն շօշափօղ · ‖ Ճ̅ շօշափող զբանն · ընդհան · 162 ։

*Ատրիկանն (ափշին) բազում հրահանգաց պատուեալ յուղարկեալ առ Սեբայ (Ամբառա) · ‖ յով̅ հ

Լ. Ն. կա

չոքնուղ: Ուր բայացեալքս տարածեալ յուղարկեալքն առեալ են խնդիր սեռի զսեռականս՝ բազում հետ հանգոյ · իբրու ասել՝ * զբազումն հրահանգս պատուէեալ յուղարկէ: Իսկ այս ընկի ՚ի սակաւս:

* Ո՛չ թիկանց դարձուցանելի · ո՛չ դիմաց ընդ երկիր մածուցանելի: ‖ Նարեկ · Է · 1: Ուր կրաւորականքս՝ դարձուցանելի՝ մածուցանելի՝ ներգործականս պէս եդեալ, առեալ են խնդիր սեռի զսեռականքս՝ թիկանց, դիմաց, որպէս թէ ասել՝ * Ո՛չ զդոյ դարձուցանել զթիկունս, և ո՛չ զդէմս մածուցանել ընդ երկիր: Այս արտաքոյ է հասարակ սովորութեան ընդունելոց · յորմէ և զգուշանալ խիստ արժան է:

787 Երբեմն ևս առնուն ՚ի հոլովն հայցական · Գ

* Տացուք սիրաբար սիրողին զիմաստութիւն · ‖ Ընդհ · 82: Ահա՛ հայցականս զիմաստութիւն՝ եդեալ է խնդիր սեռի ընդունելութեան՝ սիրողին: Այսպէս են և օրինակքս:

* Ջուր հեղձօղ զմեղս մարդկան · ‖ Շարական · 462:
* Աներկեղոյ վառոնաղոյց զծաղիկ հոգւոյս · ‖ Նարեկ · Իա · 2:
* Զօրդ Եմմանուէլի զքեզ տանողէ · ‖ Նարեկ · ԼԳ · 4:
* Ո որ չէ՛ նստեալ և կամ պատեալ · ‖ Նարեկ · ԻԵ · 2:

788 Եւ ամենայնք ներգործական ընդունելութիւնք՝ զխնդիր սեռի առնուն յայլ հոլովս (641) · Գ · * Մատուսցուք պատարագ օրհնութեան յամ ժամ Այ · Այս է՝ զպտուղ շրթանց խոստովանելոց յանուն նորա · ‖ Այս խոստովանելոց զանուն նր · Եբր · Ժգ · 15:

* Հայցեմք ՚ի ծնողի ծնողացդ յայսմ սեղանոյ · ‖ Այս ՚ի ձա շակողացդ զայս սեղանի · ՚ի յիշատակարանն Նարեկի:
* Յորովայնէ յորովայն էջքեղաշեաց Որդի · ‖ Շարակ · 468:
* Յաղթեաց երեք փորձութեանցն յաղթողին մարդկան · ‖ Ընդհանր · 85:

Կանոն · Ը:

789 Կրաւորական ընդունելութիւնք առնուն զխնդիր սեռի ՚ի հոլովն սկզբնական · որպէս՝ * Խոցեալն ՚ի տիգողէն՝ հանեալ մարմնովն քաղց-

րա

բացոյց զճաշակացն զդառնութի՟․ ‖Շարակն․ 408։ Իւր կրաւորական ընդունելութիւն խոցեալն՝ առեալ է սեռի խնդիր զներգործական ընդունելութիւն՝ ՚ի տեգողէն։ Ըստ այսմ են և սոքա։

*Զողողեալն ՚ի մէջ Քահանայէ՝ և ամ Քահանայակիցք․․․ ՚ի բաց ողողեսցեն․ ‖Ղևտական․ 61։

*Նա․․․ էր գրիչ յաջողակ օրինացն Մովսիսի տուեցելոյ յԱյ Իսրայելի․ ‖Ա․ Եզր․ Է․ 3։

*Որ խոստացար լինել ը̄ մեզ մինչ ՚ի կատարած անմանջրալեսոյ ՚ի քէն փարծողաց․ ‖Շար․ 660։ Իւր ընդունելութիւն փարծողացն՝ ունի զզօրութի կրաւորականի եցեալ․ ուստի առեալ է սեռի խնդիր զներգործականն՝ ՚ի քէն․ իբր ասել՝ *փարծեցելոցն ՚ի քէն։

790 Նաև ոմանք կրաւորականք (507) առնուն զսեռի խնդիրն յայլ հոլովս․ Գ․ *Կոչեցեալք պաշտպանողին՝ և քաւեցեալք հնարաւորին․ ‖ այ̄ն կոչեցեալք ՚ի պաշտպանողէն, և քաւեցեալք ՚ի հնարաւորէն․ Նարեկ․ Հ․ 3։

*Զհրով նիւթեալն՝ և զհողմով հոսեալն՝ և զծանանօք գամպանաց ծախեալն․․․ անպակաս յարուցանես․ ‖ այ̄ն զնիւթեցեալն ՚ի հրոյ․ և զհոսեցեալն ՚ի հողմոյ․ Նարեկ․ Գ․ 2․ (825)։

Կանոն․ Գ․

791 Ընդունելութիւնք ներգործականք և կրաւորականք՝ բաց ՚ի խնդրոյ սեռի առնուն նաև զխնդիր բնութե ՚ի պէս պէս հոլովս ըստ բայիցն՝ յորոց բղխին։

792 Ուղղական․ Գ․ *Նահապետական տոհմին շառաւիղք տեսանողք անուանակոչեալք․ ‖Նար․ ՀԳ․ 4։ Նման կրաւորական ընդունելութիւն անուանակոչեցեալն՝ առեալ է ուղղական բուն խնդիր զընդունելութիւն տեսանողք։ Նոյնպէս է տեսանել և ՚ի յօրինակսդ՝ որ զկնի։

*Զո՞ր․․․ արձակեցից ձեզ․ զյեսու բարաբբա՞․ եթէ զՅս̄ զանուանեալն Քս̄․ ‖Մատթ․ ԻԷ․ 17։

Նո

* Նոր լինել նորոգելոց 'ի Քրիստ · Ճառ · 324 · (526 · 546)

* Դ տիրապես Ա Ծ խոստովանողացն զնա՝ ոչ է սակի 'ի · · · կերակրութեան և յըմպելեաց ծախուածն ապականութե · Ընդդէմն · 265 · (526)

793 Գործիական · Գ , * Անցուցիչ ջերմութբ ջեռուցանողք · Նարեկ · ՃԱ · 3 : Այլ գործիական ջերմոյքն է բուն խնդիր ներգործական ընդունելութեան ջեռուցանողի : Ուստի այսմ են և օրինակքս :

* Մ երկնաւորացն Աստուծոյ ախտաւորուեց՝ Աստուածով փորձողիչ · Նարեկ · ԽԸ · 5 · 'ի խորագիրն : (531)

* Ո մնջոք դասադարման անձն իմ 'ի մահ՝ նորոգեա 'ի կենսաբեր · Շարական · 45 : (529 · 546)

* Տանելով զբնութ անապատներն · Շարական · 81 :

* Ո ծնեալն մարմնով 'ի մահ և յապականութի մերձեալն ծնանի հոգւոյն յորդեգրութեան լուսոյ · Ճառ · 444 :

794 Պատահական , և այս 'ի սակաւս · Գ , * Ինչ առ զեղօծ զպատուհասն զեւը և զեղջնան կատարեալն · Բ · Թագաւ · Ը · 21 : Այլ պատահական ընկերն է բուն խնդիր ընդունելութեան՝ ըղձողին :

* Ո ծածկեալն զպերճզմանան բուրեալ դասք հրեշտակաց · Շարակ · 388 :

795 Անջրնական · Գ , * Որ յանէից ստեղծօղ գոյից՝ արարչականց հօր բանի Ա Ծ · Շարակ · 785 : Ահա ներգործական ընդունելութիւս ստեղծօղն՝ առեալ է բուն խնդիր զանջրնականս՝ յանէից , և զներգականս գոյից՝ խնդիր սեռի : Այսպ են և որք :

* Շնորհեա խնդրողացս 'ի քէն զամենայնյաղթ զօրութիւն սբ խաչի քո · Շարական · 199 :

* Ելեալ 'ի չէիցն անդրաշէնքն յԱստուծէն · Նար · ԼԲ · 5 :

* Դու բարերար հաստիչ յոչէից · Նար · ԾԳ · 5 : (541)

* Տուն Ա Ծ զեկեղեցի կոչէ , և զժողովս յանմարմնոց գոյացեալ 'ի նա · Մեկն · Խորհրդ · 464 :

* Բաշխելով երկնաւորաց զպարգեւս քո փեսանողաց մարգարեից 'ի սկզբանէ · Ճառ · 588 : (517)

796 Նախադրէն տրական · Գ , * Արտաքին զանձն իմ 'ի կորուստ · Նարեկ · Է · 1 : Այլ տրական 'ի

կո

կրաւորան՝ է երկրորդական խնդիր ուղղականն։

Բառ այսմ են և սոքա ։

*Նրաբեր զնոյն լինել հանդերձեալ անարատ հար-սինն առ սէր փեսային․ Նորէկ․ ղը․ 2։ (545)

*Նոր գործի․․․ շարժուեցիչ հոգւոյն Ս․ Յ առ մեզ․ Նորէկ․ ղը․ 8։ (546)

*Նշելու մեղաւորաց որոտացելոց ՚ի բանսարկուէն ՚ի խաւարային նոր կամս․ Շնորհ․ 660։

797 Վերջահոլով տրական․ Գ․ *Պարզերես կացցէք անուաշէի աւանդողին ձեզ զաւազանի պատուիրանին․ Ընդհ․ 46։ Որ ներգործական ընդունելութիւս տաղնդողին՝ առեալ է բուն խնդիր ըզ վերջահոլով տրականն՝ ցեղ։ Օ սոյն է տեսանել և ՚ի ներքոյ յօրինակս։

*Տուք օրհնութիւն տուողին մեզ զմայրն լուսոյ․ Շնորհ․ 7։ (512)

*Վերադոյն շնորհաց բաշխող երկնաւորաց և երկրայնոց․ Շնորհ․ 787։ (547)

*Ն՚ և ՚ի վՀ լերինդ բարձու՝ աւետաբանիչք սիոնի․ բարձրացո զօրութ զբարբառ քո՝ աւետաբանիչք երուսաղեմի․ Եսայ․ խ․ 9։

*Սէք շատանդեալ մեզ ՚ի նոյն Գրիգորէ՝ անփոփոխելի պահեցուք․ Ընդհան․ 128։

798 Ներգոյական․ Գ․ *Նման է արքայութ երկնից՝ գանձի թաքուցելոյ յագարակի․ Մատթ․ ժգ․ 44։ Նա ներգոյականս յագարակին՝ է բուն խնդիր կրաւորական ընդունելութես՝ թաքուցելոյ։

Բառ այսմ են և սոքա։

*Խոստովան էր ․․․ զանդրբելոց խնդութեանն՝ իբր ընկալեալ տեսողին ՚ի յարձան մնացնեալս մեմի․ Նորէկ․ խէ․ 1։ (550)

*Հանէ զբանին սերմանեալ ՚ի սիրտս նոց․ Մարկ․ Դ․ 15։

*Ո՜չ իւնչ վերջացաւ լինել ձեռներեց․․․ դատարկացեալ գքեզ ՚ի խաչին․ Նորէկ․ Ճը․ 2։ (552)

*Մինչ յաղթեալ ՚ի մարմնի․ Շնորհ․ 620։ (516)

*Յերկինս օրհնաբանեալ հօրն երկնաւորի․ Շնոր․ 610։

Գո

*Պարծեալք 'ի մեծայս · · · տր որ Յուսիկ · ‖ Շար · 482 :
*Սահմանութիւն 'ի յետութէ · ‖ Շարակ · 143 :

799 Նախադասու · Է · Գ , *Աղօթեսցէք 'ի վր քո քա֊ րաձգողացն · ‖ Շարակ · 107 : Որ ընդունելութիւն քարաձգողացն՝ առեալ է յարմատական խնդիր նախադասութեն՝ 'ի վերայ քո · իբրու ասել՝ *Աղօթեսցէք վասն ձգողացն առ քեզ զքարինս (729) : Այսպէս է իմանալ և 'ի հետևեալսդ :

*Այն է բարի և ընդունելի առաջի այ · ‖ Ա · Տիմ · Ե · Դ :
*Ընդ իմ մոլորելոյս · · · զաղերսանս · · · յերկինս առաքեմ · ‖ Նարէկ · ԻԳ · 3 : (518)

Կանոն · Է :

800 Ձերբական ընդունելութիւնք՝ առնուն միայն զխնդիր բնութե յայլ և այլ հոլովս ըստ բայիցն · յորոց բղխին :

801 Ուղղականն 'ի յոյժ սակաւս · Գ , *Աղաչեմ զքեզ առաքելոցն՝ փող յարութե մեր եղելոց · ‖ Շարակ · 789 : Այս ընդունելութիւն եղելոցն՝ առեալ է բուն խնդիր ուղղականաւ՝ փող :

802 Գործիականն · Գ , *Խայտացելոյն յորովայնի հոգւով 'ի ծննդեանն Քի (տօնելով զյիշատակ) գովեսցուք զՏր · ‖ Շարակ · 337 : Այս չեզոք ընդունելութիւն խայտացելոյն՝ առեալ է երեք խնդիր բնութեան · զի գործիականս հոգւով՝ բուն խնդիր · ներգործականս յորովայնի՝ երկրորդականն · և ներգործականս 'ի ծննդեանն՝ ժամանակական պարագական խնդիր : Այսպէս պարտ է նկատել և յօրինակսդ 'ի ներքոյ :
*Մեռաւ անպարտականն մահու · · · մն կենդանացուցանելոյ զմեղօք մեռեալ բնութիւնս · ‖ Եզն · 10 · (567)
*Ոչ բանիւ խրատուցի · · · և ոչ զօրինակօք կերպաւորեալ · ‖ Նարէկ · Է · 1 : (568)
*Յանկուցէ սերովբէիցն անմարմնականն փառուք · ‖ Շարակ · 234 : (569)

803 Հայցականն՝ և այն 'ի սակաւս (573) · Գ , *Ոչ զհերձուածողական խաւար ինչ ծածկելով կեր

պու

պարանեմք զբանս լուսով ուղղափառութե․ որպ և կարծիմք յոմանց զնոյն ախտացելոց․ Ընդհ․ 114։

Որ հայցականս չնոյն՝ է յարմարական խնդիր ընդունելութեն՝ ախտացելոց․ Տր նովիմք ախտացելոց։

804 Սկզբնական․ Գ, *Օրհնութի ՚ի բարձունս երգեն ՚ի հօրէ հոգւոյն սրբոյ․ Շարակ․ 431։ Ըստ սկզբնականս ՚ի հօրէ՝ է բուն խնդիր ընդունելութեն՝ ճշդին։ Զայն է տեսանել և ՚ի հետևեալսդ։

*Զպատիժ դատաստանին դուք կրէք զխոտորելոցն ձերով պատճառաւ յուղիղ ճանապարհէ ածայնն օրինացն․ Ընդհանր․ 54։ (578․569)

*Իբրև զհիւանդս զձեզ բժշկեմք․ զի ընկալցուք եղբարս զթերացելոց յեղբայրութե․ ըստ այնմ և դուք՝ զոր միանգամ գտանիցէք Թերութի բարեաց՝ ․․․ ոչ ՚ի տարբանութէ ոմանց աներկիւղից ՚ի մեղս առ ձեզ հատուածելոց, ․․․ բժշկեցէք․ Ընդհանր․ 112։

*Օգնական է Տր՝ զղջացելոցն ՚ի չարեաց․ Կղեմ․ կաթող․ 200․ (579)

*Որժամ էջն առ հոգիսն որ ՚ի դժոխս, և էր անջատեալ ՚ի մեռեալ մարմնոյն․ Ընդհան․ 122․ (578)

*Ի սահմանէ բանին փոխելոյ․ Կորնթ․ Դ․ 1։

805 Յանխնդրի տրական․ Գ․ *Օգնեա փրկիչ Տր պարծելոցս ՚ի խաչ քո՝ յուսացելոցս ՚ի քեզ․ Շար․ 803։ Ըստ ընդունելութե՝ իբրև պարծելոցս, յուսացելոցս՝ առեալ են բուն խնդիր զանխնդրի տրականքս՝ ՚ի խաչ, ՚ի քեզ։ Ըստ այսմ են և այլքս։

*Տեսի զայր յանձն իւր պատճառեալ՝ Թէ իմաստուն իցէ, բայց յոյս գոյր յանզգամին՝ քան ՚ի նմա․ Առակ․ իզ․ 12․ (581)

*Զկնի մահուան զշնորհս հոգւոյն բաշխեն (սրբքն) հաւատովք ՚ի նոն մերձեցելոցն․ Կղէ․ կաթ․ 219։

*Ո՛չ առ երեսս բանիւք տաջէլն․ Կորնթ․ Դ․ 1։

*Օրհնեմք զեկեալդ ՚ի փրկութե Տի․ Շար․ 280։

806 Երջանհոլով տրական․ Գ, Զօրք լեր եք հարկատրութե սպասաւորելք ածն․ Շարակ․ 221։ Ըստ վեր

վերջահոլովս դերանուն՝ է բուն խնդիր ընդունելութեան սպասաւորէն։ Այսպէս են և օրինակքս։

*Հաստատողին փոխեցող, գերեալ որսողին. ‖Նարեկ. Է. 1։
*Նմանօղք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի. ‖Ա. Կոր. ԺԱ. 1։
*Չէք ինչ՝ որ այնպէս հեշտալի է Այ, որպէս զփոխ առնուլն ՚ի մէնջ. ‖Գէն. Կոչառաղ. 115։

807 Ներգործական. Գ, *Բնակելոյն ՚ի սրբութեան մատուցանեմք զաղօթս մեր. ‖Շարական. 159։ Ուր ներգործականս ՚ի սրբութեան՝ է բուն խնդիր բայածական ընդունելութեան բնակելոյն։ Այսպիսի են և ՚ի ներքոյ օրինակքդ.

*Նուագաստ անձնաւորելոյ բնակողին ՚ի քեզ. ‖Շար. 53։
*Այսօր զիմանալի լուսոյն ծագողն ՚ի խաւարի նստելոցս . . . մեծապատուեսցուք. ‖Շարական. 240։
*Ոչ ՚ի խորս երկրի գօտելի. ‖Նարեկ. Է. 1։

808 Նախադրութ. Գ, *Խառնեալն ընդ ջուր՝ ոչ է և ոչ ևս ասի անապական. ‖Ընդհանր. 125։ Ահա չէզոք ընդունելութիւս խառնելոյն՝ առեալ է բուն խնդիր նախադրութեան ընդ ջուր։ Ըստ այսմ են և օրինակքս։

*Ոչ բերանով ընդ հող հպատելի. ‖Նարեկ. Է. 1։
*Յերկրի տագնապ հեթանոսաց . . . ՚ի կարծեաց եկելոց ՚ի վերայ տիեզերաց. ‖Ղուկ. ԻԱ. 26։ (591)
*Բարձրեալ վերայ վերին աթոռոյն. ‖Շար. 158։ (518)
Տե՛ս զի ընդունելութիւնք առնուն և զմակբայս (395)։

Յօդուած. Ը.

Համաձայնութիւն Ընդունելութեան որպէս Անուան։

809 Ընդունելութիւնք ՚ի վարելն իբր անուն՝ միշտ ածական են, ներգործութեան կամ զօրութեան ունելով զգոյականս իւրեանց, թէ անուն իցեն գոյականքն (813), և թէ դերանուն (814)։ Ուստի և ըստ անուանց համաձայնեալ Ը հոլովական մասունս՝ լինին տէր բայի, խնդիր, ածական, յայտնիչ, յայտնեալ, ևն։

Ծանօթութի. Ե:

810 Ընդունելութիւնք՝ յայս ամ համաձայնութե պահեն զկանոնս իւրաքանչիւրոյն. որ յաւարտ օրինակացս եղեալ թիւքն նշանակեն զհամեմատութիւնս: Իսկ զհոլովակերտից զպէսպէս գործին յայսմիկ ևս ունիս տեսանել (703):

811 Մեր բայի. Գ, * Լինելոցն այն է՝ ... բարեգործացն բարի հատուցումն լինել. Եփրեմ. 13: Հա՛մ ընդունելութիւն լինելոյն՝ իբր ածական անուն վարեալ՝ եղեալ է տէր բայիս՝ է: տե՛ս և ՚ի (477).

812 Ոմանք բայի. Գ, * Արդարակս գտանեցուք ... յիշեցուցանել ձեզ գրով զպատուիրեալսն Մ̃Ս ՚ի հին և ՚ի նոր կտակարանս. Եփրեմ. 7: Աւր ընդունելութիւն զպատուիրեալսն՝ իբր խնդրողքն եղեալ է խնդրի սեռի բայիս՝ յիշեցուցանել: (548. 592)
* Ա՛պ թէ այսօր իւրովք տեսանէ (հետեւեալն) զհետ դեղջեւոյն՝ և շղթեւելոյն՝ և զոր ինչն. Եփրեմ. 12:

813 Եռակման ՚ի վ̃ր անուան. Գ, * Ու՛մ անձն օրհնեալ՝ պարզամիտ է, այր բարկացօղ՝ տգեղ է կերպարանօք. Առակ. Ժա. 25: Աւր ընդունելութիւնքս՝ օրհնեալ, բարկացօղ, եղեալ են ածական ՚ի վ̃ր գոյականացն՝ անձն, այր: Որպէս է իմանալ և զհետեւեալ օրինակսդ:

* Ս խոնչս կոչեցեալ յարեւու, և դրաքն փակեցեալք եմուտ առ աշակերտսն. [illegible]. 423: (685)
* Յահապէն ալնայս ժեղեւեցելոց և փախուցելոց և հալածականաց նեղելոց և գերելոց ՚ի վ̃ր պաքանաշեանս գործէ՝ աստանէ զոքացեալ դառնալուց սիրոխմ. [illegible]:
* Նարէ (փրկիչն զ) թագաւոր մի ՚ի յերկրաւորացն ընտրեալոց՝ բժշկել զթագաւորն Նեգար. [illegible].
* Բարեխօսութ̃ Պետրոսի և Պօղոսի քո մ̃ք առաքեալցն ... տնօրինեալս որոշեալ. [illegible]. 110: (696)
* Զեր խակ բժշկութի ... վերագս տնօրինեալ. [illegible]. Է:
* Ս յագիրսի պղծացուցեալ բանիւք համոզեալ. [illegible]:
* Ա՛յս իմն՝ առ ձայնիքն աշակերտութի գործոցուցելոց

և

Կ. Ի.

և տարտամելեացն բանից · ‖նաւբէկ · Է · 3 · (688)

*Աերեալ և արբեալ զոր մի՛ թողուցուք յեկեղեցին · ‖ընդհան · 58 · (711 · 701)

*Նսեմացեալ դարձք երբայեցւոցն՝ շինմանն Երուս 'ի գիշերին ջահիւք և սուսերօք եկեալ ըմբռնել զանդիմբանելիդ · ‖ոսկբ · 292 · (702)

814 Ծածկան 'ի վեր դերանուանն · Գ · *Մեք մերձացեալքս յամենատասն քո շնորհէ՝ Ձոխանամք (Հրեշտակաց) · ‖ոսկբ · 416 · Նա՛ ընդունելութիւ մերձեցելոց՝ եղեալ է ածական դերանուանն մեր ·

Ըստ այսմ են և այլքս ·

*Պտուղ ընծեռեալ ինձ ճեղքեցելոյս՝ տխրեցելոյս և մոհացեցելոյս · ‖նաւբէկ · Ժ · 2 ·

*Պու հաստատեցեալք՝ Նմ յորժամ տեսանես ըզխաչն, ծանիր և հաւատա զ'ի Նն տեսանել բազմեալ 'ի վեր նորա · ‖ընդհան · 262 ·

*Նպա թէ որ ոչ լուիցէ · · · մեք անդադար եմք յարենք նորա առաջի 'Բն մկայութքն Նմ · · · և ձեր ղողողաց ամենեցուն · ‖ընդհանր · 8 ·

*Նոցա ոչինչ օգնեաց լուր բանին՝ չխառնելոյն 'ի հնազանդութիւն հաւատոց · ‖եբրայ · Դ · 2 ·

815 Ծածկան 'ի վեր ընդունելութեան · Գ · *Նախաստեղծին այցօղ փրկիչ · ‖ոսկփան · 699 · Որ ընդունելութիւ այցօղն՝ է ածական ընդունելութեան՝ փրկիչ ·

Նոյնպէս են և օրինակքս ·

*Աստուածային հաստատեցելոց նմանեցելոց յանուն քո՝ զկեանս · ‖ոսկփան · 747 ·

*Նկարեաց զերանելի առաքեալսն · ‖ոսկ · 119 ·

826 Որպէս դոյական անուան զածական անուն և զդերանուն · Գ · *Օ թողուլ խնդրելով 'ի քէն անօրէն սպանողաց իւրոց · ‖ոսկփ · 106 · Նա՛ ածական անուանս առօրէն՝ և ունական դերանուանս իւրոց՝ եղեալ են ածական ընդունելութեան սպանողաց · որ և զօրութք ունի զիւր դոյականն՝ հիեւց ·

Ըստ այսմ են և այլքս ·

*Օ չարեօրեաց զմեռեալսն · · · կոչեցեր · ‖ոսկփ · 261 ·

Պայ

*Պայծառացան այսօր որք եկեղեցիք լուսաւորչօք հեթանոսաց․ Որ կենդանի լուսաւորչօքն՝ Պաւղեամբք․ Կցուրդն․ 658։

*Լոյս եղեւ պատճառ կորստեան ա͞մ հերձուածողացն ՚ի սկզբանէ մինչեւ ցայժմ․ Որ ա͞մ հերձուածող անձանց․ ընդհան․ 235։

*Մեք ցուցանեմք․․․ ՚ի յերկոտասան առաքելոցն եւ յեօթանասնիցն՝ եւ յաջորդացն նորոց կտակարանաց հաստատողացն․ Որ յա͞մ զնոր կտակարան հաստատող հարանց․ ընդհան․ 249։

*Յորմէ գոյացան եղեալքս ա͞մ․ Որ ա͞մ եղեալ բնութիւնքս․ նարեկ․ ճա։ (694)

*Ողջոյն տալիր սիրելեաց մերոց խոստովանիչ խօսք յանուանէ․ Որ ի լրութիւնս մեր սիրելի անձանց․ Գ․ յով․ ա 15

*Խնդրեսցես ՚ի մէնջ Ա͞ծ քումմէ վ͞ս մնացելոցս տերանցն․ Որ վ͞ս այս մնացեալ ծնողացն․ երգոց․ ղէ 4։

*Համբերձեր զենքն (իշխանն Ա͞յ) խորհրդոց փառելովք մարտ ընդ բռնաւորին բռնակալի դնել․ Որ խորայլն փառեալ զօրօք․ յովհ․ կոփ։

817 Յայտնեաց եւ յայտնեալ․ ց, *Մեռոն սուրբ անուանեմք, Որ մեռուցիչ բոլոր ախտից․ Ձեռնարկ կոչման․ 208։ Այս ընդունելութիւն ձեռագիրն՝ է յայտներ անուանս ձեռին։

*Օ երկոսին դնեմք առաջի լուսոյդ․․․ (Որ) դպրութեանցն օգնութիւն գլուխ սափորդ բանից ճառագայթ, եւ մխիթարել կամ նեխելոյ՝ ջաղէն օրհնակի յանդ ի մանկական մորմոքումն․ ընդհան․ 15։

*Լուսաւորութ ծնողի՝ հայր Գրիգորիոս․ Կցուրդն․ 235։ Այս ընդունելութիւն ծնողին՝ է յայտնեալ, եւ անուանս հօր Գրիգորիոսի՝ է յայտնեաց նորին։ Լայպես են եւ հետեւեալքս։

*Մինչեւ ա͞մ բնակիչքն սախացուոց լսել զբանն ա͞ն (Որ) հրեից եւ հեթանոսաց․ Կործոյ․ Ժթ․ 10։

*Սերովբէից անապականն եւ Քերովբէին հայրենն՝ ըզգաստն եւ խոնարհութեան, Որ մարմնոյն Ա͞յ եւ բանիւն, որ եղանէ ՚ի բերանոյ նորա․ ընդհան․ 124։

Լը

*Անմաքուրն և պիղծն՝ թէ անապակ բաժակաւ առնէ՝ և եթէ ջուր արկանելով. բարկացուցանէ զընդունող պատարագին՝ (ա) զ ԱԾ · Ընդհ · 95 ։
*Անուամ կրկնի ծունր երկրպագութեամբ ամենեցուն (ա) երկնաւորաց, և երկրաւորաց, և սանդարամետականաց · Նարեկ · Բ · 1 ։

818 Յատկացուցիչ · Գ, *ԱԾ այլին պատուիրանքն ըստ զօրութեան ընդունողացն եղան յիւրաքանչիւր ժամանակի · Ընդհան · 20 ։ Որ ընդունելութիւն ընդունողացն՝ է յատկացուցիչ անուանս՝ զօր · է ։ Որ այսմ են և այլքն ։
*Ընդ աղքատացն անիծից՝ և Այ անիծեցին մնանեն ՚ի տունս ղեկորաց · Ընդհան · 67 ։
*Յականջս Օծելոյ խօսիմք · Ձեռն · կաթող · 772 ։
*Զքեզ սիրողաց՝ որդի Այ պատուելոյ զյիշատակս արժանի արա · Քս որդի Այ արժանի արա պատուելոյ զյիշատակս սիրողացն զքեզ · Տաղ · 723 ։

819 Ընդիր անուանց · Գ, *Անեզանելին ԱԾ և եղելոցս էակ · Շարակ · 448 ։ Ահա ընդունելութիւն եղելոցս՝ է խնդիր սեռի անուանս՝ կամ · որպէս թէ ասել՝ *էացուցիչ եղելոցս ։ Այսպէս է և ասանել և ՚ի ներքոյ ։
*Աւատոյօղն միշտ ննջաւորս · Նար · Իա · 2 · (659)
*Սբ խաչն օգնական հաստատեցելոց · Շարակն · 553 ։
*Սա եղև գլուխ առաքելոց սբց · և կոչեցաւ եղբայր տեառն · Շարակն · 99 ։ (664)
*Որմանս սատակեաւ ՚ի ցեմոյ նեղչողացն · Նարեկ · Է · 2 ։

Ծանօթութիւն · Գ ։

820 Ընդունելութիւնք զգոյականս իւրեանց ունին յինքեանս իբր տէր բոյլի · Գ, *Որպէս գերան իցէ ՚ի մեզ մերում տեսարանի կուրացուցիչ, նախ ՚ի բաց մաքրել զայն · Ընդհան · 15 ։ Որ գոյականս գերան՝ համարի իբր տէր գործողութեան իւր ածականն ընդունելութեան՝ կուրացուցիչ · քանզի՝ գերանն է կուրացուցիչ տեսարանին ։

821 Որպէս նշանակեցաք վերոյեղեալ գոյականք ընդունելութեան (786, 813 եւն), նաեւ բայածականն անուանքն (638, 705 եւն):

Ծանօթութիւն. Է:

822 Պարքէն՝ ընդունելութիւն համաձայնեալ ընդ ընդունելութեան՝ եղեւ ածական (815), խնդիր (786, 789, 790, 792, 806), յայտնիչ յայտնեալ (817): Ընդ դերանուան համաձայնեալ՝ եղեւ ածական ցուցականաց (814), եւ առ 'ի վերին լեր ածական զունականս եւ զցուցականս (816), առնու խնդիր զէականս եւ զյարաբերականն (787, 794) եւն, եւ զցուցականս (803), եւ զունականս (755), եղեւ եւ յարաբերեալ (757), նաեւ դիմորոշականք յարին յընդունելութիւն (774, 775, 776, եւն): Ընդ բայի համաձայնեալ՝ եղեւ տէր բայի (811), եւ խնդիր բայի (812): Իսկ ընդ անուան համաձայնեալ փարէ զչորեսին պաշտօնս անուան (607, 609), միայն թէ ոչ գոյականացեալ: Այլ զի եղեւ խնդիր նախադրութեան (376, եւն), խնդիր միջարկութեան (465):

Յօդուած. Գ.

Զ իւրաքանչիւր եղերաց Ընդունելութեան.

823 Ցուցաք 'ի (348), եթէ որ, ինչ ոչ լինի կրաւորական. իսկ ոչն՝ թէ եւ ուրեք եղեալ լիցի կրաւորականապէս, անդ եւս ունի զզօրութիւն եղերս՝ եցեալ (789):

824 Յեղերական է՝ հաղիւ գտանի. որպ. տեսեր եւ ասա 'ի բոլոր գլուխս (806), որ եւ երբեմն ըստ պահանջելոյ բանին 'ի տեղի բուն խնդիր ներգոյականի՝ առնու զսեռականն. Գ, * Ուրախ եղիցին բնակիչք վիմին. Յն. 'ի վիմին. Եսայ. Խբ. 11: * Աղաղակեսցեն ամ բնակիչք աշխարհի. Յն. յաշխարհի. առակ. Իը. 6:

825 Ի եղերեալ ընդունելութիւն ըստ ձեւի մասին է կրաւորական կամ չէզոք. եւ սովորաբար առնու զխնդիր 'ի միջնորդով տրականն. որպէս՝

Սէ

*Սիրելի սրբոց · Նարեկ · ԻԵ · 2 ։

*Ամբարտաւանութի՛ն ատելի է ԱՅ և մարդկան · Սիրաք · Ժ · 7 · ջեռոտկ ։ (643)

*Սոսկալին սերովբէից · Շարական · 306 ։

*Անբովանդակելին արարածոց · Ընդհանուր · 117 ։

*Անճառելին երկնի և երկրի · Շարական · 35 ։

826 Լ՛է թէ ուրեք ուրեք ներգործական վարեալ լիցեն, յայնժամ ունին զզօրու(թիւ)ն յանգելոցն ՚ի օղ · Գ ,

*Ո՛չ եթէ որ լսողք օրինացն են, արդարացեալ են առաջի ԱՅ · այլ առնողք օրինացն արդարասցին · Թղ̅ լսողք · առնողք · Հռոմ · Բ · 13 ։

*Ասայցի ԱՅ ընդունելի լինես · Թղ̅ ընդունողք · տող · Իմ̅ 12

*Ո՛չ միայն որ զայն առնեն, այլև որ կամակից լինին գործելեացն · Թղ̅ գործողացն · Հռոմ · Ա̅ 32 ։

*Ամ՝ որ մտանէր · · · և ՚ի գործ կրելոց խորանին վկայութե(ան), եղեն անցեալք ՚ի հանդիսի · Թղ̅ կրողաց զխորանն վկայութե(ան) · Թուոց · Դ · 47 ։

827 Եւ՝ մերթ ևս գոյական վարի · Գ , *Լաւ է լսել՝ զսպառնալիս իմաստնոց, քան լսել մարդոյ զերգս անմտաց · Ժողով · Է · 6 · ջեռոտկ · Համընդունելութիւն շաղկապութեան՝ գոյականապէս եղեալ է փոխանակ բառին՝ ընդդիմութեան ։

*Սպառնալիք դատաստանին ԱՅ աններելիք (են) ՚ի վր̅ պղերգացն հոլովեացն · Ընդհան · 6 ։

ցան սպառնալեօք ՚ի վր̅ նշանին · Գոր · Գ · 10 ։

828 Ոճ՝ բազմիցս վարելն անշուք առնէ զբանն · Վ̅յ մինչ հարկ լիցի զբայ իմն յանգել ՚ի բայ, դնի ընդ բայիցս՝ ունիլ, հանդերձեալ · Գ , *Սիմոն՝ ունիմ ինչ ասել քեզ · Թղ̅ ասելոց եմ · Ղուկ · Է · 40 ։

*Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ պատմել նմա · Թղ̅ պատմելոց է · Գործ · ԻԳ · 17 ։

*Ո՛չ եթէ զազգէն իմմէ ունէի ինչ չարախօսել · Թղ̅ չարախօսելոց էի · Գործ · ԻԸ · 19 ։

*Հանդերձեալ էր անեղծ օրինացն լոյս՝ կենաց տե̅ր պարգևել · Թղ̅ պարգևելոց էր · Իմաստ · ԺԸ · 4 ։

Այս ոճ՝ վայելուչ և չքնաղ կազմէ զբանն ։

Պարապումն.

829 Աստ 'ի վճար համաձայնութեանց պատշաճ համարիմ հասարակաբար ծանուցանել. Նախ՝ զի 'ի նախակարգեալ վեց ուսանելեացն (472)՝ չորեքին հոլովականքն ևս լինին տէր բայի, խնդիր և խնդրառու, յայտնիչ և յայտնեալ, ածական և գոյական, և յարակացուցիչ. բայց դերանունն և ընդունելութիւն ոչ լինին յարակացեալ. և ոչ առնուն զխնդիր՝ դերանունն միայն.

830 Երկրորդ՝ զի եւ բաղադրեալքն 'ի սոցանէ՝ զի տէր բային՝ խնդիր՝ խնդրառուն՝ յայտնիչն՝ եւ այլն, երբեմն ունին և ինքեանց զածականս, զյարակացուցիչս, զխնդիր. եւ այլն. և նոքօք իբր մի բառ վճարեն զպաշտօնս իւրեանց. զորս մի բաղադրեալք տեղիս լինել ունիս ուսանել.

831 Երրորդ՝ զի անհոլովքս՝ նախդիր մակբայ՝ եւ այլն, և դիմաւոր բայն, և մերթ կատարեալ բանն՝ որպէս մի անուն լինին տէր բայի, խնդիր, յայտնիչ, եւ այլն. Գ, * Եղիցի ձեր այոն այո, և ոչն ոչ. Յակոբ. Ե 12. Իսկ մակբայքս այոն և ոչն՝ են տէր բայի. և միւսըն՝ այո, ոչ, ուղղական խնդիր.

* Օրէն առել՝ առնս Ծուէն իմանալ կայ է անուանի զի է. Մեկն. հովհան. 283.

* Մի՛ պարծիր առ վաղիւն. քանզի ոչ գիտես զինչ ծնանիցի քեզ վաղիւն. Առակ. ԻԷ. 1. Իսկ մակբայքս վաղիւն է տէր բայիս՝ ծնանիցի. և առ վաղիւն է խնդիր բնութ բայիս՝ մի՛ պարծիր.

* Ո՛րչափ աւելի 'ի քում գովութեն զարմեսցին. քանզի զոր առնեմ՝ նա ոչ գիտէ. Ա. Կորնթ. ԺԳ. 16. Իսկ մակբայս զամենայն՝ է սեռի խնդիր բայիս՝ առնցէ.

* Տեսին 'ի չարեն առաց զաւելին քան զայն և զայն. Մեկն. հովհան. 286. Ըստ նախդիրս զաւելին տան է իբր խնդիր սեռի բայիս՝ առաց. և մակբայքս զայն և զայն՝ եղեալ են իբր խնդիր նախադրութեամբ զաւելին տան.

*Եթէ ասիցէ (ոք), նախքան զծնանիլն զեւմըդ-էր, դու զքոյն մի՛ թողցես զէրն. Մեկն. կաթ. 624։

Ուր էական բայս զէրն՝ եղեալ է հայցական խնդիր սեռի բայիս՝ թողցես։

*Ի հարաշարժ ՚ի յաղբերէն յառաջ բղխեալ անհատաբար ՚ի յորդւոյ՝ ոխրակէս մը Հօրն. Աշտրակն. 435։ Ահա մակբայս անհատաբարն՝ առեալ է խնդիր զսկզբնականս՝ ՚ի յորդւոյ։

*Մեր նախատինքս եւ ոչ մի ինչ մխիթարութիւն ոչ ունի, այլ զեղկութիւն եւ ցնոյն. Մեկն. կաթող. 153։

*Ոպ̄ Պետրոսին ասաց (Ք̄ս)՝ դու ես վէմ, ասէ եւ նա յայնմանէ ուսեալ (հաւատացելոցս) ասաց՝ իբրեւ զվէմս կենդանիս շինիք. Մեկն. կաթող. 306։

Ուր կատարեալ բանքս՝ դու ես վէմ, եւ իբրեւ զվէմս կենդանիս շինիքն՝ ոպ̄ մի բառ եղեալ են խնդիր բայիցս՝ ասաց։ տես եւ ՚ի (526, 613)։

*Ահա արքայութիւն ա̄յ ՚ի ներքս ՚ի ձեզ է. Ղուկ. ԺԷ. 21։

*Զընտանութիւն ա̄յ՝ Ք̄ի ՚ի վեր ելաք. Մեկն. կաթ. 465։

Ուր մակբայքս ՚ի ներքս, ՚ի վեր՝ են յարանեալ. որոց եւ յարակից են բառքս՝ ՚ի ձեզ, զընտանութին։ Այսպիսիք գտանին ՚ի մէջ մեկնութեանց, ոպ̄ եւ աստ ՚ի խրատս եւ ՚ի բացատրութիւն օրինակացն։

832 Չորրորդ՝ ՚ի բանս երեւելի հեղինակաց ըստ ընտիր ձեռագրացն տեսանին ինչ է՝ խոտորմունք հոլովմանց, խոնարհմանց, եւն. (ոպ̄ ՚ի (754, 695, եւն) զորոց զամենայն ՚ի յընդարձակութէ լեզուիս աստ համառօտել յանհնարինն է։ Ուստի զայնպիսիսն պա́րտ է առանց եպերանաց պահել ՚ի նոյնութեան, որով հանդիսասցի պատիւ հաւատարմութեան. բայց նորավարժից հա́րկ է վարել զընդհանրական կանոնսն, որք աւանդեցան մինչեւ ցաստ։

Այսպէս՝ այսքանս հերիք համարեալ վասն համաձայնութեան, խօսեսցուք եւ զշարադասութենէ բանին։

Շա

ԳԼՈՒԽ · ԺԲ ·

Բաժանումն Շարամանութ. բանի ։

Շարամանութիւն բանի բաժանի ՚ի սակաւաբառ և ՚ի բազմաբառ ։

834 Սակաւաբառ բանն է, որ լինի յերից բառից․ որպէս՝ *Ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ · ‖Յովհ · Ը · 32 ։ *՚Ի սիրտն հայի ԱԾ · ‖Մեկն · Կողոսաց · 286 ։ *Ես եմ դուռն · ‖Յովհ · Ժ · 9 ։ Ահա՛ յայսոսիկ բանս են երեք բառք՝ տէր բայի, բայ, խնդիր ։ Եւ ուրեք յերկուց բառից, զօրութ. ունելով զմինն ՚ի յերիցս · գ̄, *Եղերուք գթածք · ‖Ղուկ · Զ · 36 · *Սիրտս նանրախորհուրդ · ‖Նարեկ · ԺԳ · 2 ։ *Կորեայց զառողջութիւն · ‖Նարեկ · ԻԸ · 3 ։ Ուր զօրութ. ունի առաջինն զտէր բայիս՝ դու, երկրորդն՝ զբայս է, երրորդն՝ զխնդիր սեռին՝ զառողջն ։

835 Բազմաբառ բանն է, որ ունի զածականն՝ զյատկացուցիչ՝ զյարանիչ և զպէսպէս խնդիրս, եւն․ զորոց զբազում օրինակսն տեսեր մինչև ցայս․ և տեսցես ՚ի հետևեալսդ ։

836 Դարձեալ՝ ըստ որակութ. բայից բաժանի կատարեալ բանն՝ ՚ի սահմանական և ՚ի հրամայական, իսկ անկատարն՝ ՚ի ստորադասական և յաներևոյթ․ որք և պարունակեն զպէսպէս եղանակս բանից ։ Իբր զի՞ կամ ըստ որակութ. մակբայից կոչին հարցական, ստորասական, բացասական, եւն ։ Կամ ըստ տեսակի շաղկապացն կոչին որոշական, պատճառական, թէական, եւն ։ Կամ ըստ տեսակի միջարկութեցն՝ աւաղական, ըղձական, եւն ։ Եւ կամ ըստ առաջի առնելոյ իմաստիցն՝ կոչին հայցուածք, յորդորանք, կշտամբանք, անէծք, օրհնութիւն, ողբ, դիմառնութիւն, բարառնութիւն, շնորհակալութիւն, եւն ։

837 Դարձեալ՝ բաժանի բանն յընդարձակ և ՚ի յոտանաւոր ։

838 Ուղղարձակ բանն է համարձակ շարամանութի՟ բանի՝ անուանց և բառից անխտիր ձգեալ ը՟ բերելոյ իմաստիցն, ուր և հաստատիցի․ այլ են ամ՟ նախակարգեալ օրինակք, ևս 'ի (854 · 855 · ևն)։

839 Ոտանաւորն է շարամանութի՟ բանի որոշ թուով իբր կանոնօք կարակնաչափ բաժանեալ 'ի տողս ը՟ բառից և վանկից, որ կոչին ոտք․ որպէս՝

Նորոգ ասէ՝ երկնաւոր սարդ,
զիմաստութիւն՝ ո՞գ եցիր քեզ զարդ․
Քանզի յիմարն՝ է հոսեալ յարդ,
իսկ իմաստունն՝ որպէս ըղվարդ․

Ոտքն 'ի տասն՝ ն․

Առողջութիւնն՝ է քեզ բարի,
մանուկ դու լե՛ր՝ զ՞գաստ և արի․
որպէս զկամքըդ կալ բարւոք,
ա՛ռ բանս խրատուն՝ վարդապետի․

Նորոգեալ հորդորեալ․

Որ անուանքն կարգաւ դասաւորեալ՝ և բառք ը՟ վանկից վանկից իբր ոտն առ ոտն յարմար ընթանան․ և իւրաքանչիւր վանկից և տառից չափեալ ամանակն, կշռորդեալ է շեշտն, առոգանեալ է հնչիւնն, և կշռեալ հագագն․ զորոց տեսակաց խրատոն տե՛ս 'ի քերականութե՟ Պաղտասար պատուելւոյն 'ի 42 պրակն, և յայլս․

Արդ՝ զառհասարակ զբաժանմանցս մի ըստ միոջէ ձևելն ճարտասանից և տրամաբանից թողեալ․ մեզ տիրապէս պիտոյ ասելն ցուցանել զայս՝ իբր զի

840 Այս ամ՟ շարամանութի՟ բանի ըստ քերթողաց կացուցանեն զերիս տեսակս շարայարութե՟՝ պարզ, միջակ, երթլին․ զորոց խօսեսցուք կարգաւ․

Յօդուած․ Ա․

Առաջին տեսակ Շարայարութե՟․

841 Պարզ շարայարութիւնն է յայտնի շարամանութի՟ բանի՝ սովորական յստակ բառիւ․

Ասացու յօդիւք, ուր բայքն ը՟ մեծի մասին դնին

դե

դիմաւոր, և զի եղեւ ժամանակին ցուցանեն զգործն․ որ բայքն՝ խնդրին՝ յառակայուցիչն և ածականն՝ պարզապէս եղեալ չունին զմիջանկեալ ինչ, կամ զմիւս ևս խնդիր ինքեանց, եւն։ Իսկ ստորոգեալն բառք են այնք, զորս հեղինակք վարեն՝ ՚ի հասարակ բանս յատուկ հայկաբանութե․ որովք յանձնից յայտնի և հեշտ իմացեալ լինի․ Ասացի յառաջ․ զի ՚ի գիրս մեր տեսանեմք և կրկին շարադրութիք, որք են աղաւաղ և խառն ։

842 Աղաւաղ են զրաջանութիք յոլով յօհանիսին, կլեմէս գաղափոս և յօվէսս պատորի լատինաց, և ինչ ինչ թարգմանութիք յունաց, եւն եւն․ զորպիսիս ՚ի ձեռս առնուլ անգամ չէ՛ արժան։

843 Խառն է ռամկական կամ է այլազգի բառի է․ Յակոբ Ածաբան Պորիրգի քրիստոնէականին, առաջին մասն զենհոգւորք, և գանձարան ծանուցմանցն․ Պաղտասար պատուէլոյ փոքր քերականութի, բարևագիրքն, եւն․ Այս շարադրութի ՚ի գործ ածի վն սոսկ ռամկաց և անվարժից ։

844 Յստակն է այսմաւուրն․ սաղմոսն․ հարանց վարքն․ աղօթք Եփրեմ Խուրոյն․ Եւագրեայ ութն խորհրդոց մեղաց․ ոմանք տօնմաւորք Առաքել վարդապետի, եւն։ Այսպիսիք են իսկական պարզ և յստակն։

Այս տեսակ շարադրութե արժան է ՚ի գործածել ՚ի պատմութիս, ՚ի խրատս, յողջունագիրս, և յայն ամենայն բանս՝ որք հային առ հասարակ ժողովուրդս։

845 Միջակ շարադրութին է չքեղ շարամանութի ՚ի յարդարուն բառից՝ զարդարեալ չափաւոր ձրիւք հայկաբանութե ։

Իբր զի ՚ի բանն գտանին չափաւոր խնդրառութք՝ բայանուն, ընդունելութ, դերբայ․ բայքն փոխանակ կատարեալ ժամանակի դնին ՚ի ներկայն և յանկատար․ յայտնիչն, յառակայուցիչն, ածականն եւն, ունին զմիջանկեալ՝ և զխնդիրս ոմանս եւն։ Որովք

մա

վայելչացեալ վայելեն շքեղութիւք իմաստից, և ձիրք քաղցր հայկաբանութե՟ հանդիսանան. ուստի և ոչ երբէք դիւրիմաց ամ՟ մարդկան.

Այս տեսակ շարադրութե՟ տեսանի յերիս կարգս՝ վայելուչ, ընտիր, գերապանծ ։

846 Վայելուչ են յա՟ծաշունչն գիրք ծննդոց, ելից, եւն. Աւետարանի մեկնութիւք Ոսկեբերանի, և Նանայի ասորւոյ. գործք ա՟ծաբանիցն՝ Աթանասի Կիւրղի, և Բարսղի. երգոց մեկնութի՟ Նարեկացւոյն. սաղմոսի մեկնութի՟ Վարդան վարդապետի. քարոզք՝ և համառօտութիւք մեկնութե՟ց ս՟բ գրոց ս՟բյն Գրիգորի Տաթեւացւոյ. քարոզք, և Նարեկի և Սիրաքայ մեկնութիւք, և եօթն խորհրդոց Յակոբ Ա՟ծաբան Պատրիարգի. պատմութիւնք Կիրակոսի, Վարդանայ, եւն.

847 Ընտիր է յաճախապատումն երիցս երանեալ ս՟բ Լուսաւորչին. Թարգմանութիւք ս՟բյն Մեսրովբայ աշակերտաց, իմաստութե՟ եւն. գործք առաքելոցն. Թուղթն եբրայեցւոց, և կաթուղիկեայց՝ Յակոբու, Պետրոսի և Յուդայի. որոց և մեկնութի՟ն Ներսէս Շնորհալւոյ. քարոզք և ճառք Յօհաննու Որոտնեցւոյ, և Յակոբու Սրճեցւոյ. Յմ՟ որդւին, եւն ։

848 Գերապանծ են գործք Եղիշէի՝ մեկնութի՟ն դատաւորաց, Հայր մերի, եւն. և եւս գործք ս՟բյն Յօհաննու Մանդակունւոյ, Ներսեսի Շնորհալւոյ. և Ներսեսի Լամբրոնացւոյ, եւն ։

Զայսպիսի շքեղ շարադրութիւս մի զմիւսով գերազանցեալք արժանի է կոչել մարգարտատող տառից հիւսուածք, քան դասաւորեալ բառից գրուածք. Այս տեսակ ՚ի գործ ածի ՚ի մեկնութիս բանից, ՚ի ճառօրէն գրուածս, և յայն ամ՟ բանս, որք հայցեն առ գիտունս ։

849 Խրթին շարադրութիւն է, ոլորուն հոյակապ շքադամանութե՟ բանի՝ ՚ի վսեմ և ՚ի մթին բառից. զորոյ իմաստունք միայն կարեն իմանալ զիմաստն.

Այս

Այս շարադրութեան եւս ունի զերկուս տեսակս՝ հոյակապ, եւ մթին ։

850 Հոյակապ են Նարեկն ։ գործք Յօհաննու իմաստասէր հայրապետին ։ յոմնաշունչն՝ ա, եւ բ, մանկաքայեցւոյն ։ պատմութիւնք Մովսիսի Խորենացւոյ, եւ Սրբոյն Յօհաննու Կաթուղիկոսի ։ գործք Դաւթի անյաղթին ։ թուղթք Մագիստրոս Իշխանի ։ եւ շարականք՝ Ի յանսահման ծոցէն, Այսօր զուարճացեալ, եւն ։

851 Մթին են ինչ ինչ բանք եւ տունք ՚ի Նարեկն ։ ՚ի թուղթսն Մագիստրոսի, ՚ի պիտոյիցն, ՚ի շարականսն, եւ այլն ։

Այս տեսակ շարադրութե՟ ՚ի գործ ածի, մինչ բանն է առ խորհրդական իմաստութիւնս, եւ կամ տիրապետօ յաղօթս առ Ա՟Ծ ։ որպէս զի հոյակապ շարայարութիւնք բառից՝ եւ վսեմ պերճախօսութիւնք բանին հեշտեցուցէ զհեղգութի՟, եւ զմիտս վերծանողին զմայլեցուսցէ ։ Ապաքէն վ՟ն այս որոշեալ ոճոցս ամ՟ն համարիմ հասարակաբար ծանուցանել զերկու ինչ ։

852 Նախ՝ զի շարադրութիւնք մատենից՝ որք ը՟ս միով տեսակաւ դասեալ են, մինչ բաղդատին ընդ միմեանս, գտանին մի քան զմի առաւել եւ նուազ ։ որպ՟ ՚ի պարզն՝ սաղմոսն ընտիր է քան զհարանց վարքն ։ ՚ի միջակն՝ գիրքն իմաստութե՟ ընտիր է քան զառակացն ։ ը՟ս այսմ եւ զայլսն է իմանալ ։

853 Երկրորդ՝ զի այսորիկ գրեանք՝ ը՟ս յաճախ խեալ ոճոյն որոշեցան ՚ի շարադրութիւն պարզ՝ միջակ եւ խրթին ։ բայց հնար է յուրաքանչիւրսն գտանել զերիս տեսակս եւս ։ որպ՟ Նարեկն՝ որ որոշեալ է ՚ի խրթինն, ըստ բերելոյ բանին ունի ուրեք զշարադրութի՟ միջակ, եւ ուր ուրեք զհասարակ ինչ պարզ ։ Սոյնպէս եւ այսմանուրն՝ որ ՚ի սկիզբն պարզ շարադրութե՟ կարգեալ կայ, ունի ուրեք զշարադրութի՟ միջակ, եւ ուրեք զխրթին ։ զսոյն եւ զայլոց պարտ է իմանալ ։ Ուստի կարեւոր համարիմ ՚ի յառաջադրուածդ բերել զօրինակս երից շարադրութեանց ։

Յօդուած · Է ։

Օրէնք Պարզ Շարադրութէ ։

§54 Եղբայր ումն եհարց ցծերն, և ասէ ցնա ․ որ–
,, պէս իցէ հայր, զի ումանք տեսանեն տե–
,, սիլս և յայտնութիս հրեշտակաց ։ * Իսկ ծերն ասէ
,, ցնա ․ երանելի այնոցիկ է ․ որդեակ՝ որք տեսանեն
,, միշտ զմեղս իւրեանց ․ զի այնպիսին միշտ ար–
,, թուն և զգաստ է ։ Ասէ եղբայրն ․ ես տեսի
,, զհայր ումն, որ եհան զդևն յայլմէ հօրէ յա–
,, ռաջնին աւուրդ ։ Իսկ ծերն ասէ ․ ինձ ոչ է
,, պարտ հանել զդևսն յումեքէ, և կամ բժշկել ․
,, այլ զայս միայն աղաչեմ զԱծ, զի մի՛ մտցէ յիս
,, դև ․ Հարանց վարք ․ 250 ․ Յետակ ։

* Օ ծերոյ ումեմնէ ասէին, եթէ նստէր ՚ի սենե–
,, կի՛ իւրում և ճգնէր ․ և ետես զդևն յանդգնման՝
,, և նախատէր զնա ․ և իբրև լուաւ դևն զպատկա
,, ռանս իւր, որ յանձն առնոյր զամենայն նախա
,, տինս խոնարհութին իւրով ծերն ․ յայնժամ փոխե
,, ցաւ յայլ կերպարանս առժամայն՝ և ասէ ցծերն,
,, ես եմ Քս ։ Իսկ իբրև ետես ծերն՝ կափոյց զաչս
,, իւր ․ ասէ ցնա դևն ․ ընդէ՞ր խցեր զաչս քո՝ ոչ
,, կս տեսանել զիս, ես եմ Քս ․ Ասէ ծերն, ես զՔս
,, աստ տեսանել ոչ կամիմ ․ և ՚ի նոյն ժամ անյայտ
,, եղև դևն՝ յաղթահարեալ ՚ի խոնարհութէ ծերոյն ․
Հարանց վարք ․ 348 ․

* Արդ՝ դու ստացար զամենեսեան ․ և քո են ամե–
,, նեքեան ․ և ողորմեսցիս ամենեցուն, միայն թագա
,, ւոր ․ զի թէ և մեղիցեն՝ քո են ․ վն զի ՚ի քում հա–
,, մարի են ․ քանզի գիտեն զզօրութի քո ․ Իմաս ․ ԺԵ ․ 3 ․

* Ահա՛ զանձնաւուիցն իմոց ձաւեցի ․ զպատկառելին
,, խայտառակեցի ․ զգաղտնիսն հրապարակեցի ․
,, զծածուկսն յայտնեցի ․ ․ զմիութին մահու փոխե–
,, ցի ․ զպայծառս հոգւոյս խոցոտածոց՝ Քահանայա
,, պետին Քի բացի ․ Նարեկ ․ ԿԷ ․ 1 ․

Օրէ

Օրինակ Սրբոյն Օգոստինոսի։

855 Եւ արդ՝ ասէ սա. զինչ դիւրաթաւալ քան
,, զմարդ կամ դիւրաշիջանելի. Թէպէտև
,, մեծատուն ոք իցէ կամ թագաւոր։ Այսօր յարուցեալ
,, հպարտանայ և մեծաբանէ երբեմն զտէր կենաց
,, և մահու, և պայծառ հանդերձիւքն և ոսկեզօծ
,, զօտեաւն փքացեալ ամբարտաւանէ. և ՚ի վաղիւն
,, անկեալ դնի մեռեալ՝ և յորդունս համակեալ.
,, և ամ̄ փառքն նր̄ և վայելչութիւն՝ քան զծաղիկ
,, խոտոյ արագագոյնս թառամին և կորնչին։...
*Մեք զայսոսիկ տիրապէս գիտելով՝ մի՛ զարմասցուք
,, ը̄ փառս ծաղկընկէցս. և մի՛ երանեսցուք
,, մեծատանցն...երբեմն զատուէր և երբեմն զերագ
,, են կեանք նոցա։ Զի գո՞յ հաւատալ գրոյ ՚ի վր̄
,, ջրոյ, քան մեծութ̄ նոցա ՚ի վր̄ նոցին։ Այնքան
,, արագափախձանք են և դիւրաշիջանելիք, մինչ զի
,, քան զպղպջակս անձրևի արագագոյնս պատառին
,, և անյայտին։...Բամէ՝ կուրութ̄ մտացն և
,, անհնարին անզգամութ̄ են։
*Եւ արդ՝ հարցցո՛ւք ցնոսա, եթէ ե՞ր վն̄ այդչափ
,, կատաղիք ՚ի ցանկութ̄ի շահիցդ ՚ի զուր աշխատէք
,, ...և ոչ գիտես ո՞ւմ ժողովես։...Եթէ ասես՝
,, ինձ ինքեանս ժողովեմ, զի հանգստեամբ վայելեցից
,, ՚ի կեանս ձրիս և փառաւոր ՚ի մէջ մարդկան
,, ...հայեա՛ց յառաջին մեծատունսն, և ՚ի նոցանէ
,, ուսի՛ր զիւրեն ունայնութիւն. զի...յառաջի մեծութ̄ս
,, ը̄ ինքեանս ինչ ոչ տարան, բայց միայն
,, զմեղսն՝ զպատժական բարկութ̄ն։ Այժմ և զաւրիթան
,, անօթի տանջանաց։...Կամի՞ս ո՛վ մեծատուն՝ ՚ի
,, հանգստեան և ՚ի փառս վայելել. ՚ի բա՛ց լեր յանիրաւութ̄է
,, սնոտի և ՚ի զրկանաց. և դողումն ՚ի քեզ
,, ոչ մերձեսցի, և ՚ի հակառակսն զքեզ ինչ ոչ
,, տագնապեսցէ։...Իսկ որք ասեն վն̄ որդւոց ժողովել
,, ...և այս խաբէութ̄ի և արտեւսուք բանս
,, արկութեն են....(որ) անյոյս եւ առնէ ՚ի Բնէ.

Ո՛վ յիմար՝ ո՞չ ապաքէն որ զքեզ արար, և զորդին
,, քո նոյն արար. և զիա՞րդ որ քեզ ետ զմեծութիւն,
,, և որդւոյն քո ո՞չ տայցէ: Մի՞ արդեօք զքեզ
,, առաւել սիրիցէ քան զնա. զի քեզ ետ, և ՚ի նմանէ
,, արգելու. մի՛ արդեօք ՚ի քեզ ապաստան արար
,, զնա հոգալ՝ որոշեալ ՚ի խնամոց իւրոց:
*Եւ զիա՞րդ զմեծն ետ, և զփոքրն արգելու. զմարմինն
,, ստեղծ՝ և զհոգին ետ, և որ ինչ պիտանացուքն
,, են հոգւոյն և մարմնոյն՝ ո՞չ տայցէ. . . :
,, Օ՜ մեծ մասն ՚ի քեզ ապաստան ոչ արար, և ըզփո՞քրն
,, առնիցէ. Ը՞ր վն զրկես զորդին քո ՚ի
,, խնամոց արարչին քո՝ տարօրէն հոգալովդ զնա:
,, Նորա է ստեղծուած, ՚ի նա ապաստանն արա:
,, Եւ դու զվայելչականն ուսո՛ նմա՝ զառաքինութիւն
,, և զպատուիրանսն Այ կատարել, զծողովեալն
,, ագահութ՝ սփռել և տալ աղքատաց. որոյ արդա
,,րութիւն կայ և մնայ յաւիտեան.
,, Արդ՝ եթէ տիրապէս յԱյ առեր և ունիս զմեծութիւն,
,, վստա՛հ լեր և հաւատա՛, եթէ և որդւոյն
,, քո կրկին առաւելութ տայ, եթէ դու կամեսցիս.
*Եւ ո՞րպ ասես կամեցայց: (այս է եղանակ կամելոյդ)
,, Եթէ զոր յԱյ պարգև առեր և ունիս, դարձեալ
,, Այ պարգևես և տաս. Թո՛ղ որդւոյն քո
,, զբարեպաշտութիւն քո զհանդէս, և մի՛ զընչիցն
,, բազմութի: Թո՛ղ նմա մերկացու քոյով զթութէքդ
,, աղքատաց երամոյն՝ զանեզրական զթութիւնն
,, Այ, և մի՛ զոսկւոյն պայծառութի: Ուսո՛
,, նմա զողորմածութիւն բարիս, և մի՛ զամարդութիւն
,, չարիս: Ուսո՛ նմա զԱծ պատուել, և մի՛ զմամոնայն:
,, Ուսո՛ նմա երկնաւորացն ցանկալ, և
,, մի՛ երկրաւորացս: . . . Իսկ եթէ յանիրաւութէ
,, և ՚ի զրկանաց ունիս զմեծութի ընչիցդ, զոր հանդերձեալ
,, ես թողուլ որդւոյն քո, ՚ի մի՛տ առ և
,, հաւատա. եթէ ուր անիրաւութի է և զրկանք,
,, անդ է և բարկութիւն Այ: . . . Բարկութիւն Այ
,, կցորդ և բաժանորդ կացուցանես զորդին քո. . .

,, որո՞ւմ ներելոյ արժանաւոր գտանիցիս։ Ո՜հ եթէ դու առանց օրինակի և վարդապետի` յայդչափ չարիս յանդգնեցար. որդին քո զքեզ օրինակ և վարդապետ ունելով անօրէնութ` յո՞րպիսի չարիս ոչ մտաբերիցէ, զանիրաւութիւն իւր զարդարութ 'ի քէն ուսեալ. . . .

*Եւ արդ` զայսոսիկ լսելով, մի՛ ծածուկ` զղջացարուք 'ի սիրտս ձեր, և շահեցարո՛ւք զանձինս և զորդիս ձեր. . . . Տո՛ւք զողորմութի, և ամենայն ինչ ձեր ս՟բ է, ասէ։ Մատուցարո՛ւք պատի մեծութս զանուն մեծութն։ Ո՛չ եթէ վայրապար եմ քեզ Ա՟Ծ զմեծութիւ. . . այլ զի սրբոց զանձնառ բարիսն ժառանգեսցես. Յովհն. Կաթող. 'ի 32 է, 'ց 35։

*Իսկ աշխարհին Հայաստանեայց յաւուրսն յայնոսիկ այց արարեալ տ՟ն` և պատսպարեալ և յաջողեալ 'ի բոլոր բարութիս, ընակեցան իւրաքանչիւրոք 'ի ժառանգութիս իւրեանց, և սեփհականեալ երկիր` տնկեցին այգիս, և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց, և կթեցին պտուղս հարիւրաւորս. վեղան շտեմարանք ցորենոյ 'ի ժամանակի լրութ հնձոց. լցան գուբք գինւոյ 'ի կութս այգեստանեայց, և լերինք զընծութ զգեցան. զի բազմացան 'ի նմա արօտականք անդեայք արջառոց և հօտք ոչխարաց։

*Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք և հանդուցեալք 'ի հինից ասպատակաց` շինեցին եկեղեցիս վիմարդ հաստահեղոյս ձուլեալ կրով 'ի մեծաստանս և յաւանս և յագարակս։ . . .

*Եւ այսպէս վիճակ ցանկալի լի պտղատածող արգասիւք պարարտութ առհասարակ ամենեցուն որ ունէր ձրի նորին շնորհքն Ա՟Յ, և նորին յարմար կազմածոց. 'ի տանն տ՟ն բղխէր աղբիւր բարեաց ը՟ս մարգարէին, և ոռոգանէր զձորս վիմակաց.

Յովհաննէս Կաթողիկոս։

Ոչէնոց Իսչենի Հորոգրուէ.

856* Ապա յետ երից աւուրց (ոստիկանն Ափշին)
,, գունդ կազմեալ գումարտակ եդեալ՝
,, ՚ի կռիւն ը̅ Արքային (Սմբատայ) կայքաւէր. Նա
,, ապա ՚ի քաջ արանց սուսերամերկաց և ՚ի լայնալիճ
,, աղեղնաւորաց նետից՝ ահագին ահափետ օրհասք
,, մահու հասուցանէին իսմայելեան գնդին. և այր
,, զախոյեանն իւր հարուածեալ յերկիր կործանէր՝
,, տապաստ դաշտին արկեալ. և զմնացեալսն ցա-
,, նեալ ցրուեալ՝ և փախստեայ զբանակաւն այլազ-
,, գեաց արկեալ, հալածէ պահնակել պաշտպանել
,, կարէին միայն զանձն կացուցի կարողանային իւ-
,, րեանց. Այնուհետև ապա ոստիկանն չար՝ ՚ի ծո-
,, վածուփ ալիք կուտացելոցն և փրփրացեալ լեռնա-
,, ցելոց շիջեալ հատանէր. և փոխանակ գազանա-
,, կան սաստիցն յաղերս մատուցեալ հայցէր տալ
,, ցնա զպակին արքունի, և դնել ուխտ երդման սակս
,, ոչ զատանելոյ ՚ի նորայն միաբանութենէ. Յովհ. Կաթ.

*Եւ իբրև ՚ի բաց եղաւ ձմերային ձիւնախաղաղ-
,, սառնամանեաց ցրտութիւն, և գարնանային հարա-
,, ւահողմն շնչեաց զտեղին փոխաբերեաց.
,, Ապա ոստիկանն Յուսուփ՝ բազում երիվարս սրա-
,, փարս սօսս և ահիպարանոցս պատրաստեալ բազ-
,, մազան ոճնայարմար զարդուք և զինուք ոսկե-
,, սանձ ոսկենկար պաճուճանօք. այլև թագ ևս
,, յոսկւոյ սափիրայ կազմեալ, և ՚ի նմին յեղուզեալ
,, յեռեղ վարսակալ մարգարտատող տպազարդուն՝
,, և այլևս ականս պատուականս. և բազում և ե-
,, րևելի զգեստս արքունականս ոսկեձամուկս և շղա-
,, շատեան հրաշանկարս՝ միանգամայն առաքէ ՚ի
,, պատիւ մեծարանաց Արքային Սմբատայ. . . .

*Իսկ Արքայի խրոխտ լեալ ՚ի բարեձիր պարգևս
,, նորա՝ և ընկալեալ մեծաւ շնորհակալութ., ոչ սա
,, կաւ ինչ քան թէ բազմամասնաբար յիւրմէն ևս
,, նմա ընծայէր բարեվայելուչ և շքնաղատես և

ե-

,,երեւելի զարդս Համբերձանաց՝ եւ նկարակերտ
,,կազմուածս բազմականաց կարմրութեան որդանց՝
,,եւ ըմպակս եւ նուագս, եւ կամար 'ի համակ ոսկւոյ
,,գործ 'ի հռոմայական ճարտարաց՝ յերանգս գու-
,,նակ գունակ ապակւոյ, տուեալ ես տասնապա-
,,տիկ յաւելուածով քան զմիանգամայն իսկ ըն-
,,կալեալն առ 'ի նմանէն ։ Յովհ. Ոսկեբ.

*Սկզբնապար նախնոյթացուէ աղէյարմար ջութա-
,,կաց՝ բարբառ իմ ողբերգարկութեց՝ բաղացու-
,,ցական բամբռան բառայլի բարբառունեց, սրինգ-
,,նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ՝ ընդ հնոյն
,,փոխանորդութեան. ոչ հեթանոսօրէն ուրուածայն
,,հնչման, եւ կամ հրէաբար խակախորհուէ, զոր
,,մարգարէն տեղամբ ազդեցոյց՝ 'ի բաց արայի-
,,նէն, այլ զսա սիրեաց եւ կրկին պատուեաց մեզ
,,բանական տաղմամբ՝ ահարկու դիւաց եւ ամենայն
,,չար պատահարաց. Ներսէս. ղէ. 8.

*Քանզի այսու օծմամբ հոգեւորականաւ՝ խղճեալ
,,կամ հատեալ 'ի սնոտիական մահակերպարան-
,,տաղտկաղաղրական հեշտութեց հակառակողին, որ
,,օդախոնաւ մեղկութեան զքնարս ձայնատրական՝ եւ
,,կամ զարկուած վերածածկութեան մղնարհեստ ուժգ-
,,նաբարբառ խոխտահնչական կազմուածոյ
,,թմբկիս գործականութեան ջրացիր իմն գինջութեան
,,անվայելուչ թուլասպաշնակեալ 'ի սոորեւ կրքա-
,,տեան քարշէ զօրինակ մեր գոյութե, կայծիմբ յու-
,,սով վերստին դարձեալ ընդ անձառ խորհրդոյ
,,Խրաչի քո՛ Քն. Ներսէս. ղէ. 20.

Արդ՝ ոչ է բաւական միայն որոշել զտեսակս
չարադրութեց, այլեւ հարկ է գիտել եւ զվերլուծումն
նոցին. զոր ցուցցուք 'ի հետեւեալդ.

* * *

ԳԼՈՒԽ · ԺԶ ։

Թէ զի՞նչ է Վերլուծութիւն ։

Վերլուծութիւն է ուղիղ որոշումն ՚ի բանի զիւրաքանչիւր մասունս՝ ըստ համաձայնութեան նոցին ընդ միմեանս. որոյ զօրինակն կարգեսցուք ըստ երից շարադրութեանց ։

Վերլուծումն Պարզ Շարադրութեան ։

858 · Օրինակ · Ա ։

(*)* Ճշմարիտ իմաստութիւն այն է, որ ոչ միայն „ բանիւ ուսուցանէ (զիմաստութիւն) ; այլև „ գործովք վարդապետեսցէ · Հոբոնց Հատր · 136 ։

Այս բան վերլուծանի այսպէս, Էն է բայ էական ։ Այն՝ է ցուցական դերանուն ածական · որոյ գոյականն է զօրութեամբ բառս՝ վարդապետ, ըստ այն վարդապետ · և է տէր բայի էին ։ Ճշմարիտն՝ է ածական իմաստութեանն · և ՚ի միասին եղեալ են ուղղական բուն խնդիր էին ։ Ուսուցանէն՝ է բայ ներգործական ։ Որն՝ է յարաբերական դերանուն, և յարաբերեալ է Ճշմարիտ իմաստութիւնն · և է տէր բայի ուսուցանէին ։ Ոչն՝ է մակբայ բացասական ՚ի վերայ ուսուցանէին ։ Միայնն՝ է ածական անուանս՝ բանիւ · և ՚ի միասին միայն բանիւն՝ է գործիական երկրորդական խնդիր բայիս՝ ուսուցանէ ։ Զիմաստութիւն՝ է զօրութեամբ իմացեալ հայցական խնդիր սեռի բայիս՝ ուսուցանէ, Այլև՝ է շաղկապ բաղհիւսական, և կցեալ է զբան ընդ բանի ։ Վարդապետեսցէն՝ է բայ ներգործական · որոյ տէր բային է վերոյեղեալ յարաբերական որն · և սեռի խնդիր է նոյն զօրութեամբ իմացեալ հայցականն՝ զիմաստութիւն ։ Գործովքն՝ է գործիական երկրորդական խնդիր բայիս՝ վարդապետեսցէ ։

Վերլուծումն Մեծին Հատուածոյն։

859. Օրինակ. ա.

> (ա)* Ոչ եթէ մովսիսի ասացաւ Աստուած՝ ոչ կոխել մեռեալ մորթովք զտեղին, ուր երեւեցաւ հուր Աստուծոյն. (բ) որքան մեզ արժան է լուծանել նախ զմեռելութիւն մեղաց 'ի մէնջ, և ապա յանդգնելն մերձենալ խորհրդոյ. Ընդդ.հոմ. 50։

Վերլուծումն (ա) բանին. Ոչ եթէ՝ է շաղկապ թեական։ Ասացաւն՝ է բայ կրաւորական։ Կոխելն՝ է աներեւոյթ բայ ներգործական. Զտեղին՝ է հայցական խնդիր սեռի աներեւութիս կոխել։ Մեռեալն՝ է չեզոք ընդունելութիւն ածական անուանս մորթովք. և 'ի միասին մեռեալ մորթովքն՝ է գործիական բուն խնդիր բայիս կոխել։ Ուրն՝ է բացառական մակբայ նորին։ Եւ աներեւոյթս կոխել հանդերձ խնդրովք իւրովք է տէր բայիս ասացաւ։ Ոչն՝ է սկզբնական խնդիր սեռի, և մովսիսին է վերջահոլով տրական բուն խնդիր բայիս ասացաւ։ Երեւեցաւն՝ է բայ կրաւորակերպ չեզոքական։ Հուրն՝ է տէր բայիս։ Աստուծոյն՝ է յատկացուցիչ անուանս հուր. որոյ և յօդս՝ ն, եդեալ է 'ի վերայ յատկացուցելին, 'ի տեղի գնելոյ՝ հուրն Աստուծոյ։ Ուրն՝ է տեղական մակբայ երեւեցաւին։

Վերլուծումն (բ) բանին. Արժան է՝ է բնական անդէմ բայ։ Լուծանելն՝ է աներեւոյթ բայ ներգործական։ Մեղացն՝ է յատկացուցիչ անուանս զմեռելութիւն. Զմեռելութիւն մեղացն՝ է հայցական խնդիր սեռի, և 'ի մէնջն՝ է սկզբնական բուն խնդիր աներեւութիս լուծանել։ Նախն՝ է դասական մակբայ լուծանելին. իսկ լուծանելն՝ իւր խնդրովք հանդերձ է տէր անդէմ բայիս արժան է։ Մեզն՝ է վերջահոլով տրական բուն խնդիր անդէմիս արժան է, և տէր բայիս լուծանել։ Որքանն՝ է մակբայ քանակական։ Եւն՝ է շաղկապ բաղհիւսական։ Ապան՝ է դասա կան մակբայ բայիս՝ դերբայնով։ Ընծայեալն՝ է ածական խորհրդին, ընծայեալն խորհրդոյն՝ է բուն խնդիր դերբայնովն ՚ի նախադրեալ տրական հոլովմն. և հոլովակերտ նախդիրն՝ յ, որպէս և յօդն՝ ն, եդեալ է ՚ի վերայ իւր նախադաս ածականի՝ ընծայեալն։ Դերբայնովն՝ իւր խնդրովք հանդերձ է տէր անդիմին՝ ուրեմն է. և վերոյ գրեալ վերջահոլով դեղն՝ է տէր բային դերբայնովին։

860. Օրինակ. Բ.

(ա)* Ո՛ր օրինակ բանն միացեալ ՚ի գիր՝ մարմին
,,զգենու. և յայնմհետէ ոչ է բանն առանց
,,գրոյն, և ոչ գիրն առանց բանին. (բ) զի՛ երկո-
,,քեանն յիրերաց ոչ բաժանին, և ՚ի բնութենէ ոչ
,,անկանին. և ՚ի շօշափել գրոյն՝ ընդ նմին շօշափի
,,և բանն. (գ)* Նոյնպէս ծանիր և զմարմնանալ բա-
,,նին, և զշօշափելն ձեռօք. || Դեկն. Կոմբռաղ. 628.

Վերլուծումն (ա) բանին։ Ո՛ր օրինակն՝ է մակբայ նմանականն. Միացեալն՝ է չէզոք ընդունելութիւն բայացեալ։ Զգենու՝ է բայ ներգործական։ Բանն՝ է տէր բայի նոցին։ Գիրն՝ է ներգոյական յարմարական խնդիր միացելոյն, իբր ասել ընդ գրոյն։ Մարմինն՝ է երկրորդական խնդիր բայիս՝ զգենու. և սորին սեռի խնդիրն զօրութեամբ իմացեալ լինի հայցականաւ՝ զգիր. իբր ասել այսպէս՝ բանն զգենու զգիրն մարմին. Եւն՝ է շաղկապ բաղհիւսական։ Յայնմհետէն՝ է մակբայ ժամանակական, և ոչն՝ բացասական։ Էն՝ է բայ էական։ Բանն՝ տէր բայի։ Առանցն՝ է զատուցական նախադրութիւն. գրոյն՝ է սեռական խնդիր նախադրութեան. և նախադրութիւնն իւր խնդրովք առանց գրոյն՝ է յարմարական խնդիր բայիս՝ է։ Գիրն՝ է տէր բայի. որոյ բայն զօրութեամբ իմացեալ լինի բայս՝ է. Եւ նախադրութիւնս իւր խնդրովք առանց բանին՝ է յարմարական խնդիր նոյն էականին՝ է, իբր ասել այսպէս. յայնմհետէ բանն ոչ է անգիր, և գիրն ոչ է անբան. կամ բանն ոչ բաժանի ՚ի գրոյն, և գիրն ոչ զատանի ՚ի բանէն։

Վերլուծումն (Բ) բանին. Զին՝ է շաղկապ պատճառական. Բաժանին և անկանին՝ են կրաւորակերպ բայ չէզոքականք. Երկոտասանն՝ է մասնական անուն ածական, որոյ գոյականքն են, բան և գիր. և են տէր բայի. Յերեքոցն՝ է սկզբնական բուն խնդիր բայիս՝ բաժանին. Ի բնուէն՝ է սկզբնական երկրորդական խնդիր բայիս՝ անկանին. Այն՝ են բացառական մակբայք նոցին. Շնորհի՝ է բայ կրաւորական. Բանն՝ է տէր բայի. Ընդն՝ է նախադրութի կցորդական. նմին՝ է վերջահոլով տրական խնդիր նախադրութե. և նախադրութիս խնդրով ընդ նմին՝ է կցորդական պատահական խնդիր բայիս՝ շնորհի. Գրոյն՝ է սեռական տէր դերբայիս՝ ՚ի շնորհել. ՚Ի շնորհելն գըրոյն՝ է ՚ի ներքոյական հոլովս ժամանակական պատահական խնդիր բայիս՝ շնորհի.

Վերլուծումն (Գ) բանին. Այնժամն՝ է մակբայ ժամանակեան. Ընդունին՝ է բայ ներգործական, որոյ տէր բային է զօրութ. դոքա. Բանին՝ է սեռական տէր բայի աներևութիս՝ շնորհացն. Ձեռօքն՝ է գործիական հոլովիւ սեռի խնդիր կրաւորական դերբայիս՝ շնորհելի, փոխանակ սկզբնականի եղեալ ըստ ՚ի ձեռաց. Այլ հայցական դերբայքս՝ շնորհելոյ բանին և շնորհին ձեռօքն՝ են սեռի խնդիր բայիս ծոյէ.

Վերլուծումն Խորհրդին Հաղորդութե.

861. Օրինակ. ա.

*Սոսկալի տեսլեանն ՚ի վերուստ յայտնեալ մար-
,,գարէ ահրաշ հոգւով տեսանող եղեր, բաց-
,,ման խորանին վերնական յարկին և երկնային
,,լուսոյն խառնելով մարդկան ընդ հրաբուն զօ-
,,րացն. Շարակնոց. 233.

Այս բան վերլուծանի այսպէս. Եղեր՝ է բայ էական, որոյ տէր բային զօրութ. իմացեալ լինի՝ դու, ով տէր Եզեկիէլիս. Տեսանողն՝ է ներգործական ընդունելութի ածական զօրութ. գոյականիս՝ դու. և է

ուղ

ուղղական բուն խնդիր բայից՝ եղեր: Մարգարէահայրն՝ մեր բարդութեամբ ունի զխնդիր նմանական պատահական, զի ընդ Մարգարէից հայրըն · որ է ածական անուանս՝ հոգւով: Մարգարէահայրըն հոգւովն՝ է գործիական բուն խնդիր ընդունելութեամբ՝ պիտանոյ: Սակայն պիտանին 'ի վերուստ ցուցանելոյն՝ ոչ մի բառ է յայտնեալ · յայտնիքն է Բացման խորանին վերնական յարկին, սն մինչև ցվերջն: Եւ այս յայտնիւ և յայտնեալ միանգամայն իբր մի բառ՝ են սեռական խնդիր սեռի ընդունելութեամբ՝ պիտանոյ:

*Նոյնպէս և պիտանոյ հայրն՝ իւր բնութեամբ և սեռի խնդրողքն համարի բուն խնդիր բայից՝ եղեր: Բայց 'ի յայտնիւ և 'ի յայտնեալն որոշին և սորին: 'Ի վերուստն՝ է տեղական մակբայ ընդունելութեամբ՝ ցուցանելոյ: Սակայն չէզոք ընդունելութիւն՝ և 'ի վերուստ ցուցանելոյն՝ են ածական պիտանի: Վերնականն՝ է ածական յարկին · վերնական յարկին՝ է յատկացուցիչ խորանին: Երկնայինն՝ է ածական լուսոյն: Խորանին վերնական յարկին՝ և երկնային լուսոյն՝ են յատկացուցիչ բառիս՝ Բացման: Խառնելովն՝ է չէզոքական աներևոյթ 'ի գործիական հոլովի պատահական խնդիր՝ Բացման: Մարդիկն՝ է սեռական տէր աներևութիս՝ խառնելով: Ընդն՝ է նախադրութիւն կցորդական: Հրաշունն՝ է ածական զօրաց · բայց և լինի մեր բարդութեամբ ունի զածական, զի հրեշտն բնաւ · և 'ի միասին են սեռական խնդիր նախադրութեան · և միանգամայն ընդ հրաշուն զօրացն՝ է բուն խնդիր աներևութիս՝ խառնելով:

Եւ այս շարադրութիւն պարզի այսպէս:

Տէր սբ Գրիգորիոս՝ Մարգարէահայրս հոգւով տեսեր զսոսկալի տեսիլ 'ի վերուստ յայտնեալն, զի ընդ բացումն խորանին վերնական յարկին և երկնային լուսոյն · յորում խառնէին մարդիկ ընդ հրաշուն զօրաց հրեշտակաց:

862 Որդ՝ վարժութիւն 'ի վերլուծութիս է վարժութիւն բոլոր կանոնաց քերականութեան, որ լինի երկուք՝

Խս կամ

կամ համառօտ գրելով զկանոնս, կամ սերտելով, և կամ դաս տալով այլոց։

863 Եւ քաջ և անխոնջ փորձութեան 'ի վերլուծութեան՝ պիտոյ և պատշաճ է կրթել 'ի յօրինել զճարտասանութիւն։ Քանզի նա՝ որ գիտէ միայն զուղիղ վերլուծութիւն, և ոչ կարէ առնել զճարտասանութիւն, իբր մանկանն կաղ և համր է յուսումն քերթութեան. յոր իսկ նմանեալ այնպիսւոյ՝ որ խոստանայ գիտել և իմանալ զիմաստս և զխօսս այլոց, բայց ինքն ոչ զօրէ խօսել և առաջի կացուցանել զիւրն իսկ զիմաստ. ուստի և 'ի հանդէսի քերթողաց սնափառատակ իմն երևեալ՝ մնայ 'ափ'ի բերան։

864 Ապաքէն՝ վախճանական պատճառ մոյթ և նպատակ և կատարելութիւն գիտութեան քերականութեան՝ ոչ միայն է վերլուծել տալ զայլոց ճարտասանութիւն, այլ մանաւանդ օրինակս իսկ է ուսուցանել զճարտասանութիւն։ Վասն որոյ կարևոր համարիմ 'ի նպաստ նորափորձից յատկապէս յաւելուլ 'ի յաջորդ յօդուածս զխրատ յօրինելոյ զճարտասանութիւն։

Յօդուած. Ա։

Խրատ յօրինելոց զՃարտասանութիւն։

865 Առ յօրինումն ճարտասանութեան՝ պէտք է պատրաստել ընտրել 'ի վերոյգրեալ մատենից զյարգի հեղինակ իմն. և այս լինի, մինչ 'ի զննելն մտեալ ընթերցանութեամբ ծանիցես, թէ որոյ քերթուած քաղցրանայ 'ի քում կոկորդի. զի իմաստն փութով ազդէ 'ի միտս, ախորժ և հեշտ պատշաճի արտաբերութեամբ. ահա այս իսկ է նշան մնացուն ընդունակութեան՝ և բնաւոր յարմարութեան ոգւոյդ 'ի յօրինել զտեսակ այնր ճարտասանութեան։ Որում բանիցն կարգի արժան է վստահ համարձակ ձեռնամուխ լինել, 'ի քեզ սեփհականելով զերկուս զայսոսիկ՝ կրթութիւն անձին, հետևութիւն հեղինակի։

865 Արթնութիւն անձին է կազմ պատրաստութիւն յաջողակի յօրինելոյ զշարադրութիւն · եթէ զի ունիցիս զսրբութիւն սրտի՝ զհեզութիւն և զանդորրութիւն ոգւոյ, զիջուցանելով զամբոխումն կրից · յորոց ընծայի սրտին և ջինջ պարզութիւն մտաց՝ արագ և ամփոփ յիշողութիւն չափաւորութեամբ կերելեաց ըմպելեաց։ Զի զոր օրինակ առ յատակս պղտորեալ ջուրց անմարթ է զիր ինչ տեսանել · նոյնպէս յամբոխեալ միտս և յղփացեալ յորովայնս անհնար է զիմաստ գտանել։

Ուստի յօժար սիրով դրկեա՛ զպանծալի լոյս իմաստութեան · զի է ճաճանչ և նշոյլ աստուածային զօրութեան · և լքեալ հերքեա՛ զպատկառելի խաւար տգիտութեան, յորում է պատկեր ոգւոյն չարութեան։

Մերժեա՛ ի քէն զպատճառս ձանձրութեանց և զբաղմանց, և տո՛ւր հրաժեշտ յաւելորդ ունայն մտածմանց։

Մենացի՛ր ինքնին յառանձին վայրի՝ լո՛ւ և՛ ի գիշերային պահու հուպ ընդ արշալուսին։ Ապա 867 Հետևութիւն հեղինակի ըստ այսմ արասցես · քեզ առաջի առեալ հեղինակին զբանսն՝ սրտի մտօք ընթերցի՛ր, անձանձիր ծամեալ որոճա՛ ի նոյն · ուշ եդեալ երկու աչօք նկատեա՛ ի զօրութիւն մտացն · որպէս զի յառաջ քան զամենայն՝ իմաստ բանին յատակ պարզապէս ի միտդ ամփոփեսցի, և տեսակ շարադրութեան ի քեզ տպաւորեսցի · և ապա յուշիկ մատի՛ր ի կշիռ բառից և բանին այսպէս։

Ի մի և ի նոյն բանի ի սկիզբն ի մէջն և ի վերջն աչալուրջ քննեա՛ զդասաւորութիւն մասանց բանի՝ ըստ կանոնաց համաձայնութեան, թէ ո՛ւր արդեօք տեղակալեալ է տէր բային՝ բայն՝ և յինչ ժամանակ · խնդիրն՝ խնդրառուն՝ յատկացուցիչն՝ ածականն ընդ ունի՞ն զմիջանկեալ կամ զզօրութիւն ինչ, և թէ տուեա՞լ են ինքեանց զմիւս ևս խնդիր, ընդ · ընտրութիւն՝ առաւելութիւն սոցին կազմի շարադրութիւն վայելուչ և գերապանծ, և նուազութիւն սորին և պարզ։ Սոյնպէս և զդրութիւնս հոլովակերտ նախադասութեանց՝ զյարմարութիւն շաղկապաց և միջարկութեանց արժան է ճանաչել։

Յետ

Ո՛ւր այսչափի խնամով զգուշութեց՝ եւ զքոյդ տրամախոհութի արձանագրի ՚ի թղթի՝ շարայարութե յատուկ հայ բառից. բարեգոյն է երկու եւ երեք բառիւ զիմաստ ինչ յայտնել, քան ինքնահնար բարդութեամբ ստեղծանել.

Եւ մինչ փառաւորին դժուարասցի քեզ գիւտ նորոգ բանի, հեշտինակ է զմիոյ պարբերութե զիմաստն կրկին շարադրեալ բառից փոփոխմամբ վերածել ՚ի նմանն կամ ՚ի ներհակն. Օ. * Ծառայք իմաստունք տիրեսցեն տերանց անմտաց. Առակ. Է. 2.

Այս բան վերածի ՚ի նմանն այսպէս. * Իմաստունք աղքատք իշխեսցեն յիմար մեծատանց:

* Օրհնութի Տն ՚ի գլուխ արդարոց. Առակ. Ժ. 22.

Եւ այս բան՝ այսպէս վերածի ՚ի ներհակն. * Անէծք տեառն ՚ի գլուխ ամբարշտաց:

* Ճանաչել զօրէնս մտաց բարեաց է. Առակ. ԺԳ. 14.

Նման վերնոյն. * Խորհեմտի անձանց է գիտել զօրէնս:

Ներհակ վերնոյն. * Չարամիտ անձինք անտես առնեն զօրէնս:

* Հեռի է Տր յամբարշտաց, եւ աղօթից արդարոց լսէ. Առակ. ԺԵ. 29.

Նման վերնոյն. * Ունկնդիր լինի Տր աղօթից արդարոց, եւ ՚ի բացեայ է ՚ի մեղաւորաց:

Ներհակ վերնոյն. * Մերձ է Տր առ արդարս, եւ զաղօթս մեղաւորաց արհամարհէ.

* Որ ծաղր առնէ զաղքատն, բարկացուցանէ զարարիչն նորա. Առակ. ԺԷ. 5.

Նմանն. * Որ կատակէ զաղքատաւ, գրգռէ յինքեան զբարկութի արարչին: կամ. * Ընդ արհամարհութե աղքատին՝ բարկանայ արարիչն:

Ներհակն. * Որ պատուէ զաղքատն, երկիրպագուցանէ զԱծ. կ. * Ընդ պատիւ աղքատին բերկրի արարիչն:

* Մեղասէրն խնդայ ՚ի կռիւս. Առակ. ԺԷ. 19.

Նմանն. * Ար չարասէր բերկրի ընդ խռովութի:

Ներհակն. * Ար բարեսէր խնդայ ընդ խաղաղութի. կամ, տրտմի ՚ի խռովութի:

Առթ

*Ամօթ հօր՝ որդի անմիտ . ‖Առակ . ԺԹ . 13 :
Ըստ յոնն . * Ախտաւորինք ծնողաց՝ անմիտ ի զաւակաց :
Ըստ եբրհոյն . * Փառք են հօր՝ իմաստութի որդւոյ :
*Իմաստունք դարձուցին զբարկութի . ‖Առակ . ԻԹ . 8 :
Ըստ յոնն . * Հանճարեղք հաստատեցին զհաշտութի :
Ըստ եբրհոյն . * Յիմարք յարուցին զկռիւ :
*Պարտ էր ձեզ յընթեռնուլն զգիրս՝ ՚ի յայտնի եղելոց
, , բանիցն կերակրիլ , և զծածկեալսն լռութ̄
, , պատուել . ‖Ընդհանր . 233 :
Ըստ յոնն . * Պարտ էր ձեզ ՚ի վերծանելն զգիրս՝ զբացայայտ
, , բանսն ճաշակել , և զգաղտնեալսն լռութեամբ
, , յարգել :
Ըստ եբրհոյն . * Ձեզ ոչ էր պարտ յընթեռնուլն զգիրս՝
, , ՚ի յայտնի բանից անճաշակ լինել , և զծածկեալսն
, , յայտնութ̄ անմեծար առնել :
*Առաջի Այ̄ հոգւոյն աշխատակամութիւն պահանջի
, , և ոչ եթէ ՚ի մարդկանէ գիտութ̄ին . ‖Գրգ . նար . 559 :
Ըստ յոնն . * Առաքինութի հոգւոյն ընդունելի է Այ̄
, , և ոչ թէ փիլիսոփայական գիտութին :
Ըստ եբրհոյն . * Առաջի Այ̄ առաւել է զեղծ վարուք
, , փիլիսոփայն :

Արդ՝ զայսպիսի վերածութիւնդ կ զինչ մասացդ ծնունդ այնպէս պատշաճեցո՞ շարամանութ̄ հեղինակիդ , մինչև գիտունք միայն զօրեսցեն ճանաչել , թէ զտեսակ կամ զիմաստ բանին յայս ինչ վայրէ ունիս իբր քոյդ սեփհական շարադրութ̄ , և ոչ ՚ի վկայութ̄ : Յայսմ յանմի ակնածեալ զգուշութեց՝ ընդ հասարակացն գնամ յարահետ ճանապարհ . զոր օրինակ ցուցաք ՚ի (475) , թէ տէր բային թուով համաձայնի ը̄ բային . բայց յաւելաք ևս ՚ի (486) , թէ եզակի ունող անուանք՝ յոգնակի կերպիւ եղեալ են տէր բայի եզական բային : Ապաքէն պարտ է քեզ զառաջինն զընդհանրական կանոնն ը̄ գրկել , և զյետինն թողուլ՝ և ոչ դնել ՚ի գործ : Ի բաց ձգելի են և որքին (224 . 304 . 390 . 464 . 492 . 508 . 536 . 633 . 684 . 695 . 697 եւն) . զի այսպիսիք կարգեալ են միայն ՚ի տեսութ̄ ա-

լրու

լրուի՟ քերականութե՟, և ոչ ՚ի գործածութե՟ անդամին
՚ի նորավարժ կրթութե՟։

Այլ յառաջ քան զամ՟ հարկ է ուսանել զպարզ շարադրութի՟, և ապա սակաւ առ սակաւ բերել ՚ի միջակին տեսուն՟. և յանստերլիւր փորձեալ յերկոսին՝ զկնի զկրթին շարադրութե՟ ս՛նկ է բուռն հարկանել։ Զի եթէ չափով վերաբերեսցես՝ գերբան զչափս վերածնեալ շնորհիւն սր՟ Հոգւոյն, սեփհականես զհաստատութի՟ հեղինակին, զոր բաղձաս։ Եւ զի այսոցիկ պիտոյ է և վերծանութի՟, վ՟ն և զայն ծանուսցուք աստէն։

ԳԼՈՒԽ. ԺԼ.

Զի՞նչ է Վերծանութիւն։

Վերծանութիւն է վերստին ծանօթութի՟, կամ բաց հնչումն յարմարագրութե՟ և ենթադասութե՟ բառի և բանի։

869 Յարմարագրութիւն բառի՝ է ուղիղ գրութիւն բառից ըստ իսկական տառիւք, և սովորական պատուով։

Իսկական տառքն են, որովք երևելի մատենագիրք մեր սովոր են գրել հասարակաբար. զ՟ հայց, և ոչ հոյց. խորհուրդ, և ոչ խոյրհուրդ. ևն։ Այլ մինչ յընտիր ձեռագիրս տեսցես զլծորդատառն փարեալ փոփոխակի, զ՟ մանկունքն գրեալ՝ մանգունք. նենգութի՟ նենկութի՟. զգաստութի, զքաստութի. խամրանալ, համրանալ. անկել, անգել, ևն. այս չէ՛ յաճախեալ յամենեսին. այլ՝ կամ է վ՟ տարբեր սովորութե՟ արտաբերութե՟ գաւառին, կամ յարտասանութե՟ գրագրին, ո՟մ և յոյժ է։ Ապա չէ՛ արժան զայսպիսի միմնաւորս առնուլ օրինակ. այլ հարկ է համարձակ հետևել հեղինակաց հաստատուն գրութեց. զորս ցուցցէ քեզ բաւական հեղինակութի՟ բառարանաց։

870 Յարմարագրութիւն բանի է ուղիղ որոշումն անդամոց բանին՝ կետիւք։

Են

871 Ենթադատութիւն բառից՝ է ստոյգ դատումն նշանակութեց նոցին՝ ըստ և յատուկ արտասանութ՟բ վանկիցն՝ յարմար ըստ սեփհական հնչման տառից ըստ հագագին և ըստ ժամանակին. զի ոչ ընթեռլ դնչու և կակազ, և ոչ կոկորդալիր խորխոտ և խժխոտ, և ոչ յոյժ յամր իբր վանկ առ վանկ. որք ձանձրոյթ և թնթիւն են խոհական ունկանց։

872 Ենթադատութիւն բանի՝ է ստոյգ դատումն ի մասանց ածոյ առաջիկայ բանին՝ ըստ պէսպիսութ՟ե իմաստիցն արտաբերեալ առոգանութ՟բ։

Ապաքէն յասացելոցս հետևի, թէ առ կատարելութ՟ի յարմարագրութ՟ե և ենթադատութ՟ե՝ հարկ է գիտել զպատիւն, զկէտս, և զառոգանութ՟ի։

Յօդուած. Ա։

Զի՞նչ է Պատիւն, և քանի՞։

873 Պատիւն է գիծ ինչ եդեալ ՚ի բառս փոխանակ տառի։ Այսպիսի գիծք են այս երեքս՝ պատիւ ՟, երկորեակ ″, սիւն ʼ։

874 Պատիւն անուանի և՝ դուր կամ քաշ. և դնի ՚ի բառս սովորականս՝ և յանսովորս։

՚Ի սովորական բառս եդեալ՝ ցուցանէ բարձեալ ՚ի միջոյ զձայնաւորս և զբաղաձայնս. որպէս՝ ա՟ծ, եպ՟ս, ո՟պ, ն՟ս, վ՟ն, և այլն։

Յանսովորս՝ ցուցանէ ՚ի միջոյ բարձեալ միայն զձայնաւորս. որպէս՝ բ՟ն, ծ՟ռյ, յ՟ղս, ն՟ր. և այլն։

Զայսպիսիս տես և ՚ի քերականն։

875 Սովորաբար պատուելին համարի զպատիւն հնարեալ ՚ի յարգանս տէրունի անուանց. ոչ ըն մի՛ պարզապէս գրելոյն, այլ՝ ամփոփ պատուով մեծարելոյն. կարծիք վայելուչ նշանակութ՟ե պատուի բառիս. Այս միտ և բ՟նլք ՚ի գ՟րց անպատուութ՟ե անարգ իրաց դնեն ՚ի ներքոյ այսպէս՝ սատ՟նյ, չ՟րծ, ևն. որպէս և ոմանք դժխատաւն շրջեն ըստ այսմ՝

Պեռ, Պետրոս, Կուայքէս, ևն։

876 Նոյն սղեգք դասին և երեքինս՝ նշանագիր, նշանագիծ, և փակագիր. որք վարին փոխանակ ամբողջ բառի։

877 Նշանագիրն է ձևացեալ ՚ի գրոց բառին այսպէս՝ այ, այսինքն. ևն, և այլն. զր, զոր օրինակ. ը, ընդ. ըմ, ընդ այնմ. պն, պատասխանի։

878 Նշանագիծն է ձևացեալ ընդ ինքեան. որպէս՝

🜨	աշխարհ.	☿	փայլածու.	♋	խեցգետին.
⚲	երկինք.	♀	արուսեակ.	♌	առիւծ.
♁, ♁	երկիր.	♂	հրատ.	♍	կոյս.
∩	եկեղեցի.	♃	լուսնթագ.	♎	կշիռ.
▤	աւետարան.	♄	երևակ.	♏	կարիճ.
✱	աստղ.	♅	հեռաշէկ.	⟷	աղեղնաւոր.
ƍ	որպէս.	♈	խոյ.	♑	այծեղջիւր.
☽	լուսին.	♉	ցուլ.	♒	ջրհոս.
☉, 6	արեգակն.	♊	երկուորք.	♓	ձուկն. ևն.

Յայսցանէ միայն ծն և ցն վարի ՚ի հասարակ գիրս. իսկ միւսքն գտնին յուսումնական մատեանս, կամ յայլ հարկաւոր տեղիս։

879 Փակագիրն է ընդ. միոյ գրի ձևով փակեալ անուն իմն. և այս՝ որոշ կամ անորոշ.

Որոշն ունի զսկզբնատառն իւր ՚ի յսկիզբն այսպէս՝

ԴԼ. որ է դանիէլ.

Անորոշն է, որ ընդ հաձուն սկսեալ լինի այսպէս՝

ԱՄ. որ է ադամ։

880 Երկորեակն դնի ՚ի բառս ՚ի տեղի ձայնաւորի միայն. ց, խոն″րհ. ք″հ″նայ. օգն″կ″ն. ևն.

Դնի և ՚ի վերջ կարճեալ բառիս՝ գրիգ″ գրիգոր.

դանի'', դանիէլ · յովհ'', յովհաննէս, եւն. բայց զգուշանալ արժան է, զի մի՛ այլ բան իմասցի · Օ, նիկո'' · կարէ ընթերցեալ լինել՝ նիկողոս, նիկոդիմոս, նիկոմեդեայ, եւն. ուստի ՚ի յոյժ յայտնի բանս դնելի՛ է ։

Իսկ յանկատար բանս դնի նշանագիրս՝ եւն ։

881 Սիւնն է միակ ձիւղն բոլոր գիր այբի · և դնի միայն ՚ի մէջ բոլոր գիր բառի՝ ՚ի տեղի այբի այսպէս՝ փրկչապետ, տիրկին, եւն ։

Յօդուած · Բ ։

Օ՛ ի՛նչ է Կէտն, եւ տանք՞ ։

882 Կէտն է նիշ խմն որոշիչ անդամոց բանին · և են երեքս՝ ստորակէտ, միջակէտ · վերջակէտ ։

883 Ստորակէտն դնի յանկատար բանս · և ցուցանէ, թէ չայն հատուած կցելի է ը՟ ստորև հետևեալ բանին ։ Ուստի և յարտասանելն՝ կախ թողուլ պա՛րտ է անդ զձայնդ իբր անկատար · ոպ՟ բութ ակսանել՝ և սուր աւարտել ըստ ձևոյն · սմին իրի և ՚ի հին ձեռագիրս ինչ՝ բութ դնի ՚ի վ՟ր ստորակետին · և գործածու ի սորին բազմիցս փոխանակի վարի ընդ բութին · ոպ՟ ունիս տեսանել ՚ի հետևեալն (910) · եւն ։

884 Սա՝ մինչ դնի ՚ի վեր կոյս հոլովակերտին ՚ի, անուանի անդ մոխանէր · ոպ՟ վերնակէտ ·

803 Միջակէտն դնի ՚ի կատար կատարեալ բանի · և կոչի միջակէտ, զի ա՟ռ պատուելոյն՝ ՚ի պարզեբերութեան ունի զմիջին տեղի · ոպ՟ ՚ի մէջ ստորակետին և վերջակետին ։ Ուր ՚ի հասանելն՝ սակաւ ինչ խմն իբր պարուկելով հատանել պա՛րտ է զձայնդ՝ և շունչ առնուլ · ուստի և ՚ի հին ձեռագիրս ինչ՝ պարոյկ դնի ՚ի վ՟ր միջակետին ։

Բազմիցս դնի միջակէտն փոխանակ վերջակետի, սակս յոյժ սակաւ գոլոյ բանին · Օ, *Հոգի է Ա՟ծ ։
Յովհ · Դ · 24 ։

886 Վերջակէտն դնի 'ի վերջոյ տան, ուր վերջաւորի բոլոր իմաստ պարբերութեան. որում հետևի գլխագրով սկսանել: Նա որ 'ի ժամանելդ՝ հարկ է իբր շեշտելով վերջացուցանել զձայնդ և հանգչել. զի հետևեալ տանն իմաստ իբր նոր սկզբն առցէ յունկս լսողին. վ̅ն որոյ և 'ի հին ձեռագիրս իսկ՝ տեսանի շեշտ եդեալ 'ի վ̅ր վերջակէտին:

Ահաւասիկ քեզ օրինակ դրութ̅ երից կէտից. որպէս՝

*Որ աւելի քան զարժանն իւր գովի կամ պատուեսցի, նա մեծապէս տուժեսցի. իսկ որ 'ի մարդկանէ ոչ գովի կամ պատուի, նա յԱ̅Յ փառաւորի: ‖ Հարանց վարք. 346:

*Եթէ ումեք ոչ հաւատաս պատմել զխորհուրդս քո, նշան է այն թէ խոնարհութ̅ ոչ ունիս. զի խոնարհն զամենեսեան սուրբ համարի, և զինքն մեղաւոր: ‖ Հարանց վարք. 354:

*Որ զմի ոք 'ի փոքրկանց գայթակղեցուցանէ, չէ արժան զերեզմանի. իսկ որ բազմաց կորըստեան պատճառ լինի, զի՞նչ զնա ասիցես:

‖ Հարանց վարք. 532:

887 Ընդ սոքօք կարգին և երեքին գիծքս՝ չակերտ »» փարենթազիս ( ) և ենթամնայ ‿ :

888 Փարենթազիսն կոչի և եղնգաձև կամ փակագիծ: Սա 'ի մէջ բանի այնպէս փակէ զբառ կամ զբան ինչ, մինչ զի առանց կարդալոյ զփակեալն ը̅ն նովաւ՝ կատարեալ մնայ իմաստ բանին. Ց̅, *Հարկ է քրիստոնէին՝ (որ կարողն է), զի ըն-տասցի գիրս. ‖ Հարանց վարք. 12: Առանց ընթեռնլոյ զփակագծին միջանկեալս՝ որ նորին է, կատարեալ է իմաստն այսպէս. *Հարկ է քրիստոնէին, զի ուսասցի գիրս: Բայց այժմ գործածութ̅ի 'ի փակագծիս խափանեալ է առ բազումս. որոյ փոխան դնի յառաջոյ միջանկելոյն բութ, և 'ի վերջոյ ստորակէտ. ոպ̃ տեսանի և 'ի (915):

889 Չակերտն դնի 'ի սկիզբն այնպիսի բանից, որ չէ 'ի նոյն հեղինակէ այնմ գրոց. այլ յայլմէ բե-

րեալ եղեալ են 'ի չորս բանից իբր վկայութ կամ օրինակ: Այլ երբեմն 'ի տեղի չակերտի դնի զոյգ ստորատս՝ ,, . ոպ տեսանի 'ի (854):

890 Ենթամնայն է նշան կցելոյ զհեռաւոր վանկըն միոյ բառի. և այս՝ 'ի բաժանիլ բառին յեզեր տողին դնի 'ի ներքոյ. զի ցուցցէ՝ թէ միւս մասն տողին է 'ի սկիզբն յաջորդ տողին. ոպ տեսանի աստ, և յայլ տեղիս:

Այլ որովհետև հարկ է ուղիղ հեգելով բաժանել զվանկսն. վնյ կարևոր վարկաք յաւելուլ աստէն և զկանոնս հեգելի և փաղառութն:

Յօդուած. Գ.

Թէ որպէս հեգելի և բաժանելի են Վանկք բառին.

891 Հեգ և փաղառութն է յօդաւորութն տառից ընդ միմեանս՝ 'ի կազմել զվանկս: որոց վն

Ծանօթութն. ա.

892 Բառն բաժանի 'ի վանկս ըստ թուոյ հնչման ձայնաւորացն, և լինի միավանկ կամ բազմավանկ:

Միավանկ բառն է, յորում հնչէ մի ձայնաւոր՝ կամ իբր մի ձայնաւոր. օր. աղ, հեզ, սէր, քար, սիրտ, ծով, հօտ. կեանք, գեօղ, եւղ, ձիւղ, սուրբ, փայտ, գոյն, եւն:

Ասացի՝ իբր մի ձայնաւոր. քանզի 'ի վերջոյ դասեալ յեօթն բառս զուգեալ երկոքեան ձայնաւորքս՝ եա, եօ, եւ, իւ, աւ, ոյ, այ, ներքնաշնակութբ հնչեն իբր մի ձայնաւոր: Զորս և օտարք կոչեն երկձայն վանկ. ըստ երկու ձայնաւորօք յօդեալ իբր մի:

Արդ՝ միավանկ բառք ոչ երբէք բաժանին. զի միանգամայն հեգեալ միով հնչմամբ արտաբերին:

Բազմավանկ բառն է, յորում երկու՝ երեք կամ և աւելի ձայնաւորք հնչեն ուրոյն ուրոյն, և ըստ թուոյ ձայ ձայնաւորաց հեգեալ և բաժանեալ՝ լինի երկվանկ, եռավանկ, քառավանկ, հնգավանկ, եւն։

Ծանօթութի. Է.

893 Բազում բառք զօրութբ ունին զձայնաւորս՝ ը 'ի սկիզբն կամ 'ի մէջն. զորս 'ի հեգելն՝ և 'ի բաժանելն՝ և կամ 'ի կոչական հոլովս 'ի չեշտելն հարկ է նշանակել ներգործութբ. որպ տեսանի 'ի հետևեալ բանս (894. 902)։

Կանոն. Ա.

894 Պարզ բառից զիւրաքանչիւր ձայնաւորն պարտ է հեգել և բաժանել յառաջոյ միով բաղաձայնիւ. Դ, ա րի. ա ւե տիս. ըն կեր շա կել. զըղ ջումն. ըշ տապ. սըփ ռել. երկ չոտ. որդ ւով. ձանձ րոյթ. ըղ շը նորհ. եւն։

Կանոն. Բ.

895 Եթէ լինին երկու ձայնաւորք անմիջապէս, բաժանին և հեգին այսպէս. ա եր. է ակ. մի այն. դի եղ. է օծ. լի ով. եւն։ Այսպէս բաժանին և տառքս՝ յ, ւ. մինչ վարին իբր ձայնաւոր. Դ, կայ անք. կայ ուն. գոյ ակ. գոյ ու թիւն. հե ղու լին. հիւ պա տոս. հիւ սի սայ ին. եւն։

Կանոն. Գ.

896 Անկն՝ ու, մինչ հնչէ իբր վէւ, հեգի և բաժանի ըստ այսմ. Աստ ուած. ար ուեստ. պատ ուական. պըղըտ ուեայ. պը ուե տի կոս. եւն։

Կանոն. Դ.

897 Բարդելոց՝ և ածանցելոց մասնկամբքս (74), հարկ է զատ հեգել՝ և ոչ փոխեկոտել զբառս և զմասնիկսն. թէ և յաջորդ բառին ձայնաւորաւ ըսկըսանել հետևեսցի. որպէս՝ կայծ առ. Ջեր արբ.

Թոփչ

Թովմ · ա բայց · պէտ ձա բան · մէջ տա յարգ · ան-արգ · ընդ · արմ · ան աչ տու ա ըս մխւս · նշ ։ տե ս և յայբբենարանս ։ Այսքան չափ համառօտաբար վ̅ն բաժանման և հեղման վանկից, յատուկ գլխով ծանուցուք և զատուցանութիւն · որ է արտաքին նշան քաջ վերծանութեան ։

ԳԼՈՒԽ · ԺԸ ·

Զի՞նչ է Առոգանութիւն, և քանի՞ են նշանք նորին ։

Առոգանութիւն է առոյգ ասութ̅ իւն յատուկ ընթերցուածս տառից՝ վանկից՝ բառից և բանից, զարտաբերութիւն յարմարելով ընդ նշանացն ։

899 Այս նշանք առոգանութե̅ ըստ ոլորակին ը̅ս ժամանակին և ը̅ս հագագին են ութն · որոց անուանք և գիծք են այսորիկ ·

Շեշտ՛ · բութ՝ · պարոյկ ͡ · ոլորակ ̊ · երկար ́ · սուղ ̊ · ստորակ ˏ · թաւ ̂ ։ Առջին նախադասս վեցն դնին ՚ի ձայնաւորս, և յետին երկուքն ՚ի բաղաձայնս · որոց հնչումն և գործածութ̅ին են այսպէս ։

900 Շեշտն է նշան զձայնին սաստիկ սուր հնչելոյ, ո̅ր ըստ ձևոյն ՚ի վեր սաստելոյ ։

Արդ՝ ա̅մ բառք լեզուիս մերոյ առանց ունելոյ զշեշտն, ո՛չ թէ շեշտին ՚ի վերջին ձայնաւորսն · բայց ներգործութ̅ պահանջեն դնել յայսոսիկ ։

901 Այս՝ դնի շեշտն յառաջին վանկն կոչականին, մինչ մի միայն իցէ · որպէս՝

*Շ՛նացողք՝ ո՛չ գիտէք, զի սէր աշխարհիս այսորիկ թշնամութ̅ի է առ Ա̅ծ · ‖ Յակոբ · Դ · 4 ։

*Սիրելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ո՛չ պարսաւեսցեն, համարձակութ̅ի ունիմք առ Ա̅ծ · ‖ Ա̅ · Յովհ · Գ · 21 ։

*Դուք Ա̅յ էք որդեակք · ‖ Ա̅ · Յովհ · Դ · 4 ։

902 Այլ եթէ կոչականն իցէ բազում, շեշտն դնի ը̅ս հաճութե̅ ՚ի վերջին կամ յառաջին · որպէս՝

*Սաւուղ սաւո՛ւղ՝ զի՞ հալածես զիս · ‖ Գործ · Թ · 4 ։

*Երուսաղէմ երուսաղէմ՝ որ կոտորէիր զմարգարէսն. ‖Ղուկ. ԺԳ. 34։

*Ալ անխնայեմ յիս ողորմութե՝ բարեգութ, կենդանի, Հզ՛օր, կամարար, կարող, Հզ՛օրաւոր, օրհնեալ յաւիտեանս. ‖Նոր. ԽԷ. 3։ (893)

903 Բայց եթէ կոչականն յառաջոյ ունիցի զմիջարկութիւնս՝ ով, ո, չեշտն դնի ի սոսա. և թէ ունիցի զածական, չեշտն դնի ի վերջին վանկն նախադաս ածականին. որպէս՝

*Ուսիր ոչ անձին զպատուէրանս Ք̄ի. որ անարգիւր և ինքն ոչ փոխանակ անարգէր. ‖Հռոմ. ԺԵ. 39։

*Ո՛վ անմիտ գաղատացիք. ‖Գաղատ. Գ. 1։

*Անպակաս բարութի, անսպառ շնորհ. ‖Նոր. ԽԶ. 2։

904 Դնի և երբեմն ի զգուշութի անուանց, որք են ուղղական բուն խնդրիր էական բայից. Դ.

*Այր հեզ և երկայնամիտ՝ բժիշկ է սրտի. ‖Առակ. ԺԴ. 30։

*Խորհրդակից է Ա̄յ իմաստութի. ‖Իմաստ. Ը. 4։

*Որ կամակոր է յուսմանէ, անկցի ի չարիս. ‖Առակ. ԺԷ. 16. (594)։

905 Երկրորդ՝ չեշտն դնի ի ցուցական դերանունս՝ սա, դա, նա, մինչ լինին տէր բայի էական բայի. Դ, *Սա է որդին Ա̄յ. ‖Յովհ. Ա. 34։

*Դա է որդի իմ սիրելի. ‖Մատթ. Գ. 17։

*Նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. ‖Կողոս. Ա. 18։

906 Երրորդ՝ չեշտն դնի ի բայս՝ ի վերջին վանկս հրամայականին. որպէս՝

*Տուեա՛ յառաջապահ բանիւ՝ որ առաջնորդ-
„դես, զաշակերտսն քո ի հոգևոր պատերազմ.
„զրահեա՛ խրատմամբ յուսով բարեացն, և փա-
„կեա՛ վահանաւ ուղիղ հաւատոյն, և սաղաւար-
„տեա՛ յուսոյն Թ̄յ. և խրախուսեա՛ զսա աւետարանակին
„ուսմամբն Ք̄ի. և պնդեա՛ զձեռս բանիւք համ-
„բերութ. և դի՛ր դանակ և սուր ի ձեռս, որով
„կտրէ զխաս ցանկութեանց. ‖Հարանց վարք. 252։

907 [illegible] թէ հրամայականն յառաջ քան զինքն

ու

ունիցի զբան ինչ 'ի միասին փարեալ , շեշտն դնի 'ի վերջին վանկն նախընթացին · որպէս՝

*Մանուկ կրօնաւոր թէպէտ և զերկինս բանայ, մի՛ մոռանէր · ‖Հարանց վարք · 521 ·

Մ՝ի և զպահս հաւատոյ լուծանէք 'ի ձուկն և 'ի գինի · ‖Ընդհանր · 68 ·

*Հաստատուն կացէք , և պինդ կալարուք զաւանդութիւնս · ‖Բ · Թեսաղ · Բ · 14 ·

*Ո մնա՛ս ածէք , զի և ձեր տէր գոյ յերկինս · ‖Ընդհանր · 63 ·

*Վշտանայցէ ոք 'ի ձէնջ , յաղօ՛թս կացցէ · բերկրեսցի ոք · սաղմո՛ս ասասցէ · ‖Յակոբ · Ե · 13 ·

903 Դնի շեշտն և 'ի բնականն անդէմ բայս · Գ ·
*Անկար է մարդոյ , մինչ ունիցի զքաղցրութիւն կենցաղոյս , եթէ ունիցի զքաղցրութիւն Այ · ‖Հարանց վարք · 35 ·

*Սակաւս շա՛տ է իմաստնոյդ · ‖Ընդ · 89 · (597 · 336)

909 Չորրորդ՝ շեշտն դնի և 'ի վր ոմանց մակբայից՝ ստորասականի , բացասականի , արգելականի , և դերբերդմնականին · Գ , *Պա՛րտ է մանկանց
,, . . . սակաւ բարբառել և շատ իմանալ · և մի՛
,, յանդգնել 'ի բանս , և մի՛ յաճախել 'ի խօսս · մի՛
,, պատրաստ լինել 'ի ծաղր , այլ՝ ամօթխածութբ
,, զարդարել զինքն · ընդ կանայս ամենևին մի
,, խօսել , զակն 'ի խոնարհ ունել , և զմիտսն 'ի վեր ,
,, և փախչել 'ի հակառակութէ · ‖Հար · վարք · 252 · ձեռ ·

Տե՛ս և 'ի (407 · 408 · 409 · 420 ·) , նաև 'ի վարանականն շաղկապս (447) ·

910 Բութն է նշան զձայնին կարճ և հատ հնչելոյ , որ իբր ձևոյն 'ի վայր հարթելոյ ·

Արդ՝ նախ դնի բութն 'ի դասական թուականս , մինչ լինին մակբայ (398) , կամ առանց գոյականի տէր բայի յօդին · Գ , *Եւ հիմունք քաղաքին
,, յամ ականց պատուականաց · հիմն առաջին սա
,, ընդաղին յասպիս · երկրորդն՝ շափիղայ · երրորդն՝
,, պղնձագոյն · չորրորդն՝ զմրուխտ · հինգերորդն՝

ե

,, եղեգնաչքար․ վեցերորդն՝ սարդիոն․ եօթներորդն՝
,, ոսկեքար․ ութերորդն՝ բիւրեղ․ իններորդն՝ տպա-
,, զիոն․ տասներորդն՝ քրիսոպրասոս․ մետասանն՝ յա-
,, կինթ․ երկոտասանն՝ ամեթուս․ ‖ Յայտն․ իա․ 19։

Դնի և ՚ի յոմանս շաղկապս՝ (437․ 440․ 445)։

911 Բայց որոշեալ փոփոխակի դնին բութն և ստորակէտն, ուստի զգուշ է տեղին հասարակաբար արժան է գիտել։

Նան՝ զի բազմիցս ՚ի համառօտ յանկարծ բանս դնի բութն ՚ի տեղի ստորակէտի․ որպէս՝

*Չիք ոք բարի՝ բայց մի Ած․ ‖ Մարկ․ Ժ․ 18։

*Ու եթէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դատապարտէաք․ ‖ Ա․ Կորնթ․ ԺԱ․ 31։

*Որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ․ ‖ Մատթ․ ԺԲ․ 30։

912 Երկրորդ՝ մինչ բազում բայք կամ անուանք մի և նոյն համաձայնութբ անմիջապէս շարայարեսցին առանց շաղկապի՝ և, հասարակաբար դնի ՚ի մէջ ստորակէտ կամ բութ․ Ձ․ *Սորա՝ լքաւ, մեր-
,, ժեցաւ, բարձաւ, տրոհեցաւ, փախեաւ, սրացաւ,
,, տեղի ետ կցորդութն զուգութե կենցաղոյս կեն-
,, դանութն․․․ Տէս ողորմութբ․․․ Սուրբ Ած՝ քա-
,, ւել՝ բժշկել՝ կենագործել՝ պաշտպանել՝ նորո-
,, գել՝ նկարել՝ կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղ-
,, ծագործել յերջանիկն անարատութի․․․ Չիք քո
,, անկարութի, այլ ամենևին զօրութի, բարձրութի, իշ-
,, խանութի, անփոփոխելի թագաւորութի, էակութի, ինք-
,, նութի, ամենատեղի բացարձակութի, բարերարութի,
,, լուսաւորութի․ ‖ Նար․ ՀԳ․ 2․ 3։ տես և ՚ի (500․ 612)։

913 Իսկ մինչ այսպիսիք շարայարեալ իցեն շաղկապաւ՝ և, դնի միայն բութ, կամ ոչինչ․ ոպ տեսանի ՚ի (479․ 599․ 604․ 624․ 687․ ևն)։

914 Իսկ եթէ այսպիսի շաղկապաւոր անուանք ունիցին զածական, զյետադաս, զյարակցութիւն, ևն․ անդ հարկ է դնել զստորակէտ կամ զբութ․ Ձ․ *Զետո-
,, ցից տալ զխորանն և զտապանակն և զզոհիցն զա-
,, նազան մատուցմունս, և զյեսուանեայ, և ըզ-
գաւազն

,, դարձին յորդանանու, և զանցանելն ժողովրդոց,
,, և զկործանելն երիքովի, և զյաղթութիւն ի պատերազմաց,
,, և զերկիրն աւետեաց · · · որ են յօրինակս
,, աւետաւորոյս վարդապետութեանք՝ նորոյ Ճշմարտութեան ·
‖ Ընդդէմ · 254 : Տես և ՚ի (604 · 612 · 480 · ևն):

915 Երրորդ՝ եթէ ՚ի բանի իմիք գտցի բառ ինչ՝ կամ բայ, կամ խնդիր, կամ յարակացուցիչ, ևն բաժանեալ միջանկեալ բանիւ, պարտ է յառաջոյ միջանկելոյն դնել զբութ, և ՚ի վերջոյ զստորակէտ՝ կամ ևս զբութ · որպէս՝

* Մարդոյ՝ որ ոչ հաւատասցես՝ թէ ո՞ք է, մի՛
,, հաւատար զխորհուրդս քո · ‖ Հարանց Վարք · 26 :

* Բանականութեան յարգանօք կրկին Ճոխացար · զի
,, զյաղթական բարեմասնութիւնն՝ որ առ քեզ եղեն՝
,, անարգել լեզուաւ խօսեսցիս · ‖ Նար · Խը · 2 :

* Յերկու բնութիւն ասելոյն՝ յորժամ ոչ վասն բաժանման
,, լինելն ասացեալքն ըստ Նեստորի, այլ վասն զանշփոթութիւն
,, ցուցանելոյ ընդդէմ հակառակաց
,, Եւտիքեայ և Ապօղինարի, ոչ վախճիմք · ‖ Ընդ · 91 ·

* Զի մի՛ յանուսումն ազգաց լսելով բան՝ որ
,, ոչ ըստ ուղղափառ եկեղեցւոյ դաւանութեան, այլ արտաքոյ
,, ճշմարտութեանց գրոց բարբառին՝ ՚ի կործանումն
,, լսողաց, մոլորիցի որք ՚ի Քրիստոնէին · ‖ Ընդդէմ · 8 ·

* Յայսպիսի սերմանեաց աճեցեալ և պտղաբերեալ՝
,, ոչ թուի իմաստուն քննողաց, այլ քան
,, խաւարին ատելութեան ՚ի մէջ երկուց ազգացս ·
‖ Ընդդէմք · 183 · Տես և ՚ի (423 · 757 · 759 · ևն):

916 Չորրորդ՝ մինչ աներևոյթն կամ բայացեալն իւրեանց խնդրովք գտցին յառաջ քան զգլխաւոր բային, պարտ է ՚ի վերջ խնդրոյ նախադասականին դնել զբութ կամ զստորակէտ · որպէս՝

* Որ յաճախն ընձեռել՝ բազումս փառաւորիս · և
,, ՚ի շատն մատուցանել՝ նուէրն շնորհի սիրիս · և յառաւելն
,, ողորմել՝ կրկին բարգաւաճիս · ‖ Նար · Ժէ · 3 :

* Զի եթէ ՚ի միոյ ուրուք մերձ լինելոյ՝ արդարեւ
,, լուն մարդիկ յանարժանս գործելոյ · յորժամ

,, հաւատայ ոք զԱԾ լինել տեսող, զիա՞րդ ժպրհէ
,, կամ խօսել ինչ կամ գործել կամակոր մտօք
,, զչարութիւն. Ընդհանր. 13.
*Վարդապետք եկեղեցւոյ ընդդէմ իւրաքանչիւ-
,, րոց սոցա (քն հերձուածողաց) խօսելով զբանն
,, մինչ համառօտ միոյն բարբառին, 'ի միասին
,, կոչեն լինել թուղթն ազգաց. Ընդհանր. 234.
*Այլ մեք իբրև 'ի կամաւոր բանդի և 'ի կապանաց
,, յայսմ տօթագին քարանձաւի արգելեալք,
,, գրով ձեռին մերոյ խօսիմք ոչ բերանով ընդ
,, ամենեսին. Ընդհանր. 7.
*Ո՛ զի՛ և զչարին ընտրականացն բարեմասնութ
,, ՍԲ հաճելեացն զինեալ սատանիօր, զայս պատ-
,, կեր բանի ընկալեալ նախնի գահերէց, առ'ի սըր-
,, բութեցն մեւտ սովորիմք համարձակել: Յով. Ժ. 2.
*Փութալ 'ի խրատել և ուսուցանել ըստ աստուածային
,, գործոյ հարկաւորութ՝ և միշտ ձմլել զկաթն բանին
,, ոչ 'ի բերանս հոգւոց տղայացելոց 'ի Քս, ահա
,, յանհնարէցն է ըստ վերոյգրելոցդ այսմ ժամանակի
,, և տեղւոյ անձամբ մերով զայս առնել. Ընդհ. 7.
*Մեծատունքն և փափկացեալքն 'ի ձեռն ողոր-
,, մած լինելոյն առ այնպիսին՝ հասցեն մեղաց քա-
,, ւութ և երկնից բարութեցն զքաղցեալսն կերակ-
,, րելով, զմերկսն զգեցուցանելով, զօտարսն ժո-
,, ղովելով, զհիւանդսն և զբանդեալսն յանձանձ-
,, ելով. Ընդհանր. 220.

917 Իսկ եթէ դիմաւորն խնդրովքն նախադասես-
ցի քան զանդամս դերբայաւոր կամ բայացեալ
բանի, հարկ է 'ի կատար խնդրոց դիմաւորին դը-
նել միայն զստորակէտ. և երբեմն զբութ, մինչ
նուազ է յետադասն. որպէս՝

*Ո՞ իմդ և 'ի բժշկականն ժպրհեցայց տածումն
,, մայրենոյ եկեղեցւոյ ըստ սամարացւոյն օրինակի,
,, անբժշկելի ունելով զանձն 'ի զանազան ախտից
,, անյայտից եղելոց. Ընդհանր. 225.
*Մեծ կայսրն յունաց բարսեղ ո՛չ փոքր ինչ պայ-

,, մանն խաղաղութե և նուաճութե և սիրոյ հաստա-
,, տէր է աշխարհին մերոյ Աշոտոյ , որդւոյ Սմբատի զնա
,, անուանելով , և հաղորդակից կացուցանելով յամ-
,, թագաւորութիս թագաւորութե իւրոյ ։ Յովհ ։ կթղ ։
* Նոյն իսկ էութին Աշոտ մարմին եղելոյ՝ անուամբ
,, այս մինչ նշանակեցաւ , պատուանամբ կոչին
,, զքնաւս արքունեաւ ։ Նարեկ ։ ՀԵ ։ 12 ։
* Ո՜րնչ օգտեցուցանես զերկրայինս՝ բամբասանե-
,, լոյծն զնա առ այլս ։ Ընդհանր ։ 29 ։

918 Ութերորդ՝ վայելչութեամբ դնի բութն ՚ի յայտ-նիշն , մինչ առաջի ունիցի զկայունեալն (610)։ Այլ և յայնպիսի բառս , զի որոշեսցի խնդիրն ՚ի յառաջացուցչէ , եռ ։ Գ , * Պատմեաց բանաստեղծն ,, զբանսն՝ պօղոսի ։ Գործ ։ ԺԳ ։ 36 ։
* Վարդապետք եկեղեցւոյ ՚ի պէս պէս օրինակս հա-
,, մեմատեն զսոսա Ճշմարտութե (ՏՐ) զդրախտին ե-
,, կեղեցւոյ · զծառն կենաց՝ զՔն , և զծառն գիտութե
,, չարին մահին · · · և զայլ տունկսն՝ այլոց պատուի-
,, րանաց Այ · · · և զգետոյն բղխումն՝ չորից աւետա-
,, րանչացն · · · և զհինն ադամ՝ նորոյս ադամայ · · ·
,, և զեւայ՝ եկեղեցւոյ · · · և զօձն՝ սատանայի ։ Ընդհան ։ 255 ։
Որպէս և ՚ի մեկնականն բանս յաւելեալ լինի և բութն՝ ՚ի ցուցումն բառի իրիք ։ որպ և աստ է տեսանել ՚ի բազում բացատրութիս բանի ։

919 Պարոյկն է նշան զձայնին յսկիզբն չեշտի՝ բարձրացուցանելոյ , և ՚ի վերջին բթին իջուցանելոյ ։ Իբրու ասի եւ՝ եւեէջ ։ և է բաղկացեալ ՚ի չեշտէ և ՚ի բութէ ։ Սա դնի ՚ի միջարկութիս (454 ։ եռ) ։ Իսկ մինչ ՚ի միում բառի միանգամայն դնի չեշտ և բութ , է նշան պարուկելոյ ։ տես ՚ի (467 ։ 900) ։

920 Երկարն մերթ եւս կոչի պարոյկ ։ և է նշան զձայնին առաւել քան զպարոյկն ոլորելոյ ։ Սա դնի ՚ի հարցականս (53 ։ 397 ։ 716 ։ եռ) ։ Դնի և ՚ի բառս՝ յոր հարցումն երեւի ։ Գ , * Եթէ հանապազորդեան հա-
,, ցի՞ն աղօթեմ , զոր ո՛չ վաստակեցայ ։ Նարեկ ։ ԽԴ ։ 1 ։
* Տեսե՞ր զառաւելուն պարգեւացն ։ Եզն ։ Կողբաց ։ 55 ։

Իսկ

921 Երկարն է նշան զձայնն երկարելոյ. Սա դնի ի միջարկութիւնս (454. 455. եւն). Այլ երբեմն՝ երկար, ոլորակ, եւ պարոյկն դնին փոփոխակի.

922 Սուղն է նշան զձայնն սղելով ընդհուպ անցուցանելոյ, կ̅մ թռուցանելոյ: Ուստի եւ դնի ի չափաւոր բանս վ̅ն յարմարութ̅ ժամանակին. ոպ̅ տեսանի յոտանաւորս ի (839), եւ ի շարականս, եւն.

923 Սոսկն է նշան ողորկ կակուղ հագագի. զոր դնէին երբեմն յոտանաւորս ի վ̅ր նուրբ բաղաձայնից այսպէս. զ՚. ժ՚. ծ՚. կ՚. ղ՚. մ՚. ն՚. չ՚. պ՚. ս՚. լ՚. եւն: Բայց այժմ չէ ի գործածութ̅:

924 Թաւն է նշան հաստ հագագի. եւ դնի միայն ի բաղաձայն հիւնս, ի նշան հնչելոյ իբրեւ զվէւ. Բանզի տառս՝ ւ, մերթ վարի իբր ձայնաւոր, եւ չունի զձայն վէւի. եւ մերթ վարի բաղաձայն, եւ հնչէ իբրեւ զվէւ: Իսկ թէ յո՛ր բաղաձայն հիւնս պիտո՛յ է նշանակել զթաւն, ցուցցուք աստանօր.

925 Ձայնաւոր համարի տառդ՝ ւ, մինչ յարի զկնի ձայնաւորացն՝ ե, ի, ո. գ̅, եւղ. ձիւղ. բաւիւք. շուրթ. ուլթն. լեզու. զեղուլ. հիւսել, եւն. Բայց յարեալ ի սոսա՝ բազմիցս լինի եւ բաղաձայն. գ̅, եւ̂. ազնիւ̂. բանիւ̂. նուագ. հաւրւէ. արծուի. եւն: Այս հարկ է դնել զթաւ ի վ̅ր այսպիսի հիւնից. զի յայտնեսցի բաղաձայնութիւն, եւ որոշեսցի ի կասկածէ ձայնաւորութ̅:

926 Բաղաձայն լինի միշտ, մինչ յարի ը̅ միւս ձայնաւորաց. որ վ̅ն անշուշտ բաղաձայնութե̅ն ոչ երբէք պահանջեն նշանակել զթաւն. գ̅, աւազան. աւետիս. փառաւոր. հոգւով. առաւօտ. եւն.

Առաջին՝ այսքանիւք բաւականասցի հրահանգ երկրորդ հատորիս. զորոց անստգիւտ կատարեալ հմտութիւն՝ անձանձիր հետեւութ̅ մշակեալ, առաւել եւս արդիւնաւորեսցեն շնորհք Հոգւոյն Ս̅րյ:

Ուստի աստանօր ի համառօտն բովանդակեսցուք զսահմանս, զբաժանմունս, եւ զհետեւմունս մասանց բանի, եւ զընդհանրական կանոնս համաձայնութե̅ քերականութե̅ս:

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ․

Քերականութիւն արհեստ մի է, որ շիտակ խօսիլ՝ շիտակ գրել կը սորվեցընէ։

Չորս մասն ունի քերականութիւն․
գիր ․ վանկ ․ բառ ․ բան ․

Գիրն ջըզղըյէ նշան մի է, որ տառն կը ցուցընէ․ ինչպէս՝ ա, բ, գ, դ, ե, զ, եւն․

Տառն պարզ ձայն մի է կցելու և հեգելու․ ինչպէս ձայնս՝ ա, կու կցվի այս ձայնիս՝ ղ, և հեգելով կը հանէ ըմման ձայնս՝ աղ։

Ասկէ իմացիր, որ գրած ջըզղըյէ նշանն՝ գիր կըսվի․ և երբ գրին ձայնը հանես, այն ձայնն՝ տառ կըսվի։

Տառերն բաժանի յերկու՝ ձայնաւոր, բաղաձայն։

Ձայնաւոր անոնք են, որ մինակ ձայն ունին․ և է այս եօթնս․ ա՛ ․ ե՛ ․ է՛ ․ ը՛ ․ ի՛ ․ ո՛ ․ օ՛ ։

Բաղաձայն անոնք են, որ մինակ ձայն չունին․ ինչպէս՝ բ, գ, դ, զ․ թ, ժ, լ, եւն։

Վանկն մնորդու բերանէ մէկ հեղ ելած՝ և գրով կապած ձայնն է․ ինչպէս՝ աղ, հաց, ջուր, մեծ, սուրբ, վեց, ան, ուչ, եօք, եալ, եւն։

Վանկն բաժանի յերկու՝ նշանական, աննշան։

Նշանականն՝ բան մի կիմացնէ․ ինչպէս՝ աղ, հաց, ջուր, մեծ, սուրբ, վեց, եւն։

Աննշան վանկն բան չիմացներ․ ինչպէս՝ ան, ուչ, եօք, եալ, եւն։

Բա

Բառն մարդու բերանէն ելած՝ գրով կապած՝ բանի մի ցըցընող ձայնն է. ինչպէս՝ հաց. շատ. ապրիմ. եւն:

Բառին ձեւն երեք է. պարզ. բարդ. կրկնաբարդ:

Պարզ բառն այն է, որ մէկ բառ է. ինչպէս՝ ժամ. գիրք. Ա՟ծ. շունչ. օր. այս. ինքն. ընթեռնու. սիրեմ. գործող. եւն:

Բարդն է, որ երկու բառ մէկ տեղ փակած է. ինչպէս՝ ժամագիրք. Ա՟ծաշունչ. ինքնագործ. ընթերցասիրեմ. այսօր. եւն:

Կրկնաբարդն է, որ երեք բառ մէկ տեղ փակած է. ինչպէս՝ ողբերգակութիւն. սեռականաձեւ. փոշփոշասէր. եւ այլն:

Բանն է շինակ շարած բառերն, որ կիմացնեն միտքին խօսքը. ինչպէս՝ *Որդի խրատեալ իմաստուն լիցի, և զանմիտն 'ի ծառայութ՟ն վարեսցէ:

Աչուէ այս շինակ շարած բառերս կիմացնեն զայս խօսքը. խրատած որդին՝ խելօք կըլլայ, ու անխելքը քեօլէ կըլնէ.

Բանն բաժանի յերկու՝ կատարեալ, անկատար:

Կատարեալ բանն՝ լման կիմացնէ միտքն. ինչպէս՝ *Լաւ է մանուկ աղքատ և իմաստուն, քան զթագաւոր ծեր և անմիտ:

Անկատարն է, որ խօսքը կիսատ կը թողու. ինչպէս՝ *Եթէ խնայես 'ի շրթունս քո: Որ լինի կատարեալ այսպէս. *Եթէ խնայես 'ի շրթունս քո, իմաստուն լինիս:

Մասունք բանի ութն են. Անուն. դերանուն. բայ. ընդունելութ՟ի. նախադրութ՟ի. մակբայ. շաղկապ. միջարկութիւն:

Անուն:

Անունն է բառ, որ ամէն բան անով կը զըրուցվի, և ամէն բան անով կը ճանաչվի. ինչպէս՝ մարդ. հաց. աղջ. մեծ. սուրբ. եւն:

Անունն բաժանի յերկու՝ գոյական, ածական.

Գոյական անունն է, որ բանին ինչ ըլլալը կը ճանցընէ, և մինակ կը գրուցվի. ինչպէս՝ մարդ. հայ. գիրք. խնձոր. տուն. ծառ. քար. լուսին. ազգ. Թադէոս, եւն: Այս անունս մարդ՝ գրուցածիդ պէս կիմացվի ինչ ըլլալը. ասոր համար մինակ կը գրուցվի խօսքի մէջ:

Ածական անունն է, որ բանին ինչպէս ըլլալը կը ցուցընէ, և մինակ չի զրուցվիր խօսքի մէջ. ինչպէս՝ մեծ. շատ. բարի. լայն. ծանր. վեց. այսպիսի. եւն: Այս անունս մեծ՝ մինակ չիմացըներ ինչ ըլլալը. զերէ շատ բանի կըսվի. ինչպէս՝ մեծ մարդ. մեծ ազգ. մեծ գիրք. մեծ խնձոր. մեծ տուն. մեծ ծառ. և ուրիշ շատ բանի ույմիշ ըլլալուն համար՝ լըսողն կը փընտռէ թէ ինչ բան է մեծ: Հապա այսպէս ածականն՝ տայիմա կարօտ է գոյականին, անոր համար մինակ չի զրուցվիր:

Ասոնցմէ իմացիր, որ մէկ անունը լըսես ու իմանաս ինչ ըլլալը, իշտէ այն անունը գոյական է: Եւ թէ անուն մի լըսես, չիմանաս ու փընտռես ինչ ըլլալը, այն անունը ածական է:

Հետեւմունք անուանց:

Հետեւմունքն է, որ բանի մի ետեւէ կերթան, և բանի մի վր̅ կիմացվին. և անունն ունի վեց հետեւմունքս. քանակ, սեռ, թիւ, տեսակ, հոլով, հոլովումն:

Քանակն՝ չափ բանէն է. և է երեք՝ հասարակ, յատուկ, հաւաքական:

Հասարակն՝ շատի վր̅ մէկ կերպ կիմացվի, և ամէն մէկին կըսվի. ինչպէս՝ մարդ. եկեղեցի. քաղաք. գետ. լեառն. ամիս. աստղ. ծառ. և այլն:

Յատուկն՝ մինակ մէկի կըսվի. ինչպէս՝ Թադէոս. Հռիփսիմէ. Էջմիածին. Երուսաղէմ. Յորդանան. Մասիս. Մայիս. լուսին, և այլն:

Հաւաքականն՝ շատ բան մէկ տեղ եղած կը ցուցընէ. ինչպէս՝ ազգ. ժողով. ծով. հօտ. պար. եւն:

Սեռն՝ սօյ ըսել է. և է չորս՝ արական, իգական, անորոշ, չէզոք.

Արականն՝ արու (էրքէկ) կը ցուցնէ. ինչպէս՝ այր. հայր. եղբայր. ուստր. Թադէոս. փեսայ. ևն:

Իգականն՝ էգ (տիշի) կը ցուցնէ. ինչպէս՝ կին. մայր. քոյր. դուստր. Հռիփսիմէ. հարսն. ևն:

Անորոշն՝ էրքէկ ու տիշին չորոշուած կը ցուցնէ. ինչպէս՝ մարդ. զաւակ. որդի. Թոռն. ձուկն. ևն: Ահա՛ անունս ղոտոն՝ չի զատուիր չիմացուիր Թէ մանչ է, կամ Թէ աղջիկ է. զէրէ՝ մանչուան կըսուի զաւակ, աղջկնուան կըսուի զաւակ:

Չէզոքն՝ էրքէկ ու տիշի չունեցողը կը ցուցնէ. ինչպէս՝ քար. փայտ. հող. ծով. երուսաղէմ. ևն:

Թիւն՝ համրանք ըսել է. և է երկու՝ եզակի, յոգնակի: Եզակին է, որ ձայնովն մէկ կիմացուի. ինչպէս՝ մարդ. Թադէոս. ազգ. հող. գիտուն. մեծ. ևն:

Յոգնակին է, որ ձայնովն շատ կիմացուի. ինչպէս՝ մարդիկ. ազգք. ծառոց. գիտունս. ևն: յոգնակի անուանց վերջի ծայրը ունի այս երեք գիրս՝ ք, ց, ս.

Տեսակն Թարզ ըսել է. և է երեք՝ նախատիպ, ածանցեալ, փաղառեալ:

Նախատիպ անունն է, որ մասնիկ փակած չունի. ինչպէս՝ լուր. ողջ. կերպ. կամք. ևն:

Ածանցեալն է, որ միայն յառաջը կամ միայն վերջը փակած է մասնիկն. ինչպէս՝ անլուր. առողջ. կերպարան. կամայ. ևն:

Փաղառեալն է, որ յառաջը և վերջը մէկ տեղ փակած է անմշան մասնիկն. ինչպէս՝ առողջաբերն. անկերպարան. ակամայ. ևն:

Հոլովն պտոյտ (տէվր) ըսել է, և է տասն. ուղղական. սեռական. գործիական. պարառական. հայցական. պատմական. սկզբնական. տրական. ներգոյական. կոչական.

Հոլովումն բաժանի յերկու՝ տարածական, տուանանական: տե՛ս յառաջին հատորն, և լաւ սերտէ Այ շնորհօքն:

Դերանուն ։

Դերանունն է բառ, որ անուան տեղը կը դըրուի, և դէմ կը ցըցընէ. ինչպէս՝ ես. դու. նա. սա. դա. ևն ։

Դերանունն՝ հինգ կերպ է. էական. ցուցական. ունական. յարաբերական. դիմորոշական։

Էականքն են, որ գոյականի պէս ցուցանեն զէութիւն (վարլըխը). և ասոնք են. ես. դու. ինքն. իւր, իւրեան. միմեանց. իրերաց.

Ցուցականքն են, որ բանին առաջը իբր մատով ցուցանեն. և սոքա են. սա. դա. նա. այս. այդ. այն. սոյն. դոյն. նոյն ։

Ունականքն՝ ածականի պէս նշանակեն էուե ունեցածը. և սոքին են. իմ. քոյ. մեր. ձեր. իւր, իւրոյ։

Յարաբերականն՝ բառ մի յռ̄ջ կը բերէ. և է այս՝ որ։

Դիմորոշականքն են տառքս՝ ս, դ, ն ։ Ասոնք բառի կը փակչին, և դէմը կը զատեն։

Հետևմունք դերանուան ։

Հինգ հետևմունք ունի դերանունն. դէմ. թիւ. տեսակ. հոլով. հոլովումն,

Դէմն՝ երես (սիֆաթ) ըսել է. և է երեք՝ առաջին, երկրորդ, երրորդ։

Առաջին դէմն այն է, որ խօսողը կիմացընէ. և է այս՝ ես. մեք. ս. ևն։

Երկրորդ դէմն է, որ խօսողն իւր դիմացինը կը ցըցընէ. և են սոքա. դու. դուք. դ. ևն ։

Երրորդ դէմն է, որ խօսողն՝ իրմէ և իւր դիմացի խօսողէն ուրիշ մէկը կը նշանակէ. և են սոքա. ինքն. իւր. սա. դա. նա. այս. այդ. այն. սոյն. դոյն. նոյն. իմ. քոյ. մեր. ձեր. որ ևն ։

Թիւն է երկու՝ եզակի, յոգնակի։ Եզակի դերանունն է, որ մի դէմ ունող կը ցըցընէ. ինչպէս՝ ես. իմ. դու. քո. նա. իւր. ինքն. ևն։

Յոգնակի դերանունն է, որ շատ դէմ ունող կը նըշանակէ. ինչպէս՝ մեք. դուք. նոցա. սոքօք, եւն :

Սեռականն է երկու՝ նախատիպ, ածանցեալ : Նախատիպ են վերոյգրեալքն. և ածանցեալ կը լլան մինակ այս մասնիկամբքս. ինչպէս՝ մերոյին. ձերոյին. իւրոյնոյ. այսորոյն. ինքնորոյ. նոյնորոյնին. եւն :

Հոլովն է տասն՝ ուղղական. սեռական. եւն :

Հոլովումն են կերպ կերպ ձայնք սեռականի և գործիականին մէկտեղ, զորս տե՛ս և սերտէ՛ :

Բայն :

Բայն է բառ, որ ընել և ըլլալ կը ցըցընէ փախտը մէջ. ինչպէս՝ գրեմ. կարդամ. լինիմ. եւն :

Բայն բաժանի յերկուս՝ էական, գործական :

Էականն՝ կենալ ըլլալ կը նշանակէ. և մինակ այս չորս հատիկս է. եմ. գոմ. եղանիմ. լինիմ :

Գործական բայն՝ ընել և ըլլալը կիմացընէ. ինչպէս՝ գրեմ. կարդամ. զարթնում. աշխատիմ, եւն :

Հետեւմունք բայի :

Բային հետեւմունքն՝ այս եօթն է. սեռ. տեսակ. թիւ. դէմ. ժամանակ. որակութի. լծորդութի :

Սեռն բային չորս է, ներգործական, կրաւորական, անորոշ, չէզոք :

Ներգործական բայն է, որ ուրիշի վր̄ ընել կը ցըցընէ. ինչպէս՝ ծեծեմ. կարդամ. լուամ. եւն.

Կրաւորականն՝ ուրիշէ ըլլալը կիմացընէ. ինչպէս՝ ծեծիմ. աղաւորիմ. լուանիմ, եւն :

Ամէն ներգործական՝ ունի կրաւորական. և ամէն կրաւորական՝ ունի ներգործական :

Այս բային թէ ընելը ցուցանէ, ներգործական է. և թէ ըլլալը իմացընէ, կրաւորական է :

Անորոշ բայն է, որ կրաւորական կերպիւ կիմացընէ ներգործականի միտք՝ և կրաւորականի միտք. ինչպէս՝ խօսիմ. խորհիմ. ծնանիմ. սկսանիմ. եւն :

Չէզոք բայն՝ ինքնիրեն ընել և ինքնիրեն ըլլալը կիմացընէ. ինչպէս՝ աղօթեմ. գնամ. զարթնում. նստիմ. եւն։

Տեսակն է երեք՝ նախատիպ, ածանցեալ, փաղառեալ։ Նախատիպն, ինչպէս՝ ժառանգեմ. մահանամ. եղծեմ։ Ածանցեալն, ինչպէս՝ անժառանգեմ. եղծանեմ. մահացուցանեմ. լուսաւորեմ. եւն։ Ածանցեալն՝ չէզոք ըլլար փաղառեալն, ինչպէս՝ անմահացուցանեմ. չեղծանեմ. փղեղացուցանեմ. եւն։

Թիւն է երկու՝ եզակի, յոգնակի։ Եզակի բայն է, որ ընող և ըլլողը մէկ կիմացընէ. ինչպէս՝ ծեծեմ. կարդաս. խնդայ. եւն։

Յոգնակին է, որ ընող և ըլլողը շատ կիմացընէ. ինչպէս՝ ծեծեմք. կարդայք. խնդան, եւն։

Յոգնակի բային շատը՝ ունի իւր վերջին՝ ք. ն։

Դէմքն երեք՝ առաջին, երկրորդ, երրորդ։

Առաջին դէմքն է, որ գործը խօսողին կըցըցընէ. ինչպէս՝ աղօթեցի. խոստովանեցայք. եւն։

Երկրորդ դէմքն է, որ գործը խօսողին դիմացը եղածին կըցըցընէ. ինչպէս՝ աղաւթեցեր. գրեցիք, եւն։

Երրորդ դէմքն է, որ գործը՝ խօսողէն և դիմացը եղողէն ուրիշի մը կըցըցընէ. ինչպէս՝ աղաւթեցաւ. գրեցին. եւն։

Ժամանակն՝ առեն (վախտ) ըսել է. և է այս վեցս. ներկայ. անկատար. կատարեալ. յարակատար. գերակատար. ապառնի։

Ներկայ՝ հիմիկունը ըսել է, որ գործը նոր սկսած կըցըցընէ. ինչպէս՝ գրեմ. կարդայք. ըսեն. եւն։

Անկատար ժամանակն է, որ ցուցանէ թէ գործին ըսկսած ժամանակն անցեր՝ ու չէ լմնցեր. ինչպէս՝ գրէի. երթայիր. ըսէին, եւն։

Կատարեալն է, որ գործը նոր լմնցած կիմացընէ. ինչպէս՝ գրեցի. կարդաց. գնացին. եւն։

Յարակատարն ցուցանէ, թէ գործն լմնցեր՝ և քիչ ժամանակ ալ անցեր է. ինչպէս՝ գրեալ եմ. կարդացեալ են. եւն։

Գերակատարն է, որ գործն լմնցած և շատ ժամանակ անցած կիմացնէ. ինչպէս՝ գրեալ էի, կարդացեալ էին, եւն.

Ապառնի ժամանակն կիմացնէ թէ գործը չէ՛ ըլեր սեր, նոր սկսելու է. ինչպէս՝ գրեցից. կարդասցես. լուասցեն. եւն։

Որակութ բային՝ չորս է, սահմանական, հրամայական, ստորադասական, աներևոյթ.

Սահմանական որակութին է, որ գործը էշկեարէ պաշխայ զատած կը պատմէ. ինչպէս՝ գրեմ. գնաց. եւն։

Հրամայականն է, որ գործը ցուցանէ թէնպիհ ընելով, չըխելով և աղաչելով. ինչպէս՝ գրեա՛, կարդացէ՛ք. եւն ։

Ստորադասական որակութին՝ կիսատ և կախ կը թողու, թէունի (խաւր)՝ փափաք (հաւէս) ցըցընելով. ինչպէս՝ գրիցեմ, կարդասցես, գնացեալ իցէ. եւն։

Աներևոյթն՝ չերևող ըսել է. որ թիւ, դէմ, ժամանակ չունի. ինչպէս՝ գրել, կարդալ. լնուլ. նստիլ. եւն։

Աներևոյթն կըսվի և դերբայ. և մինակ եզակի կերպին կը հոլովի առանց կոչականի այսպէս՝ գրել, գրելոյ, գրելով, զգրելով, եւն։

Լծորդութին բային է այս չորսս՝ եմ, ամ, ում, իմ. և ամէն բայ այս չորս լծորդութեամբ կը խոնարհի։ զորս առ՛ս յառաջին հատորն, լաւ սերտէ և միտքդ պահէ Այ շնորհօքն ։

Ընդունելութ ։

Ընդունելութին է բառ ծնեալ ՚ի բայէ. որ նշանակէ բանին և գործին ժամանակաւ յայս հինգ եղերս. ինչպէս՝ քարոզօղ. քարոզիչ. քարոզեալ. քարոզելի. քարոզելոյ. եւն ։

Ձեւմունք ընդունելութեն են ընդ անուան և բայի. որ է վեցս՝ սեռ. ժամանակ. տեսակ. թիւ. հոլով և հոլովումն։

Սեռն բային ալէս չորս է. Ներգործական՝ գրող. գրիչ. գրեալ. գրելոյ. եւն. Կրաւորական՝ գրեցեալ.

գրեալ · գրելի · գրելոց · ևն ։ Ներգործ՝ խորհեալ · խորհեցեալ · խորհելի · խորհելոց · ևն · Չեզոք՝ ամաչօղ · ամաչեալ · ամաչեցեալ · ամաչելի · ամաչելոց · ևն ։

Ժամանակն է երեք · Ներկայ՝ գրօղ · գրիչ · ևն ։

Անցեալ՝ գրեալ · գրեցեալ · ևն ։ Ապառնի՝ գրելի · գրելոց · ևն ։

Տեսակն է երեք · Նախատիպ՝ գրեալ · զգեցող · ևն ։

Ածանցեալ՝ անգրելի · լուսաւորիչ · զգեցուցանօղ · ևն ։

Բաղադրեալ՝ անմահացուցեալ · ևն ։

Թիւն է երկու ։ Եզակի՝ պատուելի, ևն ։ Յոգնակի՝ գրօղք, ևն ։

Հոլովն է տասն · ուղղական · սեռական · ևն ։

Հոլովումն է ևս ըստ անուանն · և լոյն չի հոլովիր · որ միշտ բայ է ։

Նախադրութ՟ի ։

Նախադրութ՟ին է բառ, որ հոլովելի մասանց յառաջն դնի ։ Հոլովելի մասունքն են անուն, դերանուն, դերբայ, ընդունելութ՟ի ։ Այս նախադրութ՟ին այս չորս մասանց յառաջն դնի ։

Նախադրութ՟ին բաժանի յերկուս՝ հոլովակերտ · հոլովառու ։ Հոլովակերտ նախդիրքն շինեն զկերպ կերպ հոլովս · և են սոքա, զ · 'ի · յ · 'ի ց · առ · առ 'ի · ց · ընդ ։

Հոլովառու նախադրութ՟իքն առնուն իւրեանց խնդիր այս վեց հոլովս · սեռական · գործիական · պատճառական · հայցական · սկզբնական · տրական ։ Եւ այս խնդրառութ՟ե օրինակքն ընդարձակ եդաք յառաջին հատորն · աստ ևս չարեմք ռամկօրէն մեկնութ՟բք ։

Սեռական խնդիր առնուն նախադրութ՟իւնքս այսպէս ·

'Ի միջոյ գլխոյ ·	գլխոյ միջոյ ։
'Ի ներքոյ երկնից ·	երկինքին տակը ։
Արտաքոյ վրդ՟պետութ՟ն ·	խըրատէն դուրս ։

Ի վեր ձեռ.	ձեռ վերը:
Առաջի մարդկան.	մարդոց առջև:
Զկնի իմ.	իմ ետևէս:
Յետ մահու.	մեռնելոյ ետև:
Հանդէպ թագաւորի.	թագաւորի դիմաց:
Յանդիման իւրեան.	իրեն դիմաց:
Յայնկոյս ծովուն.	ծովուն անդին:
Յանձն նորա.	անոր անձին:
Յաղագս պատճառին.	պատճառին համար:
Վասն բնութ̅.	բնութ̅ համար:
Ի պէտս փրկութ̅.	ազատութ̅ համար:
Ընդդէմ գանձանակին.	գանձանակին դէմը:
Հակառակ հոգւոյ.	հոգիի դէմ:
Առանց գործոց.	գործքըսըզ:
Զհետ արդարութ̅.	արդարութ̅ ետևէն:
Փոխանակ ձկան.	ձկան տեղ:
Ի ձեռն լեզուի.	լեզուով:
Առ ամօթոյ.	ամօթոյ՝ ըռզի համար:
Առ ի կեցուցանելոյ.	ապրեցնելոյ համար:
Ընդ յիմարի.	խենթի հետ:

Գործիական խնդիր առնուն նախադրութիւնքս այսպէս:

Հանդերձ գովութ̅բ.	գովութ̅ հետ:
Մեկուսի մարմնով.	մարմնով հեռու:
Մերձ հոգւով.	հոգւով մօտիկ:
Գոյնժ Չափ.	եղածին չափ, կէտէր:
Առ ակնթարթաւ.	ակնթարթին ատենը:
Ընդ գրուանաւ.	չինիկի ներքև:
Ներքոյ գաւազանաւ.	կեօչեկի չըպուխով:

Բացառական խնդիր առնուն նախադրութիւնքս այսպէս:

Շուրջ զնովաւ.	անոր էթրաֆը:
Շուրջանակի զսահմանօք.	սինօրին չորս դին, ամէն դին
Ի վեր զմօրքն թանձրութ̅բ.	մօրքի թանձրութ̅ վերը:

Հայցական խնդիր առնուն նախադրութիւնքս այսպէս ։

Որպէս զարմաւենիս ․	խուրմայի ծառի պէս ։
Իբր զփայտ ․	փայտի պէս ։
Իբրև զանձն ․	նէֆսին պէս ։
Իբրու զսիրտ ․	սրտին պէս ։
Բաց զարծաթ ․	արծաթէ ետեւ ․
Յառաջ քան զլսել ․	լսելուն առաջ ։
Առաւել քան զոսկի ․	ոսկիէն էվէլ ։
Քաղցր քան զմեղր ․	մեղրէն խառխուն ։
Ընդդէմ զպայմանն ․	շարթէն էվէլ ։

Սկզբնական առնուն նախադրութիւնքս այսպէս ։

Բաց յԱյ ․	աստուծմէ ՚ի զատ ․
Ի բացեայ յինէն ․	ինծմէ հեռու ։
Զերծ ՚ի մարմնոյն ․	մարմինէն զատ ։
Հեռի ՚ի գիտուէ ․	գիտուէ հեռու ․
Մեկուսի յինէն ․	ինմէ պաշխայ ։
Զանխուլ ՚ի լսողաց ․	լսողներէն ծածուկ ։
Թագուստ յաբրահամէ ․	աբրահամէ պահած ․
Կաղջ ՚ի մասեփայ ․	մասեփէն կոպառանք ։
Իբրև յերեսաց ․	առնքի երեսէ ․

Նախդրին տրական առնուն նախադրութիւնքս այսպէս ։

Մինչ ՚ի քաղաքն ․	քինչուան քաղաքը ։
Մինչև ՚ի ծերուի ․	քինչուան ծերուի ․
Մերձ ՚ի բեկումն ․	կոտրելոյ մօտիկ ։
Մօտ ՚ի լեառն ․	լեռին մօտիկ ․ քովը ։
Ի թիկունս կոյս ․	կռնակի դին ․
Ըստ օրէնսն ․	օրէնքէ դուրս ։
Ընդ տկարսն ․	զայիֆներուն հետ ․

Սերջահոլով տրական առնուն նախադրութիւնքս այսպէս ։

Մօտ քեզ ․	քեզի մօտ ․
Մերձ մեզ ․	մեզի մօտիկ ․

Պէտ

Դէպ ձեզ.	դէպ ՚ի ձեզ։
Հանդէպ գերեզմանին.	գերեզմանին դէմը։
Դէմ յանդիման եղմի.	եղմի դիմացը։
Ներ ՚ի քոյ բնասարկուէին.	սնտուկին անկիւնին տակը։
Ընդդէմ ոգւոց.	ոգիի դէմ։
Հակառակ չարին.	չարին դէմ։
Վեր ՚ի վերոյ անօրինաց.	անօրէններուն [illegible]։
Առ սահմանելոյն.	սինորին ներքէ։
Ընդ ագահին.	թամահքեարին հետ։

Այս ամ նախադրութիւնք՝ ըստ նշանակութեանց բաժանին ՚ի տասներեք տեսակս, զորս տե՛ս յառաջին հատորին։

Մակբայ.

Մակբայն է բառ, որ դնի ՚ի վե՛ր բայի եւ ընդունելութ, եւ ցուցանէ ինչպէս լինելն գործոյն։

Պատահմունք մակբային է երկու՝ որակութիւն տեսակ.

Որակութիւնք մակբային՝ ըստ նշանակութեանց լինին քսանեւեօթն կերպ. եւ այս տեղս ութը կերպի մէջ ժողովեցաք, որք են սոքա։

Որակականքն են սոքին։

Յոյժ պատժէ.	[illegible] կըպատժէ։
Յանդիման կացուցանէ.	դիմացը կըկանգնեցընէ։
Վաղ լիցի.	[illegible] ըլլայ։
Յստոյգ հաստատեսցէ.	իստոյգ վճարէ։
Համարձակ մեռանիլ.	աներկիւղ մեռնիլ։
Ծածուկ վառէր.	ծածուկ սիրը հրանմիշ կըլլար
Գաղտ կոչեաց.	գաղտուկ կանչեց.
Առանձինն գնաց.	առանձին գնաց։
Ընդունայն վաստակին.	պարապ կաշխատին։
